4428

ուրգենև

Գարնանային գրեր

2140

891.71
S-99

Թիֆլիս
1912

12003

Ժող. Ա-317

ՀՐԱՏ. Կ. Հ. Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ
Ա. ՊՕՂՈՍԵԱՆԻ ԳՐԱԿ. ՅՕԲԴԻ ԱՐԴԻՒՆՔՈՎ

Իվ. ՍԵՐԳ. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՁՐԵՐ

Թարգ. Լ. Դանիէլեանի

891.71
S-99

ԹԻՖԼԻՍ
Արագածիպ «Տպագիրացնօց», Ելիզաւ. 17
1912

Арм.
2-1341а

2-1341а Ам-517

Իվ. Սերգ. ՅՈՒՐԳԵՆԵՎ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՐԵՐ

Թարգ. Լ. Դանիէլեանի

Инв. № 21341

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ «Էդպիրատցիօ», Ելիզաւետինսկայա, № 17
1912

69868-Վ.Հ.

383-82

Գարնանային ջրեր

«Ուրախ տարիներ,
«Երջանիկ օրեր.
«Գարնան ջրերի նման
«Սահեցին-անցան»:
Մի հին բոմանսից:

... Գիշերվայ ժամը երկուսին՝ նա վերադարձաւ իր առանձնասենեակը: Դուրս ուղարկեց ծառային, որ այդ միջոցին վառում էր մոմերը և, ընկնելով վառարանին մօտիկ դրված թիկնաթոռի վրայ, փակեց դէմքը երկու ձեռքերով:

Իր կեանքում՝ նա ոչ մի ժամանակ չէր զգացել այդչափ յոգնածութիւն՝ ոչ մարմնական և ոչ էլ հոգեկան: Ամբողջ երեկոն նա անցկացրեց հաճելի կանանց շրջանում, զարգացած տղամարդկանց հետ միասին. կանանցից մի քանիսը գեղեցիկ էին. համարեա, բոլոր տղամարդիկ աչքի էին ընկնում իրանց խելքով ու տաղանդով: Նա ինքն էլ զրուցում էր շատ յաջող, մինչև իսկ փառաւոր կերպով... Այնուամենայնիւ,

չը նայելով այդ բոլորին, երբէք դեռ այն «taedium vitae»-ն, որի մասին վաղուց արդէն խօսում էին հռովմայեցիները, այն, այսպէս ա-սած. «նողկանքը դէպի կեանքը», չէր տիրապե-տել նրան այնպիսի անդիմադրելի ոյժով, չէր կարողացել խեղդել նրան այնպէս, ինչպէս այդ օրը: Եթէ նա մի քիչ փոքր լինէր տարիքով, անպատճառ լաց կը լինէր թախծից, ձանձրոյ-թից, դրգռուածից. կսկծեցնող տխրութիւնը, օ-շինդրի դառնութեան նման, լցրել էր նրա ամ-բողջ հոգին: Ինչ որ անհանդուրժելի-ճնշող մի բան ամեն կողմից պաշարել էր նրան՝ ինչպէս աշնանային խաւար գիշերը, ու նա չը գիտէր ինչպէս ազատուել այդ խաւարից, այդ դառնու-թիւնից: Ցոյս դնել քնի վրայ՝ անօգուտ էր. նա գիտէր, որ քունը չէ տանելու:

Նա սկսեց մտածել... դանդաղօրէն, թոյլ-թոյլ ու չարաշարուած: Մտածում էր ունայնու-թեան, անպէտքութեան և ամբողջ մարդկութիւ-նը կլանող՝ ստոր կեղծիքի մասին: Բոլոր հասակ-ները աստիճանաբար անցնում էին նրա մտքի տեսողութեան առջևից (դրանից քիչ ժամանակ առաջ լրացել էր արդէն նրա 52 տարին), ու նրանցից ոչ մեկը գթութիւն չէր գտնում նրա առաջ: Ամեն տեղ նոյն աշխոյժ-անական թափթ-փելն էր՝ մի դասարկութիւնից՝ միւս դասար-կութիւնը, միևնոյն ջուր ծեծելը, միևնոյն, կի-սով չափ բարեխղճօրէն, կիսով չափ գիտակցո-

րէն ինքնամոլորեցումը.—ինչով կուզի՝ երեխան թող զբաղուի, զուարճանայ, միայն թէ լաց չը լինի. իսկ մինչ այդ՝ յանկարծ, վերևից մարդու գլխին թափուող ձիւնի նման, կը գայ—գրոհ կը տայ ծերութիւնը, և նրա հետ միասին էլ այն անընդհատ սաստկացող, ամեն ինչ կլանող, կռծող ու սղոցող մահվան սարսափը... և թրփ՛ փ՝ կը շպրտեն անդունդը: Դեռ լաւ է, եթէ այդ կերպ դասաւորուի կեանքը: Ապա թէ ոչ, թերևս վախճանից առաջ՝ կը տիրապետեն մարդուն, այն-պէս, ինչպէս որ ժանգն է տիրապետում երկա-թին, տկարութիւնը, տառապանքները... Մրրկա-ծուփ ալիքներով պատած չէր պատկերանում նրա աչքին կեանքի ծովը, ինչպէս որ այդ նը-կարագրում են բանաստեղծները, ոչ. նա երևա-կայում էր այդ ծովը՝ անվրդով սահուն, ան-շարժ ու մինչև մութ յատակն անգամ թափան-ցիկ: Նա ինքը նստած է մի փոքրիկ մակոյկի մէջ, իսկ այնտեղ, մութ տղմոտ յատակում, հսկայ ձկների նման, հազիւ են նշմարվում այ-լանդակ հրեշները. կեանքի բոլոր ցաւերը, հի-ւանդութիւնները, վշտերը, ունայնութիւնը, աղ-քատութիւնը, կուրութիւնը.... Նա սկսում է նայել. ահա հրեշներից մեկը դուրս է գալիս այդ մթութեան միջից, բարձրանում վեր ու վեր, հետզհետէ երևում պարզ, որոշ, հետզհետէ ակ-ներև, զզուելի... Մի րոպէ էլ, ու յանկարծ կը շրջուի այն մակոյկը, որի տակից նա հրահրում

է արդէն։ Բայց ահա, նա դարձեալ սկսում է աղօտանալ, հեռանում է, իջնում յատակը և մընում այնտեղ՝ հազիւ հազ շարժելով ծանծաղուտի աւազները... Այնուամենայնիւ կը հասնի նախասահմանուած օրը և նա շուռ կը տայ այդ մակոյկը։

Նա թափ տուեց գլուխը, վեր թռաւ թիկնաթոռի վրայից, մի-երկու անգամ անցուդարձ արեց սենեակում, նստեց գրասեղանի առաջ և արկղները մէկ-մէկ՝ իրար յետևից դուրս քաշելով՝ սկսեց քրքրել իր թղթերը, հին, մեծ մասամբ կանացի նամակները։ Նա ինքն էլ չէր հասկանում՝ թէ ինչու հաւար էր այդ անում. ոչինչ չէր որոնում, ուղղակի ուզում էր մի որև է արտաքին զբաղմունքով հեռու վանել իրան տանջող մտքերը։ Պատահաբար բաց անելով նամակներից մի քանիսը (դրանցից մէկում գըտնուեց մի չորացած ծաղիկ՝ խունացած, ժապաւէնով կապած), նա միայն շարժեց ուսերը և, նայելով վառարանին, դէնը ձգեց նրանց, երևի, պատրաստուելով այրել այդ բոլոր անպէտք թղթերը։ Շտապ-շտապ՝ ձեռքերը խրելով երբեմն մէկ արկղը, երբեմն՝ միւս, նա յանկարծ դուրս քաշեց, և ապա, դանդաղօրէն հանելով նրա միջից հին ձևի մի փոքրիկ ուլթնանկիւնանի արկղիկ, դանդաղօրէն էլ բաց արեց խուփը։ Արկղիկի մէջ, դեղնած, երկշերտ փռած բամբակի տակ, գտնում էր նռնաքարից շինուած մի փոքրիկ խաչ։

Մի քանի վայրկեան նա լուռ զննում էր այդ խաչը տարակուսանքով, բայց յանկարծ թոյլ կերպով բացականչեց... Ափսոսանք ասենք, թէ ուրախութեան նման մի բան՝ երևաց նրա դիմագծերի վրայ։ Այդ տեսակ արտայայտութիւնը ցոյց է տալիս մարդու տեսքը այն ժամանակ միայն, երբ նա պատահաբար հանդիպում է մէկին, որին վաղուց ի վեր կորցրել է աչքից, որին քնքշաբար սիրել է մի ժամանակ, և որը, անսպասելի կերպով, այժմ յայտնվում է նրա հայեացքի առաջ՝ դարձեալ նոյնը, բայց արդէն փոխուած տարիքով։

Նա վեր կացաւ տեղից և, վերադառնալով վառարանի մօտ, նորից նստեց իր նախկին տեղը՝ թիկնաթոռի վրայ ու դարձեալ ծածկեց դէմքը ձեռքերով... «Ինչո՞ւ հէնց այսօր. հէնց անպատճառ այսօր», մտածում էր նա, ու մտաբերեց շատ բան՝ ինչ որ վաղուց անցել էր իր գլխով։

Ահա թէ ինչ մտաբերեց նա... Սակայն հարկաւոր է նախ՝ ասել նրա անունը, հօր անունը, ազգանունը։

Նրան անուանում էին Դմիտրի Պաւլովիչ Սանին։

Ահա թէ ինչ մտաբերեց նա։

I

Դէպքը պատահել է 1840 թուին։ Սանինը արդէն 22 տարեկան էր, և այդ ժամանակ գտնվում էր Ֆրանկֆուրտում՝ Իտալիայից Ռուսաստան վերադառնալու ճանապարհին։ Մեծ կարողութեան տէր մարդ չէր նա, բայց անկախ էր, համարեա, անընտանիքաւոր։ Ինչ որ հեռաւոր ազգականի մահից յետոյ, նրան ժառանգութիւն մնաց մի քանի հազար րուբլի, ու նա վրճռեց այդ գումարով ապրել արտասահմանում՝ նախ քան ծառայութիւն մտնելը, նախ քան վերջնականապէս իր վզին դնելու արքունական այն լուծը, առանց որի ապահովուած գոյութիւնը նրա համար դարձել էր անհնարին։ Սանինը իր դիտաւորութիւնը ճշտութեամբ կատարեց, և այնպէս հմուտ կերպով կարգաւորեց իր միջոցները, որ Ֆրանկֆուրտ հասած օրը նրա մօտ մնացել էր ուղիղ այնքան փող, որքանը հարկաւոր էր նրան՝ Պետերբուրգ հասնելու համար։ 1840 թուին երկաթուղիները շատ քիչ կային. ճանապարհորդները երթևեկում էին հանրակառքերով։ Սանինը իր համար տեղ վերցրեց «բէյվագէնում», բայց հանրակառքը քաղաքից դուրս էր գալու երեկոյեան ժամը 11-ին միայն։ Ուրեմն, ժամանակ դեռ շատ կար։ Բարեբաղդաբար եղանակը լաւ էր և Սանինը, ճաշելով այն ժամանակվայ երևելի «Սպիտակ կարապ» հիւրանոցում, գնաց թափառելու քաղաքում։ Ներս մտաւ տեսնելու Դաննեկերեան Արիադնան, որը պէտք է ասած՝ շատ քիչ դուր եկաւ իրան,— այցելեց Գեօթէի տունը, թէև նրա հեղինակութիւններից կարդացել էր միայն վերտերը՝ այն էլ ֆրանսիական թարգմանութեամբ, զբօսնեց Մայնի ափին, ապա՝ բաւականաչափ ձանձրացաւ՝ ինչպէս որ պէտք էր բարեբարոյ ճանապարհորդին։ Վերջապէս երեկոյեան ժամը 6-ին, դադրած, փոշոտուած ոտքերով՝ մտաւ նա Ֆրանկֆուրտի ամենաանշան փողոցներից մէկը։ Այդ փողոցը երկար ժամանակ՝ յետագայում՝ նա չէր կարողանում մոռանալ։ Նրա վրայ գտնուող սակաւաթիւ տներից մէկի ճակատին նա տեսաւ հետևեալ յուշանակագիրը. «Իտալական կօնդիտերանոց Ջիօվաննի Ռոզելլիի», յայտարարում էր իր մասին անցորդներին։ Սանինը ներս մտաւ այնտեղ մի բաժակ լիմօնադ խմելու նպատակով։ Բայց առաջին սենեակում, ուր համեստ հաշուառեղանի յետևում՝ դախլի առաջ՝ ներկուած պահարանի դարակների վրայ, դեղատուն յիշեցնելով՝ շարէ-շար դարսուած էին մի քանի շիշեր՝ ոսկէ եաըլիկներով, և նոյնքան էլ ապակէ պնակներ՝ սուխարիներով, շօկօլադէ լէպեօշկաներով ու լեդենցիներով. այդ սենեակում ոչ ոք չկար, միայն մոխրագոյն կատուն էր աչքերը ճպպացնում ու մլաւում, պատուհանի մօտ դրուած

բարձր աթոռի վրայ՝ թաթիկներով չոկչոկելով հիւսուածքները, մէկ էլ երեկոյեան արևի թեք շողերով շառագունած՝ կարմիր բրդաթելի մեծ կծիկը ընկել էր յատակի վրայ, շրջուած՝ սղոցազարդ տախտակից պատրաստուած կողովի կողքին։ Նուլ աղմուկ էր միայն լսվում հարևան սենեակից։ Սանինը քիչ կանգ առաւ և երկար դանդաղեցրեց դրան դանգակը, ապա ինքն իրան արտասանեց ձայնը բարձրացնելով. «Ոչ ոք չը կա՞յ այստեղ»։ Նոյն րոպէին՝ հարևան սենեակի դուռը բացուեց և Սանինը ակամայից ճնշած։

II

Կօնդիտերանոցը մտաւ վաղելով 19 տարեկան մի աղջիկ՝ մերկ ուսերին ցիրցան թափված սև գանգուրներով, մերկ բազուկները դէպի առաջ մեկնած և, նկատելով Սանինին՝ իսկոյն մօտեցաւ նրան, բռնեց ձեռքից ու քաշ տալով տարաւ իր յետևից, խռպոտ ձայնով արտասանելով՝ «չուտ, չուտ եկէք այստեղ, փրկեցէք»։ Այնքան հակառակուելու ցանկութիւնից չդրդուած որքան սաստիկ զարմանքից՝ Սանինը իսկոյնևեթ չը հետևեց աղջկանը, և մի տեսակ յամաւորեց, ճնշոց կանգնած տեղում. իր ամբողջ կեանքում նա չէր տեսել այդպիսի մի գեղեցկուհի։ Աղջիկը երեսը շուռ տուեց դէպի նրան և այնպիսի յու-

սահատական ձայնով, հայեացքով, ու սեղմած ձեռքը շարժելով և ցնցողաբար մօտեցնելով իր դուռնաո դէմքին՝ արտասանեց նա. «դէ եկէք, խնդրում եմ, եկէք», որ Սանինը, այլևս առանց վարանելու, անմիջապէս նետուեց նրա յետևից բաց դռնով։

Այն սենեակի մէջ, ուր նա ներս վազեց աղջկայ յետևից, ձիու մազերից հիւսած գահաւորակի վրայ պառկել էր, ամբողջապէս սպիտակած բաց-դեղնագոյն ձուլուածքներով, ինչպէս մոմ կամ թէ ինչպէս հին մարմարիոն, 14 տարեկան մի տղայ, զարմանալի կերպով նման այդ վիևնոյն աղջկան. անշուշտ եղբայրն էր։ Նրա աչքերը փակուած էին, խիտ սև մազերը շերտանման ընկել էին նրա, կարծես, քարացած ճակատին, նուրբ ու անշարժացած ունքերի վրայ, կապտած շրթունքների տակից՝ երևում էին իրար սեղմուած ատամները. թուում էր՝ թէ նա չէ շնչում այլ ևս. մի ձեռքը կախուել էր յատակի վրայ, միւսը ձգել էր գլխի ետևը. տղան հագնուած էր ու կոճկուած, նեղ օձիքը սեղմում էր նրա պարանոցը։

Աղջիկը հեծկլտալով նետուեց նրա մօտ. «մեռաւ նա, մեռաւ. հէնց այս րոպէին նստած էր ահա այստեղ, խօսում էր հետս. յանկարծ վայր ընկաւ ու անշարժացաւ.... Ա՜խ, Աստուած իմ, մի՞թէ չէ կարելի օգնել։ Մայրիկն էլ տանը չէ։ Պանտալէօնէ, Պանտալէօնէ։ Ի՞նչ եղաւ բժիշկը.

ու յանկարծ աւելացրեց իտալերէն. «գնացէ՛ր բժշկի յետևից»։

—Սինեօրա, ես չըգնացի. ուղարկեցի Լուիզային, լսուեց դռան ետևից խռպոտ մի ձայն ու ապա, ծուռտիկ ոտքերը իրար խառնելով՝ ներս մտաւ կարճահասակ մի ծերունի՝ հագած կարմրագոյն ֆրակ՝ սև կոճակներով, սպիտակ լայն փողկապով, կարճ անդրավարտիկով և կապոյտ-բըղեայ գուլպաներով։ Նրա պստիկ դէմքը, համաբեա, չէր երևում սպիտակած՝ երկաթագոյն երկար մազերի տակ։ Ամեն կողմից՝ ուղիղ դէպի վեր բարձրանալով ու նորից ցած թափուելով գզգզուած՝ նրանք ծերունու կերպարանքին տալիս էին վմփուլաւոր հաւի նմանութիւն. այդ նմանութիւնը մանաւանդ էլ աւելի էր ապշեցուցիչ, որովհետև նրանց մէջնագոյն թանձր զանգուածի տակ՝ հազիւ միայն կարելի էր լինում նըշմարել նրա սրուած քիթը և կոլոր դեղին աչքերը։

—Լուիզա, շո՛ւտ վազիր գնա. ես վազել չեմ կարող, -շարունակում էր ծերունին իտալերէն, հերթով բարձրացնելով ու ցած դնելով ոսկրացաւից կսկծացող, բարձրահիթ մաշիկներ հագած՝ ոտքերը..., իսկ ես ահաւասիկ ջուր բերի։

Ջոր, կոշտացած մատներով նա մեկնեց դէպի նրանց շիշի երկար բերանը։

—Իսկ մինչև նրա գալը էմիլը կը մեռնի, բացականչեց աղջիկը և մեկնեց ձեռքերը դէպի

Սանինը։ Ո՛հ, իմ պարոն, o mein Herr. միթէ դուք չէք կարող օգնել։

—Հարկաւոր է արիւն բաց թողնել նրանից. դա կաթուած է,—նկատեց Պանտալէօն անունը կրող ծերունին։

Թէև Սանինը բժշկականութեան մասին ամենափոքր անգամ հասկացողութիւն չունէր, բայց և այնպէս՝ մի բան հաստատապէս գիտէր. այդ այն է, որ առհասարակ տատն և չորս տարեկան տղաներին կաթուած չէ պատահում։

—Սա ուշագնացութիւն է, այլ ոչ կաթուած, արտասանեց նա, դիմելով Պանտալէօնին։—Ծօզանակ կունենա՞ք տանը։

Ծերունին վեր ուղղեց դէմքը։—Ի՞նչ։

—Ծոզանակ, խոզանակ, կրկնեց Սանինը գերմաներէն ու ֆրանսերէն։—Ծոզանակ, աւելացրեց նա, ցոյց տալով՝ թէ սրբում է իր շորերը։

Ծերունին վերջապէս գլխի ընկաւ։

—Հա, խոզանա՛կ. spazzette.—ինչպէս կարելի է, որ խոզանակ չունենանք։

—Դէ տուէք այստեղ. մենք սրա վրայի հագուստը կը հանենք և կը սկսենք շփել, տրորել մարմինը նրանով։

—Լաւ... Benone։ Իսկ գլխին հարկաւոր չէ ջուր ածել։

—Ո՛չ... այդ յետոյ, իսկ այժմ շտապեցէք խոզանակը բերելու գնալ։

Պանտալէօնը շիշը դրեց յատակի վրայ,

դուրս վազեց սենեակից և խակոյն էլ վերադարձաւ՝ երկու խոզանակ ձեռքին. մէկը՝ գլխի, իսկ միւսը՝ շորերի։ Գանգրահեր պուդելը՝ շնիկը ուղեկցում էր նրան, պոչը սաստիկ շարժում, հետաքրքրութեամբ զննում ծերունուն, աղջկանը և նոյն իսկ Սանինին. կարծես կամենում էր իմանալ՝ թէ ինչ էր նշանակում այդ ամբողջ իրարանցումը։

Սանինը եռանդով հանեց պառկած տղայի վրայից բաճկոնը, բաց արեց օձիքը, վեր քաշեց նրա շապկի թևքերը, և, խոզանակը ձեռքն առնելով՝ սկսեց բոլոր ոյժով շփել նրա կուրծքն ու ձեռքերը։ Պանտալէօնն էլ աշխուժով շփում էր միւս՝ գլխի խոզանակով նրա կօշիկներն ու վերնավարտիկը։ Աղջիկը ծնկաչոք ընկել էր գահաւորակի առաջ և, երկու ձեռքերով գլուխը բռնած՝ աչքերը անթարթ հառել էր եղբօր դէմքին։

Սանինը շփում էր խոզանակով ու մէկ-մէկ էլ թևի տակից աչքերը ուղղում աղջկայ դէմքին։ Աստուած իմ, ինչպիսի գեղեցկուհի էր նա։

III

Նրա քիթը մի փոքր մեծ էր, բայց գրաւիչ, արծւէնման. վերևի շրթունքը նոր-նոր սկսում էր ծածկուել աղուամազով, դրա փոխարէն՝ հարթ ու թափանցիկ դէմքի գոյնը, ոչ աւելի, ոչ պակաս, նման էր փղոսկրի կամ կաթնագոյն սաթի. մազերի ալիքանման փայլը՝ ինչպէս Ալլօբեան Յուդիթինը՝ Պիտտի պալարանքում, մանաւանդ աչքերը՝ մութ-գորշագոյն, սև ժապաւէնով երիզուած բիբերի շուրջը. գեղեցիկ, յաղթանակող աչքեր, մինչև իսկ այժմ, երբ երկիւղն ու վիշտը մոռայլել էին նրանց փայլը... Սանինը ակամայից ժաւրերեց այն սքանչելի երկիրը, որտեղից նոր էր վերադարձել նա... Իտալիայումն անգամ դրա նմանը նա չէր հանդիպել։ Աղջիկը շունչ էր քաշում ծանրութեամբ ու անհաւասար, այնպէս էր թւում՝ թէ նա իւրաքանչիւր րոպէ սպասում էր. չի սկսի, արդեօք, շունչ քաշել իր եղբայրը։

Սանինը շարունակում էր շփել նրան և նայել, բայց նայում էր ոչ միայն աղջկայ վրայ. Պանտալէօնի օրիգինալ կերպարանքը նոյնպէս գրաւել էր նրա ուշադրութիւնը։ Ծերունին բոլորովին թուլացել, թինչում էր. խոզանակի ամեն մի հարուածը դիպչելիս՝ նա ոսոսոսում էր ու մրմնջալով վնթփնթում, իսկ մազերի անապին խոպոպիները՝ քրտինքից թացացած՝ ծանրութեամբ տարուբերվում էին մի կողմից միւս կողմ՝ ջրի ալիքներից ողողուող խոշոր բոյսի արմատների նման։

—Գոնէ, կօշիկներն էլ է հանեցէք նրա վրայից,—ուզում էր նկատել նրան Սանինը...

Շնիկը, երևի այդ արտասովոր իրարանցումից գրգռված՝ յանկարծակի առջևի թաթերի վրայ ընկաւ, կպաւ գետնին ու սկսեց հաչել։

—Tartaglia—canaglia,—փշշացրեց նրա վրայ ծերունին...

Սակայն հէնց այդ վայրկեանին՝ կերպարանափոխուեց աղջկայ դէմքը. ունքերը վեր քաշուեցին, աչքերը աւելի ևս խոշորացան ու փայլատակեցին ուրախութիւնից...

Սանինը նայեց զննողաբար... երիտասարդի դէմքի վրայ երևաց կարմրութիւն, թերթերունքները շարժուեցին.. ռունգերը ցնցուեցին։ Նա ներս շնչեց օդը դեռ ևս իրար սեղմուած՝ առաձների արանքից ու հառաչեց...

—Էմիլ, կանչեց աղջիկը... Էմիլիո միօ։

Դանդաղօրէն բացուեցին տղայի խոշոր սև աչքերը։ Նրանք թէև դեռ նայում էին բութ հայեացքով, բայց արդէն ժպտում էին թոյլ կերպով։ Միևնոյն թոյլ ժպիտը իջաւ նաև գունատ շրթունքների վրայ։ Ապա՝ նա շարժեց կախ ընկած ձեռքը և, միանգամից բարձրացնելով՝ դրեց իր կրծքին։

—Էմիլիօ,—կրկնեց աղջիկը, ու վեր կացաւ տեղից։ Նրա դէմքի արտայայտութիւնը այնքան էր ուժեղ և վառ, որ թւում էր՝ թէ ահա, հէնց այս րոպէին՝ կամ արտասուքները կը ցայտեն նրա աչքերից և կամ թէ դուրս կը թռչի քրքիջը։

—Էմիլ, ի՞նչ է պատահել։ Էմիլ... լսուեց

դռան ետևից և արագ քայլերով ներս մտաւ մաքուր հագնուած՝ արծաթամանան-սպիտակած մազերով՝ թխադէմ մի կին։ Տարիքաւոր մի տղամարդ էլ ներս մտաւ անմիջապէս նրանից յետոյ, աղաղակի գլուխը երևաց նրա ուսերի յետևից։

Աղջիկը վազեց դէպի նրանց՝ դիմաւորելու։

—Նա փրկուած է, մայրիկ, նա կենդանի է. բացականչեց աղջիկը, ջղաձգաբար գրկելով ներս մտնող կնոջը։

Ախր ի՞նչ է պատահել,—կրկնեց կինը։ Վերադառնում էի... յանկարծ պատահում եմ պ. բժշկին և Լուիզային...

Աղջիկը սկսեց պատմել թէ ինչ էր պատահել. իսկ բժիշկը մօտեցաւ հիւանդին, որը քանի գնում աւելի ու աւելի էր ուշքի գալիս և շարունակում ժպտալ. նա, կարծես, սկսում էր ամաչել իր պատճառած անհանգստութեան համար։

—Դուք, ինչպէս նկատում եմ, շփել էք նրան խոզանակով,—դիմեց բժիշկը Սանինին և Պանտալէօնին, և շատ էլ լաւ էք արել.... այդ շատ լաւ միտք է... իսկ այժմ ահա տեսնենք թէ ուրիշ էլ ի՞նչ միջոցներ...

Նա շօշափեց երիտասարդի զարկերակը.—

—Հը՛մմ... Դէ մի ցոյց տուէք ձեր լեզուն։

Տիկինը հոգատարութեամբ խնդրեց դէպի տղան։ Վերջինս աւելի ևս անհանգիստ ժպտաց։

2 2002-Apr-Շ.Շ.Ա
383-82

աչքերը ուղղեց դէպի մօրը ու կարմրեց...

Սանչինի մաքուր անցաւ, որ ինքը այլևս աւելորդ է դառնում և դուրս եկաւ կանդիտերանոցից: Բայց ձեռքը դեռ չէր տարել դէպի փողոցը տանող դրան փականքը, երբ աղջիկը նորից յայտնուեց նրա առաջ ու կանգնեցրեց նրան...:

—Դուք գնում էք, սկսեց նա, քաղցրութեամբ նայելով նրա երեսին, ես չեմ համարձակվում պահել ձեզ, բայց այսօր երեկոյեան անպատճառ պէտք է գաք մեզ մօտ: Մենք այնքան ենք պարտական ձեզ. թերևս, դուք փրկեցիք եղբօրս կեանքը. ուզում ենք մեր շնորհակալութիւնը արտայայտել ձեզ, մայրիկն է ուզում: Դուք պէտք է ասէք ձեր ով լինելը, պէտք է ուրախանաք մեզ հետ միասին...

—Բայց ես այսօր գնում եմ Բերլին,—ուզում էր ասել Սանչինը:

—Դուք դարձեալ կարող էք հանգել, աշխուժութեամբ ընդհատեց նրան աղջիկը: Եկէք մեզ մօտ մի ժամից յետոյ՝ մի գաւաթ շօկոլադ խմելու. խոստանո՞ւմ էք,—իսկ այժմ ես դարձեալ կը գնամ եղբօրս մօտ: Կը գա՞ք:

Ինչ պէտք է անէր Սանչինը:

—Կը գամ, պատասխանեց նա:

Գեղեցկուհին շտապով սեղմեց նրա ձեռքը, թռաւ-գնաց ներս, իսկ նա դուրս եկաւ փողոց:

IV

Երբ Սանչինը, դրանից ժամ ու կէս յետոյ, վերադարձաւ Բօգելլիի կօնդիտերանոցը, նրան այնտեղ ընդունեցին իբրև մի հարազատ մարդու: Էմիլիօն նստած էր այն միևնոյն դահլիճակի վրայ, որտեղ քիչ առաջ նրան շփում էին. բժիշկը նրա համար դեղ նշանակեց և յանձնարարեց «մեծ զգուշութիւն պահպանել չը յուզուելու» իբրև ջղային տեմպերամենտ ունեցող և սրտի հիւանդութիւն տառնալու տրամադիր մի անձի: Նա առաջներումն էլ էր ուշաթափվում, բայց այդ ուշաթափութիւնը երբէք այնքան երկարատև և ուժեղ չէր եղել, ինչպէս այս անգամ: Բժիշկը յայտնեց, որ վտանգը բոլորովին անցել է: Էմիլը հագել էր, ինչպէս այդ վայել էր առողջացողին, արձակ խալաթ, մայրը փաթաթել էր բրդեայ կապոյտ գլխի թաշկինակ նրա պարանոցով. չը նայելով դրան՝ նրա դէմքը զարթ էր, համարեա, ուրախական, թէև նրա չորս կողմն էլ ամեն ինչ ուրախական տեսք էր ընդունել: Դահլիճակի առաջ, մաքուր սփռոցով ծածկուած կլոր սեղանի վրայ, դրուած էր անուշաբոյր շօկոլադով լցուած՝ ահագին ճենապակեայ արճամանը՝ շրջապատուած գաւաթներով, սիրոփով լի շիշերով, պաքսիմաթներով, շաքարեղէններով, մինչև անգամ ծաղիկներով, վեց

հատ նուրբ մոմեր էլ վառվում էին հին ձևի երկու արծաթեայ շամադաններուն մէջ, գահաւորակի մի կողմում՝ վօլտերեան բազկաթոռը բաց էր արել իր փափուկ գիրկը. հէնց այդտեղ էլ նստացրին Սանինին։ Կօնդիտերանոցի բոլոր բնակիչները, որոնց հետ նրան վիճակուեց ծանօթանալ այդ օրը, ներկայ էին. նոյնիսկ բացառութիւն չէին կազմում Տարտալը՝ շնիկը և կատուն։ Ամենքն էլ աննկարագրելի բաղդատուր էին երևում. շնիկը մինչև իսկ բաւականութիւնից փռշտում էր, միայն կատուն էր առաջուայ պէս կոտրտում և բաց ու խուփ անում աչքերը։ Սանինին սոխեցին պատմել՝ թէ ով է նա ազգով, որտեղից է և ինչպէս են անուանում իրան։ Երբ նա ասաց, որ ինքը ռուս է, երկու կանայքն էլ մի քիչ զարմացան, նոյն իսկ ֆրքաչեցին և ապա իսկոյն էլ միաբերան վրայ բերին, որ նա հիանալի է արտասանում գերմաներէն, բայց եթէ ինքը աւելի յարմար է գըտնում ֆրանսերէն խօսել, կարող է. որովհետև իրանք երկուսով էլ այդ լեզուն լաւ հասկանում են և կարողանում են խօսել։ Սանինը անմիջապէս օգուտ քաղեց այդ առաջարկից։ «Սանինն, Սանինն»։ Այդ երկու կանայք ամենևին չէին սպասում, որ ռուսական ազգանունը այդչափ հեշտ արտասանելի կարող է լինել։ Նրա «Դիմիտրի» անունն էլ նրանց շատ դուր եկաւ։ Կանանցից մեծը՝ մայրը, նկատեց, որ ինքը երի-

տասարդ ժամանակը լսել է մի շատ գեղեցիկ օպերա. «Demetrio e Polibio», բայց որ «Dimitri» անունը աւելի է լաւ, քան «Demetrio»։ Այդպէս՝ Սանինը զրուցեց նրանց հետ մօտ մի ժամ։ Իրանց կողմից՝ մայր ու աղջիկ ծանօթացրին Սանինին իրանց սեփական կեանքի բոլոր մանրամասնութիւնների հետ։ Աւելի շատ խօսում էր մայրը՝ սպիտակահեր կինը։ Սանինը նրանից իմացաւ, որ նրա անունն է Լէօնօրա Րօզելլի, որ նա ճնաց այրի իր ամուսնու՝ Ջիովաննի Բատտիստա Րօզելլիի մահից յետոյ, որը քսանուհինգ տարի առաջ բնակութիւն էր հաստատել Ֆրանկֆուրտում, որպէս կանդիտեր՝ քաղցրաւէնիքներ պատրաստող, որ Ջիովաննի Բատտիստան ծագումով Վիչենցիից էր և շատ լաւ մարդ. թէև մի փոքր բարկացկոտ էր ու կռուասէր, միևնոյն ժամանակ էլ հանրապետական։ Այդ խօսքերն արտասանելիս՝ տիկին Րօզելլին ժառանգիշ արեց նրա իւղաներկ պատկերը, որ կախուած էր գահաւորակի վերևը՝ պատից։ Պէտք է ենթադրել, որ նկարիչը, որը «նոյնպէս հանրապետական է» եղել, ինչպէս այդ նկատեց հառաչելով տ. Րօզելլին, այնքան էլ լաւ չէ կարողացել որսալ նմանութիւնը. որովհետև պատկերի մէջ Ջիովաննի Բատտիստան ներկայացուած է ինչպէս մի մռայլ և խոժոռադէմ բրիգանտ՝ Ռինալդօ Ռինալդիի նման մէկը։ Ինքը տ. Րօզելլին ծագումով «հին և գեղեցիկ Պարմի

քաղաքին էր, ուր գանվում էր անմահ կօրրէջօյի նկարած սքանչելի գմբէթը»։ Բայց շատ վաղուց ի վեր ապրելով Գերմանիայում, նա, համարեա, բոլորովին գերմանացի էր դարձել։ Ապա նա աւելացրեց, ակրոբէթամբ գլուխը թափ տալով, որ ինքը այլևս ուրիշ ոչ մի բան չունի աշխարհում բացի ահա այս աղջկանից, և մեկ էլ այս տղայից (նա հերթով մատնանիշ արեց մեկի և միւսի վրայ), որ աղջկանը կանչում են Զեմմա, իսկ որդուն՝ Էմիլ, որ նրանք երկուսն էլ շատ լաւ ու հնազանդ զաւակներ են. մանաւանդ Էմիլիօն... («ես անհնազանդ եմ, հա» —նկատեց իսկոյն աղջիկը,—«ախ, դու նոյնպէս հանրապետական ես» —պատասխանեց մայրը), որ այժմ իրանց գործերը, իհարկէ, աւելի վատ են գնում, քան ամուսնու ժամանակ, որը քաղցրաւենիքեղէն պատրաստելու մասում շատ հըմուտ վարպետ էր... (Un grand'uomo,—խոժոռ դէմք ընդունելով՝ ձայնակցեց Պանտալէօնը)։ Բայց և այնպէս, էհ, փառք Աստծոյ, դեռ ևս ապրել կարելի է։

V

Զեմման ականջ էր դնում մօրը, և երբեմն ծիծաղում, երբեմն հառաչում, երբեմն էլ շոյում նրա ուսերը, կամ մատով սպառնում ու մեկ-

մեկ էլ նայում Սանինի վրայ։ Վերջապէս, նա վեր կացաւ տեղից, գրկեց և համբուրեց մօրը պարանոցից՝ «Ջնաղատեղից», որի համար վերջինս շատ ծիծաղեց, նոյն իսկ ճչաց։

Պանտալէօնին էլ ներկայացրին Սանինին։ Պարզուեց, որ նա մի ժամանակ օպերային երգիչ էր եղել բարիտօնական դերերի համար, բայց վաղուց թողել էր թատրոնական պարապմունքները և Րօզելլիի ընտանիքում ներկայացնում էր ինչ որ մի բան՝ տան բարեկամի ու ծառայի դերում։ Ջը նայելով, որ նա շատ երկար ժամանակ էր ինչ ապրում էր Գերմանիայում, այնուամենայնիւ գերմաներէն լեզուն լաւ չէր սովորել և միայն կարողանում էր հայհոյել նրանով՝ ամենաանողորմ կերպով ծամռելով նոյն իսկ հայհոյանքի խօսքերը։ «Ֆերրօֆլուկսօ—Սպիչչերուբբիօ». համարեա, այդպէս էր անուանում նա ամեն մի գերմանացու։ Մինչդեռ իտալական լեզուն արտասանում էր ամենայն կատարելութեամբ. որովհետև ծագումով Սինիգալիից էր, ուր լսում է «lingua toscana in bocca romana» *)։

Էմիլիօն, ըստ երևոյթին, քնքշութիւններ էր անում և անձնատուր լինում այն մարդու հաճոյական զգացմունքներին, որը նոր միայն խուսափեց վտանգից կամ առողջանում է, և մինչ-

*) Տօսքանական լեզուն՝ հռոմայեցու բերնում։

նոյն ժամանակ՝ ամեն բանից կարելի էր նկատել, որ անեցիները նրան շատ էին երես տալիս։ Նա ամաչելով շնորհակալութիւն յայտնեց Սանինին, բայց, պէտք է ասած, ամենից աւելի գործադրում էր իր ոյժը սերօպի և կօնֆետների վրայ։ Սանինը սոխպուած էր խմել երկու մեծ գաւաթ շօկօլադ և ուտել ահագին քանակութեամբ բիսկվիտներ. հազիւ կուլ էր տալիս մէկը, Ջեմման իսկոյն մեկնում էր նրան մի ուրիշը, իսկ հրաժարուելու ոչ մի հնարաւորութիւն չըկար։ Քիչ ժամանակից յետոյ նա իրան զգաց ինչպէս իր տանը. ժամանակը սլանում էր աներեւակայելի արագութեամբ։ Նա սոխպուած էր շատ բաներ պատմել Ռուսաստանի մասին. ընդհանրապէս ռուսական կլիմայի, ռուսական հասարակութեան, ռուս գեղջուկի և մանաւանդ կօզակների մասին, նմանապէս՝ տասներկու թըւականի պատերազմի, Պետրոս Մեծի, Կրեմլի, ռուսական երգերի ու զանգակների մասին։ Երկու կանայքն էլ շատ թիւր ու թոյլ հասկացողութիւն ունէին մեր լայնածաւալ և հեռաւոր հայրենիքի մասին։ Տիկին Րօզելլին կամ, ինչպէս յաճախ կանչում էին նրան, Ֆրաու Լէնօրան, նոյն իսկ զարմացրեց Սանինին իր տուած հեռաւեալ հարցով. գոյութիւն ունի՞, արդեօք, այն նշանաւոր, դեռևս անցեալ դարում շինուած՝ տառուցէ տունը Պետերբուրգում, որի մասին նա, մօտ ժամանակներս, մի շատ հետաքրքրական յօդուած կարդաց իր հանգուցեալ ամուսնու գըրքերից մէկում. «Bellezze delle arti?»։ Իսկ իրրև պատասխան Սանինի այն բացականչութեան՝ թէ «մի՞թէ դուք կարծում էք, որ Ռուսաստանում երբէք ամառ չէ լինում», Ֆրաու Լէնօրան առարկեց, որ ինքը մինչև այժմ այդպէս էր երևակայում Ռուսաստանը. մշտական ձիւն, ժան են գալիս մարդիկ մուշտակներով և ամենքն էլ զինուորականներ են, սակայն չափազանց հիւրասէր, իսկ բոլոր գիւղացիները՝ շատ հնազանդ։

Սանինը աշխատեց աւելի ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդել նրան ու նրա աղջկանը։ Երբ խօսակցութիւնը անցաւ ռուսաց երաժշտութեանը, նրան իսկոյն խնդրեցին երգել մի որև է ռուսական մեղեդի և ցոյց տուին սենեակի մէջ դրուած շատ փոքրիկ դաշնամուրը, սպիտակի փոխարէն՝ սև կլաւիշներով, սևի փոխարէն՝ սպիտակ կլաւիշներով։ Նա հնազանդուեց առանց երկար ձգձգումների և, ներդաշնակելով իր ալ կար ձգձգումների և, ներդաշնակելով իր ալ ձեռքի երկու մատներով և ձախի երեք մատներով (մեծ, միջակ ու փոքր մատով), երգեց բարակ ռնգային տենօրով, նախ՝ «Սարաֆանը», («Сарафанъ»), իսկ յետոյ էլ՝ «Փողոցի սալայատակով» («По улицѣ мостовой»)։ Երկու կանայքն էլ գովեցին նրա ձայնն ու երաժշտութիւնը, բայց ամենից աւելի հիացած էին ռուսական լեզուի նրբութեան և հնչիւնա-

ւորուԹեան վրայ և պահանջեցին Թարգմանել բնագիրը։ Սանինը կատարեց նրանց ցանկուԹիւնը, բայց որովհետև «Սարաֆանի» խօսքերը, մանաւանդ «Փողոցի սալայատակով»-ը (sur une rue pavée une jeune fille allait a l'eau—նա այդպէս հաղորդեց բնագրի իմաստը),—չէին կարող բարձր գաղափար տալ իր ունկընդիրներին ռուսական երաժշտուԹեան մասին, ուստի նա նախ՝ արտասանեց բարձր ձայնով, ապա Թարգմանեց և դրանից յետոյ էլ նուագեց Պուշկինի «Ես յիշում եմ սքանչելի վայրկեանը» («Я помню чудное мгновеніе»), որը նօտաների է վերածել Գլինկան, որի (մինօրնի կուպլետները) Թախծալի կտորները նա մի քիչ կեղծում, փոփոխում էր։ Այդտեղ՝ կանայք ուղղակի զմայլուեցին. Ֆրաու Լէնօրան նոյն իսկ զարմանալի նրմանուԹիւն գտաւ ռուսական և իտալական լեզուների մէջ։ «Վայրկեանը»՝ («Мгновеніе»), «O Vieni». «Ինձ հետ»-ը՝ («Со мной»), «Siam noi»—և այլն։ Մինչև անգամ անունները. Պուշկինը (նա արտասանում էր Պուսսեկին) և Գլինկան ինչ որ շատ հարազատօրէն էին հնչում նրբա ականջին։ Սանինը՝ իր հերթին խնդրեց կանանց մի որև է բան երգել, և նրանք սկսեցին առանց նազ անելու։ Ֆրաու Լէնօրան նստեց դաշնամուրի առջև և Ջեմմայի հետ միասին երգեց մի քանի դուէտներ ու «ստօրնելլօ»-ներ։ Մի ժամանակ մայրը լաւ կօնտրալտ ունէր. աղջկայ ձայնը, Թէև մի փոքր Թոյլ էր, սակայն՝ դուրեկան։

VI.

Սանինը իսկապես հրճւում էր ոչ Թէ Ջեմմայի ձայնով, այլ հէնց իրա՝ Ջեմմայով։ Նա նստել էր նրանից քիչ յետ և կողքից, ու մտածում էր ինքն իրան, որ ոչ մի արմաւենի, նոյն իսկ այն ժամանակվայ մօդային բանաստեղծ Բենեդիկտովի ոտանաւորների մէջ երգված, չէ կարող մրցել նրա գեղեցիկ իրանի վայելչակազմուԹեան հետ։ Եւ երբ զգայուն տեղերում՝ Ջեմմայի աչքերը ուղղում էր դէպի վեր, նրան այնպէս էր Թւում՝ Թէ չըկայ մի երկինք, որը չը պայծառանար այդպիսի մի հայեացքի առաջ։ Մինչև անգամ ծերունի Պանտէլէօնը, որ ուսը յենած դրան կողքի սեմին և կզակը ու բերանը հաւաքած լայն փողկապի մէջ, ականջ էր դնում կարևոր դէմք ընդունած՝ գործին հմուտ մարդու տեսքով, նա անգամ հիացել էր գեղեցիկ աղջկայ արտաքինով ու մտացել զարմացած. մինչդեռ Թւում է, որ նա պէտք է արդէն ընտելացած լինէր նրան։ Վերջացնելով իր դուէտինօն աղջկայ հետ, Ֆրաուլէնօրան նկատեց, որ Էմիլիօն հիանալի ձայն ունի, իսկական արծաԹահնչիւն. որ նա այժմ մուտք է գործել

այն տարիքը, երբ սովորաբար մարդու ձայն փոփոխվում է (նա արդարև խօսում էր ինչ որ անընդհատ չարդուող բասով) և ահա այդ պատճառով էլ նրան արգելել են երգել։ Բայց, ա՛յ, Պանտալէօնը կարող էր ի պատիւ հիւրի՝ թափ տալ իր հնացած ձայնը։ Պանտալէօնը խկոյն անբաւական տեսք ընդունեց, մռայլուեց, խառնեց մազերը և յայտնեց, որ նա վաղուց արդէն վերջ է տուել այդ բոլորին։ Թէև, արդարև, երիտասարդութեան ժամանակ՝ կարողացել էր իր դէրքը բարձր պահել և առհասարակ՝ նա պատկանում էր այն նշանաւոր դարագլխին, երբ դեռ ևս գոյութիւն ունէին իսկական կլասսիք երգիչները. նրանք արդի ծէծէանների հաւասարը խօսւ չեն, և իսկական երգեցողութեան դպրոցները հէնց նրանք են որ իրան՝ վարէզեցի Պանտալէօնո— Զիպպատօլլային՝ միանգամ Մօդէնում ժառուցին դափնեայ պսակ և որ նոյն իսկ այդ դէպքի առիթով՝ թատրոնում բաց թողին մի քանի սպիտակ աղաւնիներ, և որ ի միջի այլոց, մի ռուս իշխան Տարբուսսկի «il principe Tarbusski», որի հետ նա սերտ բարեկամական յարաբերութիւն ունէր միշտ, ընթրիքի միջոցին հրաւիրում էր նրան Ռուսաստան գնալու, խոստանում էր ոսկու սարեր, սարեր... իսկ ինքը չէր ուզում բաժանուի Իտալիայից՝ Դանտի երկրից· il paese del Dante· յետոյ արդէն, իհարկէ, տեղի ունեցան... մի քանի դժբաղդ հանգամանքներ. նա ինքը անզգոյշ գտնուեց... Այդ խօսքերի վրայ՝ Ծերունին ընդհատեց ինքն իրան, խորը հառաչեց երկու անգամ, գլուխը կախեց, և ապա՝ նորից սկսեց խօսել երգեցողութեան կլասսիք դարագլխի, և մանաւանդ, հռչակաւոր տենօր Գարսիայի մասին, դէպի որը նա տածում էր պատկառանք ու անսահման յարգանք։ «Ա՛յ—մարդ էր հա». բացականչեց նա։ Երևելի Գարսեան, «il gran Garsea», երբէք չէր սառըացնում իրան այն աստիճանի, որ երգէր այնպէս, ինչպէս որ այժմվայ տենօրիշկաները՝ tenorecci· ֆայլցետով՝ կեղծ կոկորդաձայնով, ամբողջ կրծքով՝ լի կրծքով, voce di petto, si։ Ծերունին ամուր կերպով խփեց, իր փոքրիկ ցամաքած բռունցքով՝ սեփական ժաքօյին։ Եւ ինչ արտիստ էր։ Կատարեալ հրաբուղխ։ signori miei, վուլկան՝ un Vesuvio։ Ես բաղդ ու պատիւ եմ ունեցել՝ երգելու նրա հետ միասին Ռօսսինի dell'illustrissimo maestro-յով՝ Օթելլօյում։ Գարսիան Օթելլոյի դերն էր կատարում, իսկ ես Եագօյինը. և երբ նա արտասանում էր հետեւեալ դարձուածքը...

Այդ ասելով՝ Պանտալէօնը բեմական դիրք ընդունեց և երգեց դողդոջիւն ու խռպոտ, բայց դեռ ևս սրտաշարժ ձայնով.

L'i... ra daver... so daver...
Lo più no... no... no... nov... temerò.

—Թատրոնը դղրդաց, signori miei։ Ես

նոյնպէս յետ չէի ճնում. հետևում էի նրան.

L'i... ra daver... so daver... so il fato
Temèr più non dovro!

—Եւ յանկարծ՝ նա ինչպէս կայծակ, վազդի պէս.

Morro!... ma vendicato...

—Կամ թէ, ա՛յ, երբ նա երգում էր... երբ նա երգում էր «Matrimonio segreto»-ից հետևեալ նշանաւոր արան (մեղեդին). Pria che spunti... Այդ տեղում նա, il gran Garcia, i cavall di galoppo խօսքերից յետոյ, այսպէս էր արտասանում խօսքերը. Senza posa cacciera—լսեցէք, որքան աքանչելի է. comé stupendo!—Այդտեղ նա անում էր...: Ծերունին ուզում էր սկսել մի ինչ որ արտասովոր ֆիօրուտուր (դեղդեղանք), բայց տասներորդ նօտայի վրայ կըմկմաց, հազաց և, ձեռքը թափ տալով՝ շուռ եկաւ ու վնթփնթաց. «Ախր ինչու համար էք ինձ չարչարում»: Ջեմման խակոյն վեր թռաւ աթոռի վրայից և, պինդ ծափ տալով՝ բղաւեց. բռաւօ, բռաւօ... ու վազեց դէպի խեղճ պաշտօնաթող Եագօն և երկու ձեռքերով քաղցրութեամբ թափահարեց նրա ուսերը: Միայն էմիլիօն էր անդթօրէն ծիծաղում: Cet âge est sans pitiè. այդ հասակը գութ ասած բանը չը գիտէ թէ ինչ է,—ասել է Լաֆօնտէնը:

Սանինը փորձեց մխիթարել ծերացած երդչին և խօսեց նրա հետ իտալերէն լեզուով (իր

վերջին ճանապարհորդութեան ժամանակ նա թեթև կերպով սովորել էր), և խօսք բաց արեց «paese del Dante, dove il si suona»-ի մասին: Այդ դարձուածքը, «Lasciate ogni speranza»-ի հետ միասին, կազմում էր երիտասարդ տուրիստի իտալական բանաստեղծութեան ամբողջ բագաժը. սակայն Պանտալէօնը չը զիջեց նրա թախանձանքներին: Կզակը էլ աւելի ներս քաշելով իր փողկապի մէջ, քան երբ և իցէ, դէմքը կնճռոտելով և ուռցնելով աչքերը, նա նորից նմանուեց թռչունի. այն էլ բարկացած թռչունի. ազատ ասենք, թէ անգղի: Այդ միջոցին՝ էմիլիօն, վայրկենաբար, շառագունելով՝ այնպէս, ինչպէս որ այդ սովորաբար պատահում է երես առած երեխաների հետ, դիմեց քրոջը և ասաց նրան, որ եթէ նա ցանկանում է զբաղեցնել հիւրին, ոչ մի այնպիսի լաւ բան չէր կարող հնարել, քան եթէ կարդար նրա համար Մայլցի կատակերգութիւններից մէկնումէկը, որը նա այնքան հիանալի կարդում է: Ջեմման ծիծաղեց, խփեց եղբօր ձեռքին ու ասաց, որ նա «միշտ այդ տեսակ բան է հնարում»: Այնուամենայնիւ, խակոյն գնաց իր սենեակը և, վերադառնալով փոքրիկ գրքոյկը ձեռքին, նստեց սեղանի մօտ՝ լամպի առաջ՝ նայեց շուրջը, մատը վեր բարձրացրեց. «այսինքն՝ թէ լռել»—զուտ իտալական մի ժեստ,—և ապա սկսեց կարդալ:

VII.

Մայլցը 30-ական թւականների ֆրանկֆուրտեան մի գրող էր, որը տեղական բարբառով գրած իր կարճ ու թեթև, ծիծաղաշարժ ու աշխոյժ կատակերգութիւնների մէջ, թէև ոչ այնքան խորը հիւմօրով, դուրս էր բերում տեղական ֆրանկֆուրտեան տիպերը։ Բանից երևաց, որ Ջեմման, իսկապէս՝ շատ հիանալի էր կարդում՝ կատարեալ դերասանի պէս։ Նա ընդգծում էր ամեն մի դէմք և յաջող կերպով պահպանում նրա բնաւորութիւնը, գործադրելով երբեմն էլ իր միմիկան, որը նա ժառանգել էր իտալական արիւնի հետ միասին, չը խնայլով՝ ոչ իր քնքուշ ձայնը, ոչ իր գեղեցիկ դէմքը. նա, երբ հարկաւոր էր լինում պատկերացնել կամ խելքից պակասած պառաւին, կամ չիմար բուրգօմիստրին՝ ամենածիծաղաշարժ ծամածռութիւններն էր անում, աչքերը խեթխեթացնում, քիթը կնճռոտում, լեզուն թլատացնում, ճչում... ինքը, կարդալու միջոցին՝ չէր ծիծաղում, բայց երբ ունկընդիրները (բացառութեամբ, ճշմարիտ է, Պանտալէօնից. վերջինս իսկոյն և եթ հեռացաւ զայրացած՝ հէնց որ խօսք ընկաւ quel ferroflucto Tedesco-ի մասին) ընդհատում էին նրան միահամուռ քրքիջով, գիրքը նա «դնում էր ծնկե-

րի վրայ ու ինքն էլ զիլ ձայնով կչկչում նրանց հետ միասին, գլուխը դէպի յետ ձգած՝ և այդ միջոցին՝ նրա սև խոպոպիքները, փափուկ, օդականման վեր-վեր էին թռչում պարանոցի շուրջը՝ ծիծաղից ցնցվող ուսերի վրայ։ Քրքիջը վերջանալուն պէս, նա նորից էր վերցնում գիրքը և, դարձեալ լուրջ կերպարանք տալով իր դիմագծերին, վերսկսում կարդալը։ Սանինը բաւականաչափ զարմացած էր աղջկայ վրայ. նրան, մանաւանդ, ապշեցնում էր այն՝ թէ ինչ հրաշքով մի այդպիսի խղճալական—գեղեցիկ դէմք յանկարծ ընդունում էր այդպիսի կօմիքական, երբեմն էլ, համարեա, գռեհկութեան հասնող արտայայտութիւն։ Աւելի պակաս բաւարարութեամբ էր կարդում Ջեմման երիտասարդ աղջկերանց, այսպէս ասած՝ «jeunes premières»-ի դերերը. մանաւանդ, չէր յաջողվում սիրային տեսարանները։ Նա ինքն էլ էր զգում այդ բանը և ուստի՝ նրանց արտայայտում էր մի փոքր ծաղրելով, կարծես, չէր հաւատում այդ բոլոր ոգևորուած երդումներին ու ճճճռան խօսքերին, որոնցից, պէտք է ասած, ինքը հեղինակն էլ զրսպել էր իրան, որքան որ հնարաւոր էր եղել։

Սանինը չը նկատեց թէ ինչպէս անցաւ երեկոն, և միայն այն ժամանակ մտաբերեց իր առաջիկայ ճանապարհորդութեան մասին, երբ խփեց տասը ժամը։ Նա այնպէս վեր թռաւ աթոռի վրայից, որ, կարծես, խայթեցին նրան։

—Ի՞նչ պատահեց,—հարցրեց Ֆրաու Լէհնօրան։

—Ախր ես այսօր պէտք է ուղևորուէի դէպի Բերլին, և արդէն հանրակառքի տոմսակն էլ վերցրել եմ։

—Իսկ ե՞րբ է ուղևորվում հանրակառքը այստեղից։

—Տասն և կէսին։

—Ուրեմն, այլևս չէք կարող հասնել,—նկատեց Զեմման. մնացէք... ես քիչ էլ կը կարդամ։

Տոմսակների բոլոր փողն էք վճարել, թէ միայն կանխավճար էք տուել.—հետաքրքրուեց իմանալու Ֆրաու Լէհնօրան։

—Բոլորը.—ախուր, կուչ-կուչ գալով սըրտանջայց Սանչինը։

Զեմման նայեց նրա վրայ աչքերը կկոցելով ու ծիծաղեց,—մայրը նրան հայհոյեց.—Երիտասարդը զուր տեղից ծախսեց փողը, իսկ դու ծիծաղում ես։

—Բան չը կայ, պատասխանեց Զեմման, այդ նրան չի սնանկացնի. փոխարէնը մենք կաշխատենք մխիթարել նրան։ Ո՞ւզում էք լիմօնադ բերեմ։

Սանչինը խմեց մի բաժակ լիմօնադ. Զեմման վերսկսեց Մայլցի ընթերցանութիւնը, և ամեն ինչ դարձեալ առաջ գնաց սահուն կերպով։

Ժամացոյցը խփեց գիշերվայ տասներկուսը։ Սանչինը սկսեց հրաժեշտ տալ։

—Այժմ դուք պէտք է մնաք Ֆրանկֆուրտում մի քանի օրով, ասաց նրան Զեմման։ Շտապելու ի՞նչ ունէք։ Ուրիշ քաղաքում սրանից աւելի ուրախ չի լինի ձեզ համար։—Նա լռեց։—Ճշմարիտ եմ ասում, չի լինի,—աւելացրեց աղջիկը ու ժպտաց։ Սանչինը ոչինչ չը պատասխանեց. մտածում էր, որ, քսակի դատարկութեան պատճառով էլ է, նա, կամայ թէ ակամայ, ստիպուած է մնալու Ֆրանկֆուրտում, մինչև որ պատասխան կը ստանայ Բերլինից՝ մի ընկերոջից, որին նա պատրաստվում էր գրել և փող ուզել։

—Մնացէք, մնացէք,—վերջապէս խօսեց Ֆրաու Լէհնօրան էլ։ Ձեզ կը ծանօթացնենք Զեմայի փեսացուի՝ պ-ն Կարլ Կլիւբերի հետ։ Նա այսօր չը կարողացաւ գալ. որովհետև սաստիկ զբաղուած է մագազինում... դուք, հաւանօրէն, տեսած կը լինէք Ցէյլի վրայ մահուդեղէն ու մետաքսեղէն ապրանքների ամենամեծ մագազինը։ Ահա այնտեղ նա ամենագլխաւորն է։ Բայց շատ ուրախ կը լինի ձեզ ներկայանալու և ծանօթանալու։

Այդ տեղեկութիւնը Սանչինին, Աստուած գիտէ թէ ինչու, մի քիչ վշտացրեց։ «Բաղդաւոր մարդ է այդ փեսացուն»—ծագեց նրա գլխում։ Նա նայեց Զեմմային, և, իրան թւաց, որ նրա աչքերի մէջ ծաղրական արտայայտութիւն նկատեց ինքը։

Նա սկսեց գլխի շարժումով հրաժեշտ տալ նրանց։

—Մինչ վաղը։ Ուղիղ չէ. մինչ վաղը,— հարցրեց Ֆրաու Լէհնօրան։

—Մինչ վաղը.—արտասանեց Ջեմման ոչ թէ հարցական եղանակով, այլ դրական, կարծես ուրիշ կերպ էլ լինել չէր կարող։

—Մինչ վաղը.—ձայնակցեց Սանինը համաձայնուելով։

Էմիլը, Պանտալէօնը և Տարտալեա շնիկը ուղեկցեցին նրան մինչև փողոցի անկիւնը։ Պանտալէօնը չը կարողացաւ զսպել իրան և արտայայտեց իր անբաւականութիւնը Ջեմմայի ընթերցանութեան առիթով։

—Ի՞նչպէս չի ամաչում։ Կոտրտւում է, ճչում—una carricatura։ Նրան սազում է Մերոպը ներկայացնել կամ Կլիտեմնեստրը, որևէ վսեմ, տրագիքական մի բան. մինչդեռ նա ծաղրում է ինչ որ անշնորք գերմանուհու։ Այդպէս խօսում ես էլ եմ կարող... Մերց, կերց, սմերց,—աւելացրեց նա խռպոտ ձայնով, դէմքը դուրս ցցելով և մատերը լայն բաց անելով։ Տարտալեան հաչեց նրա վրայ, իսկ Էմիլը սկսեց կչկչալով ծիծաղել։ Ծերունին իսկոյն յետ դարձաւ։

Սանինը վերադարձաւ «Սպիտակ կարապի» հիւրանոցը (նա իր իրերէնները թողել էր այնտեղ ընդհանուր դահլիճում) բաւականին անորոշ հոգեկան տրամադրութեան մէջ։ Այդ բոլոր

Գերմանա-Ֆրանս-իտալական խօսակցութիւնները դեռ ևս հնչում էին նրա ականջներում։

—Հարմնացու է։—Շշնջում էր նա, անկողին մտնելով իրան յատկացուած համեստ համարում։ Գեղեցկուհի է հա։ Սակայն ինչու համար ես ծնացի։

Բայց և այնպէս՝ յաջորդ օրը նա նամակ ուղարկեց Բերլին իր ընկերոջը։

VIII.

Նա դեռ ևս չէր հագնուել, երբ հիւրանոցի սպասաւորը յայտնեց նրան երկու պարոնների գալստեան մասին։ Նրանցից մէկը Էմիլն էր, միւսը՝ մի աչքի ընկնող, երկարահասակ երիտասարդ տղամարդ՝ բարետեսիլ դէմքով. դա հեռ Կարլ Կլիւբերն էր. գեղեցկուհի Ջեմմայի նշանածը։

Պէտք է կարծել, որ ամբողջ Ֆրանկֆուրտում այն ժամանակ այնպիսի քաղաքավարի, վայելուչ, լրջախոհ դէմքով և սիրալիր գլխաւոր կօմմի,*) ինչպիսին էր պ-ն Կլիւբերը, չը կար ոչ մի մագազինում։ Նրա տուալետի անբասիրութիւնը կանգնած էր համահաւասար բարձրութեան վրայ նրա քայլուածքի արժանաւորու-

*) Գործակատար

թեան հետ. գեղեցկութեամբ, իրաւ է, փոքր ինչ հպարտ ու զսպուած, անգլիական տեսակի (երկու տարի նա ապրել էր Անգլիայում), բայց և այնպէս՝ գրաւիչ ու ընտիր ձևերով: Առաջին իսկ հայեացքից ակներև էր դառնում, որ այդ գեղեցիկ, մասամբ խիստ, հիանալի դաստիարակուած ու լաւ լուացուած երիտասարդը ընտելացել էր հնազանդուել իրանից մեծերին և հրամայել իրանից ցած կանգնածներին, և, որ իր ժազազինի վաճառատեղանի եռքում նա անխուսափելիօրէն պէտք է որ յարգանք ներշնչէլիս լինէր իրանից ապրանք առնողներին: Որ նա գերբնական ազնուութեան տէր մարդ էր, դրանում ամենաանկնչան կասկած անգամ լինել չէր կարող. բաւական էր միայն նայել նրա հասո, օսլայած փողպատներին՝ համոզվելու համար: Եւ նրա ձայնն էլ իսկապէս ճիշտ այնպէսը դուրս եկաւ, ինչպիսին որ պէտք էր սպասել. ուժեղ և ինքնավստահ—հիւթալի, բայց ոչ այնքան բարձր, նոյն իսկ մի փոքր քաղցրաձայն տեմբրով՝ հընչիւնով: Այդ տեսակ ձայնով, մանաւանդ, շատ յարմար է հրամաններ տալ առորադրեալ կօմմինեներին. «ցոյց տուէք լիօնեան կարմրագոյն թաւշի այս ինչ ապրանքը» և կամ թէ՝ «աթոռ մատուցէք այս տիկնոջը»:

Պ-ն կլիւբերը իր ծանօթութիւնը սկսեց նրանից, որ նախ՝ ներկայացրեց իրան, ըստ ուրում այնպէս աղնւօրէն ճկեց իրանը, այնպէս հաճելի կերպով իրար մօտեցրեց ոտքերը և այնպէս կիրթ ու հմուտ շարժումով կրունկը կրունկին խփեց, որ ամեն մէկը տեսնելիս՝ պէտք է անպատճառ զգար՝ թէ «այդ մարդու սպիտակեղէններն էլ, հոգեկան յատկութիւններն էլ առաջնակարգ տեսակից են»: Մերկացրած աջ ձեռքի կազմուածքը (շվեդական ձեռնոց հագցրած ձախով նա բռնել էր հայելու պէս փայլուն-ացրած գլխարկը, որի յատակում ընկած էր միւս ձեռնոցը). այդ աջ ձեռքի կազմուածքը, որը նա համեստօրէն, բայց հաստատակամութեամբ մեկնեց Սանինին, գերազանցում էր ամեն տեսակ հաւանականութիւնից. իւրաքանչիւր եղունգը, իր տեսակի մէջ, կատարելութիւն էր ներկայացնում: Ապա նա յայտնեց ամենաընտիր գերմաներէնով, որ փափագում էր յայտնել իր յարգանքն ու երախտագիտութիւնը պարոն օտարերկրացուն, որն այնքան կարևոր ծառայութիւն էր մատուցել իր ապագայ ազգականին՝ իր նշանածի եղբօրը: Այդ ասելիս՝ նա ձախ ձեռքը, որով բռնել էր գլխարկը, ուղղեց էմիլի կողմը, որը, կարծես, ամաչեց և երեսը շուռ տալով դէպի պատուհանը, մատը դրեց բերնում: Պ-ն կլիւբերը, միևնոյն ժամանակ աւելացրեց, որ իրան բաղդաւոր կը համարէր, եթէ ինքն էլ իր կողմից կարող լինի որևէ հաճելի բան անել պ-ն օտարականի համար: Սանինը պատասխանեց, բայց մի քիչ դժւարութեամբ, նոյնպէս գերմա-

ըերէն, որ շատ ուրախ է... որ իր ծառայութիւնը աննշան բան էր... և խնդրեց իր հիւրերին նստել: Հետ կլիւբերը շնորհակալութիւն յայտնեց և, մի ակնթարթում տարածելով ֆրակի ներքնամասը, նստեց աթոռի վրայ, բայց այնքան թեթևութեամբ, ու նստել էր այնպէս անհաստատ, որ չէր կարելի չը հասկանալ՝ թէ «այդ մարդը նստեց միայն քաղաքավարութիւնից դրդուած և այս րոպէին էլ վեր կը թռչի նստած տեղից»: Եւ, իրաւ, նա անմիջապէս վեր թռաւ տեղից ու ամաչկոտութեամբ երկու քայլ անելով դէպի առաջ, կարծես, պատրաստուելով պարելու, յայտնեց, որ, ցաւօք սրտի, աւելի երկար մնալ չէ կարող. որովհետև մագազին է շտապում:—Նախ և առաջ՝ գործերը, բայց որովհետև վաղը կիրակի օր է, ուստի նա ֆրաու Լէնօրայի ու ֆրէյլէյն Ջեմմայի համաձայնութեամբ, զարճալի զբօսանք է կազմակերպում դէպի Սօդէն, որին մասնակցելու համար պատիւ ունի հրաւիրելու պ-ն օտարերկրացուն, և յոյս ունի, որ նա չի հրաժարուի պատուել այդ զբօսանքը իր ներկայութեամբ: Սանկինը չը հրաժարուեց պատուել. և հետ կլիւբերը, երկրորդ անգամ ներկայացնելով իրան, դուրս գնաց, հաճելի կերպով փայլելով՝ սիսեռագոյն փափուկ կօրիցից կարուած իր անդրավարտիկով և նոյնքան էլ հաճելի կերպով ճրճռացնելով իր կօշիկների նրբանով:

IX.

Էմիլը, որ դեռ ևս շարունակում էր երեսը պատուհանի կողմն արած կանգնել, նոյն իսկ Սանկինի կողմից արուած «նստելու» հրաւէրից յետոյ էլ, դէպի ձախ շուռ եկաւ, հէնց որ իր ապագայ ազգականը դուրս գնաց, և, երեխայի նման կուչ-կուչ գալով ու կարմրելով՝ հարցրեց Սանկինին թէ կարող է նա, արդեօք, մի քիչ ժամանակ էլ իրա մօտ մնալ: «Այսօր ինձ աւելի լաւ եմ զգում, աւելացրեց նա, բայց բժիշկը արգելեց ինձ աշխատել»:

—Մնացէք. դուք ինձ ամենևին չէք խանգարում, պատասխանեց իսկոյն Սանկինը, որը, ինչպէս առհասարակ ամեն մի իսկական ռուս, ուրախ էր օգտվելու առաջին իսկ շարժառիթից, միայն թէ ինքը ստիպուած չը լինեը որևէ բան անել ինքնաբերաբար:

Էմիլը շնորհակալութիւն յայտնեց, և ամենակարճ ժամանակամիջոցում ընտելացաւ թէ նրան և թէ նրա սենեակին. դիտում էր նրա իրերէնները, հարց ու փորձ էր անում, համարեա, իւրաքանչիւր իրի մասին. թէ որտեղ է նա գնել. ինչո՞ւմն է նրա արժանաւորութիւնը: Օգնեց Սանկինին սափրուելու, բան որում նկատեց, որ նա իզուր բեխերը չէ թողնում, վերջապէս, հաղորդեց բազմաթիւ նորութիւններ իր մօր, քրոջ,

Պանտալէօնի, և մինչև անգամ Տարտալեա շնիկի մասին ու, ընդհանրապէս, նրանց ամբողջ կենցաղի և նիստուժասին։ Երկչոտութեան և ամաչկոտութեան նշանն անգամ չէր երևում այլևս Էմիլի մէջ. նա յանկարծ չափազանց մտերմական վերաբերմունք զգաց դէպի Սանինը և ամենևին ոչ այն պատճառով, որ նա նախորդ օրը փրկել էր իր կեանքը, այլ որովհետև նա այնպիսի համակրելի մարդ էր։ Նա չէր յապաղեց վստահանալ Սանինին իր բոլոր գաղտնիքները։ Առանձին գայրոյթով նա պնդում էր, որ իր մայրը անպատճառ ուզում է նրան վաճառական դարձնել, մինչդեռ ինքը գիտէ, հաստատ գիտէ, որ ծնուած է նկարիչ, երաժշտագէտ, երգիչ լինելու համար, որ թատրոնը իր իսկական կոչումն է, որ մինչև անգամ Պանտալէօնն էլ է նրան խրախուսում, մինչդեռ պ-ն Կլիւբերը պահում է մայրիկի կողմը, որի վրայ մեծ ազդեցութիւն ունի, և որ հէնց իրան վաճառական պատրաստելու միտքն էլ, իսկապէս, պատկանում է պ-ն Կլիւբերին, որի հասկացողութեամբ աշխարհում ոչ մի բան չէ կարող համեմատուել վաճառականի կոչման հետ։ Վաճառել մոռուդ ու թաւիշ և խաբել հասարակութեանը՝ վերցնելու նրանից «Narren—oder Russen—Preise» (հրեշաւոր—կամ ռուսական գները),—ահա նրա ամբողջ իդէալը։ *)

*) Առաջներում, և գուցէ, հէնց այժմ էլ դեռ ևս

—Է՛, պրծաք. այժմ հարկաւոր է մեզ մօտ գնալ,—բացականչեց Էմիլը, հէնց որ Սանինը վերջացրեց իր տուալետը և նամակ գրեց Բերլին ուղարկելու համար։

—Դեռ ևս վաղ է,—նկատեց Սանինը։

—Այդ ոչինչ չէ նշանակում, ասաց Էմիլը, փաղաքշաբար մօտենալով նրան։ Գնանք։ Նախ՝ կը մտնենք պօստատունը և ապա այնտեղից էլ՝ մեզ մօտ։ Ջեմման այնքան կ'ուրախանայ ձեզ տեսնելով։ կը նախաճաշէք մեզ մօտ... Դուք կարող էք որևէ բան ասել մայրիկին իմ մասին, իմ ապագայ ասպարիզի մասին...

—Դէ լաւ, գնանք,—ասաց Սանինը։

Եւ նրանք դուրս եկան ու գնացին միասին։

X.

Ջեմման իրաւ որ ուրախացաւ նրա գալուն համար. ֆրաու Լէնօրան նոյնպէս ողջունեց նրան շատ բարեկամաբար։ Երևում էր, որ նախորդ օրը նա երկուսի վրայ էլ լաւ տպաւորութիւն էր

բոլորովին չէ վերացել այդ սովորութիւնը,—երբ մայիսամսից սկսած բազմաթիւ ռուսներ գալիս են Ֆրանկֆուրտ, բոլոր մագազիններում ապրանքների գները աւելացնում էին միանգամից, և դրան անուանում էին. «Russen»—կամ, աւելի «Narren—Preise»։

թողել։ Էմիլը վազեց նախաճաշի ժասին կարգադրութիւն անելու, նախապէս փսփսալով Սանինի ականջին. «չը մոռանաք»։

— Չեմ մոռանայ,— պատասխանեց Սանինը։

Ֆրաու Լէնօրան այնքան էլ առողջ չէր ըզգում իրան. նա տառապում էր միգրենից՝ գլխացաւից, և թիկնաթոռի վրայ ընկած՝ աշխատում էր չը շարժուել։ Չեմման հագել էր դեղին լայն բլուզ, որի վրայից կապել էր կաշուէ սև գօտին։ Նա նոյնպէս յոգնած էր երևում և թեթև գունատուած. մութ շրջանակները բոլորել էին նրա աչքերը, որոնց փայլը, սակայն, չէր նուազել այդ բանից, իսկ գունատութիւնը մի տեսակ խորհրդաւորութիւն և գրաւչութիւն էր տալիս նրա դէմքի կլասսիքական խիստ դիմագծերին։ Սանինին այդ օրը, մանաւանդ, ապշեցնում էր Չեմմայի ձեռքերի ընտիր գեղեցկութիւնը. երբ վերջինս ուղղում էր և պահում նրանցով իր սև, փայլուն խոպոպիքները, Սանինը աչքերը չէր կարողանում հեռացնել նրա երկար ու ճկուն մատներից, որոնք իրարից հեռու-հեռու էին այնպէս, ինչպէս որ Ռաֆայելեան Ֆօրնարինայինը։

Դուրսը շատ շոգ էր. նախաճաշից յետոյ Սանինը կամենում էր հեռանալ, բայց նրան չը թողին՝ նկատելով, որ այդպիսի մի օր աւելի լաւ կը լինի բոլորովին չը շարժուել տեղից, և նա ճնշաց։ Յետևի սենեակում, ուր նա նստել էր իր տանտիրուհիների հետ միասին, թագաւորում

էր զովը, լուսամուտները նայում էին դէպի ակացիաներով բուսած փոքրիկ պարտէզը։ Բազմաթիւ մեղուներ ու վայրենի ճանճեր եռանդով ազդում էին, ոսկէ ծաղիկներով զարդարուած՝ նրանց խիտ ճղների մէջ. կիսափակ ծածկոցների ու իջեցրած վարագոյրների արանքից սենեակ էր հասնում այդ անընդհատ ձայնը. նա խօսում էր դրսևում տիրող տօթի մասին, և դրանով էլ աւելի ևս ախորժելի էր թւում փակ ու յարմար բնակարանի զովութիւնը։

Սանինը խօսում էր յաճախ, նախորդ օրվայ նման, բայց այլևս ոչ Ռուսաստանի և ոչ էլ ռուսական կեանքի մասին։ Կամենալով սիրաշահել իր երիտասարդ բարեկամին, որին, նախաճաշից անմիջապէս յետոյ, ուղարկեցին պ-ն Կլիբերի մօտ հաշուապահութեամբ վարժուելու, նա խօսք բաց արեց գեղարուեստի և առևտուրի համեմատական շահաւէտութեան մասին։ Նա չէր զարմանում, որ Ֆրաու Լէնօրան առևտուրի կողմնակից էր. նա այդ բանը սպասում էր նրանից, սակայն դուրս եկաւ, որ Չեմման էլ էր մօր հետ համաձայնութիւն։

— Եթէ դու գեղարուեստագէտ ես և մանաւանդ երգիչ, պնդում էր նա եռանդով շարժելով ձեռքը վերևից ներքև, եղիր անպատճառ առաջնակարգ տեղին։ Երկրորդականը՝ արդէն անպէտք բան է։ Իսկ ով գիտէ. կարող ես, արդեօք, հասնել առաջնակարգ տեղին։

Պանտալէօնը, որ նոյնպէս մասնակցում էր այդ խօսակցութեանը (նրան իրըև վաղեմի ծառայի և ծեր մարդու թոյլատրվում էր նոյն իսկ նստել տանտէրերի ներկայութեամբ. առհասարակ իտալացիները էտիքետի կողմից շատ էլ խստապահանջ չեն), պանտալէօնը, հասկանալի է, որ ջերմ պաշտպան էր գեղարուեստի: Ճշմարիտն ասած՝ նրա բերած ապացոյցները բաւականին թոյլ էին. նա ամենից շատ խօսում էր՝ թէ նախ և առաջ հարկաւոր է ունենալ d'un certo estro d'inspirazione—ոգևորութեան ուժգնութիւն, ոգևորութեան թափ, աւիւն: Ֆրաու Լէնօրան նկատեց նրան, որ ինքը՝ պանտալէօնն էլ, իհարկէ, ունեցել է այդ «estro»-ն մինչդեռ...—Ես թշնամիները ունէի,—մռայլ դէմքով նկատեց պանտալէօնը:

— Իսկ ինչ գիտես դու (իտալացիները, ինչպէս յայտնի է, շուտ են «դու»-ին վերադառնում), որ էմիլը թշնամիներ չի ունենայ, եթէ նրանում նոյն իսկ երևան էլ գալու լինի այդ «estro»-ն:

—Դէ լաւ, նրանից չարչի պատրաստեցէք,—բարկացած պատասխանեց պանտալէօնը.—իսկ Ջիօվան Բատիստան այդպէս երբէք չէր վարվի, չը նայելով՝ որ ինքը քաղցրաւենիք պատրաստող էր:

—Ջիօվան Բատիստան՝ իմ ամուսինը խոհեմ մարդ էր, և եթէ երիտասարդութեան ժամանակ նա հրապուրվում էլ էր...

Ծերունին, սակայն, այլ ևս ոչինչ լսել չէր ուզում, ու հեռացաւ—գնաց, մի անգամ էլ կըշտամբանքով արտասանելով. իսկ Ջիօվան Բատիստան...

Չեմման բացականչեց, որ եթէ էմիլը իրան հայրենասէր զգար ու ցանկանար իր բոլոր ոյժերը նուիրել Իտալիայի ազատութեանը, այն ժամանակ, իհարկէ, մի այդչափ վսեմ ու սրբազան գործի համար կարելի էր զոհաբերել ապահովուած ապագան, բայց ոչ թատրոնի համար: Այդ խօսքերի վրայ Ֆրաու Լէնօրան յուզուեց և սկսեց խնդրել իր աղջկանը, որպէսզի նա, գոնէ, խելքահան չ'անէ եղբօրը, և միայն բաւականանայ նրանով, որ նա ինքը այդպիսի կատարի հանրապետական է:

Արտասանելով այդ խօսքերը, Ֆրաու Լէնօրան ձեռ քաշեց և սկսեց դանդատուել գլխից, որը, իր ասելով, «պատրաստ էր տրաքուելու» (Ֆրաու Լէնօրան, ի յարգանս հիւրի, խօսում էր աղջկայ հետ ֆրանսերէն):

Չեմման իսկոյն սկսեց խնամք տանել, փայփայել նրան, կամաց փչում էր նրա ճակատը, նախապէս թրջելով օդեկոլօնով, զգուշութեամբ համբուրում էր նրա այտերը, գլուխը ուղղում բարձերի վրայ, արգելում էր խօսել և կըրկին ու կրկին համբուրում էր նրան: Յետոյ, դառնալով Սանինին, սկսեց պատմել կիսակատակով, կիսասրտաշարժուած եղանակով՝ թէ ինչ-

պիսի հիանալի մայր ունի ինքը, և թէ ինչպիսի գեղեցկուհին էր նա, «ինչ եմ ասում ես՝ թէ էր. նա հէնց այժմ էլ սիրուն է։ Նայեցէք այստեղ, նայեցէք. ինչ աչքեր ունի»։

Ջեմման մի ակնթարթում հանեց գրպանից սպիտակ թաշկինակը, նրանով ծածկեց մօր դէմքը և ապա, դանդաղօրէն իջեցնելով եղրը վերևից ներքև, հեռուհեռէ բաց արեց Ֆրառու Լէնօրայի ճակատը, ունքերը և աչքերը. մի փոքր սպասեց ու խնդրեց բանալ նրանց։ Մայրը հնազանդուեց։ Ջեմման հիացմունքից բացականչեց (Ֆրառու Լէնօրայի աչքերը, իսկապէս որ, շատ գեղեցիկ էին) և թաշկինակը արագութեամբ ձգելով մօր դէմքի ներքևի՝ աւելի պակաս կանոնաւոր մասի վրայ, նորից սկսեց համբուրել մօրը։ Ֆրառու Լէնօրան ծիծաղում էր, թոյլ կերպով երեսը շուռ տալիս և, կեղծ չանքեր անելով, դէն հրում իրանից աղջկանը։ Վերջինս նոյնպէս ձևանում էր՝ թէ, իբր, պայքարում է մօր հետ, և փաղաքշանքով կպչում էր նրան, բայց ոչ կատուի պէս, ոչ ֆրանսիական ձևով, այլ իտալական այն նազելիութեամբ, որի մէջ ամեն ժամանակ զգացվում է ոյժի ներկայութիւնը։

Վերջապէս Ֆրառու Լէնօրան նկատեց աղջկանը, որ արդէն յոգնեց..., այն ժամանակ Ջեմման իսկոյն խորհուրդ տուեց նրան մի քիչ քնել հէնց այդտեղ թիկնաթոռի վրայ.—իսկ մենք պարոն ռուսի հետ. «avec le monsieur russe»

այնպէս հանգիստ կը ճնանք, այնպէս հանգիստ... ինչպէս փոքրիկ մկները... «comme des petites souris»։ Ֆրառու Լէնօրան, նրան պատասխանելու փոխարէն, ժպտաց, փակեց աչքերը, և թեթև կերպով հառաչելով՝ նոյնեց։ Ջեմման նստեց նրա կողքի նստարանի վրայ և այլ ևս չը շարժուեց տեղից, միայն երբեմն-երբեմն մի ձեռքի մատը մօտեցնում էր շրթունքներին, իսկ միւսով պահում մօր գլխատակի բարձը, ու հազիւ լսելի ձայնով շշուկացնում՝ խեթ-խեթ նայելով Սանինի վրայ, երբ վերջինս թոյլ էր տալիս իրան աւելի աշխոյժ շարժուելու անգամ։ Եւ դա այն հետևանքն ունեցաւ, որ, վերջի վերջոյ, Սանինն էլ, կարծես, քարացած ճնաց իր տեղում, ու նստել էր անշարժ, ինչպէս մի զմայլուած, և իր հոգու բոլոր ոյժով հրճվում էր այն պատկերով, որը այդ բոպէին ներկայացնում էին նրան. թէ այդ կիսախաւար սենեակը, որտեղ այս ու այն կողմում վառ կետերով կարմրին էին տալիս, հին ձևի կանաչ բաժակների մէջ դրուած՝ թարմ, շքեղ վարդերը, թէ այդ քնած կինը, համեստօրէն հաւաքած-ծալած ձեռքերով, և բարձի ձիւնանման սպիտակութեամբ երիզուած բարի ու յոգնած դէմքով, և թէ այդ երիտասարդ արթուն հակող, նոյնպէս բարի, խելօք, մաքուր ու աննկարագրելի գեղեցիկ էակը, այնպիսի խոր-բունկ, սև ստուերարկուած, և, միևնոյն ժամանակ, բոցավառ աչքերով... Ինչ է այդ։ Երազ,

արդեօք, թէ՞ հէքեաթ։ Եւ ինչպէս է պատահել, որ ինքը Սանինը ընկել է այդտեղ՝ դրանց շըրջանը։

XI

Դրսևի դրան զանգը զընգաց յանկարծ։ Մի երիտասարդ գեղջուկ, մորթի գլխարկը գլխին, կարմիր ժիլետով, փողոցից ներս մտաւ կօնդիտերանոցը։ Առաւօտից սկսած ոչ մի գնող չէր մտել այնտեղ...—Ահա այսպէս ենք մենք առևտուր անում,— նախաճաշի ժամանակ ֆրաու Լէնօրան հառաչելով նկատեց Սանինին։ Նա շտապում էր ննջել. Զեմման վախենում էր հեռացնել ձեռքը բարձի վրայից, այդ պատճառով փսփսաց Սանինին. «Գնացէք իմ փոխարէն առևտուր արէք»։ Սանինը իսկոյնևեթ մատների ծայրերի վրայով դուրս գնաց կօնդիտերանոցը։ Գեղջուկ երիտասարդը պահանջում էր քառորդ գրվանքայ մեատնի լէպեօշկաներ։—Ո՞րքան պէտք է ատանալ,—շշնջալով հարցրեց Սանինը Զեմմայից դրան արանքից։—Վեց կրէյցեր *), նոյնպիսի շշնջոցով պատասխանեց Զեմման։ Սանինը կշռեց քառորդ գրվանքայ, փաթաթեց լէպեօշկաները, վայր թափեց նրանց, նորից հաւաքեց,

*) Կրէյցերը աւստրիական դրամ է, 1 կոպէկ։

փաթաթեց, դարձեալ շաղ տուեց. վերջապէս յանձնեց գնողին, ստացաւ փողերը... երիտասարդը նայեց նրա վրայ զարմացած, ճմրթելով իր գլխարկը փորի վրայ, իսկ հարևան սենեակում Զեմման, բերանը պինդ փակած, քիչ էր ճեռւմ թէ մեռնէր ծիծաղից։ Հազիւ էր դուրս դնացել այդ առաջին գնողը, երբ ներս մտաւ մի ուրիշը, յետոյ՝ երրորդը... «Ինչպէս երևում է ձեռքս թեթև է»—մտածեց Սանինը։ Երկրորդը մի բաժակ օրշադ *) պահանջեց, երրորդը՝ կէս գրվանքայ կօնֆեկտ։ Սանինը գոհացում տուեց նրանց. ոգևորուելիւնից շրխշկացնելով բաժակները, առաջ քաշելով ափսէները և ժրութեամբ մատները խրելով արկղների ու պնակների մէջ։ Հաշիւը ստանալիս՝ պարզուեց, որ օրշադը նա էժանացրել էր, իսկ կօնֆեկտների համար երկու կրէյցեր աւելորդ էր վերցրել։ Զեմման չէր դադարում ծածուկ ծիծաղելուց. ինքը Սանինը նոյնպէս արտասովոր ուրախութիւն էր զգում. հոգու մի ինչ որ առանձին բաղդատուր արամադրութիւն։ Թւում էր, որ նա այդպէս պարեր անդամ կը ճար առևտրատեղան եռևում, կը վաճառէր կօնֆեկտներ ու օրշադ, քանի որ սիրելի էակը նայում է դրան յետևից իր վրայ մտերմաբար—ծաղրական աչքե-

*) Օրշադը նշակաթից և շաքարից պատրաստած խմիչք է։

րով, իսկ ամառային արեգակը, թափանցելով պատուհանների առաջ բուսնող շագանակների մեծ տերևների արանքից, լցնում է ամբողջ սենեակը կէսօրուայ իր շողերի, կէսօրուայ իր տաուէրների կանաչագոյն ոսկէ փոշիով և մարդու սիրտը քնքշանում է մեղկութեան, անհոգութեան և երիտասարդութեան՝ նախնական երիտասարդութեան քաղցրախորժ խոնջութեամբ:

Զորրորդ այցելուն մի գաւաթ տուրճ խնդրեց. հարկ եղաւ դիմելու Պանտալէօնին (էմիլը դեռ ևս չէր վերադարձել պ-ն Կլիւբերի մագազինից): Սանինը դարձեալ եկաւ նստեց Զեմմայի կողքին: Ֆրաու Լէնօրան շարունակում էր քնել ի մեծ բաւականութիւն իր աղջկայ.—Մայրիկի միգրենը անցնում է քնած ժամանակ,—նկատեց նա: Սանինը խօսեց, իհարկէ, առաջուայ նման շշնջալով, իր արած «առևտուրի» մասին. բոլորովին լրջօրէն տեղեկութիւն էր հարցնում զանազան քաղցրաւէնիքների գների մասին: Զեմման պատասխանում էր նրան նոյնպէս լրջօրէն, ասում էր գները և, մինչ երկուսն էլ ներքուստ ու մեժաժանակ ծիծաղում էին, կարծես, խոստովանելով, որ ամենածիծաղելի կատակն են խաղում, յանկարծ փողոցում շարմանկան սկսեց ածել «Ֆրէյշիւցից»—«Durch die Felder, durch die Auen»... մեղեդին: Լալկան ձայները մրմնջացին, դողալով ու շվշվացնելով, անշարժ օդի մէջ: Զեմման ցնցուեց... «Նա կը զարթեց-

նի մայրիկին»: Սանինը իսկոյն դուրս թռաւ փողոց, մի քանի կրէյցեր դրեց շարմանկան ածողի բուռը, և ստիպեց նրան լռել ու հեռանալ իրանց մօտից: Երբ նա վերադարձաւ, Զեմման գլխի թեթև շարժումով շնորհակալութիւն յայտնեց և, մտախոհ ժպիտով, ինքն սկսեց հազիւ լսելի ձայնով երգել վերերեան գեղեցիկ մեղեդին, որով Մակը արտայայտում է իր առաջին սիրոյ բոլոր տարակուսանքները: Փիչ յետոյ հարցրեց Սանինին, թէ նա ծանօթ է, արդեօք, «Ֆրէյշիւցին», սիրում է Վեբերին և աւելացրեց նոյնպէս, որ թէև ինքը իտալուհի է, բայց այդ տեսակ երաժշտութիւնը ամենից աւելի է սիրում: Վեբերից խօսակցութիւնը անցաւ բանաստեղծութեանը և ըօմանտիզմին, Հօֆմանին, որին դեռ այն ժամանակ կարդում էին աժենքը...

Իսկ ֆրաու Լէնօրան շարունակում էր քնել, և դեռ քիչ-քիչ էլ խրխռացնում էր, մէկ էլ արեգակի շողերը նեղ շերտերով ներս էին թափանցում պատուհանների ծածկոցների միջից, և թէև աննկատելի, բայց այնուամենայնիւ շարունակ առաջ էին սահում և ճանապարհորդում յատակի վրայով, կահկարասիների, Զեմմայի շորերի, ծաղիկների տերևների ու թերթիկների վրայով:

XII

Բանից դուրս եկաւ, որ Ջեմման այնքան էլ չէր հաւանում Հօֆմանին, և նոյն իսկ զըլանում էր նրան... ձանձրալի։ Նրա պատմուածքների երևակայական մշուշապատ, հիւսիսային տարրը սակաւ ժաչելի էր նրա հարաւի պայծառ բնոյթին։ «Այդ բոլորը հեքեաթներ են, զբաղուած երեխաների համար», հաւատացնում էր նա ոչ առանց արհամարհանքի։ Պօէզիայի բացակայութիւնը նա զգում էր անորոշ կերպով, նոյն իսկ Հօֆմանի մէջ։ Բայց վերջինս մի պատմուածք ունի, որի վերնագիրը նա այժմ մոռացել է, իրան շատ դուր է եկել։ Իսկապէս ասած՝ այդ պատմուածքի սկիզբն է միայն դուր եկել նրան. վերջին մասը նա կամ չէը կարդացել, կամ նոյնպէս մոռացել էր։

Այնտեղ խօսվում է մի երիտասարդի մասին, որը ինչ որ մի տեղ, համարեա, կօնդիտերանոցում պատահում է զարմանալի գեղեցկութիւն ունեցող մի յոյն աղջկայ. վերջինիս ուղեկցում էր մի խորհրդաւոր ու տարօրինակ չափսիրա ծերուկ։ Երիտասարդը առաջին իսկ հայեացքից սիրահարվում է այդ աղջկայ վրայ. վերջինս նայում է նրան այնպիսի խղճալի հայեացքով, որ, կարծես, աղերսում էր ազատելու իրան... Մի վայրկեան միայն երիտասարդը հեռանում է այդտեղից, և երբ վերադառնում է կրկին, այլևս չէ գտնում նոյն տեղում ոչ սիրուն աղջկանը և ոչ էլ ծերուկին. սկսում է որոնել, անընդհատ պատահում է նրանց թարմ հետքերին, հետապնդում, բայց ոչ մի կերպ, և ոչ մի տեղ չէ կարողանում հասնել նրանց։

Գեղեցկուհին յափշտակում յափշտակից չքանում է նրա համար. և նա անկարող է մոռանալ նրա աղերսական հայեացքը ու տանջվում է այն մտքից՝ թէ, շատ կարելի է, իր կեանքի ամբողջ բաղդաւորութիւնը դուրս պրծաւ հէնց իր ձեռքերի միջից։

Հօֆմանը հաղիւ թէ այդպէս է վերջացնում իր պատմուածքը. նա այդպէս յօրինուել էր, այդպէս էլ ծնացել Ջեմմայի յիշողութեան մէջ միայն։

—Ինձ թւում է, արտասանեց նա, որ այդ տեսակ տեսակցութիւններ և դրա նման անջատումներ աշխարհումս պատահում են աւելի յաճախ, քան մենք կարծում ենք։

Սանինը լռեց... և քիչ յետոյ խօսեց... պ-ն Կլիւբերի մասին։ Նա առաջին անգամն էր խօսում նրա մասին. մինչև այդ վայրկեանը չէր էլ յիշում նրան։

Ջեմման իր հերթին լռեց ու մտածմունքի մէջ ընկաւ, թեթև կերպով կծելով ցուցամատի եղունգը, և աչքերը ուղղելով դէպի հակառակ

կողմը։ Յետոյ նա սկսեց գովել իր նշանածին, յիշեց յաջորդ օրուայ զբօսանքի մասին, որը կազմակերպելու էր նա և, շտապ հայեացք նետելով Սանինի վրայ, նորից լռեց։

Սանինը չը գիտէր՝ թէ ինչ բանի մասին խօսակցութիւն սկսէր։

Այդ րոպէին Էմիլը ներս վազեց աղմուկով և զարթեցրեց Ֆրաու Լէնօբային...

Սանինը ուրախացաւ նրա գալստեան համար։ Ֆրաու Լէնօբան վեր կացաւ թիկնաթոռի վրայից։ Ներս մտաւ Պանտալէօնը ու յայտնեց, որ ճաշը արդէն պատրաստ է։ Տանու բարեկամը՝ էքս-երգիչը և միևնոյն ժամանակ ծառան՝ կատարում էր նաև խոհարարի պաշտօնը։

XIII

Սանինը միայն նրանց տանը ճաշից յետոյ էլ։ Նրան դարձեալ չը թողին գնալու՝ միևնոյն օրթը պատճառ բերելով, իսկ երբ օրթն անցաւ, նրան առաջարկեցին գնալ պարտէզը ակացիաների հովում սուրճ խմելու։ Սանինը համաձայնուեց. նա իրան շատ լաւ էր զգում այդտեղ։ Մի քանի պղպջակ կեանքի սահուն ընթացքում երևելի հրաշալիքներ կան թագնուած, և նա անձնատուր էր լինում նրանց բուռն յափշտակութեամբ, առանձին ոչինչ չը պահանջելով ներկայ

օրուանից, բայց և չը մտածելով վաղուանի մասին, ոչ էլ յիշելով երեկուանը։ Ի՞նչ արժէր միայն մերձաւորութիւնը այն տեսակ մի աղջկայ, ինչպիսին էր Ջեմման։ Նա շուտով կը բաժանուի նրանից, և, հաւանօրէն, ընդմիշտ, բայց քանի որ միևնոյն նաւակն է տանում նրանց, ինչպէս այդ ասուած է Ուլանդովեան ռոմանսում, կեանքի սանձահարուած հոսանքներով,— ուրախացիր, զուարճացիր անցորդ։ Եւ ամեն բան այդ բախտաւոր անցորդին թւում էր հաճելի ու սիրելի։ Ֆրաու Լէնօբան առաջարկեց «տրեսետտէ» խաղալ իրա և Պանտալէօնի հետ, սովորեցրեց նրան իտալական այդ ոչ բարդ թըղթախաղին. տարաւ նրանից մի քանի կրէյցերները, և Սանինը շատ գոհ էր այդ բոլորից։ Պանտալէօնը, էմիլի խնդրելով, սիրեց Տարտալիա շնիկին ցոյց տալ իր բոլոր հնարագիտութիւնները. Տարտալեան թռչում էր ձեռափայտի վրայից, «խօսում էր», այսինքն. հաչում էր, փուշտում էր, դնչով փակում էր դուռը, վերցնում-բերում էր իր տիրոջ կոխկրտուած հողաթափները, և, վերջապէս, գինւորական բարձր, հնամաշ գլխարկը գլխին դրած՝ ներկայացնում էր մարշալ Բերնադօտտին, որին Նապալէօն կայսրը խիստ կերպով յանդիմանում էր դաւաճանութիւն գործելու համար։ Նապալէօնի դերը, հասկանալի է, կատարում էր Պանտալէօնը և այն էլ շատ ուղիղ. ձեռքերը ծալել էր կրծքին, և-

ռանկինի գլխարկը խրել աչքերին և խօսում էր խիստ ու կոպիտ բառերով՝ ֆրանսերէն, բայց, Աստուած իմ, ինչ տեսակ ֆրանսերէն լեզուով։ Տարտալեան նստել էր իր սիրոյ առաջ ամբողջովին կուչ եկած, պոչը սեղմած ու շփոթուած, թեք դրուած՝ զինուորական գլխարկին «պօղ կիզիրօկ» արած թաթի տակից՝ թերթելով ու կկոցելով աչքերը. ժամանակ առ ժամանակ էլ, երբ Նապալէօնը բարձրացնում էր իր ձայնը, Բերնադօտտը բարձրանում էր յետևի թաթերի վրայ։ «Fuori, traditore!» — գոռաց, վերջապէս, Նապալէօնը, մոռանալով գայրոյթի բռնկումի րոպէին, որ նա պէտք է միևնոյն վերջ էլ պահպաներ իր ֆրանսիական քնաւորութիւնը, իսկ Բերնադօտտը, գլուխը կորցրած՝ վազեց մաւ դահաւորակի տակը, բայց իսկոյն էլ դուրս թռաւ այնտեղից ուրախ հաչոցով, դրանով, կարծես, ուզում էր իմաց տալ, որ ներկայացումը վերջացել է։ Բոլոր հանդիսականները շատ ծիծաղեցին, իսկ Սանկինը ամենքից աւելի։

Ջեմման ունէր մի առանձին դրաւիչ, անընդհատ, հանդարտ ծիծաղ, դուրեկան, զուարճալի կչկչոցով... Սանկինը այդ ծիծաղից ուղղակի յափշտակուած էր, խելքամաղ լինում. այդ կչկչոցների համար նա պատրաստ էր համբուրել նրան։

Վերջապէս կէս գիշեր դարձաւ։ Հարկաւոր էլ էր ախր պատուհանաչ լինել։ Մի քանի անգամ հրաժեշտ տալով բոլորի հետ, մի քանի անգամ բոլորին ասելով. ցտեսութիւն մինչ վաղը (Էմիլի հետ նա նոյն իսկ համբուրուեց), Սանկինը գնաց տուն, տանելով իր հետ երիտասարդ աղջկայ պատկերը. երբեմն՝ ծիծաղկոտ, երբեմն՝ մտախոհ, երբեմն՝ խաղաղ, նոյն իսկ անտարբեր, բայց միշտ էլ գրաւիչ։ Ջեմմայի աչքերը, երբեմն լայն բացուած, պայծառ և ուրախ՝ ինչպէս ցերեկը, երբեմն թերթերունքները կիսափակ ու անհոգն, սև, ինչպէս գիշերը, կանգնել էին նրա երևակայութեան առջև և օտարոտի աշխուժութեամբ ջնջոտում միւս բոլոր դէմքերն ու մտապատկերները։

Պէն կլիւբերի մասին, ինչպէս և այն պատճառների, որոնք դրդեցին նրան հեռ ֆրանկֆուրտում. մի խօսքով այն բոլոր բաների մասին, որոնք յուզում էին նրան նախորդ օրը, նա այլ ևս չը մտածեց և ոչ մի անգամ։

XIV

Հարկաւոր է, սակայն, մի քանի խօսք էլ Սանկինի մասին ասել։

Նախ և առաջ՝ իր արտաքինով բաւականին լաւ էր նա. վայելչակազմ, բարձրահասակ, դուրեկան՝ մի քիչ, ասենք, տարրալուծուող դիմագծերով, սիրալիր կապուտաւուն աչքեր, ոսկեդոյն-դեղձան մազեր, կաշվի սպիտակութիւնն ու կարմրութիւնը, իսկ որ ամենագլխաւորն է. այն

պարզասիրտ-ուրախ, վստահացող, անկեղծ, սկզբներում մի փոքր ապուշանման արտայայտութեամբ, որով հին ժամանակները իսկոյն կարելի էր լինում ճանաչել համեստ ազնուական ընտանիքների զաւակներին՝ «հայրիկի» որդիներին, լաւ ազնուորդիներին, որոնք ծնունդ ու պարարտացել են մեր լայնածաւալ կիսասարահարթային երկրում. քայլուածքը անվճռական, դէմ ընկնող, ձայնը խօսելիս՝ փսփսացնելով, ժպիտը՝ ինչպէս երեխաներինը՝ հէնց որ աչքդ դցում ես նրա վրայ... վերջապէս թարմութիւն, առողջութիւն, և մեղմութիւն, մեղմութիւն, մեղմութիւն.—ահա ձեզ ամբողջ Սանկինը: Իսկ երկրորդը՝ որ նա յիմար էլ չէր, դէսից-դէնից մի քիչ պաշար էր հաւաքել գլուխը: Նա թարմ էր ճանաչել, չը նայելով արտասահմանեան իր ճանապարհորդութեան. այն անհանգիստ զգացմունքները, որոնք փոթորկել էին այն ժամանակուայ երիտասարդութեան լաւագոյն մասին, նրան սակաւ էին յայտնի:

Վերջին ժամանակներս մեր գրականութեան մէջ, «նոր մարդիկ» գտնելու նպատակով դուր որոնումներ անելուց յետոյ, սկսեցին մարդամէջ հանել այն երիտասարդներին, որոնք վճռել էին, ինչ էլ որ լինի, դառնալ թարմ... թարմ, ինչպէս Պետերբուրգ բերուող... Ֆլենսբուրգեան ոստրէները: Սանկինը չէր նմանում այդպիսիներին: Արդ՝ եթէ բանը արդէն համեմատութեան

հասաւ, կասեմ, որ նա աւելի շուտ յիշեցնում էր այն փոքրիկ, խուճուճաւոր խնձորիներին, որոնք վերջին ժամանակներս պատուաստուած են մեր սահմողեան այգիներում, կամ թէ աւելի լաւ է ասել՝ հին ժամանակվայ «աղանների» ձիաբուծարանների գերացրած, կոկիկ, հաստատնեայ այն մատաղ եռամեակներին, որոնց նորնոր սկսել են քշել՝ վարժեցնելու թոկով կապած... Նրանք, որոնք պատահում էին Սանկինին յետագայում, երբ կեանքը բաւականաչափ արդէն կոտրել էր նրան ու վաղուց չքացել նրա վրայից նոր կուտակուած ճարպը, միանգամայն ուրիշ մարդ էին տեսնում նրանում:

Միւս օրը Սանկինը դեռ ևս պառկած էր անկողնում, երբ Էմիլը՝ իր ոճնական հագուստը հագին, ձեռափայտը ձեռքին և անուշահոտ իւղերով սաստիկ օծուած՝ ներս խուժեց նրա սենեակը և յայտնեց, որ հեռ կլիւբերը այս րոպէին կը ժամանի կառքով, որ եղանակը խոստանում է հիանալի լաւ լինել, որ իրանց մօտ ամեն բան պատրաստ է արդէն, բայց մայրիկը չի գալ. որովհետև գլուխը դարձեալ սկսեց ցաւել: Նա շտապեցրեց Սանկին, հաւատացնելով որ չէ կարելի կորցնել րոպէները... Եւ իսկապէս. պ-ն կլիւբերը գոռաւ Սանկին դեռ ևս իր տուալետով զբաղուած: Ծեծեց դուռը, ներս մտաւ,

գլուխ առաւ, ճկեց իրանը, պատրաստակամու-թիւն յայտնեց սպասելու որքան կը կամենայ, և նստեց գեղեցիկ կերպով յենուելով գլխարկով իր ծնկանը։ Բարեհաճել կօմմին զուգուել էր ֆրանտի պէս և չափից դուրս արդէն օծուել ա-նուշահոտ իւղերով. նրա իւրաքանչիւր շարժուածը իր հետ բերում էր նուրբ անուշահոտութեան սաստկացրած բուրմունքը։ Նա եկել էր ընդար-ձակ բաց կառքով, այսպէս ասած լանդօյով, ո-րին լծուած էր երկու ուժեղ ու խոշոր, թէև տգեղ ձիաներ։ Քառորդ ժամից յետոյ Սանինը, Կլիւբերը և Էմիլը այդ միևնոյն կառքով հանդի-սաւորապէս մօտեցան կօնդիտերանոցի դրանը։ Տ. Ռօզելլին վճռական կերպով հրաժարուեց մասնակցել զբօսանքին. Ջեմման ուզում էր մը-նալ մօր հետ, բայց վերջինս նրան, ինչպէս կա-սեն, ուղղակի դուրս վռնդեց։

—Ոչ ոք հարկաւոր չէ ինձ, հաւատացնում էր նա, ես քնելու եմ։ Պանտալէօնին էլ կու-զարկէի ձեզ հետ, բայց այն ժամանակ առհասարակ անող չէր լինի այստեղ։

— Կարելի՞ է Տարտալիային տանել հեռուներս, —հարցրեց Էմիլը,

— Իհարկէ, կարելի է։

Տարտալիան անմիջապէս, ուրախ ձանքեր անելով, քաշքռտուելով վեր բարձրացաւ ու նըս-տեց կառապանի կողքին, շրթունքները լիզելով. երևում էր, որ նրա համար դա մի սովորական

գործ էր։ Ջեմման գլխին դրեց իր մեծ, յարդէ գլխարկը գորշագոյն ժապաւէններով. այդ գլ-խարկը առջևի մասից կռանում էր դէպի ներքև՝ պաշտպանելով, հաւարեա, ամբողջ դէմքը արե-գակից։ Նրա թողած սառուերագծերը կանգ էին առնում ուղիղ շրթունքների վրայ. նրանք շա-ռագունել էին կուսաբար ու քնքշօրէն, ինչպէս հարիւրաւոր վարդի թերթիկները և սառնիները փայլում էին ծածկաբար, անմեղօրէն, ինչպէս երեխաներինը։ Ջեմման նստեց կառքի յետի մա-սում՝ Սանինի կողքին, իսկ Կլիւբերն ու Էմիլը նրանց դէմը։ Ֆրաու Լէնօրայի գունատ դէմքը երևաց պատուհանի մօտ. Ջեմման թաշկինակը ճօճեց դէպի նա և ձիաները շարժուեցին տեղից։

XV

Սօդէնը մի փոքրիկ քաղաք է Ֆրանկֆուր-տից կէս ժամուայ հեռաւորութեան վրայ։ Նա գտնվում է Տաունուսի փեշերին՝ մի գեղանկար դիրքի վրայ, և մեզանում՝ Ռուսաստանում յայտ-նի է իր ջրերով, որը իբրև թէ օգտակար է թոյլ կուրծք ունեցող մարդկանց համար։ Ֆրանկֆուրտ-ցիները այնտեղ գնում են աւելի շուտ զբաղա-նալու նպատակով. որովհետև Սօդէնը հիանալի զբօսաւէրներ, այգի և զանազան «վիրաշաֆ-ներ» ունի, ուր բարձրակատար բարդիների ու

վայրի չինարների հովում կարելի է զարեջուր և սուրճ խմել։ Ֆրանկֆուրտից դէպի Սօդէն տա-նող ճանապարհը անցնում է Մայնի ալ ա-փով և ամբողջապէս տնկուած է պտղատու ծա-ռերով։ Մինչ կառքը սլանում էր լաւ շինուած խճուղիով, Սանինը գաղտագողի կերպով դիտում էր՝ թէ ինչպէս էր վարվում Զեմման իր նշա-նածի հետ. նա առաջին անգամն էր տեսնում նրանց երկուսին միատեղ։ Զեմման իրան հան-գիստ էր պահում ու հասարակ, բայց սովո-րականից աւելի զսպուած ու լուրջ։ Իսկ նրա վեսացուն նայում էր ինչպէս ներողամիտ մի դաստիարակ, որը թոյլատրել է թէ իրան և թէ իր սաորադրեալներին համեստ ու քաղաքա-վարի բաւականութիւն ստանալու։ Առանձնապէս դուր գալու կամ սիրաշահելու Զեմմային, անե-լու այն, որին ֆրանսիացիները անուանում են «empressement», Սանինը նրանում չը նկա-տեց։ Երևում էր, որ պ-ն Կլիւբերը արդէն ամեն բան համարում էր վերջացած, ուստի պատճառներ էլ չունէր այդ մասին հոգ տանելու կամ յուզուելու։ Սակայն ներողամիտ վերաբերմունքը չէր անցնում նրանից և ոչ մի վայրկեան. նոյն իսկ ճաշից առաջ, Սօդէնից դուրս՝ անտառապատ սարերում և հովտում կա-տարած երկար զբօսանքի ժամանակ։ Մինչև ան-գամ բնութեան գեղեցկութիւններով զմայլուե-լիս՝ նա վերաբերվում էր դէպի այդ բնութիւնը

իբրև յատուկ միևնոյն ներողամտութեամբ, որի տակից, սակայն, երբեմն առ երբեմն, պատահա-բար արտայայտվում էր սովորական իշխանական խստութիւնը, օրինակ. առուներից մէկի նկատ-մամբ նկատողութիւն արեց թէ նա չափազանց արդէն ուղիղ է հոսում ձորակի միջով, փոխա-նակ մի քանի դեղանկար գալարումներ անելու. չէր հաւանում նոյնպէս մի թռչունի՝ սերինոսի վարմունքը, որը բաւականաչափ չէր զանազա-նակերպում իր ծնկերը։ Զեմման ոչ միայն ձանձրոյթ չէր զգում, այլև, ըստ երևոյթին, բա-ւականութիւն էր զգում. սակայն նրանում Սա-նինը չէր կարողանում ճանաչել առաջուայ Զեմ-մային, ոչ թէ այն պատճառով, որ նրա վրայ սուեր էր ընկել. երբէք նրա գեղեցկութիւնը այնքան փայլուն չէր, որքան այդ միջոցին, այլ որովհետև նրա հոգին ամբողջապէս զբաղուած էր իրանով, կենտրոնացել էր իր ներսում։ Հո-վանոցը բաց արած՝ առանց ձեռնոցների կոճակ-ները փրցնելու, առանց շտապելու զբօսնում էր նա ծանրաքայլ, ինչպէս որ զբօսնում են լաւ կրթուած աղջիկները, և խօսում էր շատ սակաւ։ Էմիլը նոյնպէս զգում էր իրան ճնշուած, իսկ Սանինը աւելի ևս։ Նրան, ի միջի այլոց, մի փոքր շփոթեցրել էր և այն պարագան, որ խո-սակցութիւնը շարունակ տեղի էր ունենում գեր-մաներէն լեզուով։ Միայն Տարտալիան էր, որ չը գիտէր վհատուել։ Կատաղի հաչոցով նա ար-

շաւում էր իրան պատահած մշահաւերի եռանից, ցատկոտում էր փոսերի ու կոճղերի վրայից, ուժեղ թափով նետվում էր ջրի մէջ և շատ-շատ լակում նրան, դուրս էր գալիս, թափահարվում, կինձկինձում և նորից, նետի արագութեամբ սլանում առաջ՝ կարմիր լեզուն կախ դցած։

Պ-ն Կլիւբերը, իր կողմից, անում էր այն ամենը, ինչ որ գտնում էր, որ հարկաւոր է խումբը զուարճացնելու համար. խնդրեց Ջեմմային նստել հսկայ կաղնու ստուերում և, հանելով ծոցագրպանից մի գրքոյկ հետևեալ վերնագրով. «Knallerbsen—oder du sollst und wirst lachen» (պետարդաններ—կամ թէ դու պարտաւոր ես և պէտք է ծիծաղես), և սկսեց կարդալ զանազան անեկդօտներ, որոնցով լցուած էր այդ գրքոյկը։ Կարդաց նրանցից մի տասներկու հատ. այնուամենայնիւ շատ քիչ ուրախութիւն և զուարճութիւն պատճառեց. միայն Սանինը, քաղաքավարութիւնից դրդուած՝ ատամները բաց արեց ու մէկ էլ ինքը պ-ն Կլիւբերը, ամեն մի անեկդօտը կարդալուց յետոյ, ծիծաղում էր թեթև—լուրջ կերպով և այնուամենայնիւ զարձեալ ներողամբատաբար։ Մօտաւորապէս ժամը տասներկուսին ամբողջ խումբը վերադարձաւ Սօդէն, տեղական ամենալաւ պանդոկը։

Հարկաւոր էր անհրաժեշտ կարգադրութիւններն անել ճաշի համար։

Պ-ն Կլիւբերը ուզում էր առաջարկել, որ-

պէսզի ճաշեն ամեն կողմից փակուած դրուցարանում՝ «im Gartensalon»-ում։ Բայց Ջեմման ըմբռնացաւ և յայտնեց, որ այլապէս չի ճաշի, բայց եթէ բացօդեայ տեղում, այգում. պանդոկի առջև շարուած սեղաններից մէկն ու մէկի վրայ. որ իրան ձանձրացրել էր արդէն շարունակ լինել միևնոյն անձնաւորութիւնների հետ. ուստի այժմ էլ ուզում է ուրիշ դէմքեր տեսնել։ Սեղաններից մի քանիսի մօտ արդէն տեղաւորուել էին նորեկ հիւրերի խմբեր։

Մինչ պ-ն Կլիւբերը ներողամտաբար, հնազանդուելով «իր հարսնացուի կապրիզներին», գնաց խորհրդակցելու օբեր-կելների հետ, Ջեմման կանգնել էր անշարժ, աչքերը ցած ուղղած և շրթունքները իրար սեղմած. նա զգում էր, որ Սանինը անընդհատ, մի տեսակ, հարցական հայեացքով նայում էր իրան. այդ բանը, ըստ երեւոյթին, նրան զայրոյթ էր պատճառում։ Վերջապէս պ-ն Կլիւբերը վերադարձաւ ու յայտնեց, որ կէս ժամից յետոյ ճաշը պատրաստ կը լինի, իսկ մինչև այդ՝ առաջարկեց կէգլի խազալ, աւելացնելով, որ դա շատ լաւ է ախորժակ բաց անելու համար. քահ, քահ, քահ,—ծիծաղեց նա։ Կէգլին նա խաղում էր վարպետօրէն. գնդակը ձգելիս՝ ընդունում էր զարմանալի քաջալի դիրքեր. խազացնում էր իր մկանները, շքեղ կերպով խփում էր ու թափահարում ոտքով։ Իր տեսակի մէջ ըմբիշ էր նա, հիանալի կազմուածքով։

Նրա ձեռքերն էլ այնպէս սպիտակ էին, գեղեցիկ, և նա նրանց շփում էր թանգագին, ոսկեխառն հնդկական փուլեաբէ կտորով։

Հասաւ ճաշելու ժամանակը, և ամբողջ խումբը բոլորեց սեղանի շուրջը։

XVI

Ո՛ւժը յայտնի չէ թէ ինչ բան է գերմանական ճաշը։ Ջրալի սուպ՝ փքուն կոլոլակներով և կինամոնով, կիսաեփ տաւարամիս՝ խցանի նման չոր, սպիտակ ճարպով, լորձիւնոտ կարտօֆիլով, ուռած բազուկով և որոճացուած խրէնով, կապտած օձաձուկ կապարով ու քացախով, տապակածը մուրաբայի հետ, անխուսափելի «Mehlspeise»-ը, պուդդինգի պէս ինչ որ մի բան էլ թթուային կարմիր ըմբելիքով, իսկ գինին և գարեջուրը՝ որքան ուզենաս։ Ճիշտ այդպիսի ճաշով էր հիւրասիրում Սօդէնի պանդոկապետը իր հիւրերին։ Աւելնք, ինքը ճաշը անցաւ բարեյաջող կերպով, իրաւ է, առանձին աշխուժութիւն չէր նկատւում. նա նոյնիսկ չերևաց և այն ժամանակ, երբ պ-ն Կլիւբերը առաջարկեց խմել «այն բանի կենացը, որը մենք սիրում ենք» (Was wir lieben)։ Ամեն բան չափից դուրս արդէն պատշաճաւոր էր ու վայելուչ։ Ճաշից յետոյ սուրճ մատուցին. դեղին, Ջրալի, կատաբեալ գերմանական սուրճ։ Պ-ն Կլիւբերը, իբրև իսկական կաւալեր, թոյլատրութիւն խնդրեց Զեմմայից սիգար ծխելու... բայց հէնց այդ նոյն րոպէին անսպասելի կերպով պատահեց աննախատեսուած, իսկապէս, անհաճոյ, նոյն իսկ անվայել մի բան։

Հարևան սեղաններից մէկի մօտ եկան նստեցին Մայնցեան զօրքերի մի քանի օֆիցերներ։ Նրանց հայեացքներից ու փսփսոցներից հեշտութեամբ կարելի էր հասկանալ, որ Զեմմայի գեղեցկութիւնը հիացրել էր նրանց. դրանցից մէկը, որ, երևի, եղել էր Ֆրանկֆուրտում, շարունակ նայում էր Զեմմային, իբրև լաւ ծանօթ մի դէմքի. նա, հաւանօրէն, ճանաչում էր նրա ով լինելը։ Այդ օֆիցերը յանկարծ վեր կացաւ տեղից և, բաժակը ձեռքին, —պ. պ. օֆիցերները սաստիկ խմած էին և նրանց սեղանի ամբողջ սփռոցը ծածկուած էր շիշերով,—մօտեցաւ այն սեղանին, ուր նստել էր Զեմման։ Դա մի շատ երիտասարդ, սպիտակամորթ մարդ էր, բաւականին դուրեկան և նոյն իսկ համակրելի դիմագծերով. սակայն խմած գինին ծանրել էր նրանց. նրա այտերը ցնցվում էին չղաձգաբար, բորբոքուած աչքերը՝ դէս ու դէն ուղղվում, չվում, լկտի արտայայտութիւն ստանում։ Ընկերները սկզբում փորձեցին արգելք լինել նրան, բայց յետոյ թողին. էհ

ինչ ուզում է՝ թող լինի. տեսնենք թէ ինչ դուրս կը գայ դրանից։

Թեթև կերպով օրօրուելով ոտների վրայ, օֆիցերը կանգ առաւ Ջեմմայի առջև, և բռնադբօսիկ—ճչողական ձայնով, որի մէջ, հակառակ նրա կամքի, այնուամենայնիւ արտայայտւում էր ինքնամաքառումը, արտասանեց. «խմում եմ ամբողջ Ֆրանկֆուրտի մէջ, ամբողջ աշխարհում եղած ամենագեղեցիկ սրճարանատիրուհու կենացը (նա բաժակը միանգամից «գլխին քաշեց») և, իբրև հատուցումն, վերցնում եմ այս ծաղիկը, որը պոկուած է նրա աստուածային մատիկներով»։ Եւ նա վերցրեց սեղանի վրայից այն վարդը, որը դրուած էր Ջեմմայի ափսէի կողքին։ Սկզբում Ջեմման ապշեց, վախեցաւ ու սաստիկ գունատուեց... ապա՝ այդ վախը նրա մէջ փոխուեց զայրոյթի. նա յանկարծ կարմրեց ամբողջապէս մինչև մազերը, և նրա աչքերը, որ շեշտակի ուղղուած էին իրան վիրաւորանք հասցնողի վրայ, միաժամանակ մթնեցին ու բորբոքուեցին, լցուեցին խաւարով ու բռնկուեցին անզուսպ զայրոյթի բոցերով։ Այդ հայեացքը, ըստ երևոյթին, շփոթեցրեց օֆիցերին. նա ինչ որ կմկմաց անորոշ կերպով, գլուխ տուեց և յետ գնաց իւրայիններէ մօտ։ Նրանք հանդիպեցին նրան ծիծաղով և թեթև ծափահարութեամբ։

Պ-ն կլիւբերը յանկարծ վեր կացաւ տեղից և ուղղելով իր ամբողջ հասակը, գլխարկը դնելով գլխին՝ արժանապատուութեամբ, բայց ոչ չափազանց բարձրաձայն, արտասանեց. «սա չը լսուած բան է, չը լսուած յանդգնութիւն է»— («Unerhört! Unerhörte Frechheit») և իսկոյն էլ խիստ ձայնով կանչելով իր մօտ կեղներին, պահանջեց անմիջապէս ներկայացնել հաշիւը... այդ դեռ բաւական չէ. հրամայեց կառքն էլ լծել, ըստ որում աւելացրեց, որ օրինաւոր մարդկանց համար նրանց մօտ գալը անկարելի է. որովհետև նրանք ենթարկվում են վիրաւորանքների։ Ջեմման, որ մինչ այդ շարունակում էր նստած մնալ իր տեղում առանց շարժուելու և նրա կուրծքը արագութեամբ ու սաստիկ կերպով իջնում ու բարձրանում էր,—Ջեմման իր աչքերը շեղեց պ-ն կլիւբերի վրայ... ու նայեց մինչև յայրոյթալի հայեացքով, որով մի րոպէ առաջ նայում էր օֆիցերի վրայ։ Էմիլը կատաղութիւնից դողում էր։

—Վեր կացէք, մէյն ֆրէյլէյն, արտասանեց մինչև կոշտ ձայնով պ-ն կլիւբերը. ձեզ համար այստեղ մնալը անպատշաճ է։ Մենք կը տեղաւորուենք, ահա այնտեղ, պանդոկում։

Ջեմման անխօս վեր կացաւ, փեսացուն մօտեցրեց նրան իր թևը կալաչաձև, Ջեմման տուեց իրանը, և նա գնաց դէպի պանդոկը հանդիսաւոր քայլուածքով, որը, իր կազմուածքի նըման, քանի գնում՝ աւելի էր դառնում փառահեղ ու գոռոզ, որքան նա հեռանում էր այն տե-

ղից, որտեղ նրանք ճաշում էին։ Խեղճ Էմիլը կորիզլուխ, թոյլ-թոյլ զնաց նրանց յետևից։

Սակայն մինչ պ-ն Կլիւբերը հաշիւ էր տեսնում կեղևների հետ, որին, իբրև պատիժ, նա չը տուեց ոչ մի կրէյցեր պարգև, Սանկինը արագ քայլերով մօտեցաւ այն սեղանին, որի շուրջը նստել էին օֆիցերները, և, դիմելով Զեմմային վիրաւորանք հասցնողին (վերջինս այդ բոպէին հերթով իր ընկերներին էր մատուցանում հատուցելու համար Զեմմայի վարդը) հատ-հատ որոշակի շեշտելով՝ ասաց ֆրանսերէն. «Ա՛յն, ինչ որ դուք արեցիք այս բոպէիս, պարոն, անվայել է ազնիւ մարդուն, անպատուաբեր է այն համազգեստին, որը դուք կրում էք,—և ես եկայ ասելու ձեզ, որ դուք վատ դաստիարակուած, անամօթ մարդ էք»։

Երիտասարդը վեր թռաւ տեղից, բայց միւս օֆիցերը, որ աւելի մեծ էր նրանից, ձեռքի շարժումով հարկադրեց նրան նստել իր տեղը, և ապա, դիմելով Սանկինին՝ հարցրեց նոյնպէս ֆրանսերէն. «Ի՞նչացաւ է նա. այն օրիորդի ազգականն է, եղբայրը, թէ փեսացուն»։

—Ես օրիորդի համար բոլորովին օտար մարդ եմ, բացականչեց Սանկինը, ես ռուս եմ, բայց չեմ կարող անտարբեր կերպով տանել մի այդպիսի յանդգնութիւն։ Ի՛նչևիցէ. ահա իմ այցետոմսը և իմ հասցէն. պ. օֆիցերը կարող է գտնել ինձ։

Ասելով այդ խօսքերը, Սանկինը իր այցետոմսը ձգեց սեղանի վրայ, մինչդեռ ժամանակ արագ շարժումով վերցրեց Զեմմայի վարդը, որը այդ միջոցին սեղանի մօտ նստած օֆիցերներից մէկը վայր ձգեց իր ափսէի վրայ։ Երիտասարդը գարձեալ ուզեց վեր թռչել իր նստած տեղից, բայց ընկերը նորից կանգնեցրեց նրան, ասելով. «Դեօնհօֆ, հանգիստ»—(Dönhof, sei still), ապա՝ ինքը ոտքի կանգնեց, ձեռքը մօտեցրեց գլխարկին ու որոշ յարգանքով, որը արտայայտւում էր նրա ձայնի ու ձևերի մէջ, ասաց Սանկինին, որ վաղը առաւօտեան իրանց դնդի օֆիցերներից մէկը պատիւ կունենայ իրա մօտ՝ բնակարանը գալու։ Սանկինը պատասխանեց թեթև գլուխ տալով և շտապով վերադարձաւ իր ընկերների մօտ։

Պ-ն Կլիւբերը այնպէս ձևացաւ թէ բոլորովին չէ էլ նկատել Սանկինի բացակայութիւնը և ոչ էլ նրա ունեցած բացատրութիւնները պ. օֆիցերների հետ. նա շտապեցնում էր ձիաները լծող կառապանին և ոստիկ զայրանում նրա դանդաղկոտութեան վրայ։ Զեմման նոյնպէս ոչինչ չասաց Սանկինին. մինչև անգամ չը նայեց էլ նրա վրայ, բայց նրա կնճռոտուած ունքերից, գունատուած ու ամուր իրար սեղմուած շրթունքներից, իրա ամբողջ անշարժութիւնից

պարզ կարելի էր հասկանալ, որ նա հոգեկան սաստիկ վատ տրամադրութեան մէջ էր։ Միայն Էմիլն էր ուզում խօսել Սանինի հետ, հարց ու փորձ անել նրան. նա նկատեց թէ ինչպէս Սանինը մօտեցաւ օֆիցերներին, ինչ որ սպիտակ բան մեկնեց նրանց. թղթի կտոր էր, արդեօք, տոմսակ, թէ այցատոմս.... Ներգ պատանու սիրտը բաբախում էր անհանգիստ կերպով, այտերը վառվում, նա պատրաստ էր Սանինի պարանոցումը ընկնել, պատրաստ էր լաց լինել կամ իսկոյն գնալ նրա հետ մխասին ծեծելու, բոլորովին ջարդ ու փշուր անելու այդ զզուելի օֆիցերներին։ Բայց և այնպէս նա իրան զսպեց ու բաւականացաւ միայն նրանով, որ ուշադրութեամբ հետևում էր իր աղնիւ ռուս բարեկամի իւրաքանչիւր շարժումին։

Վերջապէս կառապանը լծեց ձիաները. ամբողջ խումբը կառք նստեց։ Էմիլը, Տարտալիայից յետոյ, բարձրացաւ նստեց կառապանի կողքին. այնտեղ նա իրան աւելի էր ազատ զգում, մանաւանդ որ պ-ն Կլիւբերը, որին նա չէր կարողանում նայել անտարբեր կերպով, այլ ևս ցցուած չէր իր առջև։

Ամբողջ ճանապարհին հեռ Կլիւբերը ճոռոմաբանում էր... ճոռոմաբանում էր միայնակ. ոչ ոք, ոչ ոք չէր առարկում նրան, բայց և ոչ ոք էլ չէր համաձայնվում նրա հետ։ Նա առանձնապէս շեշտում էր այն՝ թէ դուր տեղից չը լսեցին իրան, երբ ինքը առաջարկում էր զրուցարանում ճաշել։ Ո՛չ մի անախորժութիւն այն ժամանակ չէր պատահի։ Ապա նա մի քանի խիստ, և նոյն իսկ ազատամիտ դատողութիւններ էլ յայտնեց՝ թէ ինչպէս կառավարութիւնը անհերելի կերպով երես է տալիս օֆիցերներին, չէ հսկում նրանց կարգապահութեան վրայ և բաւականաչափ չէ յարգում հասարակութեան քաղաքացիական տարրերին (das bürgerliche Element in der Societät) և թէ ինչպէս դրա շնորհիւ, ժամանակին, վերածնվում են այն անբաւականութիւնները, որոնցից մինչև յեղափոխութիւնը այնքան էլ շատ հեռու չէ, որին իբրև ախուր օրինակ (այդտեղ նա հառաչեց համակրանքով, բայց խստութեամբ), ախուր օրինակ է ծառայում Ֆրանսիան։ Սակայն իսկոյն էլ կցեց իր այդ բոլոր ասածներին, որ ինքը անձամբ պատկառանքով է վերաբերվում դէպի իշխանութիւնը և երբէք... երբէք... յեղափոխական չի դառնայ, բայց և չէ կարող չարտայայտել իր... անբաւականութիւնը, տեսնելով այս տեսակ սանձարձակութիւն։ Յետոյ՝ մի քանի նկատողութիւններ էլ աւելացրեց բարոյականութեան և անբարոյականութեան մասին, պարկեշտութեան և արժանապատուութեան զգացմունքի մասին։ Այդ ամբողջ «ճոռոմաբանութիւնների» ընթացքում, Ջեմման, որ, դեռ մինչև ճաշ կա-

տարած զբօսանքի ժամանակից սկսած՝ թւում էր որ այնքան էլ գոհ չէր պ-ն Կլիւբերից, որոշ չափով իրան հեռու էր պահում Սանինից և մի տեսակ, կարծես, շփոթվում էր նրա ներկայութիւնից. Զեմման պարզապէս սկսում էր ամօթ զգալ իր փեսացուի համար։ Ճանապարհի վերջում նա ուղղակի տանջվում էր և, թէև առաջուայ նման էլի չէր խօսում Սանինի հետ, այնուամենայնիւ յանկարծ աղերսական հայեացք ուղղեց նրա վրայ... Իր կողմից՝ Սանինը աւելի խղճահարութիւն էր զգում դէպի Զեմման, քան ատելութիւն՝ դէպի պ-ն Կլիւբերը, նա նոյն իսկ ներքուստ, մասամբ գիտակցաբար, ուրախանում էր այդ օրուայ բոլոր պատահածի համար. թէև կարելի էր մենամարտի հրաւէրը սպասել յաջորդ առաւօտը։

Չարաբաստիկ այդ partie de plaisir-ը (զբօսանքը) պրծաւ վերջապէս։ Զեմմային վեր բերելով կառքից իրանց կօնդիտերանոցի առաջ, Սանինը, առանց որև է խօսք ասելու, դրեց նրա ձեռքի մէջ օֆիցերից խլած վարդը։ Զեմման ամբողջովին կարմրեց, սեղմեց նրա ձեռքը և մի ակնթարթում թագցրեց վարդը։ Սանինը չէր ուզում տուն մանել, թէև երեկոն դեռ նորանոր սկսվում էր։ Զեմման ինքն էլ չը հրաւիրեց նրան։ Բացի դրանից, մուտքի առաջ երևացող Պանտալէօնն էլ յայտնեց, որ ֆրաու Լէնօրան քնած է։ Էմիլը ամաչկոտութեամբ հրաժեշտ տը-

ւեց Սանինին. նա, կարծես, քաշվում էր նրանից, չափից դուրս արդէն հիացած էր նրանով։ Կլիւբերը տարաւ Սանինին իր բնակարանը և իր սովորական ձևերով հրաժեշտ տուեց նրան։ Կանոնաւոր կազմակերպուած, հասունացած այդ դերմանացու համար, իր բոլոր անձնավստահութեան հետ միասին, մի տեսակ անպատշաճ դրբութիւն էր ստեղծուել։ Այդ անպատշաճութիւնը զգալի էր, իսկապէս, ամենքի համար էլ։

Պէտք է ասել, սակայն, որ այդ զգացմունքը՝ անպատշաճութեան զգացմունքը Սանինի մէջ շուտով չքացաւ։ Նրան փոխարինեց մի ուրիշ անորոշ, բայց դուրեկան, նոյն իսկ, ուրախ տրամադրութիւն։ Իր սենեակում անց ու դարձ էր անում նա, չէր ուզում ոչ մի բանի մասին մտածել, ու շշվացնում էր. երևում էր որ շատ գոհ էր ճնացել իրանից։

XVII

«Կը սպասեմ օֆիցերին բացատրութեան համար մինչև առաւօտեան ժամի 10-ը» խորհում էր Սանինը յաջորդ առաւօտը՝ իր տուալէտը կարգի բերելիս,—«իսկ այնուհետև նա ինքը թող որոնի ինձ»։ Բայց գերմանացի մարդիկ առհասարակ վաղ են վեր կենում. դեռ ևս ժամի ինըն չէր խփել, երբ կելները ներս մտաւ ու

յայտնեց Սանինին, որ պ-ն պօդպօրուչիկ ֆօն Րիխտերը (der Herr Seconde Lieutenant) ցանկանում է տեսնել իրան։ Սանինը շտապով հագաւ սիւրթուկը և հրամայեց ներս «խնդրել»։ Պ-ն Րիխտերը, Սանինի սպասածին հակառակ, դուրս եկաւ, որ բոլորովին երիտասարդ մի մարդ էր, համարեա, պատանի։ Իր անմիջուք դէմքին նա աշխատում էր կարևոր արտայայտութիւն տալ, բայց այդ նրան չէր յաջողվում. նա մինչև անգամ չը կարողացաւ թագցնել իր շիտթութիւնը, և աթոռի վրայ նստելիս՝ կպաւ իր սրին ու քիչ ճռաց թէ վայր ընկնէր։

Նա, կմկմալով ու կակազելով, յայտնեց Սանինին վատ ֆրանսերէն լեզուով, որ եկել է իր ընկերոջ՝ ֆօն-Դեօնհօֆի յանձնարարութեամբ. այդ յանձնարարութիւնը կայանում է նրանում, որ պահանջվում է պ-ն ֆօն-Զանինից՝ ներողութիւն խնդրել նախորդ օրը գործածած վիրաւորական խօսքերի համար և որ ֆօն-Զանինի հրաժարուելու դէպքում՝ բարօն ֆօն-Դեօնհօֆը պահանջում է նրանից բաւարարութիւն։ Սանինը պատասխանեց, որ ներողութիւն խնդրելու մտադիր չէ ինքը, իսկ բաւարարութիւն տալ պատրաստ է։ Այն ժամանակ ֆօն-Րիխտերը, առաջվայ նման կակազելով, հարցրեց՝ թէ ո՞ւմ հետ, ո՞ր ժամին և ո՞րտեղ պէտք է վարել բանակցութիւնները։ Սանինը պատասխանեց, որ նա կարող է գալ իրա մօտ իմանալու երկու ժամից

յետոյ. մինչ այդ ինքը՝ Սանինը կաշխատէ սեկունդանտներ գտնել իր համար։ («Սատանան միայն գիտէ. ո՞ւմը պէտք է սեկունդանտ վերցնեմ» մինչդեռ մտածում էր նա ինքն իրան)։ Պ-ն ֆօն-Րիխտերը վեր կացաւ և գլուխ տալով՝ սկսեց դուրս գնալ... բայց դեռ դրան չէմքում կանգնեց, կարծես, խղճի խայթ զգալով, ու շուռ գալով դէպի Սանինը, ասաց, որ իր ընկեր բարօն ֆօն-Դեօնհօֆը չէ թագցնում իրանից... ոչ մի չափով... իր սեփական մեղքը երեկուայ դէպքի առիթով, ուստի կը բաւականանար թեթև ներողութեամբ. «des exghizencess, légères»։ Դրա դէմ Սանինը պատասխանեց, որ ոչ մի ներողութիւն, ո՛չ ծանր և ոչ էլ թեթև, նա մտադիր չէ խնդրել, որովհետև ինքը իրան մեղաւոր չէ համարում։—«Այդ դէպքում, առարկեց նրան պ. ֆօն-Րիխտերը, ու աւելի ևս կարմրեց,—ուրեմն պէտք է փոխանակուել բարեկամական գընդակներով. «des coups de pistolet à l'amiable»։

—Այդ մէկը արդէն ինձ համար բոլորովին անհասկանալի է, նկատեց Սանինը.—օդի՞ մէջ կրակենք, ինչ է։

—Ո՛հ, ո՛չ. այդպէս չէ, թոթովեց վերջնականապէս ամօթահարուած պօդպօրուչիկը,—բայց ես կարծում եմ, որ որովհետև այդ տեղի է ունենում երկու օրինաւոր մարդկանց մէջ... Ասենք, ես այդ մասին կը խօսեմ ձեր սեկունդանտի հետ, յանկարծ ընդհատեց նա ինքն իրան ու հեռացաւ սենեակից։

Հէնց որ օֆիցերը գնաց, Սանինը նստեց աթոռի վրայ և աչքերը յառեց յատակին։

—Ի՞նչ է նշանակում այս բոլորը, ինչպէս պատահեց, որ յանկարծ կեանքն այսպիսի ընթացք ստացաւ։ Ամբողջ անցեալը, ամբողջ ապագան աներևոյթացաւ, կորաւ և ինձ մնաց միայն այն, որ ես այժմ Ֆրանկֆուրտում մէկի հետ՝ ինչ որ մի բանի համար՝ մենամարտում եմ»։ Նա մտաբերեց իր խելագար ազգականուհուն, որը մի ժամանակ շարունակ պարում էր ու երգում.

«պօդպօրուչիկ,
իմ վարունգիկ,
իմ սիրունիկ
պարիր ինձ հետ, իմ ադունիկ»։

Եւ նա քրքջաց ու երգեց նրա նման. «պօդպօրուչիկ, պարիր ինձ հետ, իմ ադունիկ»։ Սակայն հարկաւոր է դործի կպչել, առանց ժամանակ կորցնելու, բացականչեց նա բարձրաձայն, վեր թռաւ տեղից և տեսաւ իր առջև Պանտալէօնին, տոմսակը ձեռքին։

—Մի քանի անգամ ծեծեցի դուռը, բայց դուք չը պատասխանեցիք. կարծեցի թէ տանը չէք, —խօսեց ծերուկը և յանձնեց նրան տոմսակը.—Սինեօրինայ Զեմմայիցն է։

Սանինը վեր առաւ տոմսակը, ինչպէս ասում են, մեքենայաբար. բայց արեց ու կարդաց։ Զեմման գրում էր նրան, որ ինքը շատ է անհանգստանում իրան արդէն յայտնի գործի առիթով և կը ցանկանար տեսնուել նրա հետ անյապաղ։

—Սինեօրինան անհանգստանում է, սկսեց Պանտալէօնը, որին, երևում էր, որ տոմսակի բովանդակութիւնը յայտնի էր։ Օրիորդը հրամայեց ինձ գալ տեսնելու թէ ինչ էք անում դուք և տանել ձեզ իրա մօտ։

Սանինը նայեց ծերունի իտալացուն և մտածմունքի մէջ ընկաւ։ Յանկարծ մի միտք փայլեց նրա գլխում։ Առաջին վայրկեանին այդ միտքը թւաց նրան տարօրինակ անկարելիութեան չափ...

«Սակայն... ինչո՞ւ համար ոչ» — հարցրեց նա ինքն իրան։

—Պ-ն Պանտալէօն,—արտասանեց նա բարձր ձայնով։

Ծերունին վեր թռաւ տեղից և, կզակը նեբս քաշելով փողկապի խորքը, աչքերը ուղղեց Սանինին։

—Դուք գիտէք, շարունակեց Սանինը, ինչ է պատահել երէկ։

Պանտալէօնը կռծեց շրթունքները և թափ տուեց իր ահագին մազերը։—Գիտեմ։

(Էմիլը տուն վերադառնալուն պէս պատմել էր նրան ամեն բան)։

—Հա։ Գիտէք։ Դէ, ուրեմն, ահա թէ ինչ

պիտի ասեմ ձեզ։ Հէնց այս րօպէին իմ մօտից դուրս գնաց մի օֆիցեր։ Այն անամօթը ինձ մենամարտելու է հրաւիրում։ Նրա հրաւէրը ես ընդունեցի։ Բայց սեկունդանտներ չունեմ։ Կամենում էք դուք իմ սեկունդանտը լինել։

Պանտալէօնը ցնցուեց, ու այնպէս վեր բարձրացրեց իր ունքերը, որ նրանք ծածկուեցին կախ ընկած մազերի տակ։

—Անպատճառ պէտք է մենամարտէք,—խօսեց նա վերջապէս իտալերէն. մինչև այդ ժամանակ նա խօսում էր ֆրանսերէն։

—Անպատճառ։ Ուրիշ կերպ վարուել՝ կը նշանակէր ընդմիշտ խայտառակուել։

—Հը՛մմ... իսկ եթէ ես չը համաձայնուէմ ձեր սեկունդանտը լինել, այն ժամանակ դուք պէտք է որոնէք մի ուրիշին։

—Կը որոնեմ... անպատճառ։

Պանտալէօնը կախեց գլուխը։— Բայց թոյլ տուէք հարցնելու ձեզ, սինեօր դէ-Յանինի, ձեր մենամարտը, արդեօք, որոշ չափով աննպաստ տուեր չի՞ ձգիլ մի կնոջ բարի անուան վրայ։

—Ձեմ կարծում...։ Բայց ինչ էլ որ լինելու լինի, ուրիշ կերպ վարուել այլևս անկարելի է։

—Հըմմ...,—Պանտալէօնը բոլորովին մտաւ իր փողկապի մէջ,—լաւ, իսկ այն ֆերրօֆլուկսո կլուբբիօն. նա ինչ է անում։

—Նա. ոչինչ։

—Ինչ (che) *)— արհամարհաբար բացականչեց Պանտալէօնը և վեր քաշեց ուսերը։— Յամենայն դէպս՝ ես պէտք է շնորհակալութիւն յայտնեմ ձեզ, արտասանեց նա, վերջապէս, անբնական ձայնով, որ դուք իմ ներկայ անկեալ վիճակումն էլ կարողացաք տեսնել իմ մէջ օրինաւոր մարդը՝ un galant'uomo։ Այդպէս վարուելով՝ դուք ինքներդ ցոյց տուիք ձեզ իսկական galant'uomo։ Բայց և այնպէս՝ ես պէտք է դեռ ևս լաւ մտածեմ ձեր առաջարկի մասին։

—Ժամանակ չը կայ, սիրելի պ. Զիչիպպա...

—Տօ՛լա,—յիշեցրեց նրան ծերունին։—Ես խնդրում եմ, մի ժամ միայն ժամանակ տաք ինձ մտածելու համար։ Այդ գործում խառն է, ասես, իմ բարերարների աղջիկը... Այդ պատճառով ես պէտք է, պարտաւոր եմ մտածել.... Մինչև մի ժամ... երեք քառորդ ժամից յետոյ դուք կիմանաք իմ որոշումը....

—Շատ լաւ. ես կը սպասեմ։

—Իսկ այժմ... ինչ պատասխան տամ սինեօրինա Զեմմային։

Սանինը վերցրեց մի թերթ թուղթ և գրեց նրա վրայ. «Հանգիստ եղէք իմ թանգագին բարեկամուհի, երեք ժամից յետոյ ես կը գամ ձեզ

*) Che իտալերէն մի բացականչութիւն է՝ որը դժուար է թարգմանել։ Հայերէն նա աւելի մօտ է «ինչ» խօսքին՝ արտասանուած արհամարհաբար։

մօտ, ու այն ժամանակ ամեն ինչ կը պարզուի։ Բոլոր սրտով շնորհակալ եմ ձեր կարեկցութեան համար»։ Եւ յանձնեց այդ թերթիկը Պանտալէօնին։

Վերջինս խնամքով դրեց նրան իր ծոցագրպանը, և մի անգամ էլ կրկնելով՝ «ուրեմն մի ժամից յետոյ», գնաց դէպի դուռը, բայց իսկոյն էլ յետ դարձաւ, վազեց Սանինի մօտ, բռնեց նրա ձեռքը և սեղմելով իր ժաբօյին, աչքերը վեր ուղղեց դէպի երկինք ու բացականչեց. «Ազնիւ երիտասարդ, Մեծ սիրտ, (Nobil giovanotto! Gran caure), Քոյլ տուէք ինձ, Քոյլ ծերունուս (a un vecchiotto), սեղմելու ձեր քաջարի աջը (la vostra valorosa destra)։ Ապա մի քիչ դէպի յետ թռաւ, թափ տուեց երկու ձեռքերը ու հեռացաւ։

Սանինը նայեց նրա յետևից... վերցրեց լրագիրը ու սկսեց կարդալ։ Բայց նրա աչքերը զուր էին վազում տողերի վրայով. նա ոչինչ չէր հասկանում։

XVIII

Մի ժամից յետոյ կէլները նորից մտաւ Սանինի մօտ և յանձնեց նրան մի հին կեղտոտած այցատոմս, որի վրայ տպագրուած էր հետևեալը. Պանտալէօնօ Զ'իպպատօլա, Վարեզէից,

նորին արքայական Մեծութեան դուքս Մօդենացու պալատական երգիչ (cantante di camera), իսկ կէլներից անմիջապէս յետոյ, ներկայացաւ նաև ինքը՝ Պանտալէօնը։ Նա փոխել էր հագուստը ոտից մինչև գլուխ, հագել էր դեղնած սև ֆրակ և սպիտակ պիկէյից կարած ժիլետ, որի վրայ հնարագիտօրէն գալարվում էր ոսմպակեայ (ոսկեպղինձէ) շղթան. ծանր, սարդիօնէ փոքրիկ կնիքը իջնում էր ներքև նեղ սև գուլֆիկաւոր վերնավարտիկի վրայից։ Աջ ձեռքում նա բռնել էր նապաստակի բրդից պատրաստած սև գլխարկը. այժմ նա էլ աւելի լայն փողկապ էր կապել և սովորականից բարձր, օսլայած ժաբօյի վրայ խրել էր քարէակ քորոցը. որ կոչվում է «կաուէաչք» (Oeil de chat)։ Աչ ձեռքի ցուցամատի վրայ փայլում էր մի մատանի, որը պատկերացնում էր երկու իրար սեղմած ձեռքեր, իսկ նրանց մէջ՝ վառվռող մի սիրտ։ Ծերունուս այդ ամբողջ անձից կամֆօրայի և մուսկուսի անուշ հոտն էր բուրում. նրա կերպարանքի մատղաշ հանդիսաւորութիւնը կարող էր ապշեցնել ամենաանտարբեր հանդիսատեսին անգամ։ Սանինը վեր կացաւ դիմաւորելու նրան։

—Ես ձեր սեկուէդանտն եմ,—ասաց Պանտալէօնը ֆրանսերէն, և իր ամբողջ իրանով խոնարհեց առաջ, ըստ որում՝ թաթերի ծայրերը դրեց իրարից հեռու, ինչպէս որ այդ անում են սովորաբար պարողները։ Ես եկայ հրահանգները

ստանալու։ Ցանկանում էք անխնայ մենամարտել։

—Ինչո՞ւ անխնայ, սիրելի պ-ն Զիպպատօլա։ Աշխարհիս ոչ մի բանի համար ես չեմ վերջնի երէկուայ ասած խօսքերս. սակայն ես ամբիւնարբուս էլ չեմ... Ասենք, մի փոքր սպասենք դեռ, շուտով կը գայ իմ հակառակորդի սեկունդանտը։ Ես կը հեռանամ հարևան սենեակը և դուք, նրա հետ միասին, կը պայմանաւորուէք։ Հաւատացէք ես մինչև յաւիտեան չեմ մոռանայ ձեր մատուցած ծառայութիւնը և շնորհակալ կը լինեմ ձեզնից բոլոր սրտով։

Նախ և առաջ՝ պատիւը, — պատասխանեց Պանտալէօնը և նստեց բազկաթոռի վրայ, առանց սպասելու, որ Սանինը խնդրէ նրան նստելու։ Եթէ այդ ֆերրօֆլուկտօ-սպիչչերուբիօն, վերսկսեց նա, խառնելով ֆրանսերէն լեզուն իտալերէնի հետ,—եթէ այդ չարչի կլումբերիօն չը կարողացաւ ըմբռնել իր ուղղակի պարտականութիւնը կամ վախեցաւ, ուրեմն աւելի վատ նրա համար... Ինչ վերաբերում է մենամարտութեան պայմաններին, ես ձեր սեկունդանտն եմ և ձեր շահերը ինձ համար սուրբ են... Երբ ես ապրում էի Պադուայում, այնտեղ ինում էր սպիտակ դրագունների գունդը, և ես նրանց օֆիցերներից շատերի հետ շատ մօտիկ ծանօթ էի... նրանց ամբողջ օրէնքների ժողովածուն ինձ լաւ յայտնի էր։ Եւ ձեր պրինչիպէ Տար-

բուսկիի հետ ես շատ անգամ եմ զրուցել այդ հարցերի մասին... Նրա սեկունդանտը շուտ պիտի գայ։

—Բօպէ առ բօպէ սպասում եմ նրան. ահա նա գալիս է արդէն, աւելացրեց Սանինը, նայելով դէպի փողոց։

Պանտալէօնը տեղից վեր կացաւ, նայեց ժամացոյցին, ուղղեց իր գանգուրները և շտապ կօշկի մէջ խրեց վերնավարտկի տակից դուրս պրծած ծոպը։ Երիտասարդ պօպպօրուչիկը ներս մտաւ առաջուայ պէս դարձեալ կարմիր ու յուզուած։

Սանինը ներկայացրեց սեկունդանտներին իրար. M-r Richter, Souslieutenant,—M-r Zippatola, artiste!—պօպպօրուչիկը մի փոքր զարմացաւ տեսնելով ծերունուն... Օ՛, ինչ կասէր նա, եթէ մէկը այդ վայրկեանին փսփսար նրա ականջին, որ իրան ներկայացուած «արտիստը» միևնոյն ժամանակ պարապվում է և խոհարարական արհեստով։ Բայց Պանտալէօնը այնպիսի դիրք ընդունեց, որ իբր թէ մենամարտներ կազմակերպելու մէջ մասնակցելը իրա համար սովորական մի գործ է դարձել. երևի, նրան այդ դէպքում նպաստում էին իր բեմական յիշողութիւնները, և նա խաղում էր սեկունդանտի դերը իսկեիսկ իբրև սեկունդանտի դեր։ Թէ նա և թէ պօպպօրուչիկը, երկուսով էլ մի քիչ ժամանակ լուռ մնացին։

—Է՛, ուրեմն էլ ինչո՞ւ համար ենք սպասում. սկսենք։—Առաջինը խօսք բաց արեց Պանտալէօնը, խաղալով ժամացոյցի շղթայի վրայ կախ արած սարդիօնեան փոքրիկ կնիքի հետ։

—Սկսենք, պատասխանեց պօդպօրուչիկը, —բայց... հակառակորդներից մէկի ներկայութիւնը....

—Այս րօպէիս ես ձեզ կը թողնեմ մենակ, պարոննե՛ր, բացականչեց Սանինը, գլուխ տուաւ և, անցնելով ննջարանը, դուռը փակեց իր յետևից։

Նա ընկաւ մահճակալի վրայ ու սկսեց մըտածել Ջեմմայի մասին... բայց սեկունդանտների խօսակցութիւնը թափանցում էր դէպի նա փակ դրան արանքից։ Խօսում էին ֆրանսերէն լեզուով, երկուսն էլ ծոմռում էին նրան անողորմ կերպով. իւրաքանչիւրը՝ իրա տեսակի։ Պանտալէօնը դարձեալ յիշեց Պադուայի դրագուններին, պրինչիպէ Տարբուսկիին, պօդպօրուչիկին էլ՝ «exghizes lécheres»-ին և «o goups à l'amiaple»-ին։ Սակայն ծերունին լսել անգամ չէր կամենում ոչ մի exghizes-ի մասին։ Ի ցաւ Սանինի, Պանտալէօնը յանկարծ սկսեց խօսել իր խօսակցի հետ ինչ որ մի մատաղ, անմեղ աղջկայ մասին, որի միայն ճկոյթը աւելի արժէ, քան աշխարհիս բոլոր օֆիցերները... (oune zeune damigella innoucenta, qu'a ella sola dans soun péti doa vale piu quo toutt le zouffissié del mondo!) և մի քանի անգամ էլ տաքացած

կրկնեց. դա ամօթ բան է, դա ամօթ է։ (Eouna onta, ouna onta)։ Պօդպօրուչիկը սկզբում չէր առարկում նրան, բայց յետոյ երիտասարդի ձայնի մէջ երևաց բարկութեան դողը, և նա նկատեց, որ բարոյական դատավճիռները լսելու համար չէ եկել նա...

—Ձեր հասակում միշտ օգտակար է արդարացի խօսքեր լսել, բացականչեց Պանտալէօնը։

Վիճաբանութիւնը սեկունդանտների միջև մի քանի անգամ սաստիկ տաքացաւ. նա տևեց մի ժամից աւելի և, վերջապէս, աւարտուեց հետևեալ պայմաններով. «պէտք է բարօն ֆօն-Դեօնհօֆն ու պարոն դա-Սանինը գնդակաձգութեամբ մենամարտեն յաջորդ օրը, առաւօտեան ժամը 10-ին, Գանաուի մօտիկ գանուող փոքրիկ անտառում, քան քայլ հեռաւորութեան վրայ. իւրաքանչիւրը, սեկունդանտների տուած ազդանշանի համաձայն, իրաւունք ունի կրակելու երկու անգամ։ Ատրճանակները լինելու են առանց արագաձիգի և առանց ոլորապտոյտ գծերի»։ Պ-ն ֆօն-Բիխտերը դուրս եկաւ գնաց, իսկ Պանտալէօնը հանդիսաւոր կերպով բաց արեց ննջարանի դուռը և, հաղորդելով խորհրդակցութեան հետևանքը, նորից բացականչեց. «Bravo Russo! Bravo giovanotto!—դու կը յաղթես»։

Մի քանի րոպէից յետոյ, նրանք, երկուսով էլ գնացին Ռօզելլիի կօնդիտերանոցը։ Սանինը նախապէս խօսք առաւ Պանտալէօնից, որ մենա-

մարտի մասին ոչ ոքի բան չի ասի։ Իբրև պատասխան, Ծերունին մատը դէպի վեր բարձրացրեց միայն և աչքերը ճպճպացնելով՝ երկու անգամ իրար յետևից շշնջաց. segredezza (խորհրդաւորութիւն)։ Նա, կարծես, չահելացած լինէր. խօսում էր նոյն իսկ աւելի ազատ։ Այդ բոլոր արտասովոր, թէկուզ և անհաճոյ պատահարները նրան աշխուժացրել-վերափոխել էին դէպի այն ժամանակները, երբ նա ինքն էլ թէ ընդունում էր մենամարտութեան հրաւէրներ, և թէ հրաւիրում իր կողմից, թէև այդ բոլորը, իսկապէս, բեմի վրայ միայն։ Բարիտոնները, ինչպէս յայտնի է, իրանց դերերում շատ են գոռոզանում։

XIX

Էմիլը դուրս վազեց դիմաւորելու Սանինին. նա մի ժամից աւելի էր ինչ հսկում էր նրա գալուն, և շտապով շշնջաց նրա ականջին, որ մայրը ոչինչ չը գիտէ երեկուայ անախորժութեան մասին, ուստի նոյն իսկ չարժէ ակնարկել որ իրան դարձեալ ուղարկում են մագազինը... բայց ինքը այլևս չի գնայ այնտեղ, այլ կը թագնուի մի որևէ տեղում։ Հաղորդելով այդ ամենը մի քանի վայրկեանում՝ նա, յանկարծ, կպաւ Սանինի ուսին, ուժգին թափով համբուրեց նրան ու շտապեց դէպի ներքև փողոցով։ Կօնդիտերանոցում Ջեմման դիմաւորեց Սանինին. ուզում էր ինչ որ բան ասել, բայց չը կարողացաւ։ Նրա շրթունքները թեթև կերպով դողում էին, իսկ աչքերը արագ թարթվում էին ու սահում այս ու այն կողմ։ Սանինը շտապեց հանգստացնել նրան, հաւատացնելով, որ ամեն ինչ վերջացաւ արդէն... դատարկ բանով։

—Այսօր ձեզ մօտ ոչ ոք չի՞ եկել,—հարցրեց Ջեմման։

—Եկել էր մէկը. նրա հետ մենք բացատրվում էինք, և մենք... մենք աւելորդ ցնծագին արդիւնքի յանգեցինք։

Ջեմման վերադարձաւ առևտրասեղանի յետևը։ «Չը հաւատաց»—մտածեց Սանինը... բայց և այնպէս անցաւ գնաց հարևան սենեակը, ուր պատահեց Ֆրաու Լէնօրային։

Վերջինիս միգրենը թէև անցել էր արդէն, բայց նա դեռ ևս գտնվում էր մելամաղձոտ տրամադրութեան մէջ։ Նա սիրալիր կերպով ժպտաց նրան և միևնոյն ժամանակ նախազգուշացրեց, որ այսօր իրա հետ ժամանակ անցկացնելը նրա համար ձանձրալի կը լինի, որովհետև ինքը անկարող է զբաղեցնել նրան։ Սանինը նրան տեց նրա կողքին և նկատեց, որ նրա կոպերը կարմրել են ու ուռել։

—Ի՞նչ է պատահել ձեզ, Ֆրաու Լէնօրայ։ Մի թէ լաց էք եղել։

—Սստ... շշնջաց նա և գլխով ցոյց տուեց

դէպի այն սենեակի կողմը, որտեղ գտնվում էր նրա աղջիկը։ Մի ասէք այդ... բարձրաձայն։

—Իսկ ինչո՞ւ համար էիք լալիս։

—Ա՜խ, մօսեօ Սանին, ինքս էլ չը գիտեմ՝ թէ ինչու։

—Աղդեօք, ոչ ոք չէ՞ վշտացրել ձեզ։

—Ո՜հ, ոչ.... յանկարծ մի տեսակ սաստիկ ձանձրոյթ զգացի։ Յիշեցի Ջիօվան Բատտիստային... իմ երիտասարդութիւնը.... Յետոյ՝ թէ ինչպէս այդ բոլորը շուտով անցաւ։ Պատասում եմ արդէն, բարեկամս, և ոչ մի կերպ չեմ կարողանում հաշտուել այդ բանի հետ։ Թւում է, որ ես ինքս դարձեալ ճնացել եմ նոյնը, ինչ որ առաջ... իսկ ծերութիւնը. ահաւասիկ և նա... ահա նա։

Ֆրաու Լէնօրայի աչքերում երևացին արցունքները։—Դուք ահա, նայում էք ինձ վրայ ու զարմանում... սակայն դուք էլ կը ծերանաք, բարեկամս, և կը զգաք թէ որչափ դառն է այդ։

Սանինը սկսեց մխիթարել նրան, յիշեց նրա զաւակներին, որոնց անձնաւորութեան մէջ յարութիւն էր առնում սեփական երիտասարդութիւնը։ Փորձեց նոյն իսկ կատակ անել նրա հետ, հաւատացնելով, որ նա ուզում է որպէսզի սիրաբանութիւններ անեն... բայց տիկինը առանց կատակի, խնդրեց Սանինին «այլևս չանել», և վերջինս, առաջին անգամ, կարողացաւ համոզուել, թէ այդ տեսակ լքումները ծերութեան գիտակ-

ցութեան լքումներ են և անկարելի է նրանց որևէ բանով մխիթարել կամ ցրել։ հարկաւոր է միայն սպասել, մինչև որ նա անցնի ինքն իրան։ Սանինը առաջարկեց տիկնոջը տրեսսերէ խաղալ իր հետ. դրանից աւելի լաւ բան նա չը կարողացաւ գտնել։

Տիկինը իսկոյն համաձայնուեց և, կարծես թէ, մի քիչ էլ զուարթացաւ։

Սանինը նրա հետ խաղաց մինչև ճաշ ու նաև ճաշից յետոյ։ Պանտալէօնը նոյնպէս մասնակցեց խաղին։ Երբէք նրա գլխի մազերը՝ գանգուրները այնպէս ցած չէին կախուել նրա ճակատի վրայ, երբէք կզակը այնպէս խորը չէր թաղուել փողկապի մէջ, ինչպէս այժմ։ Նրա ամեն մի շարժումից նկատվում էր այնպիսի լաւուած կարևորութիւն, որ նայելով նրա վրայ, ակամայից այն միտքն էր յղանում մարդու գլխում՝ թէ դա ինչ գաղտնիք է, որ այդչափ հաստատակամութեամբ թագցնում է այդ մարդը։

Բայց. Segredezza! Segredezza!

Այդ ամբողջ օրը նա ամեն կերպ աշխատում էր իր խորին յարգանքը ցոյց տալ Սանինին. սեղանի վրայ՝ հանդիսաւոր կերպով և վրճռակռնատէս թողնելով կանանցը, կերակուրներով լի մատուցարանը ամենից առաջ նրան էր մատուցանում. թղթախաղի միջոցին՝ վերցնելու աւելորդ թղթերը նրան էր զիջում, չէր համարձակվում առանց նրա հարցնել նրան. ո՛չ այս ո՛չ

այն, յայտարարում էր նա, որ ռուս ազգը աշխարհիս ամենավեհանձն, քաջ ու համարձակ ազգն է։

—«Ա՜խ, դու ծեր արտիստ» մտածեց իր մաքում Սանինը, և այնքան չէր զարմանում տ. Ռօզելլիի հոգեկան տրամադրութեան անսպասելի փոխուելու վրայ, որքան այն բանի վրայ՝ թէ ինչպէս էր իրանց հետ վարվում նրա աղջիկը։ Ջեմման չէ թէ խուսափում էր իրանից... ընդհակառակը, նա շարունակ նստում էր քիչ հեռաւորութեան վրայ, ականջ դնում Սանինի խօսքերին, նայում նրա վրայ, բայց վճռականապէս խուսափում էր նրա հետ զրուցի բռնուել, և հէնց որ Սանինը սկսում էր խօսել նրա հետ, նա անխօս վեր էր կենում տեղից և կամաց հեռանում մի քանի վայրկեանով։ Յետոյ նա նորից էր ներս գալիս և դարձեալ նստում մի որևէ տեղ՝ անկիւնում, և նստում էր անշարժ, կարծես խորհելով, տարակուսանքով... բայց աւելի շուտ տարակուսանքով։ Ինքը Ֆրաու Լէնօրան նկատեց, վերջապէս, նրա վարմունքի արտասովոր լինելը և մի երկու անգամ էլ հարցրեց՝ թէ ինչ է պատահել նրան այսօր։

—Ո՛չինչ, պատասխանեց Ջեմման.—դու գիտես, որ ես երբեմն այս տեսակ եմ դառնում։

—Այդ ճշմարիտ է,—համաձայնվում էր նրա հետ մայրը։

Այդպէս անցաւ այդ ամբողջ երկարատև օրը.

ոչ աշխոյժ, և ոչ էլ ձանձրալի, ոչ ուրախ, ոչ էլ տխուր։—Ջեմմա, պահիր քեզ ուրիշ տեսակ, ապա թէ ոչ Սանինը... ով գիտէ. չէը փորձի, արդեօք, Սանինը մի քիչ ձևանալ, կամ թէ ուղղակի անձնատուր կը լինէր վշտի զգացմունքին, հաւանական, թերևս, և մշտնջենական անջատումից առաջ... բայց որովհետև նրան չը յաջողուեց և ոչ մի անգամ առանձին խօսել Ջեմմայի հետ, ուստի նա ստիպուած էր բաւականանալ միայն նրանով, որ երեկոյեան սուրճից առաջ՝ քառորդ ժամուայ չափ դաշնամուրի վրայ թախծալի (մինօրնի) դաշնակներն էր վերցնում։

Էմիլը վերադարձաւ ուշ և, պ-ն Կլիւբերի մասին իրան տրուելիք հարց ու փորձերից խուսափելու համար, շատ շուտով էլ յետ գնաց։ Հեռանալու հերթը հասաւ նաև Սանինին։ Նա սկսեց հրաժեշտ տալ Ջեմմային. ինչ որ պատճառով նրա միտքն ընկաւ Լենակու հրաժեշտը Օյլգային՝ «Օնեգինի» մէջ։ Նա պինդ սեղմեց Ջեմմայի ձեռքը և փորձեց նայել նրա դէմքին, բայց նա մի փոքր շուռ եկաւ ու դուրս հանեց իր մատները Սանինի ձեռքից։

XX

Երեկոն բոլորովին «աստեղազարդուել էր», երբ Սանինը դուրս եկաւ տնից։ Եւ որքան շատ

աստղեր կային. մեծ, փոքր, դեղին, կարմիր, կապոյտ, սպիտակ. բոլորն էլ այնպէս էին պըլպլում, ղժվժում-պար բռնում՝ և անընդհատ խաղում իրանց շողերի հետ: Երկնքի վրայ լուսին չը կար, բայց առանց նրան էլ ամեն մի առարկայ պարզ կերպով նկատելի էր ազօտ, անստուեր խաւարի մէջ: Սանինը անցաւ մինչև փողոցի վերջը... նա չէր ուզում իսկոյն տուն վերադառնալ. պահանջ էր զգում թափառել մաքուր, զով օդում: Նա վերադառնում էր արդէն, և դեռ ևս բոլորովին չէր հաւասարուել այն տանը, որի մէջ գանվում էր Ռոզելլիի կօնդիտերանոցը, երբ դէպի փողոց նայող լուսամուտներից մէկը յանկարծ թրխկաց ու բացուեց. նրա սև քառանկիւնի շրջանակի մէջ (սենեակում ճրագ չէր վառվում) երևաց կանացի կերպարանք, և նա լսեց, որ իրան կանչում են:

—«Monsieur Dimitri»:

Նա աճապարեց դէպի լուսամուտը... Ջեմման: Վերջինս թիկն էր տուել պատուհանի ներքնատախտակի վրայ ու կախուել առաջ:

—Monsieur Dimitri!,— սկսեց նա ցած և զգոյշ ձայնով,—ես ամբողջ օրը՝ այսօր կամենում էի տալ ձեզ մի իր... բայց չէի համարձակվում... և ահա, այժմ, անսպասելի կերպով, տեսնելով ձեզ նորից, մտածեցի, որ երևի, այդպէս է վիճակուած...

Ջեմման այդ խօսքերի վրայ ակամայից

կանգ առաւ: Նա այլ ևս չըկարողացաւ շարունակել. այդ միևնոյն վայրկեանին մի արտասովոր բան պատահեց:

Յանկարծ՝ այդ խորին խաղաղութեան մէջ, երկինքը բոլորովին անամպ, պարզկայ, այնպէս սաստիկ քամի բարձրացաւ, որ ինքը՝ երկիրը, թւում էր, թէ թրպրտաց մեր ոտքերի տակ, նուրբ աստղալոյսը ցոլաց ու սահեց, օդն էլ նոյնիսկ կծկուելով պտտուեց: Քամին, ուչ պաղ, այլ տաք, համարեա տօթ քամին խփեց ծառերին, տան տանիքին, պատերին ու փողոցին, ու մի ակնթարթում Սանինի գլխից էլ պոկեց գլխարկը, տարաւ, վեր բարձրացրեց ու այս ու այն կողմ ցրեց Ջեմմայի խոպոպիքները: Սանինի գլուխը հաւասարվում էր պատուհանի ներքնամասին. նա անզգայաբար կպաւ նրան, և Ջեմման երկու ձեռքերով բռնեց նրա ուսերից ու ամբողջ կուրծքով սեղմուեց նրա գլխին: Աղմուկը, զնգոցն ու դղրդիւնը տևեց մի րոպէ... Ահագին թռչուններուի երամակի նման, անցաւ գնաց ցաւակոտոր, չանգռտող քամին... Խորին խաղաղութիւնը նորից տիրեց շուրջը:

Սանինը բարձրացաւ ոտքի ծայրերի վրայ ու տեսաւ իր գլխավերևը մի այնպիսի սքանչելի, վախեցած, յուզուած դէմք, այնպիսի խոշոր, զարմանալի սիրուն աչքեր. մի այնպիսի սքանչելի գեղեցկուհի տեսաւ նա, որ նրա սիրտը չը դիմացաւ, շրթունքներով հպուեց նա իր կրծքին

ընկած մազերի նուրբը հիւսերին և միայն կարողացաւ արտասանել. «Ո՜հ, Ջեմմա»:

—Այս ի՞նչ բան էր: Կա՞յծակ, հարցրեց Ջեմմանը, աչքերը չռած այս ու այն կողմ նայելով, առանց հեռացնելու նրա ուսերի վրայից իր մերկացած բազուկները:

—Ջեմմա,—կրկնեց Սանինը:

Ջեմմանը հառաչեց, յետ նայեց դէպի սենեակի ներսը, և ապա, արագ շարժումով հանելով կօրսաժի տակից արդէն թոռոմած վարդը, ձգեց Սանինին...

—Ես կամենում էի տալ ձեզ ահա այս ծաղիկը...

Նա ճանաչեց վարդը. դա այն վարդն էր, որը նա խլել էր օֆիցերից նախորդ օրը...

Սակայն իսկոյն, այդ խօսքերից յետոյ, պատուհանը թրխկոցով փակուեց նորից, ու մութ ապակու յետևում այլևս ոչինչ չէր երևում, սալիտակին չէր տալիս:

Սանինը առն վերադարձաւ առանց գլխարկի... Նա չէր էլ նկատել, որ կորցրել էր:

XXI

Նա կարողացաւ քնել լուսադէմին միայն: Եւ ամենևին զարմանալի էլ չէ. այն ամարային, վայրկենաբար բարձրացած ուժեղ քամու հա-

րուածի տակ, նա, համարեա, նոյնպէս վայրկենաբար զգաց ոչ թէ այն, որ Ջեմման գեղեցկուհի է, ոչ թէ այն, որ նա իրան դուր էր գալիս. այդ բանները Սանինը առաջ էլ գիտէր... այլ այն, որ հազիւ թէ չը սիրեց նրան: Իսկ այդ բոլորից յետոյ պատահում է ահա այս անմիտ մենամարտը: Տխուր նախազգացումները սկսեցին տանջել նրան: Դէ, ասենք, չէին սպանելու նրան... Սակայն ի՞նչ կարող է դուրս գալ դէպի այդ աղջիկը՝ դէպի ուրիշի հարսնացուն ունեցած իր այդ սիրուց: Ընդունենք նոյն իսկ, որ այդ «ուրիշը» նրա համար վտանգաւոր էլ չէ, որ ինքը Ջեմման կը սիրէ կամ արդէն սիրում է նրան... Ի՞նչ օգուտ դրանից: Ի՞նչպէս թէ ինչ: Այդ տեսակ գեղեցկուհի...

Նա անց ու դարձ էր անում սենեակում, նստում էր սեղանի ծայրին, վերցնում մի թերթ թուղթ, մի քանի տող գրում նրա վրայ ու խոկոյն էլ ջնջում... Մտաբերում էր Ջեմմայի աքանչելի կերպարանքը մութ պատուհանի մէջ, աստղերի շողերի տակ. մտաբերում էր նրա մարմարեայ ձեռքերը, որոնք նման էին օլիմպիական դիցուհիների ձեռքերին, զգում էր նրանց կենդանի ծանրութիւնը իր ուսերի վրայ... Ապա՝ թէ ինչպէս վերցրեց նա իրան ձգած վարդը և թաւում էր նրան, որ նրա կիսաթառամ թերթիկներից բուրում էր մի ուրիշ տեսակ, էլ աւելի

քնքուշ բուրմունք, քան սովորական բուրմունքը վարդերի...

—Եւ յանկարծ՝ եթէ նրան սպանեն կամ հաշմանդամ դարձնեն։

Նա չը պառկեց անկողնում, այլ քնեց շորերը հագին, առանց հանուելու, գահաւորակի վրայ։

Մէկը հրում էր նրա ուսը...

Սանինը աչքերը բաց արեց և տեսաւ Պանտալէօնին։

—Քնել է այնպէս, ինչպէս Աղէքսանդը Մակեդոնացին բաբելօնեան ճակատամարտից առաջ, բացականչեց ծերունին։

—Ի՞նչ կայ. ո՞ր ժամն է, — հարցրեց Սանինը։

—Եօթից պակաս քառորդ. մինչև Գանաու երկու ժամուայ ճանապարհ է, իսկ մենք առաջինը պէտք է լինենք նշանակուած տեղում։ Ռուսները միշտ կանխում են իրանց թշնամիներին։ Ես վերցրել եմ Ֆրանկֆուրտի ամենալաւ կառքը։

Սանինը սկսեց լուացուել։—Իսկ ո՞ւր են ատրճանակները։

—Ատրճանակները կը բերէ այն ֆերրօֆլուկտօ Տեղեսկօն։ Բժշկին էլ նա կը բերէ։

Պանտալէօնը, ըստ երևոյթին, երեկուայ նման քաջալերուած էր։ Բայց հէնց որ կառք նստեց Սանինի հետ միասին, հէնց որ կառապանը հարուածեց խարազանով և ձիանները իրանց կանգնած տեղից միանգամից սկսեցին վազել, նախկին երգչի և Պադուայի դրագուններըի բաբեկամի մէջ յանկարծակի փոփոխութիւն տեղի ունեցաւ։ Նա շշկլուեց ու նոյն իսկ վախեցաւ։ Ինչ որ մի բան, կարծես, փլուեց նրա ներսում, վատ ածուած պատի նման։

—Այնուամենայնիւ, մենք այս ինչ ենք անում, Աստուած իմ՝ Santissima Madonna *)— բացականչեց նա անսպասելի լալկան ձայնով ու բռնեց իր մազերից։— Ի՞նչ եմ անում ես, ծեր յիմար, խելագար, frenetico.

Սանինը զարմացաւ, ծիծաղեց և ապա թեթև կերպով գրկելով Պանտալէօնին մէջքից, յիշեցրեց նրան ֆրանսիական առածը. «Le vin est tirè—il faut le boire» **)։

—Այո՛, այո՛, պատասխանեց ծերունին. այդ բաժակը մենք կը խմենք ձեզ հետ միասին։ Բայց և այնպէս ես անխելք եմ։ Ես անխելք եմ։ Աւելն ինչ այնպէս խաղաղ էր, լաւ... և յանկարծ. տա-տա-տա, տրա-տա-տա։

—Ինչպէս որ tutti-ն նուագախմբի մէջ,— նկատեց Սանինը լարուած ժպիտով։—Բայց մեղաւորը դուք չէք։

—Գիտեմ, որ ես չեմ։ Հասկանալի է։ Այ-

*) Ամենասուրբ Աստուածածին։

**) Գինին բաց է արուած՝ հարկաւոր է խմել։

նուամենայնիւ դա... մի այնպիսի անզուսպ վարմունք է։ Diavolo, diavolo,—կրկնեց Պանտալէօնը թափ տալով իր երկար մազերը ու հառաչելով։

Մինչդեռ կառքը շարունակ գնում էր ու գնում։

Հիանալի առաւօտ էր։ Ֆրանկֆուրտի փողոցները, որ նոր նոր սկսել էին կենդանութիւն ստանալ, այնքան մաքուր ու յարմար էին թւում. տների պատուհանները թիթեղի նման փայլում էին երփներանգ գոյներով, իսկ երբ կառքը դուրս եկաւ քաղաքի միջից՝ վերևից, կապոյտ, դեռ ևս չըպայծառացած՝ երկնքից սկսեցին տեղալ արտուտիկների քաղցրահնչիւն թնդիւնները։ Յանկարծ՝ խճուղու պատուելու տեղում, բարձրակատար բարդու ետևից դուրս պրծաւ մի ծանօթ կերպարանք, մի քանի քայլ արեց դէպի առաջ ու կանգ առաւ։ Սանինը ուշադրութեամբ նայեց... Ատոուած իմ,—էմիլն էր։

—Մի՞թէ նա որևէ տեղեկութիւն ունի,—դիմեց Սանինը Պանտալէօնին։

—Ա՛խր ասում եմ, որ անխելք եմ ես,—յուսահատօրէն, համարեա, աղաղակելով՝ խնդրեց իտալացին։—Այդ չարաբաստիկ տղան ամբողջ գիշերը հանգստութիւն չը տուեց ինձ և այսօր առաւօտեան, վերջապէս, ամեն բան ասացի։

«Ա՛յ քեզ seqredezza»—մտածեց Սանինը։

Կառքը հաւասարուեց էմիլին։ Սանինը հրա-

մայեց կառապանին կանգնեցնել ձիաները և իր մօտ կանչեց «չարաբաստիկ տղային»։ Անվճռական քայլերով մօտեցաւ էմիլը գունատ, այնպէս գունատ, ինչպէս որ իր ուշադնացութեան օրն էր։

Նա հազիւ էր ոտքի վրայ կանգնում։

—Ի՞նչ էք անում այստեղ,—խստութեամբ հարցրեց նրան Սանինը։—Ի՞նչու տանը չէք։

—Թոյլ տուէք... Թոյլ տուէք ես էլ ձեզ հետ գամ, կմկմաց էմիլը դողդոջուն ձայնով, և ծալեց ձեռքերը։ Նրա տատմները իրար էին խրվում, ինչպէս ջերմի ժամանակ։ Ձեմ խանգարի ձեզ, միայն թէ ինձ էլ վերցրէք ձեզ հետ։

—Եթէ դուք մազաչափ, գոնէ, ժաեբժութիւն էք տածում դէպի ինձ, կամ յարգում էք ինձ, ասաց Սանինը, հէնց այս րոպէիս էլ կը վերադառնաք տուն կամ մազաղինը պ-ն Կլուբերի մօտ, և ոչ ոքի չէք ասի ոչ մի խօսք, ու կը սպասէք իմ վերադառնալուն։

—Ձեր վերադառնալուն,—հեծկլտաց էմիլը. իսկ նրա ձայնը զընգաց ու խզուեց,—իսկ եթէ ձեզ...

—Է՛միլ,—ընդհատեց նրան Սանինը, և աչքով արեց դէպի կառապանը, — սթափուեցէք. Է՛միլ, խնդրում եմ, գնացէք տուն։ Լսեցէք ինձ, բարեկամս։ Դուք հաւատացնում էք, որ սիրում էք ինձ։ Դէ լաւ. չէ՞ որ ես խնդրում եմ ձեզ։

Եւ Սանինը մեկնեց նրան իր ձեռքը։ Էմիլը

շարժուեց առաջ, հեկեկաց ու սեղմեց նրան իր շրթունքներին, ապա ճանապարհից դուրս թռչելով, յետ վազեց դէպի Ֆրանկֆուրտ՝ դաշտի միջով։

— Նոյնպէս ազնիւ սիրտ ունի,—մտմտաց Պանտալէօնը։ Բայց Սանինը ժպալլադէմ նայեց նրա վրայ... Ծերունին թաղուեց կառքի անկիւնում։ Նա զգում էր իր մեղքը. բացի դրանից նա լոպէ առ լոպէ աւելի էր սկսում զարմանալ. մի՞թէ իսկապէս այդ ինքն է սեկունդանտ դարձել, ինքը՝ ձիանները վարձել, ամեն բան տնօրինել, և իր խաղաղ կացարանից դուրս եկել առաւօտեան ժամը 6-ին։ Միւս կողմից էլ նրա ոտքերը ցաւից սկսում էին մրմնջալ արդէն։

Սանինը հարկ համարեց սիրտ տալ նրան և շուտով գտաւ դամբրը. գտաւ իսկական խօսքը դրա համար։

—Ո՞ւր է ձեր նախկին ոգին, յարգելի սենեօր Զիպպատօլա։ Ո՞ւր է il antico valor?

Սինեօր Զիպպատօլան ուղղուեց ամբողջ մարմնով և կնճռոտուեց։

—Il antico valor? *) արտասանեց նա բաս ձայնով։ Non è ancora Spento—(նա դեռ բոլորովին հանգած չէ), il antico valor!!

Նա պատշաճաւոր դիրք ընդունեց, խօսեց իր կարիէրայի մասին, խօսեց օպերայի և նշա-

*) Հնագոյն արժէք։

նաւոր տենօր Գարսիայի մասին, մինչև որ եկաւ հասաւ Գանաու՝ քաջի նման։

Երբ լաւ մտածում է մարդ՝ տեսնում է, որ աշխարհիս վրայ չը կայ աւելի ուժեղ... բայց և աւելի անզօր բան, քան խօսքը։

XXII

Այն փոքրիկ անտառը, որի մէջ պէտք է տեղի ունենար ջարդը, գտնվում էր Գանաուից քառորդ ժոմն հեռաւորութեան վրայ։ Սանինը, Պանտալէօնի հետ միասին, եկել էին աւելի վաղ, ինչպէս որ վերջինս նախագուշակում էր. հրաժայեցին կառապանին սպասել անտառի ծայրին, իսկ իրանք խորասուզվեցին բաւականին խիտ բուսած բազմաթիւ ծառերի ստուերների մէջ։ Նրանք ստիպուած եղան սպասելու միւսներին մօտ մի ժամ։

Սպասելը շատ էլ ծանր չէր թւում Սանինին, նա գնում-գալիս էր, ականջ դնում՝ թէ ինչպէս երգում էին թռչունները, հեռւում էր թռչկոտող «ճպուռներին» և ինչպէս որ, առհասարակ, ուս մարդկանց մեծ մասն է վարվում այդպիսի դէպքերում, աշխատում էր չը մտածել։ Մի անգամ միայն մտածմունքը պաշարեց նրան. նա պատահեց մի լօրի ծառի, որին, ամենայն հաւանականութեամբ, կոտրել էր

երեկուայ սրարշաւ քամին։ Կատարելապէս մեռնում էր նա... Մեռնում էին նրա վրայի բոլոր տերևները։ «Այս ինչ է նշանակում. նախագուշակութիւն չէ՞, արդեօք», ծագեց մի րոպէ նրա գլխում,—բայց իսկոյն և եթ նա սկսեց շվշվացնել, ցատկեց նոյն լօրիի վրայից, քայլեց ծառուղիով։ Իսկ Պանտալէօնը վնթվնթում էր, հայհոյում գերմանացիներին, անքում, շփելով երբեմն մէջքը, երբեմն ծնկերը։ Յուզմունքից նա նոյն իսկ յորանջում էր, և դա նրա փոքրիկ, կծկուած դէմքին տալիս էր ծիծաղաշարժ արտայայտութիւն։ Սանինը քիչ էր մնում փրռթկացնէր՝ երբ նայում էր նրա վրայ։

Վերջապէս, լսուեց անիւների դղրդիւնը փափուկ ճանապարհի վրայից։—Նրանք են,—ասաց Պանտալէօնը, ականջը սրեց և ուղղուեց. վայրկենաբար ջղային դող անցաւ նրա մարմնով, որը, սակայն, նա շտապեց վարագուրել բացականչելով. բը՜րբը՜ր, և ապա նկատողութիւն անելով, որ այսօրուայ առաւօտը բաւականին զով է։ Առաւօտեամբ լճած ցողը շղարշել էր խոտերն ու տերևները, այնուամենայնիւ ոտքը թափանցում էր արդէն անտառի ներսը։ Երկու օֆիցերները շուտով երևացին նրա կամարների տակ. նրանց ուղեկցում էր մի միջահասակ, լիքլիք մարդուկ, ֆլեգմատիկ, հաժարեա, քնից ուռած դէմքով. նա զինուորական բժիշկն էր։ Նա մի ձեռքին բռնել էր ջրով լի կաւէ կուժը՝ հարկաւոր դէպքում բանացնելու համար, իսկ պայուսակը վիրակապութեան գործիքներով ու կապիչներով ճօճվում էր նրա ձախ ուսին։ Երևում էր, որ այդպիսի էքսկուրսիաների մէջ նա չափից դուրս վարժուած էր. դրանք նրա եկամուտների աղբիւրներից մէկն էին կազմում։ Ամեն մի մենաժարտութիւն բերում էր նրան ութ ոսկէ դրամ. իւրաքանչիւր կողմը վճարում էր չորսական։ Պ-ն Ֆօն-Րիխաերը բերում էր առրճանակների արկղը, պ-ն Դեօնհօֆը պատեցնում էր ձեռքում, երևի, «շիկի» համար, փոքրիկ մարակը։

—Պանտալէօն,—շշնջաց ծերունուն Սանինը,—եթէ... եթէ ինձ սպանելու լինեն,—չէ՞ ամեն բան կարող է պատահել,—իմ ծոցագրպանում, մի թղթի մէջ փաթաթուած, կայ մի ծաղիկ, հանեցէք այդ թուղթը և յանձնեցէք սինեօրինա Զեմմային։ Լսեցի՞ք։ Ուռատանո՞ւմ էք։

Ծերունին ախորժեամբ նայեց նրան և դրական կերպով տմբացրեց գլուխը... բայց, Աստուած միայն գիտէ՝ հասկացա՞ւ նա, արդեօք, թէ ինչ բանի մասին էր խնդրում Սանինը։

Հակառակորդները ու սեկունդանտները փոխադարձաբար իրար գլուխ տուին, ինչպէս որ ընդունուած էր, միայն բժիշկը ունքերն էլ չը շարժեց և նստեց քիչ հեռու խոտի վրայ. «այսինքն թէ ես ժամանակ չունեմ ապետական քաղաքավարութեան արտայայտութիւններով զբաղվելու»։ Պ-ն «Տշիբադօլան» պատասխանեց ա-

պուշի պէս ծամծմելով լեզուն (նրանում «պատը» դարձեալ փլուել էր)· այսինքն, թէ «գործեցէք դուք, ողորմած պարոն, իսկ ես էլ դիտեմ»...

Եւ պ. Ֆօն-Րիխտերը սկսեց գործել: Գտաւ հէնց այդտեղ՝ անտառի մէջ, մի շատ լաւ տեղ, ամբողջապէս ծաղկազարդ, բացատ, քայլերը ո-րոշեց, նշանակեց երկու ծայրերի կէտերը և փուքիով փայտէ ցցիկները պատրաստելով՝ խփեց գետնի մէջ, ապա, հանելով արկղի միջից աղբ-ճանակները, պլպղեց ու լցրեց աղբճանակները: Մի խօսքով, բոլոր ոյժերով աշխատում էր, նե-ղուքիւն քաշում և անընդհատ սրբում իր քըրտ-նած դէմքը սպիտակ թաշկինակով, նրան աջակ-ցող Պանտալէօնը աւելի շուտ նման էր սառած, փետացած մարդու: Այդ ամբողջ պատրաստու-թիւնների ժամանակ երկու հակառակորդներն էլ կանգնել էին իրարից հեռու և նմանում էին երկու պատժուած աշակերտների, որոնք փքուել ու խռովել են իրանց դաստիարակների վրայ:

Հասաւ վճռական րօպէն...:

«Իւրաքանչիւրը վեր առաւ իր աղբճա-նակը»...:

Բայց այդ նոյն միջոցին պ-ն Ֆօն-Րիխտերը նկատեց Պանտալէօնին, որ նա, իբրև սեկուն-դանտների աւագը, պարտաւոր է մենամարտու-թեան կանոնների համաձայն, նախ քան ճակա-տագրական «մէկ, երկու, երեք» արտասանելը, դիմել հակառակորդներին վերջին խորհուրդով

ու առաջարկով՝ հաշտուել իրար հետ, որ, թէև այդ առաջարկը երբէք ոչ մի հետևանք չէ ու-նենում և, սովորաբար, դա ոչ այլ ինչ է, բայց եթէ սոսկ մի հասարակ ձևականութիւն, այնուա-մենայնիւ այդ ձևականութիւնը կատարելով՝ պ-ն Զիպպատօլան հեռացրած կը լինի իրանից պատասխանատուութեան որոշ մասը, որ, իրաւ է, այդ տեսակ ճառ արտասանելը, այսպէս ա-սած, «անաչառ վկայի» (unportheüscher Leuqe), անմիջական պարտականութիւնն է կազմում, բայց որովհետև իրանք այդպիսին չունեն, ուս-տի նա, պ-ն Ֆօն-Րիխտերը սիրով զիջում է այդ պատուութիւնը իր պատկառելի հակառակին: Պանտալէօնը, որ արդէն կարողացել էր քաշուել թիփի յետևը, այնպէս, որ բոլորովին չը տեսնի վիրաւորանք հասցնող օֆիցերին, սկզբում ոչինչ չը հասկացաւ պ. Ֆօն-Րիխտերի արտասանած ամբողջ ճառից, ևս առաւել, որ նա արտասա-նում էր իրա քթի տակ. բայց յետոյ, յանկարծ գլխի ընկաւ, աշխուժով առաջ եկաւ և, ցնցուե-լով՝ ձեռքը կրծքին խփելով՝ խռպոտ, բայց բարձրաձայն, իր խառնափնթոր բարբառով ա-սաց. «A la la la... che bestialita! Deux zeun՝ ommes comme ça qué si batono-perchè? che diavolo? Andante a cosa

—Ես հաւաձայն չեմ հաշտութեան,—շտա-պով ասաց Սանինը:

— Ես նոյնպէս հաւաձայն չեմ,—նրա յետևից կրկնեց հակառակորդն էլ։

—Դէ, ուրեմն, գոչեցէք. մէկ, երկու, երեք,—դիմեց Ֆօն-Բիխաերը շփոթուած Պանտալէօնին։

Վերջինս անմիջապէս սուզուեց դարձեալ թփի տակ, և այնտեղից արդէն, ամբողջովին կուչ-կուչ գալով՝ գոչեց, որքան ոյժ ուներ.

Una.... due.... e tre!

Առաջինը արձակեց Սանինը. գնդակը չը կպաւ նպատակին, այլ շառաչիւնով մտաւ ծառի մէջ։ Բարօն Դեօնհօֆը անմիջապէս նրա յետևից արձակեց գնդակը դիտաւորեամբ Սանինի կողքից, օդի մէջ։

Մի րոպէ տիրեց լարուած լռութիւն... Ոչ ոք չէր շարժվում տեղից։ Պանտալէօնը թոյլ կերպով ձի քաշեց։

—Կը հրամայէ՞ք շարունակել,—խօսեց Դեօնհօֆը։

—Ինչո՞ւ կրակեցիք օդի մէջ, հարցրեց Սանինը։

—Այդ ձեր գործը չէ։

—Երկրորդ անգամն էլ էք կրակելու օդի մէջ,—կրկին անգամ հարցրեց Սանինը։

—Կարող է պատահել. չը գիտեմ։

—Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք, պարոնները...— նկատեց Ֆօն-Բիխաերը, մենամարտողները իրաւունք չունեն խօսելու իրար հետ։ Դա արդէն անկարգ բան է։

—Եթէ այդպէս է, ես հրաժարվում եմ արձակել գնդակս,—ասաց Սանինը և ատրճանակը գետին նետեց։

—Ես էս մտադիր չեմ շարունակել մենամարտը,—բացականչեց Դեօնհօֆը և նոյնպէս վայր ձգեց ատրճանակը գետին,—բացի դրանից, ես այժմ պատրաստ եմ խոստովանելու, որ երեք օր առաջ պատահած դէպքում անարդար էի։

Յետոյ նա մոտաց իր կանգնած տեղում և անհամարձակ կերպով մեկնեց իր ձեռքը դէպի առաջ։ Սանինը արագութեամբ մօտեցաւ և սեղմեց նրա ձեռքը։ Երկու երիտասարդներն էլ ժպտալով նայեցին իրար երեսի ու կարմրեցին։

—Bravi, bravi,— յանկարծակի, գժուածի պէս գոռաց Պանտալէօնը և, ծափ տալով, թափով դուրս վազեց թփի յետևից, իսկ բժիշկը, որ նստել էր հեռու՝ կտրուած ծառի վրայ, խկոյն վեր կացաւ տեղից, կժի ջուրը թափեց և, ծուլօրէն օրօրուելով, գնաց դէպի անտառի սկիզբը։

—Պատիւը վերականգնուած է և մենամարտը՝ աւարտուած,— յայտարարեց Ֆօն-Բիխտերը։

—Fuori! (Ֆօրա) հին հին յիշողութեան վրայ յենուելով՝ մի անգամ էլ բղաւեց Պանտալէօնը։

Փոխադարձաբար գլուխ տալով օֆիցերին և նստելով կառքը, Սանինը, իրաւ է, իր ամբողջ

էութեամբ, եթէ ոչ բաւականութիւն, գոնէ, ո-
րոշ չափով թեթևութիւն էր զգում, ինչպէս որ
զգում են լուրջ վիրահատութեան դիմանալուց
յետոյ: Նրա մէջ, սակայն, շարժուեց մի ուրիշ
զգացմունք էլ, մի զգացմունք, որ նման էր ա-
ժօթի... Նախամտածուած կեղծիք, օֆիցերական
կամ ուսանողական սովորական մի կատակ, չին-
ծու մի բան թուաց նրան այդ ամբողջ մենա-
մարտը, որի մէջ հէնց քիչ առաջ նա խաղաց
իր դերը: Մտաբերեց ֆլեգմատիկ բժշկին, յիշեց
թէ ինչպէս նա ժպտաց, այսինքն՝ կնճռոտեց
քիթը, երբ տեսաւ նրան անտառից դուրս գա-
լիս, համարեա, թևթևի տուած բարօն Դեօնհօ-
ֆի հետ: Իսկ յետոյ, երբ Պանտալէօնը վճարում
էր միևնոյն բժշկին նրան հասանելիք չորս ռու-
կեղրաճները... էհ. լաւ բան չէ:

Այո, Սանինը մի փոքր խղճահարութիւն և
ամօթ էր զգում... Թէև, մեւս կողմից, ինչ էր
ցնում նրան անել: Ինչ չը պէտք է անպատիժ
թողնէր երիտասարդ օֆիցերի յանդգնութիւնը,
չը պէտք է յարմարուէր պ-ն Կլիւբերին: Նա
հանդէս եկաւ Ջեմմային պաշտպանելու. ու
պաշտպանեց նրան.., Այդ այդպէս է, բայց այ-
նուամենայնիւ նրա սրտի խորքում ինչ որ բան
ճանկռտում էր, նա և՛ խղճահարութիւն էր զ-
գում, և՛, նոյն իսկ, ամօթ:

Դրա փոխարէն՝ Պանտալէօնը կատարելապէս
փայլում էր ուրախութի՛ց: Հպարտութիւն

զգաց յանկարծ: Տարած ճակատամարտի դաշտից
վերադարձող յաղթական գեներալը անգամ նրա-
նից աւելի ինքնագոհ կերպով չէր նայի դէս ու
դէն: Սանինի բռնած դիրքը՝ մենամարտութեան
ժամանակ, նրան ուղղակի հիացմունք էր պատ-
ճառում: Նա նրան հերոս էր անուանում և լսել
իսկ չէր ուզում նրա խրատներին և նոյն իսկ
աղաչանքներին: Նա նրան համեմատում էր մար-
մարեայ կամ բրօնզէ կոթողներին, համեմատում
էր Դօն-Ժուանի մէջ յիշուած կօմանդօրի ար-
ձանի հետ: Իրա մասին խոստովանում էր. «դէ,
ախր, ես արտիստ մարդ եմ, նկատեց նա,—
նեարդային անձնաւորութիւն եմ, իսկ դուք՝ ձիւ-
ների ու գրանիտէ ժայռերի զաւակն էք»:

Սանինը ուղղակի չը գիտէր՝ թէ ինչպէս
զսպէր այդ չափը կորցրած արտիստին:

Համարեա ճանապարհի միևնոյն տեղում, ուր
երկու ժամ առաջ նրանք պատահել էին Էմիլին,
նա դարձեալ դուրս թռաւ ծառի յետևից և ու-
րախ աղաղակելով՝ կարտուզը շարժելով գլխից
վերև և թռչկոտելով՝ ուղղակի դէպի կառքը վա-
զեց, այնպէս որ քիչ էր ցնում թէ կառքի տակն
ընկնէր և, առանց սպասելու, որպէսզի ձիաները
կանգնեն, վազ դռնակի վրայից ներս ընկաւ և
փաթաթուեց Սանինին:

—Դուք ողջ էք, չէք վրաւորուել, — շտապ

ասում էր նա։ Ներեցեք ինձ, ես չը լսեցի ձեզ, չը վերադարձայ Ֆրանկֆուրտ... Բայց չէի կա-րող... Ես սպասում էի ձեզ այստեղ... Պատմե-ցեք. ի՞նչպէս վերջացաւ։ Դուք... սպանե՞ցիք նրան։

Սանինը դժուարութեամբ հանգստացրեց և և նստացրեց Էմիլին։

Շատախօսաբար, ակներև բաւականութեամբ Պանտալէօնը հաղորդեց նրան մենամարտութեան բոլոր մանրամասնութիւնները և, իհարկէ, չը մոռացաւ կրկին անգամ յիշատակել բրօնզէ կո-թողի և կոմանդօրի մահարձանի մասին։ Նա նոյն իսկ վեր կացաւ տեղից և, ոտքերը իրարից հեռու դնելով՝ հաւասարակշռութիւնը պահպանելու հա-մար, ձեռքերը կրծքին ծալելով և արհամարհա-բար թթուեցնելով դէմքը՝ ներկայացրեց կոման-դօր Սանինին։ Էմիլը ականջ էր դնում ակնածու-թեամբ, երբեմն էլ ընդհատելով պատմութիւնը բացականչութիւններով կամ արագութեամբ վեր կենալով տեղից և նոյնպիսի արագութեամբ էլ համբուրելով իր հերոս բարեկամին։

Կառքի անիւները դղրդացին Ֆրանկֆուրտի մայթերի վրայ և, վերջապէս, կանգնեցին այն հիւրանոցի առջև, ուր ապրում էր Սանինը։

Իր երկու ուղեկիցների հետ միասին, նա վեր էր բարձրանում սանդուղքներով երկրորդ յարկը, երբ, յանկարծ, մութ նրբասրահից, շտապ քայլերով դուրս եկաւ մի կին. նրա դէմքը ծած-

կուած էր քօղով։ Նա կանգ առաւ Սանինի առջև, թեթև շարժումով յետ քաշուեց, դողալով հառա-չեց, և իսկոյն էլ վազեց դէպի ներքև, դուրս եկաւ փողոց ու անյայտացաւ ի մեծ զարմանս կէնների, որը յայտնեց, որ «այդ կինը մի ժամից աւելի է ինչ սպասում էր օտարերկրացու վե-րադարձին»։ Որքան էլ վայրկենական էր նրա յայտնուելը, այնուամենայնիւ Սանինը կարողա-ցաւ իսկոյն ճանաչել, որ դա Զեմման էր։ Նա ճանաչեց նրա աչքերը գորշագոյն, մետաքսէ խիտ քօղի տակից։

—Մի՞թէ ֆրէյլէյն Զեմմային յայտնի էր... Ոտքերը ծոր տալով հարցրեց Սանինը անբաւա-կանութեամբ, գերմաներէն դիմելով Էմիլին ու Պանտալէօնին, որոնք քայլ առ քայլ հետևում էին նրան։

Էմիլը կարմրատակեց ու շփոթուեց։

—Ես ստիպուած էի պատմել նրան բոլորը, թոթովելով պատասխանեց Էմիլը,—որովհետև նա արդէն գլխի էր ընկել, և ես ոչ մի կերպ չը կարողացայ... Բայց չէ որ այժմ այլևս նշանա-կութիւն չունի, աւելացրեց նա աշխուժութեամբ, —ամեն բան լաւ վախճան ունեցաւ. և նա ձեզ տեսաւ առողջ ու անվնաս։

—Սանինը շուռ եկաւ։

—Ինչ շատախօսն էք եղել դուք երկուսդ էլ։—Արտասանեց նա բարկութեամբ, մտաւ իր սենեակը և նստեց պատի վրայ։

—Մ՚ինչ բարկանայ, խնդրում եմ, ազաչեց Էմիլը։

—Լաւ, ես այլևս չեմ բարկանայ։ (Սանինը իրաւ որ չէր բարկանում և, վերջապէս, հազիւ թէ նա, իսկապէս, ցանկանար էլ, որպէսզի Զեմման այդ դէպքի մասին ոչինչ չիմանար)։ Լաւ... հերիք է, համբուրէք։ Այժմ դուք գնացէք։ Ես ուզում եմ մենակ մնալ։ Կը պառկեմ քնելու։ Յոգնած եմ։

—Հիանալի միտք,—բացականչեց Պանտալէօնը։ Ձեզ հանգստութիւն է հարկաւոր։ Դուք կատարելապէս արժանի էք դրան, ազնիւ սենեօր։ Գնանք, Էմիլիօ։ Մատների ծայրերով։ Մատների ծայրերով։ Սսսս...

Ասելով նրանց թէ ինքը ուզում է քնել, Սանինը միայն կամենում էր բաժանուել իր ընկերներից, բայց մնալով մենակ, նա, արդարև, բաւականաչափ յոգնածութիւն զգաց մարմնի բոլոր անդամների մէջ. ամբողջ նախընթաց գիշերը նա, համարեա, աչքերը չէր փակել, ուստի այժմ մեկնուելով անկողնի վրայ, անմիջապէս քնեց խոր քնով։

XX

Մի քանի ժամ շարունակ նա քնեց անխռով քնով։ Յետոյ՝ սկսեց երազ տեսնել. որ ինքը

դարձեալ մենամարտում է. որ իբրև հակառակորդ իր դէմ կանգնած է պ-ն Կլիւբերը, իսկ ոտնաձառի վրայ նստել է մի թութաք, այդ թութաքը Պանտալէօնն է և նա կրկնում է քիթը չըխկացնելով. մէկ-մէկ-մէկ. մէկ-մէկ-մէկ։

«Մէկ... մէկ... մէկ...» նրա ականջովը ընկաւ այս անգամ բոլորովին պարզ։ Նա աչքերը բաց արեց, գլուխը վեր բարձրացրեց... մէկը թխթխկացնում էր նրա սենեակի դուռը։

—Մտէք.—բարձր ձայնով արտասանեց Սանինը։

Ներս մտաւ կելները և յայտնեց, որ մի կին շատ ցանկանում է նրան տեսնել։

«Զեմման է» անցաւ իսկոյն նրա մտքով... սակայն այդ կինը Զեմմայի մայրն էր՝ Ֆրաուլէնօլան։

Վերջինս՝ հէնց որ ներս մտաւ, նստեց աթոռի վրայ ու սկսեց լաց լինել։

—Ի՞նչ է պատահել ձեզ, իմ բարի, սիրելի տ. Ռօզելլի,—սկսեց Սանինը, նստելով նրա կողքին և խաղաղ փաղաքշանքով կպչելով նրա ձեռքին։—Ի՞նչ է պատահել. հանգստացէք, խընդրում եմ։

—Ա՜խ. Herr Dimitri, ես շատ... շատ դժբախտ եմ։

—Դուք դժբաղդ էք։

—Ա՜խ-շատ։ Եւ կարող էի ես սպասել... Յանկարծ՝ ինչպէս որոտ, պարզ երկնքից...

--Բայց ինչումն է բանը: Բացատրեցէք: Ուզո՞ւմ էք, մի բաժակ ջուր տամ:

—Ո՛չ, շնորհակալ եմ,—ֆրաու-Լէնօրան թաշկինակով սրբեց աչքերը և աւելի նոր ոյժով կրկին սկսեց լաց լինել: Ջէ՛ որ ես ամեն բան գիտեմ: Ամեն բան:

—Այսինքն, ինչպէս թէ ամեն բան:

--Բոլորը, ինչ որ տեղի է ունեցել այսօր: Եւ պատճառը... Նմանապէս յայտնի է ինձ: Դուք վարուեցիք ինչպէս ազնիւ մարդ, բայց ինչպիսի դժբախտ դասաւորութիւն հանգամանքների: Ջուր չէր, ախր, որ ինձ դուր չէր գալիս այդ Սօֆէն գնալը... Իզուր չէր (ֆրաու-Լէնօրան ամենևին այդպիսի բան չասաց գնալու օրը, իսկ այժմ նրան այնպէս էր թւում, որ այն ժամանակ արդէն նա «ամեն բան» նախազգում էր): Եւ ահա ես եկել եմ ձեզ մօտ, ինչպէս մի ազնիւ մարդու, ինչպէս բարեկամի մօտ, թէ և առաջին անգամ տեսայ ձեզ սրանից ընդամենը հինգ օր առաջ միայն.., Ախր ես այրի կին եմ, մենակ... իմ աղջիկը...

Արցունքները խեղդեցին ֆրաու-Լէնօրայի ձայնը: Սանինը չը գիտէր թէ ինչ մտածէր:- Ջէ՛ր աղջիկը,—կրկնում էր նա:

—Իմ աղջիկը, Ջեմման,—համարեա, հեծկլտալով, դուրս թռաւ ֆրաու-Լէնօրայի արցունքներից թրջուած թաշկինակի տակից,—այսօր յայտնեց ինձ, որ չէ ուզում ամուսնանալ

պ. Կլիւբերի հետ և որ ես պէտք է մերժեմ նրան:

Սանինը նոյն իսկ մի փոքր յետ քաշուեց իր նստած տեղից. նա այդ բանը չէր սպասում:

—Ես դեռ չեմ ասում,—շարունակեց ֆրաու-Լէնօրան,—որ դա խայտառակութիւն է. որ այդ տեսակ բան աշխարհումս չի եղել. չի պատահել, որ հարսնացուն մերժէր իր փեսացուին: Բացի դրանից. մեզ համար դա կատարեալ տնտեսական դժբախտութիւն է, Herr Dimitri—ֆրաու-Լէնօրան խնամքով սկսեց ծալել թաշկինակը ու դարձնել փոքրիկ կծիկ, կարծես, աշխատելով նրա մէջ պարփակել իր ամբողջ կսկիծը: Ապրել մեր մտադրինի եկամուտներով՝ մենք այլ ևս չենք կարող, Herr Dimitri, իսկ պ-ն Կլիւբերը շատ հարուստ է ու էլ աւելի կը հարստանայ: Եւ ինչո՞ւ համար մերժել նրան: Նրա համար, արդեօք, որ նա պաշտպան չը դուրս եկաւ իրա հարսնացուին: Ասենք, դա այնքան էլ լաւ բան չէր նրա կողմից, բայց դէ ինչ արած՝ նա, ախր, հասարակ, աշխարհիկ մարդ է, համալսարանում չէ կրթուել և, ինչպէս, ասլիդ առևտրական, պէտք է արհամարհէր մի անյայտ օֆիցերիկի թեթեւամտութիւնները: Եւ իսկապէս ասած՝ ինչ վիրաւորանք էր դա, Herr Dimitri:

—Սպասեցէք, ֆրաու-Լէնօրա, դուք, կարծես թէ դատապարտում էք ինձ:

—Ամենևին. ես ձեզ չեմ դատապարտում,

ամենևին։ Դուք, դա բոլորովին ուրիշ խնդիր է։ Դուք, ինչպէս բոլոր ռուսներդ, զինուորականներ էք...

—Սպասեցէք, ես ամենևին...

—Դուք օտարերկրացի էք, եկուոր, ես շնորհակալ եմ ձեզնից, շարունակեց Ֆրաու-Լէնօրան, առանց լսելու Սանինին։ Նա խեղդվում էր. ձեռքերը պարզում էր այս ու այն կողմ, թաշկինակը նորից բաց անում ու խնչում։ Միայն այն միակ բանից՝ թէ ինչպէս էր արտայայտվում նրա վիշտը, կարելի էր նկատել, որ նա հիւսիսի երկնքի տակ չէր ծնուել։

—Էլ ի՞նչպէս կարող է պ-ն Կլիւբերը առևտուր անել մագազինում, եթէ նա պէտք է մենամարտէ իրանից առևտուր անողների հետ։ Դա բոլորովին անմիտ բան է։ Եւ այժմ ես պէտք է մերժեմ նրան։ Իսկ ի՞նչով կապրենք մենք։ Առաջներում մենք միայն պատրաստում էինք օրիորդական կաշի՝ ֆիստաշկաներով, գնողները մեզ մօտ էին գալիս, իսկ այժմ այդ տեսակ կաշի պատրաստում են ամենքը։ Երևակայեցէք, առանց այն էլ քաղաքում խօսելու են ձեր մենամարտի մասին... դա, մի՞թէ, կարելի է թագցնել։ Եւ յանկարծ՝ հարսանիքն էլ խանգարվում է։ Դա խօմ ուղղակի սկանդալ է, կատարեալ սկանդալ։ Ջեմման հիանալի աղջիկ է. շատ է սիրում ինձ, բայց յաժառ հանրապետական է և ուշադրութիւն չէ դարձնում ուրիշների կարծիքների

վրայ։ Միայն դուք կարող էք համոզել նրան։

Սանինը առաջուանից էլ աւելի զարմացաւ։

—Ե՞ս, Ֆրաու-Լէնօրա։

—Այո, դուք միայն... Դուք միայն։ Դրա համար էլ ես եկել եմ ձեզ մօտ. ուրիշ ելք չը կարողացայ գտնել։ Դուք այնքան գիտուն, այնքան լաւ մարդ էք։ Դուք նրան պաշտպան հանդիսացաք։ Նա ձեզ կը հաւատայ, *պարտաւոր* է հաւատալ, չէ՞ որ դուք ձեր կեանքը վտանգի ենթարկեցիք։ Դուք կապացուցանէք նրան, իսկ ես այլ ևս ոչինչ չեմ կարող անել։ Դուք նրան կապացուցանէք, որ նա թէ՛ իրան և թէ՛ մեզ բոլորիս կորուստի կը մատնէ։ Դուք փրկեցիք իմ որդուն, փրկեցէք աղջկանս նոյնպէս։ Ձեզ Աստուած ինքն է ուղարկել այստեղ՝ մեզ մօտ... Ես պատրաստ եմ ծնկաչօք խնդրելու ձեզ...

Եւ Ֆրաու-Լէնօրան կիսով չափ վեր կացաւ աթոռի վրայից, իբրև թէ ուզում է Սանինի ոտքերն ընկնել...

Սանինը չը թողեց։

—Ֆրաու-Լէնօրա, ի սէր Աստուծոյ, այդ ի՞նչ էք անում։

Վերջինս դողդողալով բռնեց Սանինի ձեռքը։

—Ուրեմն դուք խոստանո՞ւմ էք։

—Ֆրաու-Լէնօրա, մտածեցէք, ախր, ի՞նչ հիման վրայ ես...

—Խոստանո՞ւմ էք թէ ոչ։ Խօմ չէք կամենում, որպէս զի ես հէնց այստեղ իսկոյն և եթ

մեռնեմ ձեր առջև։

Սանինը գլուխը բոլորովին կորցրեց։ Իր կեանքում առաջին անգամն էր առիթ ներկայանում նրան՝ գործ ունենալու իտալական բոր-բոքուած արիւնի հետ։

—Ես կանեմ ամենը, ինչ որ դուք կամենում էք,—բացականչեց նա,—կը խօսեմ Ֆրէյլէյն Զեմմայի հետ...

Ֆրաու-Լէնօրան ուրախութիւնից, համարեա, աղաղակեց։

—Միայն թէ ես, ճշմարիտ, չը գիտեմ թէ ինչ հետևանք կարող է ունենալ...

—Ա՜խ, մի՛ք հրաժարուի, մի՛ք հրաժարուի,—ասաց Ֆրաու-Լէնօրան աղերսանքով,—դուք արդէն համաձայնութիւն տուիք։ Հետևանքը հաւանօրէն, լաւ կըլինի։ Յամենայն դէպս, ես այլ ևս ոչինչ չեմ կարող անել։ Նա ինձ չի լսի։

—Նա այդպէս վճռական կերպով էլ յայտնեց ձեզ, որ ինքը չի ուզում ամուսնանալ պ-ն Կլիւբերի հետ։—Հարցրեց Սանինը կարճատև լռութիւնից յետոյ։

—Ուղղակի դանակի պէս կտրեց։ Նա ամբողջապէս քաշել է իր հօրը՝ Ջիօվան Բատտիստինին։ Վատնգաւորն է։

—Վատնգաւո՞րն է։ Նա՞... երկարացնելով՝ կրկնեց Սանինը։

—Այո՛... Այո՛... Բայց և միևնոյն ժամանակ հրեշտակային սիրտ էլ ունի։ Նա ձեզ կը լսի։

կը գաք մեզ մօտ. շուտ կը գաք։ Ոհ, իմ սիրելի, ուրա՛ս բարեկամս,—Ֆրաու-Լէնօրան շտապով գրկեց Սանինի գլուխը։

—Ընդունեցէք մօր օրհնութիւնը և մի քիչ էլ ջուր տուէք ինձ։

Սանինը մի բաժակ ջուր բերեց տ. Ռոզելլիին, ազնիւ խօսք տուեց, որ կը գայ իսկոյն, ուղեկցեց նրան սանդուխքով մինչև փողոց և, վերադառնալով իր սենեակը, նոյն իսկ ձեռքերը իրար խփեց և աչքերը չռեց։

«Ահաւասիկ, մտածեց նա, ահաւասիկ այժմ որ կեանքը շուռ եկաւ։ Այն էլ այնպէս շուռ եկաւ, որ գլուխս սկսում է պտտել»։ Նա նոյն իսկ փորձ չարեց թափանցելու իր հոգու խորքը, նկատելու՝ թէ ինչ է կատարվում այնտեղ. իրարանցում, և ուրիշ ոչինչ։ «Լաւ օր է երևում այսօր»—ականջին շշնջում էին նրա շրթունքները։ «Վատնգաւոր է..., ասում է իր մայրը... Եւ ես պէտք է խորհուրդ տամ նրան։ Բայց ի՞նչ խորհուրդ տալ»։

Սանինի գլուխը, իրաւ որ, պտտում էր և այդ ամբողջ այլ և այլ զգացողութիւնների, տպաւորութիւնների, պարզ կերպով չարտայայտուած մտքերի ալէկոծութեան մէջ շարունակ փայլում էր Զեմմայի պատկերը, այն պատկերը, որն այնպէս անջնջելի կերպով տպաւորուեց նրա յիշողութեան մէջ այն տաք, էլէքտրականապէս ցնցող գիշերը, այն մութ պատուհանում, աստղերի խայտացող շողերի տակ։

XXIV

Սանինը անվճռական քայլերով մօտենում էր տ. Ռօզեվիի տանը: Նրա սիրտը սաստիկ բաբախում, թրպրտում էր: Նա պարզ կերպով զգում էր և նոյն իսկ լսում՝ թէ ինչպէս նրանք կպչում էին կողերին: Ի՞նչ պէտք է ասէ Զեմմային. ի՞նչ ձևով սկսէ խօսել նրա հետ: Նա տուն մտաւ ոչ թէ կօնդիտերանոցից, այլ եռևի մուտքից: Առաջին փոքրիկ սենեակում նա հանդիպեց Ֆրաու-Լէնօրային: Վերջինս տեսնելով նրան՝ և՛ ուրախացաւ, և՛ վախեցաւ:

—Ես սպասում էի, սպասում էի ձեզ,—խօսեց նա շշնջալով, երկու ձեռքերով փոխ առ փոխ սեղմելով Սանինի ձեռքը: Գնացէք պարտէզ. նա այնտեղ է: Տեսէք հա. ձեր վրայ եմ ղրել յոյս:

Սանինը գնաց պարտէզ:

Զեմման նստարանի վրայ նստած՝ ծառուղու մօտ՝ բալերով լի մեծ կողովից ջոկում էր հասուննները և ածում ափսէի մէջ: Արեգակը մայր մտնելու վրայ էր. արդէն երեկոյեան ժամի եօթին էր. և նրա թեքուող շողերը, որոնցով հեղեղուել էր տ. Ռօզեվիի ամբողջ փոքրիկ պարտէզը, աւելի շուտ բոսորագոյն փայլ էին տալիս, քան ոսկեգոյն: Մէկ-մէկ, հազիւ լսելի ձայնով, և, կարծես, առանց շտապելու, իրար փըսփսում էին տերևները, մէկ էլ հևալով տզզում, ծաղկից հարևան ծաղիկը թռչկոտելով, ուշացած մեղուները, ու մի ինչոր տեղ էլ ճնչում էր տատրակիկը միալար ու անդադար:

Զեմմայի գլխին միևնոյն կոլոր գլխարկն էր, որով նա գնացել էր Սօդէն: Նա իր գլխարկի դէպի առաջ կռացրած մասի տակից նայեց Սանինին ու կրկին գլուխը դէպի կողովը կախեց:

Սանինը մօտեցաւ Զեմմային, անգիտակցօրէն կարճացնելով իր իւրաքանչիւր քայլը, և... և... Եւ ուրիշ յարմար բան չը գտաւ նրան ասելու, բայց եթէ հարցնելու՝ թէ ինչո՞ւ համար է այդպէս ջոկոտում բալերը:

Զեմման, առանց շտապելու, պատասխանեց նրան:

—Դրանք հասածներն են. կը գործադրուեն քաղցրաւէնիքներ պատրաստելու համար, իսկ ճնացեալը՝ կարկանդակները կարկատելու համար: Գիտէք, կոլոր կարկանդակները մենք շաքարով ենք պատրաստում և վաճառում:

Ասելով այդ խօսքերը, Զեմման էլ աւելի ցած կախեց իր գլուխը, և նրա աջ ձեռքը, երկու բալեր բռնած մատներով, կանգ առաւ օդում, կողովի ու ափսէի միջև:

—Կարելի՞ է նստել ձեր կողքին,—հարցրեց Սանինը:

—Կարելի է,—ու Զեմման նստարանի վրայ մի քիչ դէնը քաշուեց:

Սանինը տեղաւորուեց նրա կողքին, «ինչ-

պէս սկսել»—մտածում էր նա։ Բայց Ջեմման այդ դժուարութիւնից դուրս հանեց նրան։

—Այսօր դուք մենամարտում էիք,—խօսեց նա աշխոյժ կերպով և դարձաւ դէպի նա իր գեղեցիկ, ամօթից բորբոքուած ամբողջ դէմքով. և ինչպիսի խորին շնորհակալութեամբ փայլում էին նրա աչքերը։ Եւ դուք այդքան հանգիստ էք։ Նշանակում է, ձեզ համար վտանգ ասած բանը գոյութիւն չունի։

—Խնդրեմ, ես ոչ մի վտանգի չեմ ենթարկուել։ Ամեն ինչ անցաւ աջող և անվնաս։

Ջեմման մատները աչ ու ձախ քաշեց օդում՝ աչքերի առաջ... Դարձեալ իտալական ժեստ։—Ո՛չ, ո՛չ. այդ մի՛ ասէք։ Ձէք կարող ինձ խաբել։ Պանտալէօնը ամեն բան ասաց արդէն։

—Դուք էլ մարդ գտաք հաւատալու։ Նա, իհարկէ, ինձ համեմատում էր կօմանդօրի արձանի հետ։

—Նրա արտայայտութիւնները կարող են ծիծաղելի լինել, բայց ո՛չ նրա զգացմունքն է ծիծաղելի, ո՛չ էլ այն, ինչ որ արեցիք դուք այսօր։ Եւ այդ բոլորը իմ պատճառով... ինձ համար... երբէ՛ք, ես երբէ՛ք չեմ մոռանայ այդ։

—Հաւատացնում եմ ձեզ, Ֆրէյլէյն Ջեմման...

—Ես այդ չեմ մոռանայ, արտասանեց նա հատ-հատ շեշտերով, ու մի անգամ էլ նայեց նրա երեսին գնահատաբար, և ապա շուռ եկաւ։

Սանինը այժմ կարողանում էր տեսնել միայն նրա նուրբ, մաքուր դէմքը կողքից և նրան այնպէս էր թւում՝ թէ երբեք իր կեանքում չէ տեսել դրա նմանը և չէ զգացել այնպիսի մի բան, ինչպիսին զգում էր նա այդ վայրկեանին։ Նրա սիրտը բորբոքվում էր։

«Իսկ իմ խոստումը»—յանկարծ, անցաւ նրա մտքով։

—Ֆրէյլէյն Ջեմման... սկսեց նա բօպէական տատանումից յետոյ։

—Ի՞նչ է։

Ջեմման շուռ էլ չեկաւ դէպի նա. նա շարունակում էր չոկոտել բաները, զգուշութեամբ բռնում էր մատների ծայրերով նրանց պոչերից, խնամքով վեր բարձրացնում տերևիկները... բայց ինչպիսի վստահ փաղաքշանքով հնչեց նրա այդ «ինչ է» խօսքը։

—Ձեր մայրը ոչինչ չէ՞ ասել ձեզ... վերաբերեալ...

—Ո՞ւմ վերաբերեալ...

—Իմ վերաբերեալ։

Ջեմման նորից կողովի մէջ թափեց վերցրած բաները։

—Նա խօսե՞լ է ձեզ հետ,—հարցրեց իր հերթին Ջեմման։

—Այո՛։

—Է՛, ի՞նչ մի առանձին բան է ասել ձեզ։

—Նա ասաց ինձ, որ դուք... որ դուք...

յանկարծակի վճռել էք փոխել... ձեր առաջուայ դիտաւորութիւնները։

Ջեմմայի գլուխը նորից խոնարհուեց ու ամբողջապէս ծածկուեց դվխարկի ներքև. միայն պարանոցն էր երևում՝ ճկուն ու քնքուշ, ինչպէս խոշոր ծաղկի ցօղունը։

Ո՞ր դիտաւորութիւններս։

—Ձեր դիտաւորութիւնները... վերաբերեալ... ձեր ապագայ կեանքի տնօրինութեան։

—Այսինքն... Դուք այդ ասում էք... Պ-ն կլիւբերի մասին։

—Այո։

—Մայրիկը ձեզ ասաց, որ ես չեմ ուզում կլիւբերի կինը դառնալ։

—Այո։

Ջեմման մի փոքր էլ դէնը քաշուեց նրա ժօտից դէպի նստարանի ծայրը։ Կողովը թեքուեց, ընկաւ... մի քանի բալեր էլ սահեցին-ընկան ծառուղու վրայ։ Անցաւ մի րոպէ, երկրորդը...

—Ինչո՞ւ համար նա ասաց ձեզ,—լսուեց նրա ձայնը։ Սանինը առաջուայ պէս տեսնում էր նրա պարանոցը միայն։ Նրա կուրծքը բարձրանում էր ու իջնում առաջուանից էլ արագ։

—Ինչո՞ւ համար։ Ձեր մայրը կարծում էր. որովհետև մենք երկուսս այս կարճ ժամանակամիջոցում, կարելի է ասել, մտերմացել ենք իրար հետ, և դուք որոշ վստահութիւն էք տածում դէպի ինձ, ուստի և ես կարող եմ օգ-

տակար խորհուրդ տալ ձեզ, և դուք կը լսէք ինձ։

Ջեմմայի ձեռքերը կամաց սահեցին ծունկերի վրայ... Նա սկսեց մատներով քրքրել իր հագուստի ծալքերը։

—Ուրեմն ի՞նչպիսի խորհուրդ կը տաք ինձ, monsieur Dimitri,—հարցրեց Ջեմման մի փոքր սպասելուց յետոյ։

Սանինը նկատեց, որ Ջեմմայի մատները դողում էին ծնկների վրայ... որ հագուստի ծալքերն էլ քրքրում էր միայն նրա համար, որպէսզի թագցնէ այդ դողը։ Սանինը կամաց դրեց իր ձեռքը այդ գունատ, դողդոջուն մատների վրայ։

—Ջեմմա, ցած ձայնով ասաց նա։—Ինչո՞ւ չէք նայում ինձ վրայ։

Ջեմման մի վայրկեանում յետ ձգեց ուսի վրայից գլխարկը և նրա վրայ ուղղեց իր աչքերը՝ առաջուայ պէս վստահ ու շնորհակալութեամբ լի։ Նա սպասում էր, որ Սանինը կը խօսի... Բայց Ջեմմայի տեսքը շփոթեցրեց ու, կարծես թէ, շլացրեց նրան։ Երեկոյեան արեգակի տաք փայլը լուսաւորում էր Ջեմմայի մատաղ գլուխը և այդ գլխի արտայայտութիւնը այդ վայրկեան էլ աւելի էր լուսաւոր, էլ աւելի վառ, պայծառ։

—Ես կը լսեմ ձեզ, monsieur Dimitri,—սկսեց Ջեմման, հազիւ հազ ժպտալով, ու հազիւ էլ ունքերը վեր քաշելով,—բայց ի՞նչպիսի խորհուրդ կը տաք ինձ։

—Ի՞նչպիսի խորհուրդ, կրկնեց Սանինը,— Ահա, գիտէք, ձեր մայրը ենթադրում է, որ մերժել պ-ն Կլիւբերին միայն նրա համար, որ նա երեք օր առաջ առանձին քաջութիւն չը ցոյց տուեց...

—Միա՞յն դրա համար,—արտասանեց Ջեմման, կռացաւ վերցրեց ընկած կողովը և դրեց նրան իր կողքին՝ նստարանի վրայ։

—Որ... առհասարակ... մերժել նրան, ձեր կողմից անխոհեմութիւն է. որ դա մի այնպիսի քայլ է, որի բոլոր հետևանքները հարկաւոր է լաւ կշռադատել. որ, վերջապէս, հէնց ձեր գործերի վիճակը յայտնի պարտականութիւններ է դնում ձեր ընտանիքի իւրաքանչիւր անդամի վրայ...

—Այդ բոլորը մայրիկի կարծիքն է, ընդհատեց Ջեմման, նրա խօսքերն են։ Այդ ես գիտեմ արդէն։ Բայց ի՞նչպէս է ձեր կարծիքը։

—Ի՞մը։—Սանինը լռեց։ Նա զգաց, որ ինչ որ մի բան դէմ առաւ նրա կոկորդի տակ և արգելում է նրան շունչ քաշել։—Ես... նոյնպէս կարծում եմ,— արտասանեց նա դժուարութեամբ...

Ջեմման ուղղուեց իր նստած տեղում։

—Նո՞յնպէս։ Դո՞ւք նոյնպէս։

—Այո՛... այսինքն... Սանինը չը կարողացաւ, ուղղակի չը կարողացաւ և ոչ մի հատ խօսք աւելացնել։

—Լաւ, ասաց Ջեմման։ -Եթէ դուք, ինչպէս բարեկամ, խորհուրդ էք տալիս ինձ փոխելու իմ վճիռը... այսինքն՝ չը փոխել իմ նախկին որոշումը,— ուրեմն, ես կը մտածեմ այդ մասին։ Եւ նա ինքն էլ, առանց նկատելու թէ ինչ է անում, սկսեց բալերը ափսէից փոխադրել կրկին կողովի մէջ...—Մայրիկը յոյս ունի, որ ես ձեզ կը լսեմ... Էհ, ինչ կայ որ, ես, գուցէ, իսկապէս լսեմ ձեզ։

—Սակայն, սպասեցէք, ֆրէյլէյն Ջեմմա, ես նախ և առաջ կը ցանկանայի իմանալ՝ թէ ինչ պատճառներ դրդեցին ձեզ...

—Ես ձեզ կը լսեմ, կը հնազանդուեմ,— կրկնեց Ջեմման, մինչդեռ նրա ունքերը կրնճռոտուում էին, այտերը գունատուում. նա կռծռտում էր իր ներքևի շրթունքը։ -Դուք այնքան շատ բան արիք ինձ համար, որ ես էլ պարտաւոր եմ կատարել ձեր ցանկութիւնը։ Ես կասեմ մայրիկին... Ես կը մտածեմ։ Անհաւասիկ նա գալիս է այստեղ։

Եւ իրաւ ֆրաու-Լէնօրան երևաց այն դրան շէմքում, որը տանից տանում էր դէպի պարտէզը։ Անհամբերութիւնը նրան հանգիստ չէր տալիս. նա չէր կարողանում մի տեղ նստած մնալ։ Նրա հաշուով, Սանինը վաղուց պէտք է վերջացրած լինէր իր բացատրութիւնը Ջեմմայի հետ, թէև նրա խօսակցութիւնը քառորդ ժամից աւելի էլ չէր տևել։

—Ո՛չ, ո՛չ, ո՛չ. ի սէր Աստուածոյ, մի՛ ասացէք նրան, առ այժմ, ոչինչ,—արտասանեց Սանինը, շտապելով, համարեա, վախեցած,—Սպասեցէք դեռ... ես ձեզ կասեմ, ես ձեզ կը գրեմ... իսկ դուք մինչև այդ՝ ո՛չ մի բան չը վճռէք... Սպասեցէք։

Նա սեղմեց Ջեմմայի ձեռքը, վեր թռաւ նստարանի վրայից և, ի մեծ զարմանս Ֆրաու-Լէնօրայի, սահեց վերջինիս մօտից, գլխարկը բարձրացնելով՝ ինչ որ անհասկանալի բան փընթփընթաց քթի տակ ու անյայտացաւ։

Նա մօտեցաւ աղջկանը։

—Աա՛ ինձ, խնդրեմ, Ջեմմա...

Վերջինս յանկարծ վեր թռաւ տեղից ու գրկեց նրան...

—Սիրելի մայրիկ, կարո՞ղ էք սպասել մի քիչ էլ. շատ կարճ ժամանակ... մինչև էգուց։ Կարո՞ղ էք, չէ՞։ Եւ այն էլ այն պայմանով՝ որ մինչև էգուց դուք ինձ ոչ մի խօսք չասէք այդ մասին... Ա՛խ...

Ու նա, յանկարծ, լցուեց, լուսաւոր, նրա՝ իրա համար անսպասելի արցունքներով։ Այդ հանգամանքը ժանաւանդ աւելի զարմացրեց Ֆրաու-Լէնօրային. որովհետև Ջեմմայի դէմքի արտայայտութիւնը այնքան էլ տխրամած չէր, աւելի շուտ՝ ուրախ տեսք էր ստացել։

—Ի՞նչ է պատահել քեզ,—հարցրեց մայրը,—դու երբէք լաց չես լինում, և յանկարծ...

—Ո՛չինչ, մայրիկ, ո՛չինչ... միայն թէ դուք սպասեցէք։ Մեզ՝ երկուսիս համար էլ հարկաւոր է մի քիչ սպասել։ Ոչինչ մի հարցրէք մինչև էգուց, իսկ այժմ եկէք ջոկուենք բալերը, քանի դեռ ես արևը բոլորովին մայր չէ մտել։

—Բայց դու խոհե՞մ կը լինես։

—Օ՛, ես շատ խոհեմ եմ։—Ջեմման բաւականին երկար թափ տուեց գլուխը։ Նա սկսեց բալերից փոքրիկ փունջեր կապել, պահելով նրանց բարձր բռնած իր կարմրող դէմքի առջև։

Արտասուքները նա չէր սրբում. նրանք իրանք-իրանք չորացան։

XXV

Սանինը նրանց մօտից, համարեա, վազելով վերադարձաւ իրա բնակարանը։ Նա զգում էր, նա հասկանում էր, որ միայն այդտեղ, ճնալով մեն-մենակ ինքն իրա հետ, կը պարզուի նրա համար, վերջապէս, թէ ինչ է պատահել, ի՞նչ է կատարվում իրա հետ։ Եւ, իրաւ, դեռ ևս հազիւ էր նա ներս մտել իր սենեակը, հազիւ էր նըստել գրասեղանի առջև՝ երբ կռթնելով այդ միևնոյն սեղանի վրայ երկու ձեռքերով և սեղմելով երկու ափերը երեսին, նա կսկիծով ու խուլ ձայնով բացականչեց. «Ես նրան սիրում եմ, սիրում եմ խելագարութեան չափ», և ներքուստ ամբողջապէս բոցավառուեց այն այրուող ածու-

խի պէս, որի վրայից յանկարծ փչում են հանգած մոխրակոյտի շերտը։ Մի վայրկեան էլ... և նա այլևս անզօր կը լինէր հասկանալու՝ թէ ինչպէս կարողացաւ նա նստել նրա կողքին... նրա հետ միասին ու խօսել հետը և չը զգալ, որ պաշտում է նրա հանդերձի քղանցքն անգամ. որ նա պատրաստ է, ինչպէս սովորաբար ասում են երիտասարդները, «մեռնել նրա ոտքերի տակ»։ Վերջին տեսակցութիւնը պարտիզում ամեն բան չվճռեց։ Այժմ, երբ Սանինը մտածում էր նրա մասին, նա այլ ևս չէր պատկերանում նրա առջև իր ծածանուող գանգուր մազերով՝ աստղերի շողերով լուսաւորուած։ Նա տեսնում էր նրան նստած նստարանի վրայ, տեսնում էր՝ թէ ինչպէս նա միանգամից դէն էր ձգում նրա գլխից գլխարկը և նայում նրա վրայ այնպէս վստահօրէն... և սարսուռն ու սիրոյ ծարաւը վազվզում էին նրա երակներով։ Նա յիշեց վարդի մասին, որը երբորդ օրն էր արդէն, որ կրում էր իր գրպանում, դուրս հանեց, և այնպիսի տենդային ոյժով սեղմեց նրան իր շրթունքներին, որ ցաւից ակամայ մռայլուեց։ Այժմ նա այլ ևս ոչ մի բանի մասին դատողութիւն չէր տալիս, ոչինչ չէր ըմբռնում, յոյս չէր տածում և չէր նախատեսում։ Նա բաժանուել, հեռացել էր իր բոլոր անցեալից, սլացել էր առաջ. իր վէնաւոր ամուրի կեանքի տխուր ափերից նետուել էր այն կենսուրախ, եռուն, ուժեղ հոսանքի մէջ, ուր

քիչ վիշտ ունի նա, և ուր չի ուզում էլ խա-նալ՝ թէ ուր կը տանէ նա նրան ու չի զարկի նրան, արդեօք, ժայռին ու փշրիլ։ Դա, արդէն, Ուլանդօվեան ռօմանսի այն խաղաղ շրթերը չեն, որոնցով մօտ ժամանակներս նրան օրօր էին ասում... Դրանք հսկայ, անզուսպ կոհակներ են։ Նրանք թռչում են ու փախչում առաջ, և նա էլ նրանց հետ միասին...

Նա վեր առաւ մի թերթ թուղթ և առանց ջնջելու, համարեա, գրչի մի շարժումով՝ գրեց հետևեալը.

«Սիրելի Ջեմմա!

«Դուք արդէն գիտէք՝ թէ ես ինչպիսի խորհուրդ յանձն առայ տալ ձեզ։ Դուք գիտէք նոյնպէս՝ թէ ինչ է ուզում ձեր մայրը և ինչի մասին էր խնդրել ինձ, բայց մի բան, որը դուք չը գիտէք, և ես պարտաւոր եմ այժմ ասել ձեզ, դա այն է, որ ես սիրում եմ ձեզ, սիրում եմ՝ առաջին անգամը սիրող սրտիս բոլոր կրքերով։ Այդ հուրը բռնկուեց իմ մէջ յանկարծակի, բայց այնպիսի ոյժով, որ ես խօսք չեմ գտնում արտայայտելու։ Երբ ձեր մայրը եկաւ ինձ մօտ, այդ հուրը դեռ ևս *միտում էր* միայն իմ մէջ, ապա թէ ոչ ես, ինչպէս մի ազնիւ մարդ, համարձանօրէն, կը հրաժարուէի կատարել նրա յանձնարարութիւնը... Այս խոստովանութիւնը, որ ես այժմ անում եմ ձեզ, ազնիւ մարդու խոստովանութիւնն է։ Դուք պէտք է իմանաք՝ թէ

ում հետ գործ ունէք. մեր մէջ թիւրիմացու-
թիւնները չը պէտք է լինեն: Ինչպէս տեսնում
էք, ես չեմ կարող որևէ խորհուրդ տալ... Ես
ձեզ սիրում եմ, սիրում եմ, սիրում, և դրանից
աւելի ոչինչ չը կայ ոչ գլխումս և ոչ էլ սրտիս
մէջ»:

«Դմ. Սանկին»:

Ծալելով ու կնքելով այդ տոմսակը, Սանկի-
նը պատրաստվում էր զանգ տալ՝ կանչել կել-
ներին, նրանով ուղարկելու... «Ո՛չ: Այդպէս ան-
յարմար է... Էմիլի միջոցով... Բայց գնալ մագա-
զինը, որոնել նրան այնտեղ՝ միւս կօմմիների
մէջ, նոյնպէս անյարմար է: Մանաւանդ, որ
ժուքն է դուրսը և նա, հաւանօրէն, դուրս է ե-
կել, արդէն, մագազինից»: Այդպէս մտածելով,
Սանկինը, այնուամենայնիւ, գլխարկը դրեց գլխին
ու դուրս եկաւ փողոց: Հասաւ անկիւնին, շուռ
եկաւ, անցաւ միւսը և, աննկարագրելի էր նրա
ուրախութիւնը, երբ իր առջև տեսաւ Էմիլին:
Պայուսակը թևի տակ դրած, թղթի փաթեթը
ձեռքում, շուտ ոգևորուող այդ երիտասարդը
շտապում էր դէպի տուն:

Զուր չեն ասում՝ թէ «ամեն մի սիրահար
իր աստղն ունի»—մտածեց Սանկինը և իր մօտ
կանչեց Էմիլին:

Վերջինս յետ նայեց ու իսկոյն շտապեց
նրա մօտ:

Սանկինը ժամանակ չը տուեց նրան ոգևո-

րուելու. յանձնեց տոմսակը, բացատրեց՝ թէ
ո՛ւմը և ի՛նչպէս պէտք է տալ... Էմիլը լսում էր
ուշադրութեամբ:

—Որպէսզի ո՛չ ոք չը տեսնի,—հարցրեց Է-
միլը՝ տալով իր դէմքին կարևոր և խորհրդաւոր
արտայայտութիւն.—դրանով ուզում էր ասել
թէ մենք հասկանում ենք բանի էութիւնը:

—Այո՛, իմ փոքրիկ բարեկամս, ասաց Սա-
նկինը և մի քիչ էլ ամաչեց, այնուամենայնիւ
ձեռքով սիրալիր ու թեթև կերպով խփեց մի
քանի անգամ Էմիլի թուշին... Եւ եթէ պատաս-
խանը կը տայ... Դուք էլ կը բերէք ինձ. ուղիղ
չեմ ասում: Ես տանը կը նստեմ ու կը սպասեմ:

—Այդ մասին կարող էք բոլորովին անհոգ
մնալ,—ուրախ ուրախ շշնջաց Էմիլը և վազելով
գնաց, բայց վազելիս՝ մէկ էլ յետ նայեց ու
գլուխ տուեց նրան:

Սանկինը վերադարձաւ տուն և, առանց վա-
ռելու մոմը, մեկնուեց գահաւորակի վրայ, ձեռ-
քերը յետ ծալեց դրեց գլխատակը և անձնա-
տուր եղաւ քիչ ժամանակ առաջ ըմբռնած սի-
րոյ հմայքին, որը նկարագրելու ամենևին կարիք
չը կայ: Ով վայելել է այդ սէրը, նա արդէն
հասկանում է նրա անձկութիւնն ու քաղցրու-
թիւնը, իսկ ով չէ վայելել, մխիթարին էլ, նրան
այլ ևս անկարելի է հասկացնել:

Դուռը բացուեց. երևաց Էմիլի գլուխը:

—Բերայ, ասաց նա փսփսալով,—ահաւասիկ պատասխանը։

Նա ցոյց տուեց և գլխից վեր բարձրացրեց փաթաթուած թուղթը։

Սանինը վեր թռաւ գահաւորակի վրայից ու խլեց նրան էմիլի ձեռքից։ Կիրքը չափազանց արդէն բռնկուել էր նրանում, այնպէս որ ոչ թագցնելու մասին կարող էր մտածել և ոչ էլ պարկեշտութիւն պահանելու։ Նոյն իսկ այդ ուղայի՝ նրա եղբօր առաջ։ Նա ամօթ կը զգար նրանից, նա կը զսպէր իրան, եթէ միայն կարողանար։

Նա մօտեցաւ պատուհանին, և, ուղիղ տանառջև կանգնած փողոցային լապտերի լոյսի տակ, կարդաց հետևեալ տողերը.

«Ես ձեզ խնդրում եմ, աղաչում եմ. ամբողջ էգուցուայ օրը չը գաք մեզ մօտ, չերեւաք։ Այդ ինձ հարկաւոր է, անպատճառ հարկաւոր է, իսկ յետոյ, արդէն, ամեն ինչ կը վճռուի։ Ես գիտեմ, որ դուք չէք մերժի իմ այս խնդիրքը. որովհետև...»։

«Ջեմմա»

Սանինը երկու անգամ կարդաց այդ տոմսակը. ահ, որքան սրտաշարժ, սիրելի ու գեղեցիկ թուաց նրան այդ ձեռագիրը. ապա մի փոքր մտածեց ու դիմեց էմիլին, որը, կամենալով հասկացնել տալ՝ թէ ինչպիսի համեստ երիտասարդ է ինքը, երեսը դէպի պատն էր արել ու փորփորում եղունգով,—բարձրաձայն կանչեց նրան, յիշելով անունը։

Էմիլը իսկոյն վազեց Սանինի մօտ։

—Ի՞նչ կը հրամայէք։

—Լսեցէ՛ք, բարեկամս...

—M-r Դիմիտրի, ընդհատեց նրան էմիլը բողոքի ձայնով,—ինչո՞ւ ինձ հետ «դու»-ով չէք խօսում։

Սանինը ծիծաղեց։—Դէ լաւ, լսի՛ր, բարեկամս. (էմիլը բաւականութիւնից թեթև ոստիւն գործեց)։

Լսի՛ր. այնտեղ, դու հասկանում ես, այնտեղ դու կասես, որ բոլորը ճշտութեամբ կը կատարուի։ (Էմիլը սեղմեց շրթունքները և կարևորութեամբ գլուխը տմբացրեց)։

—Իսկ ինքդ... Ի՞նչ պիտի անես վաղը։

—Ե՞ս։ Ի՞նչ պիտի անեմ։ Ի՞նչ կը կամենայիք, որ ես անեմ։

—Եթէ կարելի է, առաւօտեան վաղ արի ինձ մօտ, և մենք միասին երեկոյ կը զբօսնենք Ֆրանկֆուրտի շրջակայքում... կամենո՞ւմ ես։

Էմիլը նորից ոստիւն գործեց։ — Ասացէ՛ք խնդրեմ, դրանից աւելի լաւ բան էլ ի՞նչ կարող է լինել աշխարհումս։ Զբօսնել ձեզ հետ. դա իսմ ուղղակի սքանչելի բան է։ Կը գամ, անպայման կը գամ։

—Իսկ եթէ բաց չը թողնեն քեզ։

—կը թողնեն։

Լսիր... այնտեղ մի՛ ասա թէ ես քեզ կանչել եմ ամբողջ օրով։

—Ի՞նչ կարիք կայ ասել։ Ես ուղղակի. հէնց այնպէս դուրս կելնեմ ու կը գամ։ Ի՞նչ մեծ բան է։ Էմիլը ամուր համբուրեց Սանինին և դուրս փախաւ։

—Իսկ Սանինը, դեռ երկար ժամանակ անց ու դարձ էր անում սենեակում և շատ ուշ պառկեց քնելու։ Նա անձնատուր էր եղել միևնոյն յուզիչ և ուրախ զգացմունքներին, միևնոյն ահորժ թմրութեանը՝ նոր կեանքի շեմքին։ Սանինը շատ գոհ մնաց, որ մտածեց հրաւիրել Էմիլին իր հետ միասին անցկացնելու յաջորդ ամբողջ օրը, իր դէմքով նա նման էր քրոջը. «կը յիշեցնի Ջեմմային» անցնում էր Սանինի մտքով։

Բայց ամենից աւելի նա զարմանում էր՝ թէ ի՞նչպէս կարող էր նա երէկ այլ կերպ լինել, քան այսօր։ Նրան այնպէս էր թւում՝ թէ նա «միշտ» էլ սիրում էր Ջեմմային, և հէնց իսկ և իսկ այնպէս էր սիրում նրան, ինչպէս որ սիրում է այսօր։

XXVI

Միւս օրը՝ առաւօտեան ժամը ութին, Էմիլը, Տարտալեան հեռը վերցրած՝ ներկայացաւ Սանինին։ Եթէ նա գերմանական ծնողներից էլ ծագումն ունենար, դարձեալ չէր կարող դրանից աւելի ճշտապահութիւն ցոյց տալ։ Տանը նա խաբել էր. ասել էր, որ զբօսնելու է Սանինի հետ մինչև նախաճաշ, իսկ յետոյ՝ կը գնայ մադազինը։ Մինչ Սանինը հագնվում էր, Էմիլը խօսք բաց արեց, իրաւ է, բաւականին անվրդովահ կերպով, Ջեմմայի մասին, նրա ամուսնութիւնը կլուբերի հետ չը կայանալու առիթով, բայց Սանինը խոժոռուելով լուռ մնաց, թողեց նրան անպատասխան, իսկ Էմիլը, իրան այնպէս ձևացնելով, որ հասկանում է՝ թէ ինչու համար չէ հարկաւոր թեթևամտօրէն շոշափել մի այդպիսի կարևոր կէտ, այլ ևս չը վերադարձաւ այդ խնդրին,—և միայն երբեմն-երբեմն ընդունում էր կենտրոնացած ու նոյն իսկ խիստ, խոժոռ արտայայտութիւն։

Սուրճ խմելով՝ երկու բարեկամները գնացին, հասկանալի է, ոտքով՝ Ֆրանկֆուրտից ոչ շատ հեռու գտնուող անտառապատ փոքրիկ Հաուզէն գիւղը։ Տանուս սարի ամբողջ լեռնաշղթան երևում էր այնտեղից, ինչպէս ձեռքի ափի վրայ դրուած։ Եղանակը հիանալի էր. արեգակը շողշողում էր ու տաքացնում, բայց չէր եփում. զով քամին ժրութեամբ աղմկում էր կանաչ տերևների արանքում. երկրի վրայով՝ փոքրիկ բծերով ու շերտերով արագութեամբ սահում էին բարձր, բոլորաձև ամպերի ստուերները։ Երիտա-

աարդները շուտով դուրս եկան քաղաքից և ուրախ ու զուարթ քայլերով գնացին մաքուր սրբած ճանապարհով։ Մտան անտառը և այնտեղ երկար ժամանակ անցկացրին. կուշտ նախաճաշեցին գիւղական պանդոկում, ապա ման էին գալիս սարերի վրայ, հրճվում տեսարաններով, վերևից քարեր էին գլորում և բաւականութիւնից ծափ տալիս, տեսնելով՝ թէ ինչպէս այդ քարերը ծիծաղելի ու տարօրինակ կերպով թռչկոտում էին ճագարների պէս, մինչև որ ներքեւից անցնող, նրանց համար անտեսանելի, մարդը գիլ և ուժեղ ձայնով հայհոյում էր նրանց, յետոյ պառկում էին ու մեկնվում կարճահասակ, չոր, բաց-մանիշակագոյն մամուռների վրայ. քիչ ժամանակ անցնելուց յետոյ՝ նորից խմեցին գարեջուր մի ուրիշ պանդոկում, այդտեղից էլ խաղալով ու գրազ գալով՝ թէ ով աւելի հեռուն կը թռչի, առաջ էին գնում, արձագանք տալեցնում, նրանց հետ խօսքի բռնվում, զրուցում, երգում էին, բղաւում, իրար հետ մարանչում, ճղները կոտրտում, զարդարում իրանց գլխարկները փիլիկաբոյսի ճղներով, և նոյն իսկ պար բռնում—պարում։ Տարտալեան՝ որքան կարելի էր և կարողանում էր, մասնակցում էր այդ բոլոր զւարճութիւններին. ճշմարիտ է, նա քարեր չէր ձգում, բայց պատուելով՝ ամբողջ թափով վազում, գլորվում էր նրանց յետևից, գրմռալով ձայն էր հանում՝ հէնց որ երգում էին երիտա-

սարդները և մինչև անգամ գարեջուր էլ էր խըմում, թէև նկատելի զզուանքով։ Այդ արհեստին նրան սովորեցրել էր այն ուսանողը, ումը նա առաջ՝ մի ժամանակ՝ պատկանելիս է եղել։ Պէտք է ասած, որ Էմիլին Տարտալեան լաւ չէր հնազանդվում. նրան այնպէս չէր լսում, ինչպէս իր տէրոջը՝ Պանտալէօնին, այնպէս որ երբ Էմիլը հրամայում էր նրան «խօսել» կամ «փոըշոտալ», նա միայն պոչն էր տարուբերում և լեզուն խողովակաձև դուրս հանում։

Երիտասարդները միաժամանակ զրուցում էլ էին իրար հետ։ Զբօսանքի սկզբում, Սանինը, իբրև աւելի մեծ և ուրեմն, աւելի խոհեմ, սկսեց խօսել՝ թէ ի՞նչ բան է ճակատագիրը կամ բաղդի նախատեսհմանութիւնը և ի՞նչ է նշանակում ու ինչո՞ւմն է կայանում մարդու կոչումը։ Սակայն խօսակցութիւնը շուտով աւելի քիչ հետաքրքրական դարձաւ։ Էմիլը սկսեց հարցնել իր բարեկամից ու հովանաւորողից Ռուսաստանի մասին՝ թէ ինչպէս են այնտեղ մենամարտում, և գեղեցի՞կ են, արդեօք, այնտեղի կանայք, շո՞ւտ կարելի է սովորել ռուսերէն լեզուն և թէ ինչ էր նա զգում՝ երբ օֆիցերը սարճանակը նրան ուղղած՝ նշան էր դնում։ Սանինն էլ իրա հերթին տեղեկութիւններ էր քաղում Էմիլից նրա հօր, մօր և առհասարակ նրանց ընտանեկան գործերի մասին, ամեն վերպ աշխատելով չը յիշել Զեմմայի անունը, թէև ամբողջ ժամանակը

մտածում էր միայն նրա մասին։ Իսկապէս ա-
սած՝ նա նոյն իսկ նրա մասին էլ չէր մտածում,
այլ հետևեալ օրուայ մասին, այն խորհրդաւոր
օրուայ, որը պէտք է բերէ իրա համար դեռ ևս
անյայտ, չնաշխարհիկ բախտաւորութիւնը։ Կար-
ծես՝ վարագոյր է կախուած՝ նուրբ, թեթև, թոյլ
կերպով օրօրուող վարագոյր, նրա մտաւոր տե-
սողութեան առաջ, և այդ վարագոյրի յետևում
նա զգում է... զգում է մի դեռահաս, անշարժ,
աստուածային դէմքի ներկայութիւնը, քաղցր
ժպիտը բերնին և խստահայեաց՝ կեղծ-խստու-
թեամբ ցած կախած արտևանունքներով։ Եւ
այդ դէմքը Զեմմայինը չէ. դա բախտաւորու-
թեան իրա դէմքն է։ Ու ահա հասել է, վերջա-
պէս, նրա ժամը. վարագոյրը վեր է բարձրանում,
բացվում են շրթունքները, արտասունքները վեր
են քաշվում, տեսնում է նրան աստուածուհի-
նը, և այդ բոպէից արդէն սիրապետում է լոյ-
սը, ինչպէս արեգակի լոյսը, և անսպառ խնդու-
թիւնն ու հիացմունքը։

Նա մտածում է այդ յաջորդ օրուայ մա-
սին, և նրա հոգին նորից ուրախացած՝ խռմփում
է անընդհատ վերածնուող ակնկալութիւնների
անցուկ կարօտի մէջ։

Եւ ոչ մի բանի չէ խանգարում այդ ակըն-
կալութիւնը, այդ թախիծը։ Նա ուղեկցում է
նրա իւրաքանչիւր շարժմանը, և ոչ մի բան չէ
խանգարում նրան։ Ձէր խանգարում նրան հիա-

նալի կերպով ճաշել Էմիլի հետ երրորդ պանդո-
կում և միայն, երբեմն-երբեմն, կարճատև կայ-
ծակի նման, փայլատակում էր նրա գլխում այն
միտքը՝ թէ իսկ եթէ որևէ մէկը աշխարհումս
իմանար։ Այդ թախիծը չէր խանգարում նրան
ճաշից յետոյ էլ աթուրմա խաղալ։ Բացօդեայ
կանաչ մարգագետնի վրայ էր տեղի ունենում
այդ խաղը... և ինչպէս էր զարմանում, ինչ-
պէս էր ամաչում Սանինը, երբ, Տարտալիայի
հաչոցի ուղեկցութեամբ, ճարպիկութեամբ, ոտ-
ները չռելով, թուչունի նման սլանում էր կռա-
ցած Էմիլի վրայով։ Բայց յանկարծ նա տեսնում
է իր առջև, կանաչ մարգագետնի ծայրում, եր-
կու օֆիցերներ. իսկոյն ճանաչում է նրանց. ե-
րեկուայ հակառակորդն է և իր սեկունդանտը՝
պ. պ. ֆօն-Դեօնհօֆը և ֆօն-Բիխաերը։ Նրան-
ցից իւրաքանչիւրը մի մի ապակի էր դնում իր
աչքին ու նայում նրան, ժպտում... Սանինը ծունկ
է չոքում, շուռ գալիս, շտապով հագնում գեր-
ձգած վերարկուն, ինչոր փսփսում Էմիլին. նա
նոյնպէս հագնում է իր բաճկօնակը, և երկուսով
էլ անմիջապէս հեռանում են այդտեղից։

Բաւականին ուշ էր, որ նրանք վերադարձան
Ֆրակֆուրտ։

—Ինձ հայհոյելու են, ասում էր Էմիլը Սա-
նինին՝ հրաժեշտ տալիս.—Էհ, մխիթարական է։ Փոխա-
րէնը, գոնէ, ես այսօր, շատ լաւ ժամանակ
անցկացրի։

Սանինը, վերադառնալով հիւրանոց, գտաւ իր սեղանի վրայ Ջեմմայի ուղարկած տոմսակը. նա ժամադրութիւն էր նշանակում յաջորդ օրը առաւօտեան ժամը եօթին, հասարակական այգիներից մէկում, որտնցով ամեն կողմից շրջապատուած է Ֆրանկֆուրտը։

Ինչպէս թրթռում էր նրա սիրտը։ Որքան ուրախ էր նա այժմ, որ հնազանդուեց Ջեմմային։ Եւ, Աստուած իմ, ինչ էր խոստանում.... Ինչեր չէր խոստանում այդ արտասովոր, եզակի, աներկբայելի վաղուան օրը։

Նա աչքերով միացել էր մեխուած Ջեմմայի տոմսակի վրայ։ «Գ» տառի երկար, գեղեցիկ պոչը—այսինքն նրա անուան սկզբնատառի, որ կանգնած էր թերթի դրութեան վերջում, յիշեցնում էր նրան նրա գեղեցիկ մատները, նրա հոյակապ ձեռքը... Նա մտածեց, որ դեռ ևս ոչ մի անգամ չէ կպչել այդ ձեռքին իր շրթունքներով.... «Իտալուհիները, հակառակ նրանց մասին տարածուած համբաւին, ամաչկոտ են և խիստ... իսկ Ջեմման խօսք աւելի ևս վաղուց։ Թագուհի... դիցուհի... մարմարիոն կուսական և անարատ... Բայց կը գայ ժամանակ, և այդ հեռու չէ...»։

Այդ դիշերը Ֆրանկֆուրտում մի հատ բաղդատուր ժարդ կար միայն... նա քնած էր, բայց կարող էր իր մասին ասել բանաստեղծի խօսքերով.

«Ես քնած եմ, բայց սիրտս զգայուն՝ չէ քնում...»

Ու նա՝ այդ սիրտը, բաբախում էր այնքան թեթևօրէն, ինչպէս որ ծաղկին հպուած և առաւօտեայ արևի շողերով ցօղուած թիթեռնիկն է զարկում իր թևերով։

XXVII

Ժամը հինգին Սանինը զարթեց քնից, վեցին արդէն հագնուած-պատրաստ էր, իսկ վեց ու կէսին անց ու դարձ էր անում հասարակական այգում այն փոքրիկ ըրուցարանի առջև, որի մասին յիշել էր Ջեմման իր տոմսակում։

Տօթ, խաղաղ, ամպամած առաւօտ էր։ Երբեմն այնպէս էր թւում՝ թէ ահա ուր որ է այս րոպէին անձրև կը գայ, բայց մեկնուած ձեռքը ոչինչ չէր զգում և միայն նայելով հագուստի թևերին՝ կարելի էր լինում նկատել նրանց վրայ ամենամանրիկ մարգարիտների նման անշան կաթիլները. սակայն նրանք էլ շուտով չորացին։ Չամի, կարծես, երբեք չը կաը էլ աշխարհումս։ Ամեն մի հնչիւն, ձայն ոչ թէ թռչում էր, այլ լուծվում ու տարածվում չորս կողմ. հեռուում՝ հազիւ նշմարելի կերպով՝ խոսնում, կուտակվում էր սպիտակաւուն շողին, իսկ օդի մէջ յափրուկի ու սպիտակ ակացիաների անուշահոտութիւն էր բուրում։

Փողոցներում խանութները դեռ ևս չէին բացուել, բայց արդէն մէկ-մէկ երևում էին հեռակայ եկուորները, երբեմն էլ դղրդացնում էր մենակ անցնող կառքը... Այգում զբօսնողներ չը կային: Պարտիզպանը թիակով քերում մաքրում էր ծառուղին, առանց շտապելու, մէկ էլ մի զառամեալ պառաւ կին սև մահուդէ թիկնոցը ուսին, կաղի տալով քաշ էր գալիս ծառուղիով: Մի վայրկեան անգամ Սանինը չէր կարող այդ ողորմելի էակին ընդունել Զեմմայի տեղ, և, այնուամենայնիւ, նրա սիրտը թփպաց արագ ու նա ուշադիր աչքերով սկսեց հետևել այդ հեռացող սև կէտին:

Աշտարակի վրայ ժամացոյցը խփեց եօթը:

Սանինը կանգ առաւ: Մի՞թէ նա չի գալու: Յանկարծ սառը դող անցաւ նրա մարմնի անդամներով: Միևնոյն դողը կրկնուեց նրանում մի վայրկեան յետոյ նոյնպէս, սակայն այս անգամ, բոլորովին ուրիշ պատճառից: Սանինը լսեց իր յետևում թեթև քայլեր, թեթև խշխշոց կանացի հագուստի... Նա յետ նայեց. Զեմման էր:

Զեման գալիս էր նրա յետևից՝ նոյն շաւղով: Նա հագել էր դորշագոյն ծածկոց և գլխին դրել փոքրիկ, մութ գլխարկ: Նա նայեց Սանինին, երեսը շրջեց դէպի հակառակ կողմը և, հաւասարուելով նրան, արագութեամբ անցաւ ժօտից:

— Զեմմա, — արտասանեց նա հազիւ լսելի ձայնով:

Զեմման թեթև գլխով արեց ու շարունակեց գնալ առաջ:

Սանինը հետևեց նրան. նա շունչ էր քաշում հևալով, ոտքերը լաւ չէին հնազանդվում: Զեմման անցաւ զրուցարանն էլ, թեքուեց դէպի աջ, անցաւ դէպի փոքրիկ, հարթ աւազանը, որի մէջ աշխուժով ծփծփում էր ճնճղուկը և, մանելով բարձր շեփորուկների ծաղկանոցի եզերը, նստեց նստարանի վրայ. տեղը խուլ էր և փակ: Սանինը նստեց նրա կողքին:

Անցաւ մի րոպէ, բայց ոչ Զեմման և ոչ էլ Սանինը դեռ ևս ոչ մի խօսք չէին արտասանել. Զեմման մինչև անգամ չէր էլ նայում Սանինի վրայ: Վերջինս էլ նայում էր ոչ թէ նրա երեսին, այլ ծալած ձեռքերին, որոնցով բռնել էր փոքրիկ հովանոցը: Ի՞նչ կար ասելու: Ի՞նչ մի այնպիսի բան պէտք է ասէին իրար, որը իր նշանակութեամբ կարողանար հաւասարուել հէնց, օրինակ, նրանց այդտեղ գտնուելու փաստին. մխասին, առանձնութեան մէջ, այդչափ վաղ, այդքան իրար մօտ:

— Դուք... չէք բարկանում ինձ վրայ, — արտասանեց, վերջապէս, Սանինը:

Դժուար թէ Սանինը կարողանար ասել այդ խօսքերից աւելի յիմար բան... Նա ինքն էլ էր այդ հասկանում.., Բայց և այնպէս, գոնէ, լռութիւնը խախտուեց դրանով:

—Ե՞ս, պատասխանեց Ջեմման։—Ինչո՞ւ համար։ Ո՛չ։

—Եւ դուք հաւատո՞ւմ էք ինձ։—Շարունակեց նա։

—Ձեր գրածներին։

Այո՛։

Ջեմման գլուխը կախեց և ոչինչ չասաց։ Հովանոցը դուրս սողաց նրա ձեռքերից, բայց նա շտապով բռնեց նրան և չը թողեց, որ գետին ընկնի։

- Ա՜խ, հաւատացէք ինձ, հաւատացէք այն բոլորին, ինչ որ ես գրել էի ձեզ, բացականչեց Սանինը, նրա ամբողջ ամաչկոտութիւնը չքացաւ յանկարծ, և նա խօսեց ոգևորութեամբ.—եթէ երկրիս վրայ կայ մի ճշմարտութիւն. սրբազան անկասկածելի ճշմարտութիւն, դա այն է, որ ես սիրում եմ ձեզ. սիրում եմ ձեզ սաստիկ, Ջեմմա։

Ջեմման հարևանցի հայեացք ձգեց նրա վրայ. վայրկենական հայեացք, ու դարձեալ քիչ էր մնում, որ վայր ձգէր հովանոցը։

—Հաւատացէք ինձ, հաւատացէք ինձ,—կրկնում էր Սանինը։ Նա աղերսում էր նրան, պարզում դէպի նա իր ձեռքերը, և չէր համարձակվում կպչել նրանց։ Ինչ էք կամենում, որպէսզի ես անեմ... որպէսզի համոզեմ ձեզ։

Ջեմման նորից նայեց նրան։

—Ասացէք, Monsieur Dimitri, սկսեց նա,—

երեք օր առաջ, երբ եկաք ինձ համոզելու դուք, կը նշանակէ, այն ժամանակ դեռ ևս չը գիտէիք... չէիք զգում...

—Ես զգում էի,—շարունակեց նրա խօսքը Սանինը, բայց չը գիտէի, Ես սիրեցի ձեզ այն միևնոյն վայրկենից, երբ տեսայ առաջին անգամը, բայց իսկոյն չը հասկացայ՝ թէ ինչ զարձաք դուք ինձ համար։ Միևնոյն ժամանակ՝ ես լսեցի, որ դուք արդէն նշանադրուած հարսնացու էք... Ինչ վերաբերում է ձեր մօր յանձնարարութեանը, նախ և առաջ՝ ինչպէս կարող էի ես հրաժարուել և երկրորդ՝ ես կարծեմ այնպէս հաղորդեցի ձեզ այն յանձնարարութիւնը, որ ինքներդ կարող էիք գլխի ընկնել...

Լսուեցին ծանրաշարժ քայլեր, և բաւականին հաստամարմին մի պարոն, ճանապարհորդական պայուսակը ուսին, երևի, օտարերկրացի, առաջ եկաւ ծաղկանոցի յետևից և, եկուոր ճանապարհորդին յատուկ, առանց քաշուելու զննող հայեացք ձգեց նստարանի վրայ նստած զոյգին, բարձրաձայն հազաց ու անցաւ զնաց։

—Ձեր մայրը, վերսկսեց իր ընդհատած խօսքը Սանինը՝ հէնց որ ծանր քայլերի ձայնը լռեց,—ասաց ինձ, որ ձեր մերժումը կարող է սկանդալ առաջ բերել (Ջեմման ունքերը հաւաքեց), որ մասամբ ես ինքս ստիպ տուի աննպաստ խօսակցութիւնների և որ... հետևապէս... ինձ վրայ որոշ աստիճանի պարտականութիւն է ընկ-

նում համոզել ձեզ, որպեսզի չը մերժէք ձեր փեսացու պ-ն Կլիւբերին...

—Monsieur Dimitri,—խօսեց Զեմման,—և ձեռքը տարաւ դէպի մազերը Սանինի կողմից,—խնդրում եմ այսուհետև իմ փեսացուն չանուանել պ. Կլիւբերին: Ես երբէք նրա կինը չեմ դառնայ: Արդէն մերժեցի նրան:

—Դուք նրան մերժեցիք: Ե՞րբ.

—Երէկ:

—Հէնց իրա՞ն:

—Անձամբ իրան: Մեր տանը: Նա եկել էր մեզ մօտ:

—Զեմման, նշանակում է դուք սիրո՞ւմ էք ինձ, այո՛:

Զեմման երեսը դարձրեց դէպի Սանինը:

—Այլապէս... մ'թէ ես կը դայի այստեղ, —շշնջաց նա և նրա երկու ձեռքերը թուլացած կախուեցին նստարանի վրայ:

Սանինը բռնեց այդ անզօր, ափերով դէպի վեր՝ ընկած ձեռքերը, ու սեղմեց նրանց իր աչքերին, շրթունքներին... Ահա թէ երբ բարձրացաւ այն վարագոյրը, որը նշմարում էր նա դեռ ևս նախորդ օրը: Անհատական բաղդատութիւնը, ահա նրա շողազարդ դէմքը:

Նա գլուխը վեր բարձրացրեց ու նայեց Զեմմային ուղիղ և համարձակ: Վերջինս նոյնպէս նայում էր Սանինին՝ մի փոքր վերևից դէպի ցած: Զեմմայի կիսափակ աչքերի հայեացքը

հագիւ էր փայլում՝ երջանկութեան թեթև արցունքներով ողողուած: Իսկ դէմքը ժպտում էր... ո՛չ. նա ծիծաղում էր նոյնպէս երջանկութեամբ լի, թէև անձայն ծիծաղով:

Նա ուզում էր մօտ քաշել նրան՝ սեղմել իր կրծքին, բայց Զեմման խուսափում էր և, անդադար ծիծաղելով մխիթարական անձայն ծիծաղով, բացատրում շարժում գլուխը:

«Սպասիր», թուում էր՝ թէ ասում էին նրա բաղդատուր աչքերը:

—Ո՛հ, Զեմմա,—բացականչեց Սանինը. կարող էի ես մտածել, որ դու (նրա սիրտը լարի պէս դողաց, երբ առաջին անգամ նրա շրթունքները արտասանեցին այդ «դու» խօսքը), որ դու կը սիրես ինձ:

—Ես ինքս էլ չէի սպասում,—կամաց փըսփսաց Զեմման:

—Կարող էի մտածել,—շարունակեց Սանինը,—կարող էի, մ'թէ, մտածել Ֆրանկֆուրտին մօտենալիս, ուր ես մտադիր էի մի քանի ժամ միայն մնալ, որ ես այստեղ կը գտնեմ իմ ամբողջ կեանքի բաղդատորութիւնը:

—Ամբողջ կեանքի: Այդպէս է արդեօք,—հարցրեց Զեմման:

—Ամբողջ կեանքիս. յաւիտեան ու ընդմիշտ,—բացականչեց Սանինը նոր ոգևորութեամբ:

Պարոհոպանի թիակը յանկարծ սկսեց քե-

րել այն նստարանից երկու քայլ հեռու, որի վրայ նստած էին նրանք։

—Գնանք տուն,—շշնջաց Զեմմանը.—գնանք միասին. ուզում ես։

Եթե Զեմմանն այդ վայրկեանին ասելու էլ լինէր. «ընկէր ծովը. ուզում ես»,—դեռ ևս չարտասանուած այդ վերջին խօսքը, նա, առանց յետ նայելու, անդունդը կը նետուէր։

Նրանք միասին դուրս եկան այգուց և գնացին դէպի տուն՝ ոչ թէ քաղաքի փողոցներով, այլ արուարձանի միջով։

XXVIII

Սանկինը գնում էր երբեմն Զեմմայի հետ հաւասար՝ կողք-կողքի, երբեմն էլ մի փոքր յետ էր ընկնում, բայց աչքը չէր հեռացնում նրանից ու չէր դադարում ժպտալուց։ Իսկ նա կարծես թէ շտապում էր... կարծես թէ կանգ էր առնում... Ճշմարիտն ասած, նրանք երկուսն էլ՝ Սանկինը ամբողջովին գուշատ, Զեմման յուզմունքից բոլորովին վարդանման՝ առաջ էին շարժվում հարբածի նման։ Այն ինչ որ արեցին նրանք երկուսով մի քանի վայրկեան առաջ. փոխադարձաբար իրանց հոգիները իրար նուիրելը, այնքան ուժեղ էր, և՛ նոր, և՛ ահաւոր, այնքան յանկարծակի իրանց կեանքում ամեն ինչ փո-

փոխուեցան ենթարկուեց, որ նրանք երկուսով էլ չը կարողացան ուշքի գալ և միայն զգում էին իրանց յափշտակող փոթորիկը, այն գիշերուայ փոթորկի նման, որը քիչ էր մնացել թէ նրանց իրար գիրկ նետէր։ Սանկինը գնում էր ու զգում, որ նա նոյն իսկ այլ կերպ է նայում այժմ Զեմմայի վրայ. վայրկենաբար նկատեց մի քանի առանձնայատկութիւններ նրա քայլուածքի ու շարժումների մէջ և, Աստուած իմ, որքան նրանք անսահման թանգագին էին ու սիրելի նրա համար։ Զեմման էլ էր զգում, որ նա այդպէս է նայում իր վրայ։

Սանկինը և Զեմման առաջին անգամն էին սիրում. առաջին սիրոյ բոլոր հրաշքները կատարվում էին նրանց վրայ։ Առաջին սէրը միևնոյն յեղափոխութիւնն է, արդէն պատրաստուր կարգը խախտուել ու տապալուել է մի ակնթարթում. երիտասարդութիւնը կանգնել է բարրիկադների վրայ, բարձր ծածանվում է նրա փայլուն դրօշակը, և ինչ էլ որ սպասում լինի նրան ապագայում՝ մահ թէ նոր կեանք, բոլորին նա ուղարկում է իր ցնծալից ողջոյնը։

—Այդ ինչ է. չը լինի՞ թէ մեր ծերունին է,—լուսթիւնը խզեց Սանկինը, մատով ցոյց տալով փաթաթուած կերպարանքը, որ այդ միջոցին շտապով անցնում էր հեռուից, կարծես, աշխատելով աննկատելի մնալ։ Երջանկութեան ա-

ռատուխեան մէջ Սանինը պահանջ էր զգում խօսել Ջեմմայի հետ ոչ թէ սիրոյ մասին,— այդ արդէն վճռուած, սուրբ բան էր, այլ մի որև է ուրիշ բանի մասին:

—Այո, դա Պանտալէօնն է, ուրախ-ուրախ և բաղդատոր դէմքով պատասխանեց Ջեմման: Նա, հաւանօրէն, դուրս է եկել ինձ հետևելու. երէկ էլ ամբողջ օրը հետամուտ էր իմ ամեն մի քայլին..., Նա հասկանում է:

—Նա հասկանում է, հիացմունքով կրկնեց Սանինը: Իսկ ինչ բան ասէր Ջեմման, որից նա չը հիանար:

Յետոյ նա խնդրեց Ջեմմային մանրամասնօրէն պատմել բոլորը, ինչ որ տեղի էր ունեցել նախորդ օրը:

Եւ Ջեմման անմիջապէս սկսեց պատմել, շտապելով, շփոթուելով, ժպտալով, թեթև հառաչանքներով և Սանինի հետ փոխանակուելով թռուցիկ, պայծառ հայեացքներով: Նա պատմեց Սանինին թէ ինչպէս երրորդ օրուայ խօսակցութիւնից յետոյ, մայրիկը շարունակ աշխատում էր իրանից՝ Ջեմմայից որև է դրական խոստումն ստանալ. թէ ինչպէս ինքը կարողացաւ խոյս տալ ֆրաու Լէնօրայից՝ խոստանալով յայտնել նրան իր որոշումը մի օրվայ ընթացքում. թէ ինչպէս նա ստացաւ այդ ժամանակամիջոցը և որքան դժուարութեամբ. թէ ինչպէս բոլորովին անսպասելի կերպով ներս մտաւ այդ

միջոցին պ-ն Կլիւբերն էլ աւելի ամբարտաւանացած և օսլայուած, քան երբ և իցէ. թէ ինչպէս նա իր զայրոյթը յայտնեց ռուս օտարականի տղայական անհերթելի և իբր՝ պարոն Կլիւբերի, համար չափազանց արդէն վիրաւորական (հէնց այդպէս էլ նա գործածեց) վարմունքի առիթով. — այդ ասելով՝ նա ակնարկում էր քո մենամարտը, — և ապա՝ թէ ինչպէս նա պահանջեց, որպէսզի անմիջապէս հրաժարուենք ընդունել քեզ մեր տանը: «Որովհետև» աւելացրեց նա,—և այդ խօսքերի վրայ Ջեմման մի փոքր ծաղրեց Կլիւբերի ձայնն ու ձևերը,— «որովհետև դա սուտեր է գցում իմ պատուի վրայ. իբրև թէ ես չէի կարող պաշտպան դուրս գալ իմ հարսնացուին, եթէ դա գտնէի անհրաժեշտ կամ օգտակար: Ամբողջ Ֆրանկֆուրտը վաղը կիմանայ, որ մի օտար մարդ մենամարտել է օֆիցերի հետ իմ հարսնացուի համար: Ի՞նչի նման է այդ, դա արատաւորում է իմ պատիւը»: Եբևակայիր. մայրիկը նրա հետ համաձայնվում էր, բայց հէնց այդ միջոցին էլ ես յանկարծ յայտնեցի նրան, որ նա իզուր է անհանգստանում իր պատուի ու իր անձի մասին, իզուր է վիրաւորվում իր հարսնացուի վերաբերմամբ տարածուած լուրերից, որովհետև ես այլ ևս նրա հարսնացուն չեմ և երբէք էլ նրա կինը չեմ դառնալ: Խոստովանում եմ, ես, նախ՝ կամենում էի խօսել ձեզ հետ... քեզ հետ, նախ քան

նրան վերջնականապէս մերժելս, բայց նա եկաւ... և ես այլ ևս չը կարողացայ ինձ զսպել։ Մայրիկը մինչև անգամ երկիւղից աղաղակեց, իսկ ես դուրս եկայ գնացի միւս սենեակը և բերայ մատանին,— դու չես նկատում, ես արդէն երկու օր սրանից առաջ եմ հանել նրան մատիցս ու արդէն վերադարձրել նրան։ Նա սարսափելի կերպով նեղացաւ, բայց որովհետև սաստիկ ինքնասէրն է ու հպարտը, ուստի նա շատ չը խօսեց, ու դուրս գնաց։ Հասկանալի է, ես շատ բան կրեցի դրա համար մայրիկից, և ինձ սաստիկ ցաւ էր պատճառում, տեսնելով թէ ինչպէս վշտանում է մայրիկը, և ես մտածեցի, որ, դուցէ, մի փոքր շտապել էի։ Բայց դէ ես արդէն ստացել էի քո տոմսակը, թէև առանց այդ էլ ես գիտէի.

—Որ ես սիրում եմ քեզ,—լրացրեց նրա միտքը Սանինը։

—Այո... որ դու սիրում ես ինձ։

Այդպէս էր խօսում Ջեմման, շփոթուելով ու ժպտալով, և իւրաքանչիւր անգամ ցածրացնելով ձայնը, կամ բոլորովին լռելով, երբ որևէ մէկը դուրս էր գալիս նրանց հանդէպը կամ անցնում էր մօտից։ Իսկ Սանինը ականջ էր դնում հիացած, հրճւում էր նրա ձայնի հնչիւններով այնպէս, ինչպէս որ նախորդ օրը հրճւում էր, հիանում նրա ձեռագրի վրայ։

—Մայրիկը չափից դուրս վշտացած է,— վերսկսեց նորից Ջեմման, և նրա խօսքերը արագութեամբ յաջորդում էին իրար։ Նա ոչ մի կերպ չէ ուզում հասկանալ, որ կլուբերը կարող էր զգուանք պատճառել ինձ, որ ես, իսկապէս, համաձայնութիւն էի տուել ամուսնանալու նրա հետ ոչ թէ սիրուց դրդուած, այլ մայրիկի ջերմ թախանձանքներին զիջելով... նա կասկածում է... ձեզ... քեզ այսինքն, ուղղակի ասած՝ նա հաւատացած է, որ ես քեզ սիրում եմ արդէն, ու այդ բանն էլ աւելի է ցաւ պատճառում նրան. որովհետև երեք օր առաջ այդ տեսակ միտք նրա գլխովն էլ չէր անցնում, և նոյն իսկ յանձնարարել էր քեզ, որպէսզի ինձ համոզես... իսկ դա շատ տարօրինակ յանձնարարութիւն էր, չէ՞։ Այժմ նա ձեզ... քեզ մեծարում է՝ խորամանկ, կեղծ մարդ անուանելով, ասելով, որ դուք ի չարը գործ դրիք իրա վստահութիւնը, և նախադուշակում է, որ դուք ինձ էլ կը խաբէք...

—Բայց, Ջեմմա, բացականչեց Սանինը, մի՞թէ դու չատացիր նրան որ...

—Ես ոչինչ չատացի։ Ի՞նչ իրաւունք ունէի, առանց ձեզ հետ խօսելու։

Սանինը ձեռքերն իրար կցեց։

—Ջեմմա, ես յոյս ունեմ, որ այժմ, գոնէ, դու նրան ամեն բան կը խոստովանես, կը տանես ինձ նրա մօտ... Ուզում եմ ապացուցանել քո մօրը, որ ես խաբեբայ չեմ։

Սանինի կուրծքը ուռչում էր ջերմ

և վեհանձն զգացմունքների ալեկոծութիւնից։ Ջեմման նայեց նրա վրայ աչքերը լայն բաց արած։

Իսկապէս, ուզում էք հէնց այժմ ինձ հետ միասին գնալ մայրիկի մօտ. մայրիկի մօտ, որը ինձ հաւատացնում է, որ... այդ բոլորը անկարելի է մեր մէջ և երբեք չի իրագործուի։ Մի խօսք միայն կար, որը Ջեմման դժուարանում էր արտասանել... նա այրում էր նրա շրթունքները. սակայն այդ խօսքը աւելի մեծ հաճոյքով արտասանեց ինքը՝ Սանինը։

- Ամուսնանալ քեզ հետ, Ջեմմա, լինել քո ամուսինը. դրանից աւելի բարձր բաղդաւորութիւն ես չեմ ճանաչում։

Ո՛չ իւր սիրոյ, ո՛չ իր մեծահոգութեան, ոչ էլ իր վճռականութեան նա չափն ու սահմանը չը գիտէր։

Լսելով այդ խօսքերը, Ջեմման, որ մինչ այդ ուզում էր մի վայրկեան կանգնել, քայլեց էլ աւելի արագութեամբ... նա, կարծես, ուզում էր փախչել այդ չափազանց արդէն մեծ ու անսպասելի բաղդաւորութիւնից։

Բայց, յանկարծ, նրա ոտքերը թուլացան։ Միջնափողոցի անկիւնից, նրանցից մի քանի քայլ հեռաւորութեան վրայ, նոր գլխարկով և նոր բեկէշով, *) ուղիղ՝ ինչպէս նետ, գանգրա-

*) Բեկէշ ձմերային վերարկուով։

հեր՝ ինչպէս փրչոտ շուն՝ պուդել, դուրս պրծաւ-ն կլիւբերը։ Նա տեսաւ Ջեմմային, տեսաւ Սանինին, մի տեսակ ներքուստ մռնչաց և, դէպի յետ ճկելով իր ճկուն իրանը, գոռոզաբար գնաց նրանց դէմ։ Սանինը խղճահարութիւն զգաց, բայց նայելով կլիւբերի դէմքին, որի տէրը, որքան կարողութիւն ունէր, չանք էր թափում արհամարհական զարմանքի ու, նոյնիսկ, կարեկցութեան արտայայտութիւն տալ, -նայելով այդ կարմիր, անարգ դէմքին, Սանինը յանկարծ զայրոյթ զգաց և սկսեց դէպի առաջ քայլել։

Ջեմման բռնեց նրա ձեռքը և անվրդով վճռականութեամբ՝ տալով նրան իր թեւը, ուղղակի նայեց իր նախկին փեսացուի երեսին... Վերջինս աչքերը կկոցեց, կծկուեց, ճանապարհից մի կողմ քաշուեց, և, ատամների արանքից մրմռալով. «սովորական վախճանը երգի» — (Das alte Ende vom Liede), հեռացաւ միևնոյն գոռոզ, թեթևաթռիչ քայլուածքով։

— Ի՞նչ ասաց. այն սրիկան,—հարցրեց Սանինը և ուզեց շտապել կլիւբերի յետևից, բայց Ջեմման չը թողեց նրան, ու միասին շարունակեցին ճանապարհը՝ դարձեալ թևանցուկ։

Ռոզելլիի կօնդիտերանոցը երևաց։ Ջեմման մի անգամ էլ կանգ առաւ։

—Dimitri, monsieur Dimitri,—ասաց նա, դեռ ևս ներս չենք մտել տուն. դեռ ևս չենք տեսել մայրիկին... Եթէ դուք կամենում էք

էլի մտածել, եթէ... դուք... դեռ ազատ էք, Դիմիտրի։

Պատասխանի փոխարէն՝ Սանինը պինդ սեղմեց Ջեմմայի ձեռքը իր կրծքին և դէպի առաջ մղեց նրան իր հետ։

—Մայրիկ, ասաց Ջեմման, Սանինի հետ միասին ներս մտնելով այն սենեակը, ուր նըստած էր Ֆրաու Լէնօրան,— ահա ես բերել եմ իսկականը։

XXIX

Եթէ Ջեմման յայտնէր թէ իր հետ բերել է խօլերա կամ մահ, Ֆրաու-Լէնօրան, պէտք է կարծել, որ չէր կարող աւելի մեծ յուսահատութեամբ ընդունել այդ տեղեկութիւնը։ Նա անմիջապէս նստեց անկիւնում երեսը դէպի պատը և սկսեց լաց լինել, բարձր ձայնով ողբալ, ոչ աւելի, ոչ պակաս, ճիշտ այնպէս, ինչպէս որ ռուս գեղջկուհին՝ իր ամուսնու կամ որդու դագաղի վրայ։ Սկզբում Ջեմման այն աստիճանին շփոթուեց, որ նոյն իսկ չը մօտեցաւ մօրը և կանգնեց արձանի պէս՝ սենեակի մէջ տեղ, իսկ Սանինը բոլորովին կորցրեց գլուխը ու նրա հետ ինքն էլ պատրաստ էր լաց լինել։ Մի ամբողջ ժամ տևեց այդ անմխիթարական ողբը. մի ամբողջ ժամ։

Պանտալէօնը աւելի բարւօք համարեց վա-

կել կօնդիտերանոցի դրսևի դուռը, որպէսզի չը լինի թէ մի օտար մարդ ներս մտնէր. լաւ է, որ դեռ ևս վաղ առաւօտ էր։ Ծերունին ինքն էլ էր ճնշուել շուարած և, յամենայն դէպս, չէր հասանում այն շտապ վարմունքը, որ թոյլ տուին իրանց Ջեմման ու Սանինը, բայց, ասենք, նրանց դատապարտել էլ չէր համարձակվում և, մինչև անգամ՝ պատրաստ էր իրա հովանաւորութիւնը ցոյց տալ նրանց հարկաւոր դէպքում. այնքան սաստիկ ատում էր նա կլիւբերին։

Էմիլը համարում էր իրան միջնորդ իր բարեկամի ու քրոջ միջև և քիչ էր ճնում պարծենար էլ, որ այդ բոլորը այդչափ հիանալի կերպով յաջողուեց։ Նա բոլորովին չէր կարողանում հասկանալ՝ թէ ինչու Ֆրաու-Լէնօրան այդպէս տանջում է իրան, դարդ անում, և իր սրտի խորքումն էլ՝ հէնց այդտեղ և եթէ վճռեց, որ կանայք, նոյն իսկ ամենալաւագոյնները, զուրկ են ըմբռնելու կարողութիւնից։

Սանինի դրութիւնը ամենավատթարն էր. Ֆրաու-Լէնօրան լաց ու ճիչ էր բարձրացնում և ձեռքերը թափ տալիս, հէնց որ նա մօտենում էր նրան, և իզուր Սանինը փորձ արեց հեռվում կանգնած՝ մի քանի անգամ բարձրաձայն արտասանել. «Լանդրում եմ ձեր աղջկայ ձեռքը»։ Ֆրաու-Լէնօրան բարկանում էր մանաւանդ իր վրայ. «Ինչպէս կարող էր նա մինչև այժմ այնքան կոյր լինել ու ոչինչ չը նկատել»։ «Եթէ ողջ

լինէր իմ Ջիօվան Բատտիստան» — կրկնում էր նա արտասուախառն, - «այդպիսի բան ամենևին չէր պատահիլ»։—«Աստուած իմ, այս ինչ բան է, մտածում էր Սանինը, վերջապէս դա յիմարութիւն է»։ Ո՛չ նա ինքն էր համարձակվում հայեացքը ձգել Զեմմայի վրայ, ո՛չ էլ Զեմման՝ նրայ վրայ... Զեմման միայն բաւականանում էր նրանով, որ համբերատարութեամբ լսում էր մօրը, թէև վերջինս սկզբում նրան էլ էր դէն հրում իր մօտից...

Վերջապէս, փոքր առ փոքր, փոթորիկը դադարեց։ Ֆրաու-Լէնօրան կարեց իր լացը, թոյլ տուեց Զեմմային դուրս բերել իրան այն անկիւնից, ուր նա կուչ էր եկել, նստեցնել թիկնաթոռի վրայ՝ պատուհանի մօտիկ և իրան տալ խմելու ֆլեօր-դ'օրանժի ջուրը։ Սանինին էլ թոյլ տուեց ո՛չ թէ մօտենալու, ո՛չ. այլ, միայն, մնալու սենեակում (առաջ նա շարունակ պահանջում էր, որ նա հեռանար սենեակից) և այլ ևս չէր ընդհատում նրան, երբ նա խօսում էր։

Սանինը անմիջապէս օգուտ քաղեց տիրող հանդստութիւնից և զարմանալի պերճախօսութիւն ցոյց տուեց. հազիւ թէ նա կարողանար այդպիսի ջերմ ոգևորութեամբ ու այդչափ համոզեցուցիչ կերպով արտայայտել իր դիտաւորութիւններն ու զգացմունքները Զեմմայի իրա առջև։ Այդ զգացմունքները ամենաանկեղծն էին, այդ դիտաւորութիւնները՝ ամենամաքուրը, ինչպէս որ Այլմավիվինը՝ «Սեվիլեան Սափրիչում»։ Նա չէր թագցնում ո՛չ ֆրաու Լէնօրայից, ո՛չ էլ իրանից նոյն իսկ, այդ դիտաւորութիւնների անշահախնդրութիւնը, թէև այդ անշահախնդրութիւնը նրան թւում էր միայն։ Ճշմարիտ է՝ նա օտարերկրացի էր. նրա հետ վաղուց չէր որ ծանօթացել էին, դրական ոչինչ չը գիտէին ո՛չ նրա անձի մասին, ո՛չ էլ նրա միջոցների, բայց նա պատրաստ է բոլոր հարկաւոր ապացոյցները բերել՝ ցոյց տալու, որ ինքը օրինաւոր մարդ է և ոչ աղքատ. նա կը հիմնուէ իր հայրենակիցների ամենաանկասկածելի վկայութիւնների վրայ։ Նա յոյս ունի, որ Զեմման բաղդաւոր կը լինի իրա հետ, և որ նա կը կարողանայ քաղցրացնել նրա անջատումը հարազատներից... Անջատման յիշողութիւնը. միայն այդ «անջատում» խօսքը քիչ մնաց, որ փչացնէր ամբողջ գործը... Լէնօրան սկսեց դողալ ամբողջ մարմնով ու ցնցուել... Սանինը շտապեց նկատել, որ անջատումը կը լինի միայն ժամանակաւոր և որ, վերջապէս, կարող է պատահել բոլորովին էլ տեղի չունենալ։

Սանինի պերճախօսութիւնը դուր չանցաւ։ Ֆրաու-Լէնօրան սկսեց մէկ-մէկ նայել նրա վրայ, թէև դարձեալ կսկիծով ու կշտամբանքով, բայց այլ ևս ոչ առաջուայ զզուանքով ու զայրոյթով. քիչ յետոյ՝ նա թոյլատրեց նրան մօտենալ իրան և նոյն իսկ նստել իր կողքին (Զեմման նստել էր միւս կողքին). ապա սկսեց կշտամբել նրան

ոչ միայն հայեացքներով, այլ և խօսքերով, որ նշանակում էր՝ թէ մի փոքր կակղել էր արդէն. նա սկսեց դանգատուել և այդ դանգատները հետզհետէ ցածրանում էին ու մեղմանում, նրանց փոխարինում էին հարցերը, որոնցով նա դիմում էր երբեմն աղջկանը, երբեմն էլ՝ Սանինին: Քիչ ժամանակից յետոյ, նա թոյլ տուեց Սանինին բռնելու իրա ձեռքը և այնքան էլ շուտ չը խլեց նրանից... Ապա՝ մէկ էլ լաց եղաւ, բայց արդէն բոլորովին ուրիշ տեսակ արցունքներով... Քիչ անց՝ ախորժութեամբ ժպտաց և ափսոսաց, որ Զիօվան՝ Բատիստը բացակայ է, բայց այդ էլ ուրիշ մտքով, քան առաջ...

Անցաւ մի քանի վայրկեան էլ և երկու յանցաւորները՝ Սանինն ու Զեմման արդէն ծունկ էին չոքել նրա առաջ, և նա հերթով ձեռքերը դնում էր մէկ սրա, մէկ նրա գլխին: Անցաւ մի վայրկեան էլ և նրանք, արդէն, գրկած, համբուրում էին նրան, և Էմիլը, ուրախութիւնից պայծառացած դէմքով՝ ներս վազեց սենեակը ու նոյնպէս միացաւ սերտ կերպով իրար փաթթուած խմբին:

Պանտալէօնը հայեացքն ուղղեց նրանց, ժպտաց և միևնոյն ժամանակ՝ ունքերը հաւաքեց ու գնաց կօնդիտերանոցը, դրսևի դուռը բաց արեց:

XXX

Վհատութիւնից սխրութեան անցնելը և նրանից էլ «հանգստեան կայանը» բաւականին շուտ կատարուեց Ֆրաու-Լէնօրայի մէջ. բայց այդ հանգստեան կայանն էլ չը յապաղեց դառնալ գաղտնի բաւականութիւն, որը, սակայն, ամեն կերպ թագցնում էր նա և զսպում պարկեշտութեան համար: Սանինը, ծանօթութեան առաջին իսկ օրից, Ֆրաու-Լէնօրայի սրտովն էր. հաշտուելով այն մտքի հետ՝ թէ նա իրա փեսացուն է դառնալու, նա արդէն առանձին անդրեկան բան չէր գտնում նրանում, թէև իր պարտքն էր համարում իրա դէմքի վրայ մի փոքր պահպանել նեղացած... աւելի շուտ դարդոտած արտայայտութիւն: Մանաւանդ որ այն բոլորը, ինչ տեղի ունեցաւ վերջին օրերը, այնքան արտասովոր էր... Մէկ-մէկու յետևից:

Ինչպէս գործնական կին և ինչպէս մայր, Ֆրաու-Լէնօրան նոյնպէս իր պարտքն համարեց հնթարկել Սանինին զանազան տեսակ հարցաքննութեան և Սանինը, որ առաւօտեան գնալով ժամադրութեան Զեմմայի հետ, մտքովն էլ չէր անցկացրել թէ նա կամուսնանայ նրա հետ,— ճշմարիտ է, այդ ժամանակ նա ոչ մի բանի մասին էլ չէր մտածում, այլ միայն անձնատուր էր եղել իր կրքի թելադրութեան,—Սանինը լիակատար պատրաստակամութեամբ, կա-

ըելի է ասել, ոգևորութեամբ մտաւ իր գերի մէջ՝ վեսացուի գերի մէջ, և նրա կողմից իրան ուղղուած բոլոր հարցերին պատասխանում էր հանգամանօրէն, մանրամասնաբար, ուրախութեամբ։ Համոզուելով, որ նա իսկական, ի բնէ ազնուական է, և նոյն իսկ մի քիչ էլ զարմանալով՝ թէ նա ինչու իշխան չէ, Ֆրաու-Լէնօրան լուրջ դէմք ընդունեց և նախազգուշացրեց նրան վաղօրօք, որ նրա հետ ինքը, առանց քաշուելու, բոլորովին լինելու է անկեղծ. որովհետև այդպէս վարուելու հարկադրուած է իրա՝ մայրական սրբազան պարտականութիւնը։ Այդ խօսքերին Սանինը պատասխանեց, որ ինքը նրանից ուրիշ վերաբերմունք չէ էլ սպասել և շատ խընդրում է խիստ լինել ու չը խնայել իրան։

Այն ժամանակ Ֆրաու-Լէնօրան նկատեց, որ պ-ն Կլիւբերը (այդ անունը արտասանելիս նա թեթև հառաչանք արձակեց, սեղմեց շրթունքները և կանգ առաւ), պ. Կլիւբերը՝ Զեմմայի առաջնուայ վեսացուն, այժմ արդէն ստանում է ութ հազար գուլդէն եկամուտ և տարեց տարի այդ գումարը արագութեամբ աճելու է։ Իսկ ինչքան եկամուտ ունի նա ինքը՝ Սանինը։

—Ո՛ւթ հազար գուլդէն, ձայնը ծոր տալով կրկնեց Սանինը... Մեր փողով՝ այդ կանի ժօտ տասն և հինգ հազար բուբլի թղթադրամներով... Իմ եկամուտը բաւականին պակաս է։ Մի փոքրիկ կալուած ունեմ Տուլայի նահանգում... Լաւ անտեսութիւն մտցնելով՝ նա կարող է տալ, և, նոյն իսկ, անպատճառ պէտք է տայ, հինգ կամ վեց հազար... Մէկ էլ, եթէ ես ծառայութեան մտնեմ, հեշտութեամբ կարող եմ մի երկու հազար էլ ռոճիկ ստանալ։

—Ռուսաստանում ծառայութեան մտնե՞լ,— բացականչեց Ֆրաու Լէնօրան։ Ես, նշանակում է, սխալուած պիտի լինեմ բաժանուել Զեմմայից։

—Կարելի է տեղաւորուել դիպլոմատիական մասում. ես յայտնի կապեր ունեմ... Այդ դէպքում՝ ծառայութիւնը վարում են արտասահմանում։ Կամ թէ՝ ահա էլ ինչ կարելի էր անել, և դա ամենից լաւ կը լինի. ծախել կալուածքը և ստացուած դրամագլուխը գործադրել մի որևէ շահաւէտ ձեռնարկութեան վրայ, օրինակ. թէկուզ հէնց ձեր կօնդիտերանոցը կատարելագործելու համար։ Սանինը զգում էր, որ իր ասածը անպատեհութիւն էր, բայց և այնպէս, ասում էր. որովհետև անյարմարութիւնը տիրապետել էր նրան։ Նա նայում էր Զեմմային, որը, «գործնական» խօսակցութեան ամբողջ ընթացքում, շուռ-շուռ վեր էր կենում տեղից, անց ու դարձ անում սենեակում, նորից նստում,— նայում էր Զեմմային թէ չէ, բոլոր արդելքները վերանում էին նրա համար և նա պատրաստ էր ամեն բան անել այժմ, ամենալաւ ձևով, միայն թէ Զեմման չանհանգստանար։

Պ-ն Կլիւբերն էլ էր կամենում մի փոքրիկ դումար տալ ինձ կօնդիտերանոցս կարգի բերելու համար,—քիչ տատանուելուց յետոյ, ասաց Ֆրաու Լէնօրան։

Մայրիկ, ի սէր Աստուծոյ, մայրիկ, բացականչեց Զեմման իտալերէն։

—Այս խնդիրների մասին հարկաւոր է խօսել վաղօրօք, աղջիկս, պատասխանեց նրան Ֆրաու Լէնօրան՝ միևնոյն լեզուով։

Նա նորից դիմեց Սանինին և սկսեց հարց ու փորձ անել նրան՝ թէ ինչպիսի օրէնքներ կան Ռուսաստանում ամուսնութեան վերաբերեալ, և արդեօք արդեօք, կաթոլիկուհիների հետ ամուսնանալու համար, ինչպէս որ այդ ընդունուած է Պրուսիայում (այն ժամանակ՝ քառասնական թուականներին, ամբողջ Գերմանիան դեռ ևս յիշում էր պրուսական կառավարութեան վէճը կեօլնեան արքեպիսկոպոսի հետ՝ խառն ամուսնութիւնների առիթով)։ Բայց, երբ Ֆրաու Լէնօրան լսեց, որ ամուսնանալով ռուս ազնուականի հետ՝ նրա աղջիկը ինքն էլ կը դառնայ ազնուականուհի, նա մի փոքր բաւականութիւն ցոյց տուեց։—Դուք նախ՝ չէ Ռուսաստանն պէտք է գնաք։

—Ինչո՞ւ համար։

—Հաբա, ինչպէս։ Ձեր թագաւորից թոյլտուութիւն ստանալու համար։

Սանինը բացատրեց նրան, որ դա ամենևին հարկաւոր էլ չէ... բայց որ, գուցէ, նա՝ իւ կապէս, հարստանիքից առաջ՝ ստիպուած կը լինի ամենակարճ ժամանակով Ռուսաստան գնալ (այդ բառերը ասելիս՝ ցաւից ճմլուեց նրա սիրտը. Զեմման, որ նայում էր նրա վրայ, հասկացաւ, որ ճմլուեց. կարմրեց ու մտածմունքի մէջ ընկաւ), և կաշխատէ օգուտ քաղել իր ներկայութիւնից հայրենիքում՝ վաճառելու կալուածքը... Յամենայն դէպս՝ նա կը բերէ այնտեղից հարկաւոր դումարը։

—Ես կը խնդրէի ձեզ այնտեղից բերել հաշտարխանի յաւ գառան մորթիներ՝ ինձ համար վերարկու կարել տալու,—ասաց Ֆրաու-Լէնօրան։ Այնտեղ, ինչպէս ասում են, նրանք թէ շատ լաւերն են լինում և թէ զարմանալի արժանը։

—Անպատճառ, մեծաւ ուրախութեամբ կը բերեմ թէ ձեզ համար և թէ Զեմմայի,—բացականչեց Սանինը։

—Իսկ ինձ համար արծաթեայ ասեղնագործ սափեանէ գլխարկ,—մէջ ընկաւ էմիլը, գլուխը ներս հանելով հարևան սենեակից։

—Լաւ, կը բերեմ քեզ համար էլ... Իսկ Պանտալէօնի համար՝ հողաթափներ։

—Է՛, ինչ կարիք կայ։ Ի՞նչ կարիք կայ,—նկատեց Ֆրաու Լէնօրան։ Մենք այս բոպէիս լուրջ խնդիրների մասին ենք խօսում։ Բայց ա՛հա թէ ինչ էի ելի ուզում ասել, աւելացրեց գործնական տիկինը։ Դուք ասում էք. կալուածքը

կը վաճառեմ։ Սակայն ինչպէս կանէք այդ։ Ուրեմն, գիւղացիներին էլ կը վաճառէք։

Սանինը, կարծես, զգաց, որ մի բան նոյն րոպէին իր կողքը ծակեց։ Նա յիշեց, որ մի անգամ տ. Ռօզելլիի և իր աղջկայ հետ խօսելով ճորտատիրական իրաւունքի մասին, որը, նրա ասելով, խորը զայրոյթ էր առաջացնում իր մէջ, քանիցս հաւատացրել էր նրանց, որ ինքը ոչ մի ժամանակ և ոչ մի կերպ չի վաճառի իր գիւղացիներին. որովհետև այդ տեսակ վաճառքը նա համարում էր անբարոյական մի գործ։

—Ես կաշխատեմ վաճառել իմ կալուածքը մի այնպիսի մարդու, որին կը ճանաչեմ լաւ կողմից, —արտասանեց նա առանց շփոթուելու, —կամ թէ, գուցէ, հէնց իրանք՝ գիւղացիները կը ցանկանան ազատագրուել։

—Դա ամենալաւը կը լինի, —համաձայնուեց Ֆրաու Լէնօրան նոյնպէս։—Ապա թէ ոչ. վաճառել կենդանի մարդկանց...

—Barbari. —վնթփնթաց Պանտալէօնը, որը էմիլի յետևից երևաց դռան մօտ, թափ տուեց իր ճակատի վրայի մազերի փունջը, և անյայտացաւ նորից։

«Վատ բան է». մտածեց ինքն իրան Սանինը և գաղտնաբար նայեց Զեմմային։ Վերջինս, թուում էր, չը լսեց նրա վերջին խօսքերը։ «Է՜հ, բան չը կայ» մտածեց նա նորից։

Այդ եղանակով շարունակուեց գործնական

խօսակցութիւնը, համարեա, մինչև ճաշ։ Ֆրաու Լէնօրան վերջում բոլորովին ընկճուեց. քաղցրութեամբ մատը թափ տալով՝ սպառնում էր Սանին և խոստանում՝ վրէժխնդիր լինել նրանից դաւաճանութեան համար։ Երկար ու մանրամասնօրէն հարց ու փորձ էր անում նա նրա հայրենիքի, ծննդավայրի մասին. որովհետև դա էլ «շատ կարևոր էր»։ Պահանջում էր նոյնպէս, որ նա նկարագրէր իրա ամուսնութեան հանդէսը՝ թէ ինչպէս է կատարվում. նա ուսաց եկեղեցու ծէսով, և առաջուց արդէն հրճվում էր Զեմմայով՝ սպիտակ հագուստը հագին, ոսկէ թագը՝ գլխին։

—Չէ՞ որ իմ աղջիկը կատարեալ դեղեցկուհի է. ինչպէս թագուհի,—ասաց նա մայրական հպարտութեամբ,—ասենք՝ այդպիսի թագուհիները չը կան էլ աշխարհումս։

—Ուրիշ Զեմմա չը կայ աշխարհումս,—ձայնակցեց Սանինը։

—Այո, հէնց դրա համար էլ նա Զեմմա է։ (Յայտնի է, որ Զեմմա խօսքը իտալերէն նշանակում է թանգագին քար)։

Զեմման բռնեց ու սկսեց պաչպչորել մօրը... Թուում էր, որ նա այժմ միայն ազատ շունչ քաշեց և նրան վիշտ պատճառող ծանրութիւնը վերացաւ նրա հոգու վրայից։

Իսկ Սանինը, յանկարծ, իրան այնքան բաղդաւոր զգաց, այնպիսի մանկական ուրախութեամբ լցուեց նրա սիրտը, մտածելով՝ թէ ա-

հա իրականացան իր իղձերը, որոնց նա շատ վաղուց չէր ինչ անձնատուր էր լինում միևնոյն սենեակներում. նրա ամբողջ էությունը այն ատելության բերկրանք զգաց, որ նա իսկոյնևեթ զգաց կօնդիտերանոցը: Նա ցանկությունն զգաց անպատճառ, ինչ որ լինի, առևտուր անել առևտրասեղանի յետևում, ինչպէս որ մի քանի օր առաջ.... «Ես, ուզում էր ասել նա դրանով,— այժմ կատարեալ իրաւունք ունեմ այդ բանն անելու: Չէ որ այժմ. ես տանու մարդ եմ»: Եւ նա արդարև կանգնեց առևտրասեղանի մօտ ու սկսեց առևտուր անել. այսինքն վաճառեց ներս մտնող երկու աղջիկներին մի գրվանքայ կանֆեկտ, բայց կշռեց ու տուեց երկու ամբողջ գրվանքայ, ստանալով նրանցից մի այն կիսապինը:

Ճաշի ժամանակ նա պաշտօնապէս, իբրև վեսայու, նստել էր Ջեմմայի կողքին: Ֆրաու Լէնօրան շարունակում էր իր գործնական դիտողութիւնները: Էմիլը շուռ-շուռ ծիծաղում էր ու դիմում Սանինին՝ խնդրելով, որ իրան էլ հետը տանի Ռուսաստան: Վճռուեց, որ Սանինը կը գնայ երկու շաբաթից յետոյ: Միայն Պանտալէօնն էր մի քիչ մռայլ տեսք ցոյց տալիս և հէնց դրա համար էլ՝ ֆրաու Լէնօրան կշտամբեց նրան. «Եւ դեռ սեկունդանտ էր»: Պանտալէօնը խեթ-խեթ նայեց:

Ջեմման, համարեա, բոլոր ժամանակը լուռ էր, բայց երբէք նրա դէմքը այնքան գեղեցիկ ու պայծառ չէր եղել, ինչպէս այդ միջոցին: Ճաշից յետոյ՝ նա մի րոպէով կանչեց Սանինին պարտէզ գնալու և կանգնելով այն միևնոյն նստարանի մօտ, ուր երեք օր առաջ ջոկջոկուում էր բալերը, ասաց նրան.. Դիմիտրի, մի բարկանար ինձ վրայ, բայց ես ուզում եմ մի անգամ էլ յիշեցնել, որ դու չը պէտք է քեզ համարես կաշկանդուած....

Սանինը չը թողեց նրան խօսել...

Ջեմման թեքեց իր դէմքը:—Իսկ այն բանի համար, որի մասին յիշեց մայրիկը. յիշո՞ւմ ես մեր դաւանութիւնների տարբերութեան մասին, ահա....

Նա բռնեց նռնաքարէ փոքրիկ խաչը, որ կախուած էր իր պարանոցին՝ բարակ թելի վրայ, պինդ ձգեց, կարեց թելը ու տուեց նրան:

—Եթէ ես քոնն եմ. ուրեմն քո դաւանութիւնն էլ իմ դաւանութիւնն է:

Սանինի աչքերը դեռ ևս թաց էին, երբ նա Ջեմմայի հետ միասին տուն վերադարձաւ:

Երեկոյեան դէմ ամեն ինչ իր սովորական ընթացքն ստացաւ: Մինչև անգամ՝ տրեսսետէ էլ խաղացին:

XXXI

Սանինը հետևեալ օրը շատ վաղ զարթնեց քնից: Նա գանվում էր մարդկային երջանկու-

թեան ամենաբարձր աստիճանի վրայ. սակայն դա չէր նրա քունը խանգարում, այլ կենսական հարցը. ճակատագրական այն հարցը՝ թէ ինչպէս պէտք է վաճառէ իր կալուածքը, որքան կարելի է շուտ և որքան կարելի է շահաւէտօրէն. այդ էր նրա հանգստութիւնը վրդովեցնում։ Նրա գլխի մէջ իրար էին հանդիպում զանազան ծրագիրները, բայց դրանցից և ոչ մէկը դեռ ևս որոշուած, պարզուած չէր։ Նա դուրս եկաւ տնից, որպէսզի մի փոքր քամուն տայ իրան՝ թարմանայ։ Պատրաստի ծրագրով էր ուզում նա ներկայանալ Ջեմմային։

Սա ինչ մարդ է. բաւականին ծանրամարմին ու հաստատնեայ, սակայն, վայելչօրէն հագնուած, որ գնում է նրա առջևից, թեթև օրօրուելով ու կաղալով։ Որտե՞ղ է տեսել նա այդ ծոծրակը՝ երկար սպիտակահեր զանգուրներով, այդ գլուխը՝ կարծես, ուղղակի դրուած ուսերի վրայ, այդ փափուկ, ճարպոտ թիկունքը, այդ փքուած, կախ ընկած ձեռքերը։ Մ[illegible]թէ Պօլօզովն է. նրա վաղեմի պանսեօնական ընկերը, որին հինգ տարի է արդէն կորցրել է աչքից։ Սանինը հասաւ իր առջևից գնացող այդ մարդուն. շուռ եկաւ... Լայն, դեղնադէմ երեսը՝ փոքրիկ խոզանման աչքերը սպիտակ թերթերուքներով և ունքերով, կարճ, տափակ քիթը, խոշոր, կարծես, կպցրած շրթունքները. կոլոր, անմիրուք կզակը, և ամբողջ դէմքի այդ թթուած, ծոյլ ու անվըս-

տահ արտայայտութիւնը. այո, իսկ և իսկ. դա նա է՝ Իպպոլիտ Պօլօզովը։

«Չը լինի թէ դարձեալ իմ աստղն է գործում»,—անցաւ Սանինի մտքով։

— Պօլօզով։ Իպպոլիտ Սիդօրովիչ։ Այդ դո՞ւ ես։

Մարդը կանգ առաւ. վեր ուղղեց իր մանր աչքերը, մի փոքր սպասեց և ապա՝ վերջապէս, պոկելով իրարից շրթունքները, խոպոտ թերաձայնով հարցրեց.

—Դմիտրի Սանին։

—Նա հէնց ինքն է որ կայ,—բացականչեց Սանինը և սեղմեց Պօլօզովի ձեռքերից մէկը. նեղ ժոխտագոյն սեկէ ձեռնոցները հագին՝ նրանք առաջուայ նման անկենդան կախ էին ընկել նրա դուրս ընկած ազդրների կողքով։ — Վաղո՞ւց է այստեղ ես։ Ո՞րտեղից ես եկել։ Ո՞րտեղ ես իջևանել։

—Ես եկայ երէկ վիսբադենից կնոջս համար վաճառք անելու և այսօր էլ վերադառնում եմ այնտեղ,—պատասխանեց Պօլօզովը առանց շտապելու։

—Ա՜խ, հա։ Դու ամուսնացել ես արդէն, և այն էլ, ասում են, մի այնպիսի գեղեցկուհու վրայ։

Պօլօզովը աչքերը շեղեց դէպի մի ուրիշ կողմը։

—Այո, ասում են։

Սանինը ծիծաղեց։—Ինչպէս տեսնում եմ,

դու դարձեալ միևնոյնն ես մնացել... Ֆլեգմատիկ՝ ինչպէս որ պանսիօնումն էիր:

—Ինչո՞ւ պէտք է փոխուէի:

—Եւ ասում են, — աւելացրեց Սանինը, առանձնապէս շեշտելով «ասում են» խօսքը, — որ քո կինը շատ հարուստ է:

—Այդ էլ են ասում:

—Եւ, մանաւորապէս, քեզ, Իպպոլիտ Սիդօրիչ, մի՛թէ այդ յայտնի չէ:

—Ես, եղբայր, Դիմիտրի... Պաւլովիչ: Այո՛, Պաւլովիչ, կնոջս գործերին չեմ խառնվում:

—Ձե՛ս խառնվում: Եւ ո՛չ մի գործում:

Պօլօզովը դարձեալ շեղեց աչքերը.

—Ո՛չ մի, եղբայր: Նա՝ իրա համար... Ես էլ ինձ համար:

—Լաւ. այժմ դու ո՞ւր ես գնում, — հարցրեց Սանինը:

— Այժմ ոչ մի տեղ էլ չեմ գնում. կանգնել եմ փողոցի մէջ և զրուցում քեզ հետ, իսկ այ, երբ քեզանից բաժանուեմ՝ կը գնամ հիւրանոց՝ համարս ու կը նախաճաշեմ:

—Ինձ էլ ընկերացնել ուզում ես:

—Այսինքն՝ նախաճաշի՞ մասին ես ասում:

— Այո՛:

— Մնդրեմ. երկուսով ուտելը աւելի է ուրախալի:

—Դու, կարծեմ, շատախօս չե՛ս:

—Ձեմ կարծում:

—Դէ որ այդպէս է՝ շատ լաւ:

Պօլօզովը առաջ շարժուեց: Սանինը գնում էր նրա կողքից ու մտածում: — Պօլօզովի շրթունքները դարձեալ իրար կպան. նա խոխոռում էր ու քայլում անխօս: Սանինը մտածում էր՝ թէ ինչպէս էր յաջողուել այդ անճոռնի մարդուն գեղեցիկ և հարուստ կին ճանկել: Նա ինքը ո՛չ հարուստ է, ո՛չ անուանի, ո՛չ էլ խելօք. պանսիօնում յայտնի էր իբրև մի թոյլ ու բթամիտ տղայ, քնափ ու շատակեր, և ստացել էր «փսնքոտ» մականունը: Ո՛վ հրաշք:

«Բայց եթէ նրա կինը շատ հարուստ է, — մտում են թէ նա ինչ որ կապալառուի աղջիկ է, — եթէ այդպէս է. չի՛ գնի, արդեօք, իմ կալուածքը: Թէև Պօլօզովը ասում է, որ կնոջ և ոչ մի գործին չէ խառնվում ինքը, այնուամենայնիւ նրա այդ ասածներին այնքան էլ հաւատ չէ կարելի ընծայել: Մանաւանդ, որ ես կը նշանակեմ արժէքը ձեռնտու ու շահաւէտ: Ինչո՞ւ չը փորձել: Գուցէ այդ բոլորը իմ ատղն է անում... Վճռուած բան է. կը փորձեմ»:

Պօլօզովը Սանինին տարաւ Ֆրանկֆուրտի ամենալաւ հիւրանոցներից մէկը, որտեղ, ի հարկէ, վարձել էր արդէն լաւագոյն համարը: Սեղանների ու աթոռների վրայ կուտակուած էին կարասներ, արկղիկները, փաթեթներ... «Այս բոլոր գնուած իրերը Մարեա Նիկոլայէվնայի համար են» (այդպէս էին կանչում Իպպոլիտ Սիդօրիչի

կնոջը)։ Պօլօզովը նստեց աթոռի վրայ ու անքաց. «շոգ է հա», ու բաց արեց իր փողկապը։ Յետոյ գանգը տուեց և, կանչելով օբեր-կելներին, ճոխ նախաճաշ պատուիրեց։—«Իսկ ժամը մէկին, անպատճառ պատրաստ լինի կառքը։ Լսո՞ւմ էք. ուղիղ ժամը մէկին»։

Օբեր-կելները երկիւղածութեամբ գլուխ խոնարհեց և սարկաբար չքացաւ։

Պօլօզովը բաց արեց իր ժիլետի կոճակները։ Միայն այն բանից, որ նա վեր էր քաշում ունքերը, փուսքի պէս փչում ու կնճռոտում քիթը, կարելի էր նկատել արդէն, որ խօսելը նրա համար մեծ դժուարութիւն պէտք է լինի, և որ նա, ոչ առանց փոքր ի շատէ անհանգստութիւն զգալու, սպասում էր՝ թէ կը սոսկալի, արդեօք, Սանինը պատացնելու իրա լեզուն, թէ ինքը նեղութիւն յանձն կառնի մեն-մենակ զրոյց անելու։

Սանինը հասկացաւ ընկերոջ տրամադրութիւնը և այդ պատճառով էլ չը ծանրաբեռնեց նրան հարցերով, այլ բաւականացաւ միայն աչքենանհրաժեշտներով. իմացաւ, որ նա երկու տարի ծառայութեան մէջ էր եղել (Ուլաններում. ա՛յ թէ ինչու էր նա լաւ երևացել իր կարճ համազգեստով). երեք տարի առաջ ամուսնացել էր, և ահա երկրորդ տարին է արդէն, որ նա գանվում է արտասահմանում՝ իր կնոջ հետ միասին, որը ինչ որ մի բանից բժշկվում է վիբագնում», և այնտեղից էլ շուտով գնալու է Պարիզ։ Իր կողմից՝ Սանինն էլ քիչ էր խօսում իր անցեալ կեանքից, իր ծրագիրների մասին. նա ուղղակի դիմեց գլխաւոր խնդրին՝ այսինքն՝ խօսք բաց արեց իր կալուածքը ծախելու դիտաւորութեան մասին։

Պօլօզովը լուռ ականջ էր դնում նրան, մէկ-մէկ միայն հայեացքը ուղղելով դռանը, որտեղից պէտք է երևար նախաճաշը։ Նախաճաշը երևաց վերջապէս։ Օբեր-կելները, ուրիշ երկու սպասաւորների ուղեկցութեամբ, բերաւ մի քանի սկուտեղներ՝ արծաթէ խուփերով ծածկած։

—Այդ քո կալուածը Տ՛ուլայի նահանգումն է, հարցրեց Պօլօզովը, նստելով սեղանի մօտիկ և խրելով անձեռոցը շապկի օձիքը։

—Տ՛ուլայի։

—Եփրեմօվսկի գաւառում. ճանաչում եմ։

—Ճանաչո՞ւմ ես իմ Ալեքսէյէվկան,—հարցրեց Սանինը, նոյնպէս ճաշի նստելով։

—Ինչպէս չէ. ճանաչում եմ։—Պօլօզովը բերանը խրեց գեանասունկից պատրաստած ձուաձեղի պատառը։ Մարիա Նիկոլայէվնան՝ իմ կինը, նրա հարևանութեամբ ունի մի կալուած.., —Բաց արէք այդ շիշը, կելներ, բաւականին ընդարձակ տարածութիւն է, միայն թէ քո գիւղացիները անտառդ կոտորել են։ Ինչո՞ւ ես ծախում։

—Փո՛ղ է հարկաւոր, եղբայր։ Արժան կը

ծախէի։ Ա՛յ, եթէ դու առնէիր... Իսկապէս։

Պօլօզովը կուլ տուեց բաժակ դինին, սըրբուեց անձեռոցով ու նորից սկսեց որճալ դանդաղութեամբ և փսփսալով։

—Հը՛մ. — խօսեց նա վերջապէս... Կալուածներ ես չեմ առնում. գումարներ չունեմ։ Դէ՞սը դիր այդ իւղը։ Գուցէ կինս ուզենայ առնել։ Խօսիր նրա հետ։ Եթէ թանդ չուզես, նա, չի զանայ դրանից օգուտ քաղել... Սակայն ինչ տեսակ աւանակներն են եղել այդ գերմանացիները։ Ձեն կարողանում ձուկը եփել ինչպէս հարկն է։ Դրանից էլ հեշտ բան՝ ինչ կարող է լինել։ Եւ դեռ խօսում էլ են. «Ֆաուերլանդը, իբր թէ, սիացնել է հարկաւոր»։ Կեներ, վեր առէք այստեղից այս գարշելի բանը։

Մի թէ, իսկապէս, քո կինը ինքն է անձամբ անօրինութիւններ անում անտեսութեան վերաբերեալ,—հարցրեց Սանինը։

—Անձամբ։ Ա՛յ. ինչ եմ ասել. կատլետները լաւն են։ Խորհուրդ եմ տալիս։ Ես արդէն ասացի քեզ, Դմիտրի Պաւլովիչ, որ կնոջս ոչ մի գործին չեմ խառնվում, և այժմ միևնոյնը կըրկնում եմ նորից։

Պօլօզովը շարունակեց չփչփացնել բերանը։

—Հը՛մմ... բայց ինչպէս կարող եմ ես բանակցել նրա հետ, Իպպօլիտ Սիդօրիչ։

—Շատ հասարակ կերպով, Դմիտրի Պաւլովիչ։ Գնա Վիսբադէն։ Այստեղից հեռու չէ։

կեներ, անգլիական անանեխ չունէք։ Ո՞չ։ Անասուններ։ Միայն թէ՝ ժամանակ մի կորցրու։ Մենք վաղը չէ միւս օրը այստեղից գնալու ենք։ Թոյլ տուր լցնեմ քո բաժակը. անուշահամ գինի է, թթու բան չէ, հա։

—Պօլօզովի դէմքը գուարթացաւ ու կարմրեց. նա, ասենք, գուարթանում էր այն ժամանակ միայն, երբ ուտում էր... կամ խմում։

—Ճշմարիտ, ես չը գիտեմ՝ թէ ինչպէս անեմ այդ,—մտմտաց Սանինը։

—Ինչ մի առանձին շտապելու բան ունիս։

—Հէնց բանն էլ նրանումն է, որ շտապողական է։

—Եւ մեծ գումար է հարկաւոր։

—Մեծ։ Ես... Ինչպէս այդ ասեմ քեզ։ Ես պատրաստվում եմ...

Պօլօզովը սեղանի վրայ դրեց ձեռքի բաժակը, որը արդէն ժռտեցրել էր շրթունքներին։

—Ամուսնանամ,—արտասանեց նա խոպոտ, գարմանքից խոպոտացած՝ ձայնով և իր փքուած ձեռքերը դրեց փորի վրայ։—

Այդպէս շուտ։

—Այո... շուտ։

—Հարկաւոր Ռուսաստանուհի է, իհարկէ։

—Ո՛չ, Ռուսաստանուհուց չէ։

—Ուրեմն, ո՞րտեղ է։

—Այստեղ. Ֆրանկֆուրտում։

—Եւ ո՞վ է նա։

—Գերմանուհի, այսինքն, ռչ. Իտալուհի.

—Փո՞ղ ունի վերան։

—Առանց փողի է։

—Նշանակում է սերը սաստիկ ուժեղ է։

—Ի՞նչ ծիծաղելի ես դու։ Այո՛, ուժեղ է։

—Եւ դրա համար էլ քեզ փո՞ղ է հարկաւոր։

—Է՛, հա... հա՛, հա՛։

Պօլօզովը կուլ տուեց գինին, ողողեց բերանը և ձեռքերը լուացաւ, խնամքով սրբեց անձեռոցիկով, հանեց ու վառեց սիգարը։ Սանինը լուռ նայում էր նրան։—Միայն մի մեղադ կայ,—վնչացրեց, վերջապէս, Պօլօզովը՝ գլուխը դէպի յետ ձգելով ու ծուխը բարակ շերտով բաց թողնելով բերնից։—Գնա կնոջս մօտ. նա, եթէ ուզենայ՝ քեզ դուրս կը բերի այդ նեղութիւնից։

—Ա՛խր, ես ինչպէս տեսնեմ նրան՝ քո կնոջը։ Չէ՞ որ ասում ես թէ վաղը չէ, միւս օրը գնում էք։

Պօլօզովը փակեց աչքերը։

—Դիտե՛ս, քեզ ինչ կասեմ,—խօսեց նա, վերջապէս, շրթունքներով պատեցնելով սիգարը և հևալով,—շուտով գնա տուն, հագնուիր շատ ու արի այստեղ։ Ժամը մէկին ես ուղևորուելու եմ. կառքս ընդարձակ է և ես քեզ կը տանեմ ինձ հետ։ Այդպէս աւելի լաւ կը լինի։ Իսկ այժմ ես մի քիչ կը քնեմ։ Ես, եղբայր, հէնց որ ուտում եմ, պէտք է անպատճառ քնեմ։ Բնութիւնս այդպէս է պահանջում, և ես չեմ հակառակվում։ Դու էլ մի խանգարիլ ինձ։

Սանինը մտածեց, մտածեց ու յանկարծ՝ գլուխը վեր բարձրացրեց. նա վճռեց։

—Է՛, լաւ. համաձայն եմ, և շնորհակալ եմ քեզնից։ Մէկի կէսին այստեղ կը լինեմ և միասին կուղևորուենք Վիսբադէն։ Յուսով եմ՝ քո կինը չի բարկանայ...

Բայց Պօլօզովը խռմփացնում էր արդէն։ Փնթփնթաց միայն. մի խանգարիլ, ոտները դէս ու դէն շարժեց և քնեց երեխայի նման։

Սանինը մի անգամ էլ հայեացք ձգեց նրա ծանր մարմնի վրայ. նայեց նրա գլխին, պարանոցին, նրա վեր բարձրացրած, խնձորի պէս՝ կորկոր կզակին և, դուրս գալով հիւրանոցից, արագ քայլերով գնաց դէպի Ռօզելլիի կօնդիտերանոցը։ Հարկաւոր էր նախազգուշացնել Զեմմային։

XXXII

Նա գտաւ Զեմմային կօնդիտերանոցում՝ իր մօր հետ միասին. ֆրաու Լէնօրան, մէջքը կռացրած՝ փոքրիկ ծալովի փուտով չափում էր պատուհանների մէջ եղած տարածութիւնը։ Տեսնելով Սանինին՝ նա ուղղուեց և առանց շփոթուելու, ուրախացած՝ ողջունեց նրան։

—Իմ գլխում, երէկուայ ձեր ասած խօսքերի վրայ, սկսեց նա, շարունակ պատում է այն միտքը՝ թէ ինչպէս անենք, որպէսզի լաւա-

ցնենք մեր ժպտադիմը։ Ահա այստեղ ես մտածում եմ դնել երկու պահարան՝ ապակեայ դռակներով։ Այժմ, գիտէք, դա ընդունուած է, մօդա է։ Եւ ապա մէկ էլ...

— Սքանչելի է, սքանչելի է,—ընդհատեց Նըբան Սանինը,—այդ բոլորը պէտք է ի նկատի առնել... բայց այստեղ եկէք, տեսէք՝ թէ ինչ պիտի հաղորդեմ ձեզ։

Նա թեւանցուկ արեց Ֆրաու Լէնօրային ու Ջեմմային և տարաւ մի ւս սենեակը։ Ֆրաու Լէնօրան սկսեց անհանգստանալ և ֆուտը ձեռքից վայր ձգեց։ Ջեմման էլ քիչ մնաց, որ անհանգըստանար, բայց զննողաբար նայեց Սանինին ու հանգստացաւ։ Սանինի դէմքը, իրաւ է, մտահոգ էր, բայց և միևնոյն ժամանակ՝ արտայայտուում էր աշխուժութիւն ու վճռականութիւն։

Նա խնդրեց երկու կանանցը նստել, իսկ ինքը կանգնեց նրանց առջև և, ձեռքերը թափ տալով ու մազերը իրար խառնելով՝ յայտնեց նրանց բոլորը. իր հանդիպումը Պօլօզովի հետ, առաջիկայ ճանապարհորդութիւնը դէպի Վիսբադէն, կալուածքը ծախելու հնարաւորութիւնը։ — Երևակայեցէք իմ բաղդը,—բացականչեց նա վերջապէս,—գործը այնպիսի ընթացք ստացաւ, որ ես այլ ևս, գուցէ, կարիք էլ չունենամ Ռուսաստան գնալու։ Եւ հարսանիքն էլ մենք կարող ենք անել աւելի շուտ, քան ես կարծում էի։

— Ե՞րբ պէտք է գնաք։—Հարցրեց Ջեմման։

— Հէնց այսօր, մի ժամից յետոյ։ Իմ ընկերը արդէն վարձել է կառքը և ինձ էլ կը տանի իր հետ։

— Դուք մեզ կը գրէք, իհարկէ։

— Անշուշտ։ Հէնց որ կը խօսեմ այն տիկնոջ հետ, իսկոյն և եթ կը գրեմ։

— Այդ տիկինը, ասում էք, շատ է հարուստ,—հարցրեց գործնական ֆրաու Լէնօրան։

— Ձափից դուրս։ Նրա հայրը միլիոնատէր էր և իր ամբողջ հարստութիւնը թողեց նրան։

— Բոլորը միայն նրա՞ն։ Է՛, դա էլ ձեր բաղդից է։ Միայն թէ եղէք խոհեմ և հաստատակամ։ Զը հրապուրուէք։ Ես հասկանում եմ ձեր ցանկութիւնը՝ որքան կարելի է, շուտով Ջեմմայի ամուսինը դառնալ... Սակայն, ամեն բանից առաջ՝ զգուշութիւնը։ Մի մոռանաք, որ, որքան էլ դուք թանգ գնով ծախէք կալուածը, այնուամենայնիւ շատ քիչ բան կը միայ ձեզ եւ կուսիդ և ձեր զաւակների համար։

Ջեմման երեսը շուռ տուեց, իսկ Սանինը ձեռքերը նորից թափ տուեց։—Իմ զգուշութեան մասին դուք կարող էք հաւատացած լինել, ֆրաու Լէնօրա։ Բացի այդ. ես խօսմ առևտուրով չէի պարապելու։ Կասեմ նրան իսկական արժէքը. կը տայ՝ շատ լաւ, չի տալ՝ Աստուած նրա հետ։

— Դուք ծանօթ էք... նրա հետ՝ այդ տիկնոջ հետ,—հարցրեց Ջեմման։

—Երբէք չեմ տեսել նրան։

— Իսկ ե՞րբ կը վերադառնաք։

—Եթէ ոչնչով վերջանալու լինի մեր գործը, այն ժամանակ՝ վաղը չէ միւս օրը։ Իսկ եթէ համաձայնուի վերջ տալու՝ գուցէ, ստիպուած կը լինեմ այնտեղ մնալ աւելորդ մէկ կամ երկու օր էլ։ Յամենայն դէպս՝ բոպէ չեմ կորցնիլ։ Ջէ որ ես սիրտս թողնում եմ այստեղ։ Բայց և այնպէս՝ երկար խօսեցի ձեզ հետ, մինչդեռ գնալուցս առաջ՝ ես պէտք է դեռ տուն էլ վազեմ... Ձեռք տուէք ինձ, յաջողութիւն մաղթեցէք, Ֆրաու Լէնօրա. մեզանում՝ Ռուսաստանում միշտ այդպէս են անում։

—Ա՞ջը, թէ ձախը։

—Ձախը աւելի է մօտ սրտին։ Վաղը չէ միւս օրը կը ներկայանամ ձեզ «վահանով կամ վահանի վրայ»։

Սիրտս վկայում է, որ կը վերադառնամ յաղթող... Մնաք բարեաւ, իմ բարի, իմ սիրելիներ...

Նա գրկեց ու համբուրեց Ֆրաու Լէնօրային, իսկ Ջեմմային խնդրեց հետևել իրեն իր սենեակը գնալու մի բոպէով. որովհետև ուզում է մի շատ կարևոր բան յայտնել նրան։ Նա ուղղակի ցանկանում էր հրաժեշտ տալ նրան՝ առանց ուրիշների ներկայութեան։ Ֆրաու Լէնօրան հասկացաւ բանը ինչումն է, և չը հետաքրքրուեց իմանալու՝ թէ այդ ինչ կարևոր բան էր...

Սանինը երբէք դեռ չէր եղել Ջեմմայի սենեակում։

Սիրոյ ամբողջ հմայքը, ամբողջ նրա հուրը, հիացմունքը և անուշ սարսուռը յանկարծ բռընկուեցին նրա մէջ, ներս խուժեցին նրա հոգու խորքը՝ հէնց որ նա ոտքը ներս դրեց նուիրական շէմքով, գորովալի հայեացք ձգեց շուրջը, ընկաւ սիրելի աղջկայ ոտքերը և սեղմեց իր դէմքը նրա իրանին...

— Դու լո՞ւմ ես, հա— շշնջաց նա։ Շո՛ւտ կը վերադառնաս։

— Ես քոնն եմ... կը վերադառնամ, կրկնում էր Սանինը շնչասպառ լինելով։

Սպասելու եմ քեզ անհամբեր, իմ սիրելիս։

Դրանից մի քանի բոպէ յետոյ՝ Սանինը արդէն վագում էր փողոցով դէպի իր կացարանը։ Նա չը նկատեց էլ, որ իր յետևից՝ կօնդիտերանոցի դռնից դուրս պրծաւ ամբողջապէս զզգզուած Պանտալէօնը, և ինչ որ կանչում էր ու ցնցում. կարծես, վեր բարձրացրած իր ձեռքով սպառնում էր նրան։

Ուղիղ մէկից քառորդ ժամ պակաս Սանինը մտաւ Պօլօզովի մօտ։ Նրա հիւրանոցի գարպասի առջև կանգնած էր արդէն քառաձի կառքը։ Տեսնելով Սանինին՝ Պօլօզովը միայն ասաց.

«Հը՞, վճռեցի՞ր», և, գլխարկը գնելով գլխին, հագնելով շինելն ու կրկնակօշիկները, ականջները բամբակ խրելով, թէև դա ամառ ժամանակ էր, դուրս եկաւ փողոցը։ Կեչներները, նրա ցուցմունքի համաձայն, գնուած բոլոր բազմաթիւ իրերը հաւաքեցին կառքի ներսը, նստելու տեղերի վրայ էլ դարսեցին մեառաքսէ բարձերը, պայուսակները, կապոցները, ոաքերի տակ դրեցին մթերքների արկղը և կառապանատեղի վրայ էլ կապեցին մեծ պայուսակը։ Պօլօզովը վարձատրեց առատաձեռնութեամբ, և, թէև յետևից, բայց և այնպէս պատկառանքով օգնող ծառայի աջակցութեամբ՝ բարձրացաւ ու կրթկրթալով մտաւ կառքը, նստեց, մի լաւ դիտեց իր շուրջը եղած բոլոր իրերը, ընտրեց ու վառեց սիգարը, և ապա միայն մատով արեց Սանինին. «Դէ արի, դու էլ նստիր»։ Սանինը նստեց նրա կողքին։ Պօլօզովը կենների միջոցով հրամայեց պօստատարին կանոնաւոր կերպով քշել, եթէ ուզում է պարգև ստանալ։ Ձիերը սկսեցին դղրդալ, դռնակները թխկալով փակուեցին, ու կառքը դէպի առաջ սլացաւ։

XXXIII

Ֆրանկֆուրտից մինչև վիսբադէն այժմ երկաթուղով գնում են մի ժամից էլ պակաս ժամանակամիջոցում. այն ժամանակ էքստրապօստը

տեղ էր հասնում երեք ժամում։ Ձիանները ճանապարհին փոխում էին հինգ անգամ։ Պօլօզովը ոչ այն է ննջում էր, ոչ այն է՝ օրօրվում, սիգարը ատամներում բռնած, ու շատ քիչ էր խօսում, լուսամուտից դուրս չը նայեց ոչ մի անգամ. գեղանկար տեսարաններով չէր հետաքրքրքրվում և նոյն իսկ յայտնեց, որ «բնութիւնը՝ իր մահն է»։ Սանինն էլ էր լուռ, և նոյնպէս չէր հրճվում տեսարաններով. նա նրանցով զբաղուելու ժամանակ էլ չունէր, որովհետև ամբողջովին անձնատուր էր եղել իր խոհերին ու յիշողութիւններին։ Կայարաններում՝ Պօլօզովը կանոնաւոր կերպով վճարում էր փողը, նկատում էր ժամանակը ժամացոյցով և ըստ այնմ էլ՝ վարձատրում պօստատարներին քիչ կամ շատ՝ նայելով նրանց եռանդին։ Ճանապարհի կիսին նա հանեց ուտելեղէնների արկղից երկու նարինջ և, ընտրելով իրա համար լաւը, միւսը առաջարկեց Սանինին։ Սանինը ուշի ուշով նայեց իր ուղեկցին ու յանկարծ՝ ծիծաղեց։

—Ինչի՞ վրայ ես ծիծաղում։—հարցրեց նա աշխատելով իր կարճ, սպիտակ եղունգներով կլպել նարինջի կեղևը։

—Ի՞նչի վրայ։—կրկնեց Սանինը,—այս մեր՝ իմ ու քո ճանապարհորդութեան վրայ։

—Է՛, ինչ կայ որ,—նորից հարցրեց Պօլօզովը, նարինջի պատառներից մէկը խրելով բերանը։

—Ձափազանց տարօրինակ է ախը։ Երէկ ես, ճշմարիտն ասած, քո մասին այնքան քիչ էի մտածում, ինչքան որ չինացոց կայսրի մասին. այն ինչ այսօր ես քեզ հետ միասին գնում եմ ծախելու իմ կալուածքը քո կնոջը, որի մասին, նոյնպէս, ոչ մի հասկացողութիւն չունեմ։

—Աշխարհումս ամեն բան պատահում է,— պատասխանեց Պօլօզովը։ Միայն թէ աւելի երկար ապրիր՝ ամեն բան կը տեսնես։ Օրինակ. կարծդ ես դու երեւակայել ինձ օրդինարցիների թուում գնալիս։ Ես գնացել եմ. իսկ Մեծ Իշխան Միխայիլ Պաւլովիչը հրաման էր տալիս. «Սրարշաւ, սրարշաւ թող գնա այդ հասատամարմին կօրնեատը։ Սատակացրու արշաւը»։

Սանինը քորեց իր ականջի յետեւը։

—Աա՛ ինձ, խնդրեմ, Իպպօլիտ Սիդօրիչ, ինչ տեսակ մարդ է քո կինը։ Ի՞նչ բնաւորութեան տէր է նա։ Ախր դա ինձ համար շատ կարեւոր է իմանալ։

—Նրա համար հեշտ է հրամայելը՝ «սրարշաւ»—յանկարծ տաքանալով՝ շարունակեց Պօլօզովը, իսկ ինձ... ինձ համար ինչպիսի դրուքիւն է։ Ես էլ մտածեցի. վերցրէք ձեզ լինի ձեր տուած ատիճաններն ու էպօլետները. էհ, Աստուած նրանց հետ։ Հա... դու հարցնում էիր կնոջս մասին։ Ի՞նչպիսի մարդ է կինս։ Այնպիսի մարդ, ինչպէս՝ ամենքը։ Մատ նրա բերանը չը տանես՝ նա այդ բանը չէ սիրում։ Իսկ որ

գլխաւորն է, որքան կարելի է շատ խօսիր... որպէսզի ծիծաղելու համար որևէ նիւթ լինի։ Ո՛ս սիրոյ մասին պատմիր նրան, և այն էլ մի քիչ.. Գիտէս, աւելի զուարճալի կերպով։

—Ի՞նչպէս թէ զուարճալի։

—Հէնց այնպէս։ Չէ դու ասում էիր ինձ, որ սիրահարուած ես, ուզում ես ամուսնանալ։ Ահա հէնց այդ բանն էլ նկարագրիր նրա մօտ։

Սանինը նեղացաւ։—Ի՞նչ մի առանձին ծիծաղելու բան ես դու գտնում դրանում։

Պօլօզովը, պատասխանելու փոխարէն, միայն աչքերը սահեցրեց նրա վրայով։ Նարինջի հիւթը ցած էր ծորում նրա կզակից։

—Այդ քո կինն է քեզ Ֆրանկֆուրտ ուղարկել առևտուր անելու, — հարցրեց Սանինը, քիչ ժամանակ անցնելուց յետոյ։

—Նա ինքը։

—Ի՞նչ իրեր են դրանք։

—Յայտնի բան է, խաղալիկներ։

—Խաղալիկներ. մի՞թէ երեխաներ ունես։

Պօլօզովը նոյն իսկ մի փոքր յետ քաշուեց Սանինից.

—Ա՛յ քեզ բան։ Ի՞նչու համար պէտք է երեխաներ ունենամ։

—Կանացի կօլիֆիշէներ են... զուգաներ։ Տուալեաի վերաբերեալ...

—Մի՞թէ հասկացողութիւն ունիս այդ բաներում։

—Հասկանում եմ։

—Հաբա, ինչպէս էիր ասում թէ կնոջս գործերին չեմ խառնվում։

—Ուրիշ գործերին չեմ խառնվում։ Իսկ դա... ոչինչ։ Ջանձրոյթից կարելի է։ Մանաւանդ որ կինս հաւատում է իմ ճաշակին։ Բացի դրանից՝ ես առհասարակ անելում ճարպիկ եմ։

Պօլօզովը սկսում էր խօսել հևալով. երեւում էր, որ նա արդէն յոգնել էր։

—Իսկ շա՞տ է հարուստ քո կինը։

—Հարուստ լինելը՝ հարուստ է. միայն թէ՝ աւելի շատ իրա համար։

– Յամենայն դէպս, կարծում եմ, դու էլ չես կարող գանգատուել։

—Դրա համար էլ ես ամուսին եմ։ Ջէ, մի չօգտուէի էլ։ Ես էլ օգտակար մարդ եմ. ինձ հետ ապրելը շահաւէտ է նրա համար։ Ես յարմար եմ։

Պօլօզովը սրբեց դէմքը ֆուլեարով ու ծանր ուֆ արեց. «խնայիր,—ուզում էր ասել,—մի ստիպիր էլի խօսել։ Տեսնում ես ինչպէս դժուար է ինձ համար»։

Սանինը նրան հանգիստ թողեց և նորից խորասուզուեց մտածմունքների մէջ։

Այն հիւրանոցը՝ Վիսբադէնում, որի առջև կանգնեց կառքը, ուղղակի պալատի էր նման։ Ջանգակները անմիջապէս ղօղանջեցին նրա ներ-

սում. իրարանցում ընկաւ, վազվզեցին, սև ֆրակներով բարեհասիլ մարդիկ թռչկոտելով դուրս թափուեցին գլխաւոր մուտքի առաջ և ոսկեզօծուած շվեյցարը մի շարժումով բաց արեց կառքի դռնակները։

Ինչպէս յաղթութիւնից վերադարձող մի մարդ՝ տրիումֆատօր, ցած իջաւ Պօլօզովը կառքից և սկսեց վեր բարձրանալ գորգերով ծածկուած, անուշաբոյր սանդուղքներով։ Դէպի նա վազեց մի մարդ, նոյնպէս լաւ հագնուած, բայց ռուսական դէմքով. այդ նրա սենեկապանն էր։

Պօլօզովը նկատեց, որ այսուհետև միշտ նրան պէտք է վերցնի իր հետ. որովհետև նախորդ օրը Ֆրանկֆուրտում նրան՝ Պօլօզովին դիմերը թողել էին առանց տաք ջրի։ Սենեկապանը իր դէմքի վրայ սարսափ արտայայտեց, և շտապ, կռանալով՝ հանեց տիրոջ կրկնակօշիկները։

—Մարիա Նիկօլայէվնան տա՞նն է,—հարցրեց Պօլօզովը։

—Այ՛ո. տանն է։ Բարեհաճում են հագնուել։ Կոմսուհի Լաուենսկայայի մօտն են բարեհաճում ճաշելու։

—Հա՛։ Այդ... սպասիր. իրերը այնտեղ կառքի մէջն են, բոլորը հանիր ինքդ և ներս բեր։ Իսկ դու, Դմիտրի Պաւլովիչ, աւելացրեց Պօլօզովը, մի սենեակ վերցրու քեզ համար ու երեք քառորդ ժամից յետոյ էլ արի մեզ մօտ։ Կը ճաշենք միասին։

Պօլօզօվը սահկով անցաւ գնաց, իսկ Սանինը իր համար մի աւելի հասարակ սենեակ խնդրեց ու, փոքր ինչ հանգստանալուց յետոյ, հագուստը կարգի բերելով՝ գնաց այն ահագին լաւ կահաւորուած բնակարանը, ուր ապրում էր Նորին պայծառափայլութիւն (Durchlaucht) Իշխան Ֆօն Պօլօզօֆը:

Երբ ներս մտաւ նա, այդ «Իշխանը» բազմել էր հոյակապ Սալօնի մէջ տեղը դրուած թաւշեպատ շքեղ բազկաթոռի վրայ: Սանինի այդ ֆլեգմատիկ ընկերը արդէն վաննա էր ընդունել և դուգուել աթլասէ թանգագին խալաթով, գլխին դրել էր կարմրագոյն ֆէսը: Սանինը մօտեցաւ նրան և միաժամանակ կանգնած լուռ զննում էր: Պօլօզօվը անշարժ, ինչպէս կուռք, նստել էր իր տեղում, մինչև իսկ երեսն էլ չը դարձրեց նրա կողմը. նոյն իսկ ունքերը չը շարժեց, ձայն չը հանեց: Տեսարանը իսկապէս, որ փառահեղ էր: Մի երկու րոպէ աքանչացած նրանով, Սանինը ուզում էր խօսել, խախտել այդ սրբազան լռութիւնը, երբ, յանկարծ, հարևան սենեակի դուռը բացուեց և շէմքի վրայ երևաց մի երիտասարդ, գեղեցիկ կին, սպիտակ, սև ժանեակներով զարդարուած, մեծաքեղ հագուստով, ադամանդները հագցրած ձեռքերին ու պարանոցին: Մարիա Նիկօլայէվնա Պօլօզօվան էր նա: Նրա խիտ, շիկահեր մազերը, որ թափուել էին գլխի երկու կողմերից հիւսերով, դեռ ևս չէին հաւաքուած գլխի վրայ, կարգի չէին բերուած:

XXXIV

— Ա՛խ, ներեցէք, — խօսեց նա կիսաշփոթուած, կիսա-հեգնական ժպիտով, վայելենաբար բռնելով ձեռքով մի հիւսի ծայրը և Սանինի վրայ մղելով իր խոշոր գորշագոյն պայծառ աչքերը: — Ես չէի կարծում, որ դուք արդէն եկել էք:

— Սանին, Դմիտրի Պաւլովիչ, մանկութեանս ընկերը, հանդարտութեամբ արտասանեց Պօլօզօվը, առաջուայ պէս առանց շուռ գալու դէպի նա և առանց վեր կենալու իր նստած տեղից, բայց մատով ցոյց տալով նրան:

— Այո... գիտեմ... Դու արդէն ասել ես ինձ: Շատ ուրախ եմ ծանօթանալու: Սակայն ես ուզում էի խնդրել քեզ, Իպպոլիտ Սիդօրիչ... Իմ աղախինը այսօր մի տեսակ անհասկացող է դարձել...

— Մազիդ հաւաքեմ:

— Այո, այո, խնդրում եմ: Ներեցէք, կըրկնեց Մարիա Նիկօլայէվնան նախկին ժպիտով, դէմով արեց Սանինին և, արագութեամբ շուռ գալով՝ անյայտացաւ դրան յետևում, թողնելով իր յետևից թռուցիկ, բայց ներդաշնակ տպաւորութիւն իր չքնաղ պարանոցով, զարմանալի ուսերով, աքանչելի իրանով:

Պօլօզովը վեր կացաւ տեղից և, ծանրաքայլ օրօրուելով՝ դուրս գնաց միևնոյն դռնով։

Սանինը մի վայրկեան անգամ չէր կասկածում, որ իր ներկայութիւնը «Իշխան Պօլօզովի» սալօնում շատ լաւ յայտնի էր տանտիրուհուն. այդ ամբողջ ֆօրսը նրա համար էր միայն, որպէսզի ցոյց տար իր մազերը, որոնք, ճշմարիտ որ, լաւ էին։ Սանինը ներքուստ նոյն իսկ ուրախացաւ տ. Պօլօզովայի այդ վարմունքի համար. նշանակում է, եթէ նա կամեցաւ ինձ զարմացնել, փայլել իմ առջև, ոմի գիտէ. գուցէ, կալուածքի գնի վերաբերմամբ էլ զիջողութիւն անի։ Նրա սիրտը այն աստիճանին լիքն էր Զեմմայով, որ մնացեալ բոլոր կանայք այլ ևս ոչ մի նշանակութիւն չունէին նրա համար. նա հպարտ էր նշմարում նրանց, և այս անգամ էլ՝ միայն բաւականացաւ նրանով, որ մտածեց. «այո, ճըշմարիտ էին ասում ինձ. այս տիկինը ուրբ»։

Բայց եթէ նա այսպիսի բացառիկ հոգեկան դրութեան մէջ չը լինէր, հաւանօրէն, ուրիշ կերպ կասէր. Մարիա Նիկոլայէվնա Պօլօզովան՝ ծագումով Գօլըշկինա, շատ երևելի կին չէր։ Եւ ոչ էլ նա յայտնի գեղեցկուհի էր. նրանում նոյնիսկ բաւականին ակներև կերպով նկատւում էին նրա պլեբէյական՝ ռամկական ծագումի հետքերը։ Նրա ճակատը ցածր էր. քիթը մի քիչ մսալի ու վեր քաշուած. ոչ կաշուի նրբութեամբ, ոչ էլ ձեռքերի ու ոտքերի գեղեցկութեամբ նա

չէր կարող երբեք պարծենալ։ Բայց ի՞նչ նշանակութիւն ունեն այդ բոլորը. նրան հանդիպողը կանգ կառնէր ոչ թէ «գեղեցկութեան սրբութեան» առաջ,—ինչպէս Պուշկինն է ասում, այլ այն հզօր, ոչ այն է ռուսական, ոչ այն է գնչուական, հմայքի առաջ՝ ծաղկող կնոջ մարմնի.... այն էլ ոչ ակամայից կանգ կառնէր նա։

Սակայն Զեմմայի պատկերը պահպանում էր Սանինին այն եռեակ զրահների նման, որոնց մասին երգում են ոտանաւոր գրողները։

Տաւը բոպէից յետոյ Մարիա Նիկոլայէվնան յայտնուեց նորից իր ամուսնու ուղեկցութեամբ։ Նա մօտեցաւ Սանինին.... նրա քայլուածքը այնպէս հիանալի էր, որ ուրիշ յիմարներ, այն, ապէս հիանալի էր, որ ուրիշ յիմարներ, այն, աւաղ, հեռաւոր ժամանակներում, միայն այդ քայլուածքից արդէն խելքամաղ էին լինում։ «Այդ կինը երբ գալիս է դէպի քեզ, այնպէս է թւում թէ իր հետ բերում է քո հանդէպ նաև ամբողջ կեանքի բաղդաւորութիւնը», ասում էր յաճախ նրանցից մէկը։ Նա մօտեցաւ Սանինին և, ձեռքը մեկնելով նրան, խօսեց իր սիրալիր, մի փոքր զսպուած ձայնով ռուսերէն. «Դուք ինձ կը սպասէք այստեղ, այդպէս չէ՞։ Կը վերադառնամ շուտով»։

Սանինը գլուխ տուեց յարգանքով, իսկ Մարիա Նիկոլայէվնան արդէն անյայտանում էր մուտքի վարագոյրի յետևում և ծածկուելիս՝ մի անգամ էլ գլուխը դէպի յետ շուռ տուեց ուսի

վրայով ու նորից ժպտաց, ու դարձեալ թողեց իր յետևից նախկին ներդաշնակ տպաւորութիւնը։

Երբ նա ժպտում էր. ոչ թէ մէկ, և ոչ էլ երկու, այլ ամբողջ երեք հատ փոսիկներ էին գոյանում ամեն մի թուշի վրայ, իսկ նրա աչքերը ժպտում էին աւելի քան շրթունքները, քան նրա վարդագոյն, երկար, համեղ շրթունքները՝ երկու մանրիկ խալերով նրանց ձախ կողմում։

Պօլօզովը ներս ընկաւ սենեակը և նորից տեղաւորուեց իր բազկաթոռի վրայ։ Նա առաջուայ նման լուռ էր, բայց օտարոտի հեգնական ժպիտը ժամանակ առ ժամանակ ուռցնում էր նրա դժգոյն և արդէն կնճռոտած այտերը։ Պառաւած մարդու դէմքի էր նման նրա դէմքը, թէև նա ընդամենը երեք տարով էր միայն մեծ Սանինից։

Այն ճաշը, որով նա հիւրասիրում էր իր հիւրին, իհարկէ, կը գոհացնէր ամենախստապահանջ խորհրդագէտին նոյն իսկ, Սանինին, սակայն, նա թւաց անվերջ անտանելի։ Պօլօզովը ուտում էր դանդաղութեամբ, «զգացմունքով, հասկացողութեամբ, հանգստանալով», ուշադրութեամբ կռանալով առջևը դրած ափսէի վրայ, հոտոտելով, համարեա, ամեն մի կտորը. նախ՝ մի քիչ ոլոզում էր բերանը գինով և յետոյ արդէն՝ կուլ էր տալիս պատառը ու շրթունքները չփպացնում.... Իսկ տապակածից յետոյ, նա,

յանկարծ, սկսեց խօսել—և ինչի մասին։ Մերի-նոսների մասին, որոնցից մի ամբողջ հօտ ժառդիը էր բերել տալ, և այն էլ պատժում էր այնքան մանրամասնօրէն, այնպիսի քնքշութեամբ, գործածելով բոլոր վաղաքշական անուննները։ Մի գաւաթ եռացրած, տաք սուրճ խմելով (մի քանի անգամ էլ լալկանաբար՝ գըդռուած ձայնով յիշեցրեց կելներին, որ նախորդ օրը Ֆրանկֆուրտում իրան սուրճ տուեցին, բայց այնքան ցուրտ, ցուրտ՝ ինչպէս սառոյց), և կծելով հաւանեան սիգարի ծայրը իր դեղին, ծուռ-տիկ առամներով, սովորութեանը համաձայն՝ նիրհեց, ի մեծ ուրախութիւն Սանինի, որը սկսեց անլսելի քայլերով անց ու դարձ անել փոքուկ գորգի վրայից և երազել ապագայի մասին՝ թէ ինչպէս պէտք է ապրէ նա Ջեմմայի հետ միասին և ինչ տեղեկութեամբ կը վերադառնայ նրա մօտ։ Սակայն, Պօլօզովը, իր սեփական նկատողութեամբ՝ սովորականից առաջ զարթնեց, նա ընդամենը քնել էր մէկ ու կէս ժամ, և խմելով մի բաժակ զելտերի ջուր՝ սառուցով, մէկ էլ կլանելով մի ուժը գդալ քաղցրաւենիք, որը բերաւ տուեց նրան, ժուժ կանաչ գոյնի, իսկական «կիէվեան» բանկայ հագած՝ սենեկապանը, առանց որի, ինչպէս ինքն էր ասում, ապրել չէր կարող, յանկարծ՝ ուռած աչքերը ուղղեց Սանինի վրայ ու հարցրեց. չի ուզում, արդեօք, իր հետ «դուբաչկա» խաղալ։

Սանինը ուրախութեամբ համաձայնուեց. նա վախենում էր, որ մի գուցէ Պօլօզովը նորից սկսէր խօսել գառների, մաքինների, դմակների ու նրանց ճարպերի մասին։ Տանտէրն ու հիւրը՝ երկուսով անցան ընդունարանը, կէնները բերաւ խաղաթղթերը և խաղը սկսուեց, իհարկէ, ոչ փողով։

Այդ անմեղ զբաղմունքի ժամանակ՝ վրայ հասաւ Մարիա Նիկօլայէվնան, վերադառնալով կոմսուհի Լասունսկիի մօտից։

Նա բարձրաձայն ծիծաղեց, հէնց որ սենեակ մտնելով՝ տեսաւ խաղաթղթերն ու բաց արած թղթախաղի սեղանը։ Սանինը վեր թռաւ տեղից, բայց նա բացականչեց. «Նստեցէք, խաղացէք։ Ես այս րոպէին շորերս կը փոխեմ ու կը վերադառնամ ձեզ մօտ»։ Ու նորից անյայտացաւ նա, աղմուկ բարձրացնելով իր շորերով և գնալիս էլ ձեռնոցները ձեռքից դուրս քաշելով։

Նա, իրաւ որ, շատ շուտ վերադարձաւ։ Իր պճնազարդ շքեղ հագուստը նա փոխարինել էր մետաքսէ շուշանագոյն լայն բլուզի՝ բաց, կախ ընկած թևքերով. հաստ ոլորած ժապաւէնը գըրկել էր նրա իրանը։ Նա նստեց ամուսնու կողքին և, սպասելով մինչև որ ամուսինը տանուլ տուեց, ասաց նրան. «Դէհ, պը՛շկա, բաւական է («պըշկա» բառի վրայ Սանինը զարմանքով նայեց տիկնոջը, իսկ վերջինս ուրախ դէմքով ժըպտաց, հայեացքով պատասխանեց Սանինի հայեացքին և երևան հանեց իր թշերի վրայ իր բոլոր փոսիկները), բաւական է, ես արդէն տեսնում եմ, որ դու քնել ես ուզում. համբուրիր ձեռքս ու գնա, իսկ մենք, պ. Սանինի հետ, կը զրուցենք երկուսով»։

—Քնել չեմ ուզում,—պատասխանեց Պօլօզովը, ծանրութեամբ վեր կենալով բազկաթոռի վրայից,—բայց գնալը կը գնամ, և ձեռքդ էլ կը համբուրեմ։ Տիկինը ամուսնուն դէմ արեց իր ձեռքի ափը, շարունակելով, միևնոյն ժամանակ, նայել Սանինին ու ժպտալ։

Պօլօզովն էլ նայեց Սանինին և ապա՝ հեռացաւ սենեակից, առանց հրաժեշտ տալու։

—Դէհ, պատմեցէք, պատմեցէք,—աշխոյժով խօսեց Մարիա Նիկօլայէվնան, միաժամանակ դնելով իր երկու մերկ արմունկները սեղանի վրայ ու անհամբերութեամբ շփկացնելով մի ե-դունգով միւս ձեռքի եղունգը։—Ճշմարիտ է, որ դուք, ասում են, ամուսնանում էք։

Ասելով այդ խօսքերը, Մարիա Նիկօլայէվնան գլուխը մի փոքր դէպի կողք թեքեց, որպէսզի աւելի ուշի ուշով և աւելի խայթողաբար թափանցէ Սանինի աչքերի մէջ։

XXXV

Տիկին Պօլօզովայի համարձակ վարմունքը սկզբներում, հաւանօրէն, կը շփոթեցնէր Սանի-

նին,—թէև նա անփորձ չէր և արդէն բաւակա-
նին շփուել էր մարդկանց հետ, եթէ միայն, հէնց
այդ համարձակութեան ու ժեռմութեան մէջ,
նա դարձեալ չը նկատէը բարեդուշակ նշան իր
ձեռնարկութեան համար։ «Երես տանք այս հա-
րուստ տիրուհու կապրիզներին», վճռեց նա ինքն
իրան, և նոյնպէս անբռնազբօսիկ կերպով, ինչ-
պէս տիկինն էր նրան հարց տալիս, պատաս-
խանեց.—Այո. ես ամուսնանում եմ։

—Ո՞ւմ հետ. օտարուհո՞ւ։

—Այո։

—Նորո՞ց էք ծանօթացել նրա հետ։ Փրանկ-
ֆուրտում։

—Եւ ո՞վ է նա։ կարելի՞ է իմանալ։

—կարելի է։ Նա կօնդիտերի աղջիկ է։

Մարիա Նիկօլայէվնան աչքերը լայն բաց
արեց և ունքերը վեր քաշեց։

— Դա խօսք հրաշալի բան է,—արտասանեց
նա դանդաղօրէն. կատարեալ մի հրաշք է։ Ես
այնպէս էի կարծում՝ թէ ձեզ նման երիտասարդ-
ները այլ ևս աշխարհումս չեն պատահում։ կօն-
դիտերի աղջիկ։

—Ինչպէս տեսնում եմ, այդ ձեզ զարմաց-
նում է,—նկատեց ոչ առանց արժանապատուու-
թեան Սանինը։ Բայց նախ և առաջ՝ ես այդ
նախապաշարումները ամենևին չունեմ...

—Նախ եւ առաջ՝ այդ ինձ ամենևին չէ
զարմացնում, ընդհատեց նրան Մարիա Նիկո-

լայէվնան. նախապաշարումները ես նոյնպէս չու-
նեմ։ Ես ինքս էլ գիւղացու աղջիկ եմ։ Հ՞ը. ի՞նչ
էիք կարծում։ Ինձ զարմացնում է և ուրախաց-
նում այն, որ ահաւասիկ մարդը չէ վախենում
սիրել։ Ձէ՞, դուք նրան սիրում էք։

—Այո։

—Նա շատ սիրուն է։

Սանինը ուզում էր խուսափել այդ վերջին
հարցից... այնուամենայնիւ, նահանջել այլ ևս
անկարելի էր։

—Գիտէ՞ք, Մարիա Նիկօլայէվնա,—սկսեց
նա,—իւրաքանչիւր մարդու աչքում իր սիրածի
դէմքը ուրիշներից աւելի լաւ է թւում։ Բայց իմ
հարսնացուն, իսկապէս որ, գեղեցկուհի է։

—Իրա՞ւ էք ասում։ Ի՞նչ տեսակի. իտալա-
կան թէ՞ անտիքական։

—Այո. նրա դիմագծերը շատ կանոնաւոր են։

—Նկարը չո՞ւնէք ձեզ մօտ։

—Ո՛չ. (այդ ժամանակ լուսանկարչութեան
մասին խօսք անգամ չը կար։ Դագերրօտիպնե-
րը *) դեռ նոր-նոր սկսել էին տարածուել)։

—Ի՞նչպէս է նրա անունը։

—Նրա անունն է Զեմֆա։

—Իսկ ձե՞րը ինչպէս է։

—Դմիտրի։

—Հօր անունը։

---

*) Դագերեան լուսանկարները։

—Պաւլովիչ։

—Գիտէք ինչ,—շարունակեց Մարիա Նիկօլայէվնան, միևնոյն դանդաղ ձայնով,—դուք ինձ շատ դուր էք գալիս, Դմիտրի Պաւլովիչ։ Ինչպէս երևում է, լաւ մարդ էք։ Ինձ տուէք ձեր ձեռքը։ Լինենք բարեկամներ։

Նա պինդ սեղմեց Սանինի ձեռքը իր գեղեցիկ, սպիտակ, ուժեղ մատներով։ Նրա ձեռքը քիչ փոքր էր Սանինի ձեռքից, սակայն անհամեմատ աւելի էր տաք, կոկիկ, փափուկ ու կենսունակ։

—Միայն թէ, գիտէք ինչ է յղանում իմ մտքում։

—Ի՞նչ։

—Չէք բարկանայ։ Ո՛չ։ Նա, դուք ասում էք, ձեր հարսնացուն է։ Բայց մի՛թէ... մի՛թէ դա անպատճառ հարկաւոր էր։

Սանինը կնճռոտուեց։ — Ես ձեզ չեմ հասկանում, Մարիա Նիկօլայէվնա։

Մարիա Նիկօլայէվնան ցածրաձայն ծիծաղեց և, գլուխը թափ տալով, յետ ձգեց իր այտերի վրայ ընկնող մազերը։

—Սա, ուղղակի սքանչելի մարդ է,—արտասանեց նա ո՛չ այն է մտախոհ, ո՛չ այն է անուշադիր։—Ասպետ։ Դէ՛ եկէք ու այսուհետև հաւատացէք այն մարդկանց, որոնք ասում են՝ թէ իդէալիստները բոլորն էլ չքացել են։

Մարիա Նիկօլայէվնան ամբողջ ժամանակը

խօսում էր ռուսերէն. զարմանալի մաքուր, ուղղակի Մօսկվայի լեզուով՝ ժողովրդական, ոչ ազնուական ոճով։

—Դուք, երևի, ամէնն էք դաստիարակուել. աւանդապահ, աստուածավախ ընտանիքի մէջ,—հարցրեց նա Սանինին։—Ո՛ր նահանգիցն էք։

—Տուլայի։

—Հա. ուրեմն մենք աննդակիցներ ենք։ Իմ հայրը.... Չէ ձեզ յայտնի է՝ թէ ով էր իմ հայրը։

—Այո, յայտնի է։

—Նա Տուլայումն է ծնուել... Տուլայեցի էր։ Է՛ լաւ... (Այդ «լաւ» (хорошо) բառը Մարիա Նիկօլայէվնան դիտմամբ արդէն արտասանեց բոլորովին գիւղացիավարի ահա այսպէս. хершао)։ Թողնենք այդ. այժմ սկսենք գործը։

—Այսինքն... ինչպէս թէ սկսենք գործը։ Ի՞նչ էք ուզում ասել դրանով։

Մարիա Նիկօլայէվնան կկոցեց աչքերը։—Հաբա, դուք ինչո՞ւ համար էք այստեղ եկել (երբ նա կկոցում էր աչքերը՝ նրանց արտայայտութիւնը դառնում էր շատ սիրալիր ու մի քիչ էլ ծաղրական, իսկ երբ բաց էր անում իր ամբողջ մեծութեամբ՝ նրանց պայծառ, համարեա, սառն փայլի մէջ արտացոլում էր ինչ որ ոչ բարի... սպառնական բան։ Առանձին գեղեցկութիւն էին տալիս նրա աչքերին նրա ունքերը՝ թիւն էին տալիս նրա աչքերին նրա ունքերը՝ թիւն էին տալիս նրա աչքերին նրա ունքերը՝ թ

ձեր կալուածը։ Ձեզ փող է հարկաւոր ձեր ամուսնութեան համար։ Այդպէս չէ՞։

—Այո՛, հարկաւոր է։

—Եւ շա՞տ է հարկաւոր։

—Առ այժմ կարող եմ բաւականանալ մի քանի հազար ֆրանկով։ Ձեր ամուսինը իմ կալուածը ճանաչում է։ Կարող էք խորհուրդ անել նրա հետ. ես, գոնէ, թանգ գին չեմ նշանակի։

Մարիա Նիկօլայէվնան գլուխը օրօրեց այ ու ձախ։ *Նախ եւ առաջ*,—սկսեց նա առանձին շեշտով, մատների ծայրով խփելով Սանինի սիւրթիւկի թեզանիքին,—ես սովորութիւն չունեմ խորհրդակցելու ամուսնուս հետ, բացի միայն տուալէտի վերաբերեալ. այդ բանում նա՝ ամուսինս, շատ հմուտ է։ *Ու երկրորդ*. ինչո՞ւ էք ասում՝ թէ արժան գին կը նշանակէք։ Ես ամենևին չեմ ուզում օգուտ քաղել այն հանգամանքից, որ դուք այժմ սաստիկ սիրահարուած էք և պատրաստ էք ամեն տեսակ զոհողութիւններ անելու... Ո՛չ մի զոհաբերութիւն ձեզանից ես չեմ ընդունի։ Ի՞նչպէս։ Փոխանակ ձեզ խրախուսելու... Է՛, ինչպէս ասենք, որ աւելի լաւ դուրս գայ.—ձեր ազնիւ զգացմունքները, ինչ է, ես պիտի սկսեմ կլպլել ձեզ, ինչպէս լօրին։ Այդ իմ սովորութիւնից դուրս բան է։ Երբ դէպքը բերում է՝ ես մարդկանց չեմ խնայում, միայն թէ՝ ո՛չ այդ ձևով։

Սանինը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ նրան. ծիծաղո՞ւմ էր նա, արդեօք, իր վրայ, թէ՞ ասում է լուրջ կերպով։ Միայն թէ՝ մտածեց ինքն իրան. «Օ՛, քեզ հետ խօսելիս՝ հարկաւոր է միշտ ականջը սրած պահել»։

Ծառան ներս բերաւ ռուսական հեշտաեռը, թէյի սարք ու կարպը, սեր, սուխարիներ, և այլն, մեծ սկուտեղով։ Այդ բոլորը նա շարեց սեղանի վրայ՝ Սանինի և տ. Պօլօզովայի միջև, ու իսկոյն էլ հեռացաւ։

Տիկինը մի բաժակ թէյ լցրեց Սանինի համար։

—Ձէ՞ք խորշում, հարցրեց նա, շաքարը վերցնելով ու նրա բաժակը ձգելով մատներով... Մինչդեռ շաքարի ունելիքը ընկած էր հէնց այնտեղ։

—Ի՞նչպէս կարելի է... Այդպիսի գեղեցիկ ձեռքից...

Սանինը չկարողացաւ վերջացնել իր նախադասութիւնը. թէյը կուլ տալիս՝ կատիկը թռաւ և քիչ մնաց, որ խեղդուէր։ Իսկ տիրուհին ուշադրութեամբ ու պայծառացած դէմքով նայում էր նրա վրայ։

—Ես նրա համար չիշեցի իմ կալուածը էժան գնով վաճառելու մասին,—շարունակեց Սանինը. որովհետև դուք այժմ արտասահմանումն էք և ուստի ես, գոնէ, չեմ կարող ենթադրել, որ դուք ազատ գումար շատ կունենաք։ Վերջապէս, ես ինքս էլ գիտեմ եմ, որ կալուածի վա-

ճառումը... կամ գնելը այդպիսի պայմաններում մի տեսակ անբնական բան է և ես, իհարկէ, պէտք է ուշադրութեան առնեմ այդ հանգամանքը։

Սանինը սխալվում էր ու շփոթվում, իսկ Մարիա Նիկոլայէվնան կամաց թեք ընկաւ բազկաթոռի յենարանին, ձեռքերը խաչ արեց—ծալեց ու այդպէս շարունակ նայում էր նրա վրայ մխիթարական ուշադրութեամբ ու պարզ հայեացքով։

—Ոչինչ, խօսեցէք, խօսեցէք,—ասաց նա խնդրելով, կարծես թէ օգնութեան հասնելով նրան,—ես ձեզ լսում եմ. ինձ համար շատ հաճելի է ձեզ լսել, խօսեցէք խնդրեմ։

Սանինը սկսեց նկարագրել իր կալուածքը՝ թէ քանի դեսեատին է նա, որտեղ է գտնվում, ինչպիսի տնտեսական յարմարութիւններ ունի, և ինչ օգուտներ կարելի է սպասել նրանից.... յիշեց մինչև իսկ դաստակերտի դեղեցիկ տեղը, իսկ Մարիա Նիկոլայէվնան ամբողջ ժամանակը նայում էր ու նայում նրա վրայ՝ աւելի պայծառանալով, աւելի ուշի ուշով, և նրա շրթունքները հաղիւ հազ շարժվում էին առանց ժըպտալու. նա նրանց կռծոտում էր։ Վերջապէս Սանինը անյարմար դրութեան մէջ զգաց իրան. նա երկրորդ անգամ լռեց։

—Դմիտրի Պաւլովիչ, սկսեց Մարիա Նիկոլայէվնան և մտածմունքի մէջ ընկաւ.... Դմիտրի Պաւլովիչ, կրկնեց նա.... դիտէ՞ք ինչ. ես հաւատացած եմ, որ ձեր կալուածքը գնելը ինձ համար շատ շահաւէտ ձեռնարկութիւն է, և որ մենք կը հաշտուենք այդ հարցում, բայց դուք պէտք է տաք ինձ... երկու օր, այո, երկու օր ժամանակ մտածելու։ Դուք, խօսք, կարող էք երկու օրով բաժանուել ձեր հարսնացուից։ Աւելի չեմ պահի ձեզ այստեղ ձեր կամքի հակառակ, ազնիւ խօսք եմ տալիս։ Իսկ եթէ հէնց այժմ հարկաւոր է հինգ-վեց հազար ֆրանկ, մեծ բաւականութեամբ ես պատրաստ եմ առաջարկելու ձեզ այդ գումարը փոխարինաբար, յետոյ արդէն կը հաշուենք։

Սանինը վեր կացաւ տեղից.

—Ես պէտք է շնորհակալութիւնս յայտնեմ ձեզ, Մարիա Նիկոլայէվնա, ձեր սիրայօժար ու սիրալիր պատրաստակամութեան համար՝ ծառայութիւն մատուցանելու, համարեա, ձեզ բոլորովին անծանօթ մի մարդու.... Բայց եթէ ձեզ անպատճառ այդպէս է հաճելի, այն ժամանակ՝ ես կը գերադասեմ սպասել ձեր վճռին՝ իմ կալուածի վերաբերմամբ. կը ձեամ այստեղ երկու օր էլ։

—Այո, ինձ այդպէս է հաճելի, Դմիտրի Պաւլովիչ։ Իսկ ձեզ համար դա շատ ծանր կը լինի։ Շատ։ Ասացէք։

—Ես սիրում եմ իմ հարսնացուին, Մարիա Նիկոլայէվնա. նրանից անջատուելը այնքան էլ հեշտ չէ ինձ համար։

—Ա՜խ, ոսկէ մարդ էք եղել,—հառաչելով արտասանեց Մարիա Նիկօլայէվնան։ Խոստանում եմ շատ չը նեղացնել ձեզ։ Դուք ուզում էք գնալ։

—Ուշ է արդէն, —նկատեց Սանինը։

—Այո՛, հարկաւոր է, որ դուք հանգստանաք թէ ճանապարհի յոգնածութիւնից և թէ ամուսնուս հետ դուբաչկա խաղալու ձանձրոյթից։ Սացէք. դուք Իպպօլիտ Սիդօրիչի՝ ամուսնուս հետ լաւ ընկերներ էք։

—Մենք դաստիարակուել ենք մի պանսիօնում։

—Եւ նա հէնց այն ժամանակ էլ այսպէ՞ս էր։

—Ի՞նչպէս թէ «այսպէս», հարցրեց Սանինը։

Մարիա Նիկօլայէվնան յանկարծ ծիծաղեց, ու ծիծաղեց այնքան, որ դէմքը ամբողջապէս կարմրատակեց, թաշկինակը տարաւ բերնին, վեր կացաւ բազկաթոռի վրայից, և, օրօրուելով՝ յոգնածի պէս, մօտեցաւ Սանինին ու ձեռքը մեկնեց նրան։

Նա գլուխ տուեց և գնաց դէպի դուռը։

—Հաճեցէք էգուց աւելի վաղ գալ, լսո՞ւմ էք,—կանչեց տիկինը նրա յետևից։—Սանինը յետ նայեց սենեակից դուրս գնալիս և տեսաւ, որ նա դարձեալ նստել է նոյն բազկաթոռի վրայ և երկու ձեռքերը ձգել գլխի յետևը։ Բլուզի լայն թևերը սահել, ընկել էին, համարեա, ուղիղ մինչև ուսերը, և չէր կարելի չը խոստովանել, որ այդ ձեռքերի դիրքը, որ այդ ամբողջ կազմուածքը, կերպարանքը սքանչելի գեղեցիկ էր։

XXXVI

Ուշ, մինչև կէս գիշեր, լամպը վառւում էր Սանինի սենեակում։ Նա նստած սեղանի մօտ՝ նամակ էր գրում «իր Ջեմմային»։ Պատմեց նրբան ամեն բան. նկարագրեց Պօլոզովներին՝ մարդուն և կնոջը, բայց աւելի շատ, սակայն, նա խօսում էր իր զգացմունքների մասին, և վերջացրեց նամակը նրանով, որ ժամադրութիւն նշանակեց նրան երեք օրից յետո՛յ!!! (երեք բացականչութեան նշաններով)։ Առաւօտեան վաղ տարաւ այդ նամակը պօստատուն և այնտեղից էլ գնաց զբօսնելու կարգաւուղի այգին, ուր արդէն նուագում էր երաժշտութիւնը։ Դեռ ևս քիչ ժողովուրդ կար. մի քանի րոպէ նա կանգնեց այն զրուցատեղի առաջ, ուր տեղաւորուել էր նուագախումբը, լսեց «Ռօքերթ Դեավօլի»-ց պօլկային և, սուրճ խմելով՝ գնաց դէպի կողքի պուրակին և, սուրճ խմելով՝ գնաց դէպի կողքի առանձնացած ծառուղին, նստեց նստարանի վրայ ու մտածմունքի մէջ ընկաւ։

Հովանոցի կոթը բաւականին եռանդով և ամուր թխկթխկաց նրա ուսի վրայ։ Նա վեր թռաւ.... Նրա առաջ թեթև, բաց-կանաչագոյն բարձրահասակ, սպիտակ ուլէ գլխարկը գլխին, շվեդական ձեռնոցները ձեռքին, թարմ

ու վարդագոյն, ինչպէս ամառային առաւօտը, բայց դեռ ևս չը չքացած անխռով քնի քնքշութիւնը շարժուածքներում ու հայեացքների մէջ, կանգնել էր Մարիա Նիկօլայէվնան։

—Բարև ձեզ,— սկսեց նա։ —Այսօր ես ուղարկեցի ձեր յեւևից, բայց դուք արդէն դուրս էիք եկել։ Հէնց այս բոպէին ես խմեցի իմ երկրորդ բաժակը. գիտէք, ինձ այստեղ սոխլում են ջուր խմել։ Ասուած միայն գիտէ՝ թէ ինչու... Մի՛թէ, առողջ չեմ ես։ Եւ ահա. հարկադրուած պէտք է զբօսնեմ մի ամբողջ ժամ։ Կամենում էք իմ ուղեկիցը լինել։ Իսկ յետոյ էլ կը վերադառնանք և սուրճ կը խմենք։

—Ես արդէն խմել եմ, ասաց Սանինը ոտքի կանգնելով, բայց շատ ուրախ եմ զբօսնելու ձեզ հետ միասին։

—Դէ, ուրեմն, տուէք ինձ ձեր ձեռքը... Մի՛ վախենաք. ձեր հարսնացուն այստեղ չէ, չի տեսնի։

Սանինը հարկադրուած ժպտաց։ Նա տատանուելիս էր զգում իւրաքանչիւր անգամ, երբ Մարիա Նիկօլայէվնան ակնարկում էր Զեմմայի մասին։ Այնուամենայնիւ նա իսկոյն հնազանդօրէն խոնարհեց... Մարիա Նիկօլայէվնայի ձեռքը դանդաղ կերպով ու մեղմօրէն իջաւ նրա ձեռքի վրայից ու սահեց ներքև, կարծես հպուեց նրան։

—Գնանք ահա այս կողմով—ասաց նա Սանինին, բայց հովանոցը դնելով ուսի վրայ։ Ես այստեղի այդումն այնպէս եմ, ինչպէս իմ տանը. կը տանեմ ձեզ ամենալաւ տեղերով։ Գիտէք ինչ (այդ երկու խօսքը նա կրկնում էր յաճախ). այժմ ձեզ հետ չենք խօսի վաճառքի մասին. նախաճաշից յետոյ կը խօսենք ինչպէս հարկն է։ Աւելի լաւ է, դուք սկսէք պատմել ինձ ձեր մասին... որպէսզի ես իմանամ՝ թէ ում հետ գործ ունեմ։ Յետոյ արդէն, եթէ կամենում էք, ես էլ իմ մասին կը պատմեմ։ Համաձա՞յն էք։

—Բայց, Մարիա Նիկօլայէվնա, ի՞նչ մի առանձին հետաքրքրական բան կարող է լինել ձեզ համար...

Սպասեցէք, սպասեցէք։ Դուք չը հասկացաք ինձ։ Ես չեմ ուզում կօկէտութիւն անել ձեզ հետ։—Մարիա Նիկօլայէվնան ուսերը վեր քաշեց։—Հին արձանի նմանութեամբ հարսնացու ունի նա և ես իրա հետ կօկէտութիւն պէտք է անեմ։ Սակայն, դուք ապրանք ունէք, իսկ ես վաճառական եմ։ Եւ, ահա, ես կուզեմ իմանալ՝ թէ ինչպիսի ապրանք է ձեր ապրանքը։ Դէհ, ուրեմն ցոյց տուէք ինչպիսին է նա։ Ես ուզում եմ ճանաչել ոչ միայն այն ապրանքը, որը առնում եմ, այլ և նրան, որից առնում եմ՝ վաճառողին։ Դա իմ հայրիկի ընդունած կանոնն էր։ Ուրեմն, սկսեցէք... Դէ՛, գոնէ, ոչ մանկութիւնից, այ, օրինակ. վաղո՞ւց է որ դուք արտասահմանում էք։ Եւ որտեղ էիք մինչև այժմ։ Միայն, նուա՛ն էք։ Եւ որտեղ էիք մինչև այժմ։ Միայն,

հանդարտ գնացէք. շտապելու տեղ չունենք։

—Ես եկայ այստեղ Իտալիայից, որտեղ մնացի մի քանի ամիս։

—Դուք, ինչպէս երևում է, առանձին հակումն ունէք դէպի ամենը, ինչ որ Իտալական է։ Տարօրինակ է սակայն, որ դուք այնտեղ չը գտաք ձեր սրտի առարկան։ Սիրում էք զեղաբուհեստը, նկարները, թէ՛ աւելի շուտ՝ երաժշտութիւնը։

—Ես սիրում եմ արուհեստը... Սիրում եմ այն ամենը, ինչ որ գեղեցիկ է։

—Երաժշտութիւնն էլ։

—Երաժշտութիւնը նոյնպէս։

—Իսկ ես երաժշտութիւնը բոլորովին չեմ սիրում։ Ինձ դուր են գալիս միայն ռուսական երգերը. այն էլ գիւղում, գարնանը, պարի հետ, գիտէք... աքանչելի է։ Սակայն խօսքը իմ մասին չէ։ Պատմեցէք, պատմեցէք։

Մարիա Նիկոլայէվնան գնում էր և ամեն քայլափոխում հայեացքն ուղղում Սանինին։ Նա բարձրահասակ էր. դէմքը, համարեա, հաւասարվում էր Սանինի դէմքին։

Վերջինս սկսեց պատմել. սկզբում դժկամակութեամբ, անշնորք կերպով, բայց յետոյ լեզուն բացուեց, նոյն իսկ սկսեց շատախօսել։ Մարիա Նիկոլայէվնան ուշադրութեամբ լսում էր. մանաւանդ, որ նա ինքը այնքան սրտաբաց ու պարզախօս էր թւում, որ ուրիշներին էլ ա-

կամայ ստամադրում էր սրտաբաց լինելու։ Սանինը խօսում էր իր ճանապարհորդութիւնների մասին. Պետերբուրգում վարած կեանքի, իր երիտասարդութեան... Եթէ Մարիա Նիկոլայէվնան բարձր շրջանների կին լինէր, նրբաճաշակ ձևերով, նա երբէք չէր կարող այդչափ համարձականալ։ Սակայն նա հէնց ինքը իրան անուանում էր բարի մարդ, ոչ մի ձևականութիւններ չը սիրող, և այդպէս էլ ներկայացրեց իրան Սանինին։ Միևնոյն ժամանակ՝ այդ «բարի մարդը» գնում էր նրա հետ կողք-կողքի՝ կատուանման քայլուածքով, թեթևաշարժ, յենուելով նրան, նայելով նրա դէմքին. գնում էր երիտասարդ կնոջ կերպարանքով, որից այնպէս էր բուրում յուզող ու թմրեցնող, խաղաղ ու այրող գայթակղութիւնը, որով ընդունակ են կամազուրկ անել, սիրապետել մեզ նմաններին՝ մեղաւոր ու թոյլ տղամարդկանցս միայն, այն էլ մի քանի, ոչ թէ մաքուր, այլ որոշ խառնուրդից սերուած սլաւոնական տիպերը։

Սանինի զբօսանքը Մարիա Նիկոլայէվնայի հետ, Սանինի զրոյցը Մարիա Նիկոլայէվնայի հետ տևեց մի ժամ ու էլ աւելի։ Եւ ոչ մի անգամ էլ կանդ չառան նրանք. շարունակ գնում էին ու գնում այգու անվերջ ծառուղիների միջով՝ երբեմն բարձրանալով սարը ու գնալիս զուարճանալով տեսարանով, երբեմն էլ ծածկուելով անթափանցելի ստուերների մէջ, ու միշտ

էլ թևանցուկ արած։ Ժամանակ առ ժամանակ՝ Սանինը գայրոյթ էր զգում. չէ որ նա Զեմմայի հետ, իր սիրելի Զեմմայի հետ երբէք այդքան երկար չէր զբօսնել... Մինչդեռ այստեղ՝ այդ տիրուհին տիրապետել էր նրան բոլորովին։

—Չէ՞ք յոգնել,—քաներորդ անգամն էր արդէն հարցնում նրանից Սանինը։

—Ես երբէք չեմ յոգնում, պատասխանում էր նա։

Զբօսնողները նրանց շատ սակաւ էին պատահում. համարեա, ամենքն էլ նրան բարևում էին, ոմանք՝ յարգանքով, մի քանիսն էլ՝ ստրկական համակրութեամբ։ Դրանցից մէկին՝ մի շատ գեղեցիկ, ճոխ հագնուած բրիւնետին, նա դեռ ևս հեռուից բղաւեց, ամենալաւ ֆրանսերէնով՝ պարիզեան արտասանութեամբ. «Comte, vous Saver, il ne fout pos venir me voir—ni aujourdhui ni demain» *)։ Բրիւնետը անխօս հանեց գլխարկը և խոնարհ գլուխ տուեց։

—Ո՞վ է այդ մարդը,—հարցրեց Սանինը «հետաքրքրուելու» վատ սովորութիւնից դրդուած, որը, առհասարակ, յատուկ է բոլոր ռուսներին։

—Դա՛. մի ֆրանսիացի է, դրանցից այստեղ շատ են պտոյտ գալիս... Ինձ ևս հետամուտ են լինում, սիրաշահում։ Սակայն սուրճ խմելու ժամանակ է արդէն. վերադառնանք տուն, երեւի, քաղցեցած կը լինէք։ Իմ բարեպաշտը, երևի, աչքերը պատռում է այժմ։

«Բարեպաշտ։ Աչքերը պատռո՞ւմ է»—կրկնեց ինքն իրան Սանինը... «Եւ այնքան լաւ խօսում է ֆրանսերէն... Ինչ տարօրինակ կին է»։

Մարիա Նիկոլայէվնան չէր սխալւում։ Երբ նա Սանինի հետ միասին վերադարձան հիւրանոցը, «բարեպաշտը» կամ «պըշկան» նստած էր արդէն, իր անփոխարինելի ֆէսը գլխին դրած, պատրաստի սեղանի մօտ։

—Իսկ ես երկար սպասեցի քեզ,—բացականչեց նա, դէմքին թթու կերպարանք տալով։ Ուզում էի սուրճը խմել առանց քեզ։

—Բանը չը կայ, բան չը կայ,—ուրախ-ուրախ առարկեց Մարիա Նիկոլայէվնան։ Բարկութիւնդ գալո՞ս էր։ Դա շատ լաւ է քո առողջութեան համար, թէ չէ բոլորովին կը սառչես։ Ես ահա այստեղ բերայ մեր հիւրին։ Զանգը տուր շուտով։ Սուրճ տուէք խմելու, սուրճ, ամենալաւ սուրճը—սաքսոնական գաւաթներով, ձիւնափայլ սփռոցի վրայ դրած։

Նա վայր դրեց գլխարկը, ձեռնոցները, և ծափ տուեց։

Պօլօզովը նայեց նրան կողքից։

—Ի՞նչ է պատահել ձեզ, որ դուք այսօր այդպէս վազվզում էք, Մարիա Նիկոլայէվնա,—հարցրեց նա կիսաձայն։

*) Կոմս, գիտէք, հարկ չը կայ ինձ տեսնելու գալ ոչ այսօր և ոչ էլ վաղը։

—Է՛. այդ ձեր գործը չէ, Իպպօլիտ Սիդօրիչ: Զանգը տուր: Դմիտրի Պաւլովիչ, նստէք և երկրորդ անգամ սուրճ խմէք: Ա՛խ, որքան լաւ բան է հրաժանները տալ: Ուրիշ բաւականութիւն չը կայ աշխարհում:

—Եթէ կատարում են,—փնթփնթաց նորից ամուսինը:

—Իհարկէ, եթէ կատարում են: Դրա համար էլ ես ինձ ուրախ եմ զգում: Մանաւանդ, քեզ հետ: Ճշմարիտ չէ, պըշկա: Ահաւասիկ և սուրճը:

Ահագին մատուցարանի վրայ, որը ձեռքին բռնած ներս բերաւ կէլները, դրուած էր նոյնպէս թատրոնական աֆիշան: Մարիա Նիկոլայէվնան իսկոյն և եթ ձեռքը մեկնեց դէպի նա:

—Դրամա, բարկութեամբ արտասանեց նա,—գերմանական դրամա: Ասենք՝ դա աւելի լաւ է, քան գերմանական կոմէդիան: Հրամայեցէք վերցնել ինձ համար օթեակը՝ բենուարը, կամ ոչ... աւելի լաւ է Fremden-Loge, դիմեց նա կէլներին: Լսո՞ւմ էք. անպատճառ Fremden-Loge!

—Բայց եթէ Fremden-Loge-ն արդէն վերցրել է Նորին գերազանցութիւնը՝ քաղաքի դիրեկտօրը (Seine Excellenz der Herr Stadt-Director),—համարձակուեց յայտնել կէլները:

—Տուէք Նորին գերազանցութեանը տասը

տալերը, միայն թէ այդ լօժան լինի ինձ համար: Լսո՞ւմ էք:

Կէլները հրու հնազանդութեամբ և ախորութեամբ գլուխ տուեց:

—Դմիտրի Պաւլովիչ, կը գնա՞ք ինձ հետ թատրօն: Գերմանական դերասանները սարսափելի են, բայց, խօմ, դուք կը գա՞ք... Այո՛: Այո՛, ինչ սիրալիր էք դուք: Պըշկա, իսկ դու չե՞ս գնայ:

—Ինչպէս որ կը հրամայես,—խօսեց Պօլօզովը բերնին մօտեցրած գաւաթի մէջ:

—Գիտե՞ս ինչ. մնացի՛ր: Թատրոնում շարունակ քնում ես. մանաւանդ, որ գերմաներէն էլ լաւ չես հասկանում: Աւելի լաւ է, այ թէ ինչ արա՛. գլխի կառավարչի նամակի պատասխանը. յիշո՞ւմ ես, մեր չաղացի... գիւղացիների ցորենները աղալու մասին: Ասա՛ նրան, որ ես չեմ կամենում, չեմ կամենում և չեմ կամենում: Ահա քեզ զբաղմունք ամբողջ երեկոյի համար:

—Լսում եմ,—նկատեց Պօլօզովը:

—Դէ՛հ, ուրեմն, շատ գեղեցիկ: Դու իմ խելօքն ես: Իսկ այժմ, պարո՛ններ, հերիք է ինչքան խօսեցինք կառավարչի մասին, եկէք խօսենք մեր գլխաւոր գործի մասին: Ահա, հէնց որ կէլները կը հաւաքէ սեղանի վրայից, դուք մեզ ամեն բան կը պատմէք, Դմիտրի Պաւլովիչ, ձեր կալուածքի մասին՝ թէ ի՞նչպէս, ո՞ր բանը ինչ գնով կը ծախէք, որքան կանխավճար էք ուզում. մի խօսքով, բոլորը, բոլորը: (Վերջապէս մտա-

ծեց Սանինը, փառք Աստուծոյ)։ Դուք արդէն մի քանի բան պատմել էք ինձ. ձեր այգին, յիշում էք, հրաշալի կերպով նկարագրեցիք. հա, սըշկան այդ ժամանակ ներկայ չէր... Թող նա էլ լսէ, միշտ մի որ և է բան անպատճառ կը խոթէ լեզուով։ Ինձ համար շատ հաճելի է մտածել, որ ես կարող եմ օգնել ձեզ ամուսնանալու. չէ՞ ես արդէն խոստացայ, որ նախաճաշից յետոյ կը զբաղուեմ ձեզանով. խոստումս ես միշտ էլ կատարում եմ։ Ճշմարիտ չէ՞, Իպպոլիտ Սիդօրիչ։

Պօլօզովը սրբեց իր դէմքը ձեռքի ափով.

—Ինչ որ ճշմարիտ է՝ ճշմարիտ է. դուք ոչ ոքի չէք խաբում։

—Երբէք, և երբէք էլ ոչ ոքի չեմ խաբի։ Դէհ, Դմիտրի Պաւլովիչ, լուսաբանեցէք գործը, ինչպէս որ ասում ենք մենք մեր սենատում։

XXXVII

Սանինը սկսեց «լուսաբանել գործը». այսինքն՝ երկրորդ անգամ նկարագրել իր կալուածը, սակայն այլևս առանց շօշափելու նրա բնութեան գեղեցկութիւնները, և ժամանակ առ ժամանակ էլ հիմնուելով Պօլօզովի վրայ՝ իր առաջ բերած «փաստերն ու թւանշանները» հաստատելու համար։

Մինչդեռ Պօլօզովը միայն հը՛մմ էր անում

և գլուխը տրմբացնում, իսկ հաւանութիւն էր տալիս, արդեօք, թէ անհաւանութիւն, թւում է, ատաանան ինքն էլ չէր կարող հասկանալ։ Ասենք, Մարիա Նիկօլայէվնան, կարօտութիւն էլ չունէր նրա մասնակցութեանը։ Նա ինքը վարչական ու առևտրական այնպիսի ընդունակութիւններ էր ցոյց տալիս, որ միւսը միայն զարմանալ։ Տնտեսութեան ամբողջ տակն ու գլուխը, ամբողջ դաղտնիքը յայտնի էր նրան. ամեն բանի մասին կանօնաւոր հարց ու փորձ էր անում, ամեն բանի մէջ մտնում. նրա իւրաքանչիւր խօսքը հասնում էր ուղիղ իր նպատակին (կեսը ինչպէս ասում են, դնում էր ուղղակի Ի-ի վրայ), արտասանվում իր տեղին։ Սանինը այդ տեսակ հարցաքննութիւն չէր սպասում. նրա համար էլ նա չէր պատրաստուել։ Եւ այդ քննութիւնը տևեց ամբողջ մէկ ու կէս ժամ։ Սանինը այդչափ ժամանակամիջոցում կրում էր այն մեղադրեալի բոլոր զգացողութիւնները ու յուզմունքները, որը նստում է նեղ նստարանի վրայ խստապահանջ ու խորը ըմբռնող դատաւորի առջև։ «Այդ խօս հարցաքննութիւն է»—թախառնվում։ «Այդ խօս հարցաքննութիւն է»—թախառնվում։ Ծանրութեամբ շշնջում էր նա ինքն իրան։ Մարիա Նիկօլայէվնան ամբողջ ժամանակը ծիծաղում էր, կարծես, կատակ էր անում։ Սանինը դրանից ոչ մի թեթևութիւն սակայն չէր զգում, իսկ երբ «հարցաքննութեան» ընթացքում երևաց, որ Սանինը այնքան էլ պարզ չէ ըմբռնում «վերաբա-

ժանուքիւն» և ցանքս անել խօսքերի իմաստը, քըտինքը մինչև անգամ պատեց նրան։

—Դէ լաւ, վճռեց վերջապէս Մարիա Նիկօլայէվնան։ Ձեր կալուածքը այժմ ես ճանաչում եմ... ձեզանից ոչ վատ։ Իսկ ինչ գին էք նշանակում ամեն մի շունչի համար (այն ժամանակ կալուածների գները, ինչպէս յայտնի է, որոշվում էին շունչերի, այսինքն՝ մարդկանց քանակով)։

—Հա... ես կարծում եմ... հինգ հարիւր րուբլուց պակաս վերցնել անկարելի է,—դժուարութեամբ արտասանեց Սանինը։ (Մ՛ա, Պանտալէօն, Պանտալէօն, ձուր ես դու։ Ահա թէ երբ առիթ կունենայիր բացականչելու. Barbari)։

Մարիա Նեկօլայէվնան աչքերը վեր ուղղեց դէպի երկինք, կարծես, հաշվում լինէր իր մըտքում։

—Է՛, ինչ կայ որ,—խօսեց նա վերջապէս։ Այդ գինը, թւում է ինձ, որ թանգ չէ։ Սակայն ես արդէն ժամանակամիջոց եմ խնդրել երկու օր, և դուք պարտաւոր էք սպասել մինչև էգուց։ Կարծում եմ, կը հաշտուենք գնի մէջ և այն ժամանակ դուք կասէք՝ թէ որքան նախավճար էք պահանջում։ Իսկ այժմ basta cosi—կանխեց նա, նկատելով՝ որ Սանինը կամենում էր ինչ որ առարկութիւն անել։ Բաւական է որքան զբաղուեցինք անարգ մեատոդով... á demain les affaires։ Գիտէք ինչ. ես այժմ արձակում եմ ձեզ... (Նա նայեց էմալէ ժամացոյցիկին, որը խրել էր իր գօտկի տակը)... մինչև ժամի երեքը։ Չէ որ հանգստութիւն է հարկաւոր ձեզ։ Գնացէք ռուլէտ խաղացէք։

—Վատնգաւոր (ազարտնի) խաղեր ես չեմ խաղում,—նկատեց Սանինը։

—Ճշմարիտ էք ասում։ Դուք ուղղակի կատարելութիւն էք։ Ասենք, ես նոյնպէս չեմ խաղում։ Ցիմարութիւն էլ է փողերը քամուն տալ ակներև կերպով։ Բայց, գոնէ, գնացէք թղթախաղի դահլիճը, նայեցէք կերպարանքներին։ Պատահում են ծիծաղաշարժ դէմքեր։ Մի պառաւ կին կայ այնտեղ միրուքով և բեխերով. հրաշք բան է։ Մեր իշխանը այնտեղ մենակ է. նոյնպէս լաւն է։ Կազմուածքը՝ փառահեղ, քիթը՝ արծաթնման, իսկ երբ դնում է տալերը՝ ծածուկ խաչակնքում է ժիլետի տակից։ Կարդացէք թերթերը, զբօսնեցէք, մի խօսքով՝ արէք, ինչ որ կամենում էք... իսկ ժամը երեքին ես ձեզ սպասում եմ... de pied ferme։ Հարկաւոր կը լինի մի քիչ շուտ ճաշել։ Թատրօնը, այդ ծիծաղելի դերասանացինների մէջ, սկսվում է վեց և կէսին։ Նա մեկնեց ձեռքը։ Sans rancune, n'est-ce pas?

—Ի սէր Աստուծոյ, Մարիա Նիկօլայէվնա, ինչ բանի համար պէտք է զայրանամ ձեզ վրայ։

—Հէնց նրա համար, որ ձեզ ես տանջեցի։ Սպասեցէք. ես ձեզ դեռ այդպէս չեմ....—աւելացրեց նա ու աչքերը կկոցեց, և նրա բոլոր

փոսիկները միանգամից դուրս պրծան շառագունած այտերի վրայ։—Յուսալքիւն։

Սանինը գլուխ տուեց ու դուրս գնաց։ Ուրախ ծիծաղը իսկոյն լսուեց նրա յետևից, և այն հայելու մէջ, որի մօտից այդ րոպէին անցնում էր Սանինը, արտացոլաց հետևեալ տեսարանը. Մարիա Նիկօլայէվնան ձեռքերով խըրում էր աժուռնու գլխի փէսը նրա աչքերին, իսկ նա անզօր կերպով թրպրտում —պաշտպանվում էր երկու ձեռքերով։

XXXVIII

Ո՜հ, որքան խորը և ուրախ շունչ քաշեց Սանինը, հէնց որ մտաւ իր սենեակը։ Իսկապէս որ, Մարիա Նիկօլայէվնան ուղիղ նկատեց. նրան հանգստանալ էր պէտք, հանգստանալ այդ բոլոր նոր ծանօթութիւններից, ընդհարումներից, խօսակցութիւններից, այդ խեղդուկ թմբիրից, որը մտել էր նրա գլխի մէջ, նրա հոգու խորքը. այդ չը նախատեսուած, չակընկալուած մերձեցումից՝ մի կնոջ հետ, որն այնքան օտար էր իր համար։ Եւ ճըշտ էր այդ ամենը կատարվում։ Համարեա, երկրորդ օրը այն դէպքից յետոյ, երբ նա խոցաւ, որ Զեմմման սիրում է իրան. երբ ինքը դարձաւ նրա փեսացուն։ Դա, իսմ, կատարեալ սրբապղծութիւն է։ Հազար անգամ նա իր մըտքում ներումն խնդրեց իր մաքուր, անարատ աղունակից. թէև նա, իսկապէս ասած՝ ոչ մի բանում իրան մեղադրել չէր կարող։ Եթէ յոյս չունենար, որ շուտով բարեյաջող կերպով պիտի վերջացնէ այն գործը, որի համար Վիսբադէն էր եկել, նա, առանց յետ նայելու, այդտեղից դուրս կը գար և ուղղակի կը վերադառնար իր սիրելի Ֆրանկֆուրտը, այն թանգագին, իր համար այժմ արդէն հարազատ՝ տունը՝ նրա մօտ, իր սիրած աղջկայ ոտքերն ընկնելու.... բայց ինչ արած։ Հարկաւոր է բաժակը մինչև յատակը պարպել. հարկաւոր է հագնուել, գնալ ճաշել, իսկ այնտեղից էլ թատրօն.... գոնէ, էդուց էլ է նա իրան շուտ բաց թողնէր։

Մի բան ևս նրան շփոթեցնում էր ու զայրացնում. նա սիրով, խանդաղատանքով, ազնիւ հրճուանքով ժառանգում էր Զեմմայի մասին, այն ամուսնական կեանքի մասին, որը պէտք է վարէին նրանք միասին, այն բաղդաւորութեան մասին, որը սպասում էր նրան ապագայում, մինչև այդ տարօրինակ կինը, այդ տիկին Պոլօդեռ՝ այդ տարօրինակ կինը, այդ տիկին Պոլօդեռ՝ զօհան անդադար քաշ է գալիս.... ոչ. քաշ չէ գալիս, այլ ցցուել է.... ճիշտ հէնց այդպէս,—մի առանձին չարախնդութեամբ արտայայտեց Սանինը,—ցցուել է իր աչքերի առաջ. և նա չէ կարողանում ազատուել նրա պատկերից, չէ կարողանում չը լսել նրա ձայնը, չը յիշել նրա առածները, չէ կարողանում չը զգալ նոյն իսկ

այն առանձնայատուկ հոտը՝ նուրբը, թարմ ու սուր-թափանցիկ, ինչպէս դեղին շուշաններուն հոտը, որ գալիս է նրա հագուստի վրայից: Այդ ախրուհին ակնյայտնի կերպով յիմարացնում է նրան և, այսպէս թէ այնպէս, կատարել է տալիս իր կամքը.... ինչ նպատակով է անում այդ բոլորը և ինչ է պէտք նրան: Մի՞թէ լոկ միայն քմահաճոյք՝ երես առած, հարուստ ու հպիւ թէ ոչ անբարոյական մի կնոջ: Եւ այդ ամուսինը. ինչ տեսակ մարդ է նա: Ի՞նչպիսի յարաբերութիւններ ունի նրա հետ: Իսկ ինչու համար են խծկում այդ հարցերը նրա՝ Սանինի գլուխը, որը, իսկապէս ասած, ոչ մի գործ չունի՝ ոչ պ. Պօլօզովի հետ և ոչ էլ նրա կնոջ: Ինչո՞ւ չի կարողանում նա իրանից հեռու վանել այդ ձանձրացուցիչ պատկերը, նոյն իսկ այն միջոցին, երբ ամբողջ հոգով նա ձգտում է մի ուրիշին՝ դէպի աւելի լուսաւորն ու պայծառը, ինչպէս Աստուծոյ օրը: Ի՞նչպէս են համարձակվում այն, համարեա, աստուածային դիմագծերի արանքից ճեղքելով դուրս սողալ ղրանք: Եւ դեռ ղրանք ոչ միայն դուրս են սողում, այլ և ժպտում են յանդգնաբար: Այդ կապոյտ, գիշատիչ աչքերը, նրա թշերի վրայի այդ փոսիկները, այդ օդանըմանն ծամերը, և մի՞թէ, իսկապէս, այդ բոլորը կպել է իրան և նա իրանից թօթափելու նրանց ու դէնը ձգելու ոյժ չունի, չէ կարողանում:

Դաժարկ բան է, դաժարկ բան. հէնց

վաղն և եթ՝ այդ ամենը կը չքանայ անհետ... Սակայն, նա բաց կը թողնի՞ նրան էգուց:

Այ՛.... այդ բոլոր հարցերը Սանինը տալիս էր ինքն իրան, իսկ ժամանակը արդէն սկսում էր մօտենալ ժամը երեքին. նա հագաւ իր սև ֆրակը և, փոքր էլ զբօսնելով այգում՝ գնաց Պօլօզովների մօտ:

Նրանց ընդունարանում Սանինը տեսաւ նստած դեսպանուհեան քարտուղարին. ազգով՝ գերմանացի, երկար, երկար, շիկահեր, ձիւնանման պրօֆիլով և մազերը դէպի յետ սանրուած (այն ժամանակ դա նորութիւն էր) և... ոչ հրաշք, էլ ումը,—ֆօն-Դեօնհօֆին, այն միևնոյն օֆիցերին, որի հետ նա մենամարտել էր մի քանի օր առաջ: Ամենևին չէր սպասում նա թէ կարող է պատահել նրան հէնց այդտեղ և, ակամայից, շփոթուեց. այնուամենայնիւ, գլուխ տալով՝ ողջունեցին իրար:

—Դուք ծանօթ էք,—հարցրեց Մարիա Նիկօլայէվնան, որի հայեացքից չէր վրիպել Սանինի շփոթութիւնը:

—Այ՛.... ես արդէն պատիւ եմ ունեցել,—հանդարտօրէն ասաց ֆօն-Դեօնհօֆը և, գլուխը թեթև կերպով կռացնելով դէպի Մարիա Նիկօլայէվնան, աւելացրեց կիսաձայն, ժպտալով.—դա այն մարդն է... ձեր հայրենակիցը... ռուսը...

—Մի՞թէ. բացականչեց նա ևս կիսաձայն,

մատով սպառնաց և խոհյն էլ սկսեց հրաժեշտ տալ թէ նրան և թէ երկարահասակ քարտուղարին, որը, ինչպէս երևում էր բոլոր նշաններից, սաստիկ սիրահարուած էր նրա վրայ. որովհետև ամեն մի անգամ նրան նայելիս՝ լայն բաց էր անում բերանը։ Դեօնհօֆը անմիջապէս հեռացաւ գնաց սիրալիր հնազանդութեամբ, ինչպէս տանու բարեկամ, որը խօսքի կէսիցն էլ գլխի է ընկնում՝ թէ ինչ են պահանջում իրանից։ Քարտուղարը ուզում էր հակառակուել, բայց Մարիա Նիկոլայէվնան ճանապարհ դրեց նրան, առանց որև է ձևականութիւնների։

--Գնացէք ձեր արքայազնուհու մօտ, ասաց նա նրան (այդ ժամանակ վիսբադէնում ապրում էր մի ինչ որ պրինչիպեսսա դի-Մօնակո, որը զարմանալի եռանդով աշխատում էր վատ կօկօտուհու նմանուել). ինչ հարկ կայ նստել մի այնպիսի պղեղեյուհու՝ ռամկուհու մօտ, ինչպիսին ես եմ։

—Ի սէր Աստուծոյ, սիկին,—հաւատացնում էր չարաբաստիկ քարտուղարը,—բոլոր պրինչիպեսները աշխարհում....

Բայց Մարիա Նիկոլայէվնան անողոք էր. և քարտուղարը դուրս գնաց իր ժառերի սանրուածքով մխասին։

Մարիա Նիկոլայէվնան այդ օրը շատ լաւ էր զուգուել իր «աւանտաժ»-ի առիթով, ինչպէս ասում էին մեր տատերը։ —Նա հագել էր մեծաքէ վարդագոյն, գլեասէ ձևի, հագուստ à la Fontanges-ի թևերով և մի մի խոշոր ադամանդ էլ հագցրել ամեն մի ականջին։ Նրա աչքերը պսպղում էին ադամանդներից ոչ պակաս, և թուում էր, որ նա թէ լաւ տրամադրութեան մէջ էր, թէ զրգռուած։

Նա նստեցրեց Սանինին իր կողքին և սկսեց պատմել նրան Պարիզի մասին, ուր պատրաստվում էր գնալ մի քանի օրից յետոյ, և ասել՝ թէ ինչպէս գերմանացիները զզուեցրին իրան. որ նրանք չիմար են՝ երբ խելքներին զօռ են տալիս, և անտեղի խելօք՝ երբ չիմարանում են, ու մէկ էլ յանկարծ, ինչպէս ասում են, ուղղակի՝ à brule pourpoint—հարցրեց նրան. ճշմարիտ է, որ նա, քիչ առաջ այստեղ նստած օֆիցերի հետ, մօտ օրերս ժենտամարտել էր մի կնոջ պատճառով։

—Դուք այդ ո՞րտեղից իմացաք,—քրթմնջաց Սանինը զարմանալով։

—Լուրերով աշխարհս լի է, Դմիտրի Պաւլովիչ, բայց, ասենք, ես դիտեմ էլ, որ դուք իրաւացի էիք, հազար անգամ իրաւացի, և ձեզ պահում էիք իբրև ասպետ։ Ասացէք. այդ կինը ձեր հարսնացո՞ւն էր։

Սանինը թեթև կերպով կնճռոտեց ունքերը...

—Լաւ, էլ չեմ հարցնի, չեմ հարցնի,—շտապով խօսեց Մարիա Նիկոլայէվնան։—Դա ձեզ դուր չէ գալիս, ներեցէք ինձ, այլ ևս չեմ հարցնի, մի բարկանաք։

Պօլօզովը դուրս եկաւ հարևան սենեակից լրագրական թերթը ձեռքին։

—Ի՞նչ կայ. թէ արդէն ճաշը պատրաստ է։

—Ճաշը շուտով կը տան, բայց դու այստեղ նայիր. տես «Сѣверная Пчела»-յում ինչ կարդացի... Իշխան Գրօմօբօյը մեռել է։

Մարիա Նիկօլայէվնան գլուխը վեր բարձրացրեց։

—Հա. է, Աստուած ողորմի նրան։ Ամեն տարի, դարձաւ նա Սանկինին, փետրուարին, իմ ծննդեան օրը նա բոլոր սենեակները զարդարում էր կաժելեակներով։ Բայց հէնց մի այն դրա համար, ի հարկէ, չարժէ ապրել ձմեռը Պետերբուրգում։ Քանի՛ տարեկան կը լինէր. երևի, եօթանասունից ա՞նց, հարցրեց նա ամուսնուն։

—Անց էր։ Նրա թաղումը նկարագրում են լրագրում։ Ամբողջ կայսերական պալատանին ներկայ է եղել։ Ահա և Իշխան Կօվրիժկինի ո-տանաւորը այդ առիթով։

—Է՛, և շատ սքանչելի։

—Կո՞ւզես, կարդամ։ Իշխանը նրան անուանում է խորհրդի մարդ։

Չէ, չեմ ուզում։ Ի՞նչ խորհրդի մարդ էր նա. ուղղակի Տաւեանայ Իւրիէվնայի մարդն էր։ Գնանք ճաշելու։ Դմիտրի Պաւլօվիչ, ձեր ձեռքը։

Ճաշը, երեկուայ նման, զարմանալի լաւ էր ու ճոխ, և չափազանց աշխոյժ անցաւ. Մարիա Նիկօլայէվնան գիտէր պատմել... մի այնպիսի շնորք, որը հազուագիւտ է կնոջ մէջ, այն էլ

ռուս կնոջ մէջ։ Արտայայտութիւնների ընտրութեան մէջ նա քաշուել չը գիտէր. մանաւանդ, հարուածում էր իր հայրենակից կանանց։ Սանկինը յաճախ ստիպուած էր լինում ծիծաղել նրա այս կամ այն համարձակ, տեղին ասուած սուր խօսքի համար։ Ամենից շատ Մարիա Նիկօլայէվնան չէր կարողանում տանել կեղծ բարեպաշտութիւնը, ֆրազաները, շողոքորթութիւնը... Նա նրանց տեսնում էր, համարեա, ամեն տեղ։ Նա, կարծես, պարծենում էր ու աշխատում աւելի վառ գոյներով փայլել, պճնազարդուել այն ատոր միջավայրով, որտեղ սկսուել էր նրա կեանքը. հաղորդում էր բաւականին տարօրինակ անեկդոտներ իր ծնողների մասին, իր մանկութեան օրերի յիշողութիւններից. իրան անուանում էր կեղևից տրեխ պատրաստողի աղջիկ, որը սակայն ոչնչով պակաս չէ Նաատալիա Կիրիլլօվնա Նարիշկինայից։ Սանկինի համար ակներև դարձաւ, որ նա իր կեանքում շատ աւելի բաներ է կրել, քան նրա հասակակից կանանցից շատ շատերը։ Իսկ Պօլօզովը այդ միջոցին ուտում էր մատածուած, խմում էր ուշադրութեամբ, միայն մէկ-մէկ իր սպիտակագոյն, արտաքուստ կոյր երեսացող, բայց իրօք շատ լաւ տեսնող՝ աչքերի հայեացքը ուղղելով երբեմն կնոջը, երբեմն էլ Սանկինին։—Ի՞նչ խելօքն ես դու,— բացականչեց Մարիա Նիկօլայէվնան, դիմելով նրան,—ինչպէս լաւ կատարեցիր դու իմ յանձնարարութիւնները Փրանկֆուրտում։

Դրա համար կը համբուրէի ճակատդ, բայց դէ դու չես հետամտում այդ բանին։

—Չեմ հետամտում, — պատասխանեց Պօլոզովը, կարելով անհնասը դանակով։

Մարիա Նիկօլայէվնան նայեց նրա վրայ ու մատներով թխկթխկացրեց սեղանը։

—Ուրեմն մեր գրաղը լինում է,—խօսեց նա խորհրդաւոր կերպով։

—Լինում է։

—Շատ լաւ։ Դու տանուլ կը տաս։

Պօլոզովը կզակը դուրս ցցեց.

—Է՛, այս անգամ, որքան էլ որ դու վստահ լինես քեզ վրայ, Մարիա Նիկօլայէվնա, այնուամենայնիւ, ես կարծում եմ, որ դու ես տանուլ տալու։

—Ի՞նչի մասին է գրաղը։ Կարե՞լի է իմանալ,—հարցրեց Սանինը։

—Ո՛չ. չի կարելի այժմ,—պատասխանեց Մարիա Նիկօլայէվնան ու ծիծաղեց։

Ժպեց եօթը ժամը։ Կէնները յայտնեց, որ կառքը պատրաստ է։ Պօլոզովը ուղեկցեց կնոջը և անմիջապէս էլ յետ քաշուեց դէպի իր բազկաթոռը։

—Տես հա՛. չը մոռանաս գրել նամակը կառավարչին,—ասաց նրան Մարիա Նիկօլայէվնան նախասենեակից։

—Կը գրեմ, մի՛ անհանգստանար։ Ես ճշտապահ մարդ եմ։

XXXIX

1840 թ.ին Վիսբադենի թատրոնը վատ էր թէ իր արտաքինով և թէ իր դերասանական խմբով, ֆրազեօրական ու աննշան իր միջակութեամբ՝ աշխատելու կողմից և իր ունայն ռուտինայով, մտաշէնի անգամ բարձր չէր կանգնած այն մակերևոյթից, որը մինչև այժմ էլ կարելի է նօրմալ համարել գերմանական բոլոր թատրոնների համար, և որի կատարելատիպն էր ներկայացնում վերջին ժամանակներս կարլսրուէի խումբը՝ Պ. Դէվրիէնի «երևելի» ղեկավարութեամբ։ «Նորին պայծառափայլութեան տ. Ֆօն-Պօլոզովայի» համար վերցրած օթեակի յետևում (Ասածուն է յայտնի միայն՝ թէ ինչ հնարք գործ դրեց կէնները այդ օթեակը վերցնելու համար. խօսք՝ չէր կաշառել, իհարկէս, շոտդա—դիրեկտօրին),— այդ օթեակի յետևում կար մի փոքրիկ սենեակ՝ փոքրիկ դահլաւորակներով կահաւորուած. նախ քան այդտեղ մտնելը, Մարիա Նիկօլայէվնան խնդրեց Սանինին վեր քաշել փոքրիկ շիբմանները, որոնք բաժանում էին օթեակը թատրոնից։

—Չեմ ուզում, որ ինձ տեսնեն, ասաց նա—թէ չէ այս բոպէիս այստեղ կը խծկուեն։ Սանինին նստեցրեց իր կողքին՝ թիկունքով դէպի

դահլիճը, այնպէս, որ օթեակը դատարկ թւար։ Նուագախումբը նուագեց ուվերտիւրան՝ նախերգանքը «Ֆիգարօյի հարսանիքից»... Վարագոյրը բարձրացաւ. պիէսայի ներկայացումը սկսուեց։

Այն բազմաթիւ հնացած ստեղծագործուածքներից մէկն էր այդ պիէսան, որոնց մէջ, շատ բան կարդացած, բայց անշնորհք հեղինակները, ընտիր, սակայն մեռած լեզուով, ջանասիրութեամբ, սակայն անշնորհք կերպով, արտայայտում էին մի որևէ «խորիմաստ» կամ «հրատապ» միտք, իդէա. ներկայացնում էին, այսպէս ասած՝ տրագիքական կօնֆլիկտը և պատճառում ձանձրոյթ... ասիական, ինչպէս լինում է, ասիական խօլերան։ Մարիա Նիկօլայէվնան համբերութեամբ լսեց մինչև գործողութեան կէսը, բայց, երբ առաջին սիրեկանը, իմանալով իր սիրուհու դաւաճանութեան մասին (նա հագել էր շագանակագոյն բաճկոն «բուֆերով» և թաւշէ օձիքով, շերտաւոր ժիլետ՝ պերլամուտրէ կոճակներով, կանաչ անդրավարտիկ՝ լաքած կաշուից պաարաստած ներբանափակերով և սպիտակ գամշէ ձեռնոցները), սիրեկանը դէմ տալով երկու բռունցքները կրծքին և դուրս ցցելով արմունկները դէպի առաջ՝ օձնաց ուղղակի շան նման, Մարիա Նիկօլայէվնան այլ ևս չը կարողացաւ զսպել իրան։

—Ֆրանսիական վերջին դերասանը, ամենայետ ընկած՝ գաւառական աննշան քաղաքում

անգամ, աւելի բնական ու աւելի լաւ է խաղում, քան գերմանական ամենաառաջնակարգ հռչակաւորը, բարկութեամբ արտասանեց նա ու, վեր կենալով տեղից, գնաց նստեց յետևի սենեակում։

—Այստեղ եկէք, ասաց նա Սանինին, ձեռքով թըխթըխկացնելով գահաւորակը՝ իր կողքից։— Աւելի լաւ է զրուցենք։

Սանինը հնազանդուեց.

Մարիա Նիկօլայէվնան նայեց նրա վրայ.

—Է՛, դուք, ինչպէս տեսնում եմ, մեռաքսի պէս փափուկ էք։ Ձեր կնոջ համար հեշտ կը լինի ձեզ հետ վարուելը։ Այդ ծաղրածուն, շարունակեց նա, հովհարի ծայրով ցոյց տալով օռնացող դերասանին (նա կատարում էր սնային-ուսուցչի դերը), յիշեցրեց ինձ իմ մանկութիւնը. ես էլ էի սիրահարուել ուսուցչիս վրայ։ Դա իմ առաջին... ուչ. իմ երկրորդ պատիան էր։ Առաջին անգամ ես սիրահարուեցի Դօնեան վանքի սպասաւորի վրայ։ Տաճներկու տարեկան էի այն ժամանակ։ Նրան ես տեսնում էի միայն կիրակի օրերը։ Նա հագնում էր թաւշէ պատմուճան, օծում էր իրան օդելաւանով, բուրվառը ձեռքին՝ ամբոխի միջից ճեղքելով անցնելիս՝ ֆրանսերէն ասում էր տիկիններին. «պառդօն էակիւզէ», և երբեք աչքերը վեր չէր բարձրացնում, իսկ նրա արտահանումները՝ ահա թէ ինչպէս էին,— Մարիա Նիկօլայէվնան մեծ մատի եղունգով բաժանեց իր ճկոյթի ամբողջ կէս մասը

և ցույց տուեց Սանինին։ Իմ ուսուցչին կանչում էին monsieur Gaston։ Հարկաւոր է ասել ձեզ, որ նա սարսափելի գիտուն էր ու չափազանց խիստ մարդ՝ գուիցերացիներից, և նրանց նման էլ եռանդուռ դէմքով։ Բակենբարդները սև, ինչպէս կուպը, յունական պրօֆիլը և շրթունքները՝ ինչպէս երկաթից ձուլուած։ Ես վախենում էի նրանից։ Եւ իմ ամբողջ կեանքում միայն այդ մարդուց ես վախենում էի։ Նա եղբօրս դաստիարակն էր. եղբայրս յետոյ մեռաւ... Խեղդուեց ջրում։ Մի գնչուհի ինձ համար նախադուշակել է, որ ես էլ պէտք է մեռնեմ բռնի մահով։ Դա, իհարկէ, անհեթեթութիւն է։ Դրան ես չեմ հաւատում։ Երևակայեցէք ձեզ Իպպոլիտ Սիդօրիչին դաշոյնը ձեռքին...

—Կարելի է մեռնել ոչ դաշոյնից էլ,—նկատեց Սանինը։

—Դրանք դատարկ խօսքեր են։ Դուք սնահաւատ էք։ Ես՝ ամենևին։ Իսկ ինչ որ լինելու է՝ նա անխուսափելի է։ Monsieur Gaston-ը ապրում էր մեր տանը՝ իմ դլխավերևը։ Պատահում էր, որ երբ ես դարձնում էի դիշերը, լսում էի նրա քայլերի ձայնը. նա շատ ուշ էր պառկում քնելու և սիրաս մարում էր ակնածութիւնից.... թէ մի ուրիշ զգացմունքից։ Հայրս ինքը հազիւ զբաղէտ էր, բայց մեզ լաւ դաստիարակութիւն տուեց։ Դուք գիտէք, որ ես լատիներէն էլ եմ հասկանում։

—Դուք. լատիներէն։

—Այո. ես։ Ինձ սովորեցրեց Monsieur Gaston-ը։ Ես նրա հետ կարդացի Էնեէիդան։ Զանձրալի բան է, բայց նրա մէջ կան լաւ տեղեր։ Յիշում էք, երբ Դիդոնը Էնեէի հետ միասին, անտառում....

Այո, այո. յիշում եմ,—շտապելով ասաց Սանինը։ Նա ինքն էլ վաղուց ի վեր մոռացել էր ամբողջ լատիներէնը և Էնեէիդայի մասին էլ շատ թոյլ հասկացողութիւն ունէր։

Մարիա Նիկոլայեվնան նայեց նրա վրայ, իր սովորութեան համաձայն՝ մի քիչ կողքից ու ցածից վեր։—Սակայն, դուք միք կարծիլ թէ ես շատ ուսեալ եմ։ Ա՛խ, Աստուած իմ, ոչ. ես ուսեալ չեմ, և ոչ մի տաղանդ էլ չունեմ։ Գրել հազիւ եմ կարողանում.... Ճշմարիտ, բարձր ձայնով կարդալ մինչև անգամ չեմ կարող. ոչ դաշնամուրի վրայ նուագել, ոչ նկարել, ոչ կարել ոչինչ, ոչինչ։ Ահա թէ ես ինչպիսին եմ. այս եմ, ինչ որ կամ։

—Այս բոլորը ես պատմում եմ ձեզ,—շարունակեց նա,—նախ և առաջ՝ այն պատճառով, որպէսզի չը լսեմ այդ յիմարներին (նա ցոյց տուեց դէպի բեմը, որտեղ այդ միջոցին դերասանի փոխարէն օռնում էր դերասանուհին, նոյնպէս արժանկները դէպի առաջ ցուցադրելով), և երկրորդ՝ որ ես պարտական եմ ծանօթ ձեզ. երէկ դուք պատմեցիք ինձ ձեր մասին։

—Դուք հաճեցիք հարցնել իմ մասին, —նկատեց Սանինը։

Մարիա Նիկոլայեվնան յանկարծակի շուռ եկաւ դէպի նա։

—Իսկ, դուք, չէ՞ք կամենում միթէ իմանալ՝ թէ իսկապէս, ինչպիսի կին եմ ես։ Ասենք՝ չեմ էլ զարմանում,—աւելացրեց նա, դարձեալ յենուելով դահաւորակի բարձերին։ — Մարդը պատրաստւում է ամուսնանալ, այն էլ սիրուց դրդուած ու մենամարտից յետոյ.... Աւաղ, ուրտեղից պէտք է ժամանակ ունենար նա որևէ ուրիշ բանի մասին մտածելու։

Մարիա Նիկոլայեվնան մտածմունքի մէջ ընկաւ և սկսեց կռծոտել հովհարի կոթը իր խոշոր, բայց հաւասարաչափ ու կամնանման սպիտակ ատամներով։

Իսկ Սանինին թւում էր, որ իր դլխում նորից է սկսում տիրել այն խեղդուկ թմբիրը, որից նա արդէն երկրորդ օրն էր չէր կարողանում բաժանուել։

Ծօսակցութիւնը նրա ու Մարիա Նիկոլաեվնայի միջև տեղի էր ունենում կիսաձայն, համարեա շշնջիւնով, և այդ հանգամանքը նրան աւելի ևս զայրացնում էր ու յուզում, նրա....

Երբ պէտք է վերջանայ այս բոլորը, մտածում էր Սանինը։

Թոյլ մարդիկ երբէք իրանք չեն վերջ տալիս, այլ շարունակ սպասում են վախճանին։

Բեմի վրայ մէկը փուշտում էր. հեղինակը այդ փուշտոցը մտցրել էր իր պիեսայի մէջ, իբրև «կոմիքական վայրկեան» կամ «տարր». ուրիշ կոմիքական տարր նրանում, իհարկէ, այլ ևս չը կար, և հանդիսատեսներն էլ բաւականութիւն էին զգում այդ վայրկեանից ու ծիծաղում։

Սանինին զայրացնում էր այդ ծիծաղը նոյնպէս։ Րոպէներ կային, երբ նա ինքն էլ ուղղակի չը դիտէր՝ զայրանում է թէ ուրախանում, ձանձրանո՞ւմ է թէ զուարճանում։

Ո՜հ, եթէ Ջեմման տեսնէր նրան։

—Ճշմարիտ, շատ տարօրինակ է. մարդը յայտնում է ձեզ, և այն էլ այնպիսի հանգիստ ձայնով. «Ես, ուզում է ասել, մտադիր եմ ամուսնանալ», —մինչդեռ ոչ ոք չի ասի ձեզ հանդիստ կերպով՝ թէ «Ես մտադիր եմ ջուրն ընկնել»։ Իսկ ինչ տարբերութիւն կայ դրանց մէջ։ Տարօրինակ է, ճշմարիտ։

Բարկութիւնը տիրեց Սանինին։

—Տարբերութիւնը շատ մեծ է, Մարիա Նիկոլայեվնա։ Մէկին ջուրն ընկնողը ամենևին սարսափելի չէ թւում. որովհետև նա կարողանում է լողալ, և բացի դրանից.... ինչ վերաբերում է ամուսնութիւնների տարօրինակութիւններին.... արդ՝ երբ բանը այդտեղ հասաւ...

Նա յանկարծ լռեց և լեզուն կծեց։

Մարիա Նիկոլայէվնան հովհարով խփեց իր բուռին։

—Վերջացրէք, Դմիտրի Պաւլովիչ։ Ասացէք այն, ինչ որ ուզում էիք ասել։ Իսկ ես գիտեմ ինչ էիք ուզում ասել. «Արդ՝ երբ բանը այդտեղը հասաւ, ողորմած տիրուհի, Մարիա Նիկոլայէվնա-Պօլօզովա,—կամենում էիք ասել,—ձեր ամուսնութիւնից աւելի տարօրինակ ամուսնութիւն անկարելի է երևակայել.... Ախր, ես ձեր ամուսնուն շատ լաւ ճանաչում եմ դեռ մանկութեան օրերից»։—Ահա թէ ինչ էիք դուք ուզում ասել, դուք՝ որ կարողանում էք լողալ։

—Թոյլ տուէք, խնդրեմ,—ուզում էր սկսել Սանինը....

—Մի՛թէ ճշմարիտ չէ ասածս։ Մի՛թէ ճշմարիտ չէ,—թախանձանքով արտասանեց Մարիա Նիկոլայէվնան։—Դէ, նայեցէք իմ երեսին ու ասացէք, որ ես ճշմարիտ չասացի։

Սանինը չէր իմանում՝ թէ որտեղ թագցնէր իր աչքերը։

—Է՛, համեցէք ուրեմն. ճշմարիտ է, եթէ դուք անպատճառ արդէն պահանջում էք ասել,—խօսեց նա վերջապէս։

Մարիա Նիկոլայէվնան շարժեց գլուխը։

—Այդպէս.... այդպէս։ Լաւ, բայց ինքներդ ձեզ հարց տո՛ւէք, արդեօք, դուք՝ որ կարողանում էք լողալ, թէ ի՞նչպիսի պատճառ կարող է ունենալ, մի այդպիսի տարօրինակ.... վարմունք

իրան թոյլ տալու համար, մի կին, որը աղքատ չէ.... ոչ էլ յիմար.... և տգեղ էլ չէ.... գուցէ, այդ ձեզ չէ հետաքրքրում. սակայն, մի՛ւնոյնն է։ Պատճառը կասեմ ձեզ ո՛չ այժմ, այլ քիչ յետոյ, հէնց որ կը վերջանայ անտրակտը։ Ես շարունակ անհանգստանում եմ՝ թէ մի գուցէ որևէ մէկը ներս մտնի։

Մարիա Նիկոլայէվնան հազիւ էր արտասանել այդ վերջին խօսքը, երբ դրսևի դուռը, արդարև, բացուեց կիսով չափ ու օթեակը ներս խծկուեց մի կարմիր գլուխ, քրտինքից իւղոտած, դեռ ևս երիտասարդ, բայց արդէն՝ անատամ, տափակ երկար մազերով, կախ ընկած քթով, մեծ ականջներով՝ ինչպէս չղջիկներինը, ոսկէ շրջանակներով ակնոցները հետաքրքիր ու բութ փոքրիկ աչքերին դրած, իսկ ակնոցների վրայ էլ՝ pince-nez։ Այդ գլուխը զննողաբար այս ու այն կողմ նայեց. տեսաւ Մարիա Նիկոլայէվնային, տգեղ կերպով ժպտաց, գլուխ տուեց.... Ղողտ պարանոցը մեկնուեց նրա յետևից....

Մարիա Նիկոլայէվնան թաշկինակը թափ տուեց նրա վրայ.

—Ես տանը չեմ՝ ich bin nicht zu Hause Herr P...! ich bin nicht zu Hause.... Բ2222... Ք222։

Գլուխը զարմացաւ, բռնազբօսիկ կերպով ծիծաղեց, խօսեց հեծկլտոցով, խփխփալով.. մի տեսակ Լիսաի նմանողութեամբ, որի ոտների

տակ մի ժամանակ սողում էին. Sehr gut! Sehr gut!,—ու դարձեալ աներևութացաւ։

—Այդ ինչ անձնաւորութիւն է,—հարցրեց Սանինը։

—Դա վիսբադէնի քննադատն է։ «Լիտեբատ» կամ լօն-լակէյ, ինչպէս կամենաք։ Նրան վարձել է այստեղի կապալառուն, և դրա համար էլ պարտաւոր է ամեն ինչ գովել և ամեն բանով զմայլուել, իսկ ինքը ամբողջովին լցուած է գարշելի մաղձով, որը, սակայն, արտայայտել նոյն իսկ չէ համարձակվում։ Ես վախենում եմ. նա սարսափելի բամբասասէր մարդ է, այս րոպէին կը վազի պատմելու, որ ես թատրոնումն եմ։ Ի՜հ, միևնոյն է։

Նուագախումբը նուագեց վայլս, վարագոյրը վեր բարձրացաւ կրկին....

Բեմի վրայ վերսկսուեց կոտրտուելն ու թնկթնկոցը։

—Հաբա՛, —սկսեց Մարիա Նիկոլայէվնան, դարձեալ նստելով գահաւորակի վրայ,—որովհետև դուք ընկել էք ու պէտք է նստէք ինձ հետ միասին, փոխանակ ձեր հարևանացուի մերձաւորութեամբ զուարճանալու... աչքերդ մի՛ ոլորի, և մի՛ք բարկանայ։ ես ձեզ հասկանում եմ ու արդէն խոստացայ, որ կարձակեմ ձեզ գնալու, ուր որ կամենաք։ Իսկ այժմ լսեցէք իմ խոստովանութիւնը։ Ուզո՞ւմ էք իմանալ՝ թէ ի՞նչն եմ ես սիրում ամենից աւելի։

—Ազատութիւնը,—նրա փոխարէն ասաց Սանինը։

Մարիա Նիկոլայէվնան ձեռքը դրեց նրա ձեռքի վրայ։

—Այո՛, Դմիտրի Պաւլովիչ,—ասաց նա ցած ձայնով, և այդ ձայնը հնչեց մի ինչ որ առանձին զգացմունքով, անկասկած անկեղծութեամբ և կարևորութեամբ,—ազատութիւնը ամենից աւելի, ամենից առաջ։ Եւ մի՛ք կարծիլ, որ ես դրանով պարծենում եմ. գովելի ոչինչ չը կայ դրանում, միայն թէ՝ այդ այդպէս է, միշտ այդպէս է եղել ինձ համար ու այդպէս էլ լինելու է մինչև ժահուանս վերջին րոպէն։ Պէտք է որ մանկութեանս օրերում ես չափազանց շատ բան տեսած լինեմ ճորտութեան մէջ և նրանից էլ շատ բան կրած։ Եւ monsieur Gaston-ը՝ իմ ուսուցիչը, բաց արեց աչքերս։ Այժմ, գուցէ, դուք արդէն հասկանում էք՝ թէ ինչու ես ամուսնացայ Իպպօլիտ Սիդօրիչի հետ։ Նրա հետ ես ինձ ազատ եմ զգում, բոլորովին ազատ՝ ինչպէս օդը, ինչպէս քամին.... Ու այդ բանը ես գիտէի հարսանիքիցս էլ առաջ, գիտէի, որ նրա հետ՝ ես ինքնիշխան կօզակ կը լինեմ։

Մարիա Նիկոլայէվնան լռեց և հովհարը նետեց մի կողմ։

Մի բան էլ կասեմ ձեզ. ես չեմ հրաժարուի ձգտել... Զուարճալի բան է դա, և հէնց դրա համար էլ մեզ խելք է տրուած, բայց իմ

արարքի հետևանքների մասին ես երբեք, ինչպես հարկն է, չեմ մտածում և երբ առիթ է ներկայանում՝ չեմ խղճում ինձ. այսշափ էլ չարժէ։ Ես մի առած գիտեմ. «Cela ne tire pas à consèquence»,—չըգիտեմ ինչպէս ասել ռուսերէն։ Եւ իսկապէս. ինչ tire à consèquence։ Ձէ՞ որ ինձանից հաշիւ չը պիտի պահանջեն այստեղ՝ երկրիս վրայ. իսկ այնտեղ (նա մատը բարձրացրեց դէպի վեր), լաւ, թող անօրինեն՝ ինչպէս կամենան։ Երբ ինձ այնտեղ դատելու լինեն. այն ժամանակ ես՝ ես չեմ լինի։ Լսո՞ւմ էք։ Ձէ՞ք ձանձրանում։

Սանինը նստել էր կռացած։ Նա վեր բարձրացրեց գլուխը։

—Ամենևին չեմ ձանձրանում, Մարիա Նիկօլայէվնա, և լսում եմ ձեզ ամենայն հետաքրքրքրութեամբ, միայն թէ ես... խոստովանում եմ... ինքս ինձ հարց եմ տալիս՝ թէ դուք ինչի՞ համար էք այդ բոլորը ասում ինձ։

Մարիա Նիկօլայէվնան թեթև կերպով դէպի նա շարժուեց դահլիճակի վրայ։

—Ինքներդ ձեզ հարց էք տալիս... Մի՞թէ այդչափ անհասկացողն էք դուք։ Թէ՞ այդքան համեստ էք։

Սանինը էլ աւելի վեր բարձրացրեց գլուխը։

—Այդ բոլորը ես ասում եմ ձեզ,—շարունակեց Մարիա Նիկօլայէվնան հանդիստ ձայնով, որը, սակայն, այնքան էլ չէր համապատասխանում նրա դէմքի արտայայտութեանը,—որովհետև դուք ինձ շատ դուր էք գալիս. այո՛, մի՛ք զարմանալ, ես կատակ չեմ անում։ Որովհետև ձեզ հանդիպելուց յետոյ՝ ինձ համար անախորժ կը լինէը մտածել, որ դուք իմ մասին կը պահպանէք վատ յիշողութիւն... կամ նոյն իսկ ոչ վատ,—դա ինձ համար, իհարկէ, միևնոյնն է,—այլ անճիշտ։ Ահա այդ պատճառով էլ ես հրապուրեցի ձեզ այստեղ և ձեզ հետ միասին ծիւում եմ առանձին ու խօսում անկեղծօրէն... Այո՛, այո՛. անկեղծօրէն։ Ես չեմ ստում։ Եւ ի նկատի ունեցէք, Դմիտրի Պաւլովիչ, ես գիտեմ, որ դուք սիրահարուած էք մի ուրիշի վրայ. որ դուք պատրաստվում էք ամուսնանալ նրա հետ... Ուրեմն՝ արդարացի համարեցէք իմ անշահասիրութիւնը։ Բայց ահաւասիկ ձեզ մի յարմար առիթ ձեր հերթին ասելու. Cela ne tire pas à conséquence։

Նա ծիծաղեց. սակայն, նրա ծիծաղը յանկարծակի խզուեց ու նա ծնաց անշարժ, կարծես, նրա սեփական խօսքերը ապշեցրին իրան անդամ, իսկ նրա, սովորաբար միշտ ուրախ և համարձակ, աչքերում փայլեց ինչ որ մի բան՝ շատ նման ամօթխածութեան, կամ նոյն իսկ ախորութեան։

«Օ՛ֆ. ա՛խ, նա օձ է»—մինչդեռ մտածում էր Սանինը,—«բայց ինչպիսի գեղեցիկ օձ»։

—Տուէք ինձ լօրնէտս,—ասաց յանկարծ

Մարիա Նիկոլայէվնան։ Ես ուզում եմ նայել. մի՞թէ այդ jeune première-ը իսկապէս տգեղ է այդքան։ Ճշմարիտ, կարելի է մտածել, որ նրան նշանակել է կառավարութիւնը դիտմամբ՝ բարոյական նկատումներով, որպէսզի երիտասարդները շատ չը հրապուրուեն։

Սանինը լօրնէտը նրան տուեց։ Վերջինս, ընդունելով նրանից, արագութեամբ, բայց, հազիւ լսելի, երկու ձեռքերով բռնեց Սանինի ձեռքը։

— Լուրջ դէմք մի ընդունէք, — շշնջաց Մարիա Նիկոլայէվնան, ժպտալով։ — Գիտէք ինչ. ինձ վրայ կապանքներ դնել անկարելի է, սակայն, չէ որ ես էլ չեմ դնում կապանքներ։ Ես սիրում եմ ազատութիւնը և պարտականութիւններ ասած բանը չեմ ընդունում, ոչ ինձ համար մենակ։ Իսկ այժմ՝ մի քիչ դէնը քաշուեցէք, լսենք պիեսան։

Մարիա Նիկոլայէվնան փոքրիկ լօրնետը ուղղեց դէպի բեմը։ Սանինն էլ սկսեց նայել դէպի այնտեղ՝ նստած նրա կողքին, կիսախաւար օթեակի մէջ և ներշնչելով, ակամայից ներշնչելով նրա մարմնի ջերմութիւնն ու անուշ բոյրը, և նոյնքան էլ ակամայից տակն ու վրայ անելով իր գլխում այն բոլորը, ինչ որ ասաց Մարիա Նիկոլայէվնան այդ երեկոյեան, մանաւանդ, վերջին րոպէների ընթացքում։

XL

Պիեսայի ներկայացումը տևեց մի ժամ ու էլ աւելի, բայց Մարիա Նիկոլայէվնան ու Սանինը քիչ յետոյ այլ ևս չէին նայում բեմին։ Նրանց խօսակցութիւնը վերսկսուեց, և անցաւ միևնոյն շաւղով, ինչպէս որ առաջ. միայն թէ այս անգամ Սանինը աւելի սակաւ էր լսում։ Ներքուստ նա իր վրայ էլ էր զայրանում, Մարիա Նիկոլայէվնայի վրայ էլ. նա աշխատում էր ապացուցանել նրան նրա ամբողջ «թէօրիայի» անկայնութիւնը, անհիմն լինելը. իբրև՝ թէ նրան թէօրեաներն էին զբաղեցնում։ Սանինը սկսեց վիճել նրա հետ, իսկ այդ հանգամանքից Մարիա Նիկոլայէվնան ծածուկ շատ ուրախացաւ. եթէ նա վիճում է՝ նշանակում է դիմում է, կամ կը դիմէ։ Կերակուրի վրայ եկաւ՝ ուրեմն, ճկվում է. ուրեմն դադարում է խրտնելուց, այլ ևս չէ փախչում ինձանից։ Եւ նա առարկում էր, ծիծաղում, հաւաձայնվում, մտածմունքի մէջ ընկնում, յարձակումներ ուղղում Սանինին... Մինչդեռ Սանինի դէմքն ու նրա դէմքը իրար էին մօտենում, Սանինի աչքերը այլ ևս չէին շեղվում, շուռ գալիս նրա աչքերից... Այդ աչքերը, կարծես, թափառում էին. կարծես պատրա էին գործում Սանինի դիմագծերի վրայով, ու Սանինը պատասխանում էր նրան ժպտալով, քաղաքավարու-

թեամբ, բայց և այնպէս ժպտալով։ Մարիա Նիկօլայէվնայի համար ձեռնտու էր այն ևս, որ Սանինը վերացական բաների յեռևից էր ընկնում, դատողութիւններ էր տալիս փոխադարձ յարաբերութիւնների ազնուութեան, պարտականութեան, սիրոյ և ամուսնութեան սրբութեան մասին... Յայտնի բան է, այդ վերացական բաները շատ ու շատ պիտանի են իբրև սկիզբ... իբրև ելակետ...

Նրանք, որոնք լաւ էին ճանաչում Մարիա Նիկօլայէվնային, հաւատացնում էին, որ երբ նրա ամբողջ ուժեղ և ամուր էութեան մէջ յանկարծակի յայտնվում էր ինչ որ քնքուշ ու հաճեստ բան, ինչ որ, համարեա, կուսական ամօթխած բան,—թէև զարմանալի է՝ թէ ո՞րտեղից պէտք է ունենար...—Այն ժամանակ... Այ՛, այն ժամանակ խնդիրը վտանգաւոր ընթացք էր ստանում։

Նա, ըստ երևոյթին, այդ ընթացքն էր ստանում նաև Սանինի համար... Արհամարհանք կը զգար նա դէպի իրան, եթէ միայն յաջողուէր գէթ մի վայրկեան կենտրոնացնելու իր մտքերը, սակայն նա ժամանակ չէր ունենում ո՛չ կենտրոնանալու, ոչ էլ արհամարհանք զգալու դէպի իրան։

Մինչդեռ Մարիա Նիկօլայէվնան ժամանակ չէր կորցնում։ Եւ այդ բոլորը առաջ էր գալիս նրանից, որ Սանինը շատ լաւ էր իր արտաքինով։ Ակամայից ստիպուած պիտի լինենք ասելու. «Ի՞նչպէս իմանալ՝ թէ որտեղ կը գտնես և ո՞ւր կը կորցնես»։

Ներկայացումը վերջացաւ։ Մարիա Նիկօլայէվնան խնդրեց Սանինին շալը ձգել իր ուսերին, ու չը շարժուեց տեղից՝ մինչ նա փաթաթում էր նուրբ գործուածքով նրա, իսկապէս որ, արքայական ուսերը։ Ապա՝ նա թեանգուկ արեց Սանինին, դուրս եկաւ նրբանցքը ու քիչ մնաց, որ բղաւէր. ուղիղ օթեակի դրան մօտ, ուրուականի նման, ցցուել էր Ֆօն-Դեօնհօֆը, իսկ վերջինիս թիկունքի յետևից, գլուխը շուռ-շուռ դուրս հանելով՝ նայում էր Վիսբադէնեան քննադատի անճոռնի կերպարանքը։ «Լիտերատի» իւղոտ դէմքը ամբողջապէս փայլում էր չարախնդութիւնից։

— Ձէ՛ք հրամայի տիկին, որ ես որոնեմ ձեր կառքը,—դիմեց երիտասարդ օֆիցերը Մարիա Նիկօլայէվնային՝ կատաղութեան վատ զսպուած սարսուռը ձայնի մէջ։

—Ո՛չ. շնորհակալ եմ,—պատասխանեց նա... Իմ սպասաւորը կը գտնէ։—Մնացէք—աւելացրեց նա հրամայողական շշուկով և շտապ հեռացաւ՝ տանելով իր հետ Սանինին։

—Կորէ՛ք այստեղից։ Ի՞նչ էք կպել ինձ,—գոռաց յանկարծ Ֆօն-Դեօնհօֆը «լիտերատի» վրայ,—վերջապէս հարկաւոր էր որևէ մէկի վրայ

թափել սրտում կուտակուած մաղձը, հովացնել սիրտը։

Sehr gut, Sehr gut! — փնթփնթաց «լիտերատորը» ու հեռացաւ։

Մարիա Նիկոլայէվնայի սպասաւորը, որ սպասում էր նրան նախասրահում, մի ակնթարթում թռաւ ու բերաւ կառքը։ Նա ժիր շարժումով նստեց նրա մէջ։ Սանինը իսկոյն հետևեց նրան։ Դռնակները փակուեցին ու Մարիա Նիկոլայէվնան սկսեց բարձրաձայն ծիծաղել։

—Ի՞նչի վրայ էք ծիծաղում,—հետաքրքրքրուեց Սանինը։

—Ա՛խ, ներեցէք, խնդրեմ... բայց յանկարծ մտքովս անցաւ. ի՞նչ կը լինի, եթէ Դեօնհօֆը նորից ձեզ հետ մենամարտի... իմ պատճառով... Հրաշք չի լինի այդ։

—Իսկ դուք նրա հետ շա՞տ մօտ ծանօթուքիւն ունէք,—հարցրեց Սանինը։

—Նրա՞ հետ։ Այդ տղայի հետ։ Նա ինձ մօտ դէս ու դէն վազվզելու համար է միայն։ Դուք մի՛ք անհանգստանայ։

—Ես ամենևին չեմ էլ անհանգստանում։

Մարիա Նիկոլայէվնան հառաչեց.

—Ա՛խ, ես գիտեմ, որ դուք չէք անհանգստանում։ Բայց, լսեցէք, գիտէք ինչ. դուք այնքան սիրալիր էք՝ չը պէտք է մերժէք ինձ կատարելու իմ վերջին խնդիրքը։ Մի՛ մոռանաք որ երեք օրից յետոյ ես գնալու եմ Փարիզ, իսկ դուք

վերադառնում էք Ֆրանկֆուրտ... ե՞րբ կը պատահենք մենք կրկին։

—Ա՞յդ ինչ խնդիրք է։

—Դուք, իհարկէ, ձի նստել կարողանում էք։

—Կարողանում եմ։

—Լաւ, ահա թէ ինչ կասեմ. էգուց՝ առաւօտը վաղ ես կը վերցնեմ ձեզ ինձ հետ և մենք կը գնանք քաղաքից դուրս։ Մենք կունենանք շատ լաւ ձիաներ։ Յետոյ արդէն՝ կը վերադառնանք այնտեղից, կը վերջացնենք գործը, ու ամէն։ Մի՛ք զարմանալ, մի՛ք ասի ինձ, որ դա քմահաճուքիւն է, որ ես խելագար եմ—գուցէ, այդպէս է. միայն թէ, խնդրում եմ, ասացէք՝ համաձայն եմ։

Մարիա Նիկոլայէվնան երեսը շուռ տուեց դէպի նրա կողմը։ Կառքի մէջ մութն էր, սակայն, նրա աչքերը փայլատակեցին հէնց այդ մթնում էլ։

—Եթէ այդպէս է, համեցէք. համաձայն եմ, պատասխանեց Սանինը հառաչելով։

—Ա՛խ, դուք հառաչում էլ էք,—ծաղրեց նրան Մարիա Նիկոլայէվնան։—Ահա թէ ինչ կը նշանակէ. взялся за гужъ не говори, что не дюжъ, —բայց ո՛չ. ո՛չ... Դուք աքանչելի մարդ էք, շատ լաւն էք, իսկ ես խոստումս կը կատարեմ։ Ահա ձեզ իմ ձեռքը առանց ձեռնոցի, այը, գործունեան։ Վերցրէք նրան, և հաւատացէք նրա սեղմումին։ Թէ ինչ տեսակ կին եմ ես, այդ չը գի-

տեմ, բայց իբրև մարդ՝ ազնիւ եմ, և ինձ հետ գործ ունենալ կարելի է։

Սանինը, առանց ինքն իրան լաւ հաշիւ տալու՝ թէ ինչ է անում, այդ ձեռքը մօտեցրեց իր շրթունքներին։ Մարիա Նիկօլայէվնան կամաց դուրս քաշեց—խլեց նրանից ու յանկարծ լռեց և լուռ էր, մինչև որ կառքը տեղ հասաւ ու կանգնեց։

Նա պատրաստուում էր դուրս գալ... սակայն, ինչ պատահեց. թւաց, արդեօք, Սանինին, թէ իսկապէս որ նա զգաց իր երեսի վրայ ինչ որ արագ ու այրող հպուեց։

«Մինչև էգուց»—շշնջաց նրան Մարիա Նիկօլայէվնան սանդուղքի վրայ, ամբողջովին լուսաւորուած կանթեղի չորս մոմերով, որոնց իր ձեռքն առաւ իսկոյն ոսկեզօծ դռնապանը, հէնց որ երևաց այնտեղ տիկինը։ Վերջինս աչքերը ցած ուղղած էր պահում։—«Մինչև էգուց»։

Սանինը, վերադառնալով իր սենեակը, գտաւ սեղանի վրայ մի նամակ Ջեմմայից։ Առաջի րոպէին նա... վախեցաւ, բայց իսկոյն էլ ուրախ ձևացաւ, որպէսզի սեփական երկիւղը շուտով քօղարկէ իր առաջ։ Նամակը բաղկացած էր մի քանի տողերից։ Ջեմման ուրախութիւն էր յայտնում «գործի սկզբնաւորութեան» աջողութեան համար, խորհուրդ էր տալիս համբերող լինել և վերջում էլ աւելացնում էր, որ տանը ամենքն էլ առողջ են ու նախօրօք ուրախանում են նրա

վերադարձի առիթով։ Սանինը այդ նամակը բաւականին չոր-ցամաք գտաւ, բայց և այնպէս վերցրեց գրիչը, թուղթ... և բոլորն էլ շուտով ցած դրեց կրկին։ Ախր ինչ գրել։ Էգուց ես ինքս կը վերադառնամ... ժամանակ է արդէն, ժամանակ է»։

Նա իսկոյն անկողին մտաւ և աշխատեց որքան կարելի է շուտով քնել։ Մնալով կանգնած և արթուն, նա, հաւանօրէն, կը սկսէր մտածել Ջեմմայի մասին. մինչդեռ ինչ որ պատճառով... նա ամաչում էր մտածել նրա մասին։

Ախիզը սկսել էր շարժուել նրա մէջ։ Սակայն, նա հանգստացնում էր իրան նրանով, որ էգուց ամեն ինչ ընդմիշտ վերջացած կը լինի, և նա ընդմիշտ կը բաժանուի այդ լեթուած կնոջից ու ժռռացութեան կը տայ այդ բոլոր յիմարութիւնները...

Թոյլ մարդիկ, իրանք իրանց հետ խօսելիս, ուրախութեամբ գործ են ածում խիստ, եռանդոտ արտայայտութիւններ։

Et puis... cela ne tire pas à conséquence!

XLI

Ահա թէ ինչ էր մտածում Սանինը, քնելու պատրաստուելով. իսկ թէ ինչ էր մտածում նա հետևեալ օրը, երբ Մարիա Նիկօլաէվնան անհամ-

բերութեամբ ծեծեց իր մտրակի կօրալլէ կոթով նրա դուռը. երբ նա տեսաւ նրան իր սենեակի շէմքին, մուգ-կապոյտ ամազօնկայի շէյֆը ձեռքի վրայից ձգած՝ տղամարդու փոքրիկ գլխարկը ծամերի խոշոր հիւսուածքներին հագցրած և երեսի շղարշը ուսովը ձգած, հրապուրիչ ժպիտը շրթունքներին, աչքերի մէջ, ամբողջ դէմքի վրայ. ինչ էր մտածում նա այդ ժամանակ,—այդ մասին պատմութիւնը լռում է։

Սանինը կոճկեց սերթուկը և անխօս վերցրեց գլխարկը։ Մարիա Նիկօլայէվնան ուրախ հայեացք ձգեց նրա վրայ, գլխի շարժումով կանչեց նրան ու շտապ վազեց դէպի ներքև սանդուղքով։ Սանինն էլ վազեց նրա յետևից։

Ձիանները արդէն կանգնած էին դրանը։ Նրբանք երեք հատ էին. մէկը՝ դեղնագոյն, ազնուբլուն մի մատակ, չոր, ոսկրոտ դունչով, և դուրս պրծած աչքերով, եղջերուանման ոտներով, մի փոքր նիհար, բայց գեղեցիկ ու տաքգլուխ կրակի պէս. դա Մարիա Նիկօլայէվնայի համար էր։ Միւսը՝ ուժեղ, լայն կուրծքով, քիչ ծանրամարմին մի ձի, սևագոյն, առանց խալերի. դա էլ՝ Սանինի համար։ Երրորդ ձին ձիապանի համար էր։ Մարիա Նիկօլայէվնան ճարպիկութեամբ թռաւ իր մատակի վրայ... վերջինս դոփեց ոտներով ու սկսեց կանգնած տեղում պըտոյտ գործել, պոչը շարժելով ու սեղմելով երասանակի բերանակալը, բայց Մարիա Նիկօլայէվ-

նան (շատ լաւ ձիավար էր), պահեց նրան իր տեղում։ Հարկաւոր էր հրաժեշտ տալ Պօլօզովին, որը իր անփոխարինելի ֆեսով և շլաֆրօկով՝ *) կոճակները բաց արած և առանց պարեգօտ, երևաց պատշգամբում ու սկսեց ճօճել այնտեղից բախտաւէ թաշկինակը՝ առանց, սակայն, ժպտալու, այլ աւելի շուտ՝ կնճռոտուելով։ Սանինն էլ նրան տեց իր ձին։ Մարիա Նիկօլայէվնան հրաժեշտի ողջոյնը տուեց Պօլօզովին՝ բարձրացնելով ձեռքի մտրակը, ապա՝ խփեց նրանով իր ձիու կռացրած, հարթ պարանոցին. վերջինս ծառացաւ յետևի ոտների վրայ, առաջ ցատկեց ու գնաց գեղեցիկ, զսպուած քայլուածքով, ցնցուելով բոլոր ջղերով, կուշ գալով սանձի զսպանակի վրայ, կռնգելով օդը և ուժգնութեամբ փռռացնելով։ Սանինը գնում էր յետևից և նայում Մարիա Նիկօլայէվնային—ինքնավստահ կերպով, ճարպիկօրէն և վայելչութեամբ օրօրվում էր նրա կօրսէտով գրկուած նուրբ ու ճկուն իրանը։ Նա շուռ տուեց գլուխը, յետ նայեց ու կանչեց Սանինին մի լայն աչքերով։ Վերջինս հաւասարուեց նրան։

—Ա՛յ, տեսնո՞ւմ էք, ինչպէս լաւ է,—ասաց նա։ Ես ձեզ ասում եմ վերջին անգամ՝ անջատումից առաջ. դուք սքանչելի մարդ էք, և չէք փոշմանիլ։

Արտասանելով այդ վերջին խօսքերը, Մա-

*) Շլաֆրօկ—խալաթ։

ըիա Նիկոլայէվնան մի քանի անգամ գլխով վեր ու վար շարժում արեց, կարծես, ցանկանալով հաստատել իր ասածները և զգացնել տալ նրանց նշանակութիւնը։

Այն աստիճանին բաղդատուր էր թուում նա, որ Սանինը ուղղակի ծնացել էր զարմացած. նրա դէմքի վրայ մինչև անգամ երևաց այն ծանրաբարոյ արտայայտութիւնը, որպիսին սովորաբար ունենում են երեխաները, երբ նրանք շատ... շատ զոհ են։

Հանդարտ քայլերով նրանք գնացին մինչև մօտակայ քաղաքադուռը, իսկ այնտեղից էլ՝ ա-բաց վազքով՝ խճուղիով։ Փառահեղ եղանակ էր, ուղղակի, ամարային եղանակ. քամին սահում էր նրանց դէմ և հաճոյքով ազմկում, սուլում նրանց ականջներում։ Նրանք լաւ էին զգում իրանց. երիտասարդ, առողջ կեանքի գիտակցութիւնը, ազատ սրընթաց ձգտումը դէպի առաջ՝ յափշտակել էր երկուսին էլ, և նա սաստկանում էր րոպէ առ րոպէ։

Մարիա Նիկոլայէվնան գսպեց ձին և կրկին գնաց քայլերով։ Սանինը հետևեց նրա օրինակին։

—Ահա,—սկսեց նա խորը, բաղդատուր հառաչանքով. ահա միմիայն սրա համար էլ արժէ ապրել։ Յաջողուեց քեզ անել այն, ինչ որ ցանկանում էիր, ինչ որ թուում էր անկարելի. էֆ, ուրեմն, օգտուիր, սիրտդ լիացրու ծայրէ իծայր։ —Ձեռքով նա հորիզոնական ուղղութեամբ քա-

շեց իր կոկորդի վրայից։—Եւ ինչպէս բարի է զգում մարդս ինքն իրան այդպիսի ժամանակ։ Ահաւասիկ, ես այժմ... որքան բարի եմ։ Թուում է՝ թէ ամբողջ աշխարհն էլ կը գրկէի։ Այսինքն, ոչ. ոչ ամբողջ աշխարհը... Ահա սրան ես չէի գրկի, այդ ասելով, նա մարակով ցոյց տուեց ճանապարհի կողքով անցնող ցնցոտիներ հագած ծերունուն։—Սակայն բաղդատուրացնել նրան ես պատրաստ եմ։ Էֆ, դուք. վեր առէք,—կանչեց նա գերմաներէն բարձր ձայնով ու նետեց նրա ոտների տակ փողի քսակը։ Ծանր քսակը (այն ժամանակ պօրտմօնէի մասին խօսք անգամ չը կար) զարնուելով գետնին՝ շրխկաց։ Անցորդը զարմացած կանգ առաւ, իսկ Մարիա Նիկոլայէվնան քրքջաց ու ձին քշեց։

—Այդչափ ուրախութիւն է պատճառում ձեզ ձիով ման գալը, հա,—հարցրեց Սանինը հասնելով նրան։

Մարիա Նիկոլայէվնան նորից յանկարծակի կանգնեցրեց իր ձին,—պէտք է ասած, որ նա ուրիշ կերպ էլ չէր կանգնեցնում նրան։—Ես միայն ուզում էի խոստովանել շնորհակալութիւն լսելուց։ Ով ինձ շնորհակալութիւն է յայտնում, նա փչացնում է իմ բաւականութիւնը։ Չէ որ այդ բանը ես չարեցի նրա համար, այլ միայն ինձ համար։ Ուրեմն. ինչպէս կը համարձակուէ նա շնորհակալութիւն յայտնել ինձ։ Ես չը լսեցի. ինչի մասին էիք հարցնում։

—Ես հարցնում էի... Ես ուզում էի իմանալ՝ թէ ինչիցն է, որ այսօր դուք այդչափ ուրախ էք։

– Գիտէք ինչ, ասաց Մարիա Նիկօլայէվնան.— նա կամ դարձեալ լաւ չը լսեց Սանինին, կամ թէ հարկաւոր չը համարեց պատասխանել նրա տուած հարցին։—Սաստիկ զզուեցրեց ինձ այդ ձիապանը, որը ցցուած է շարունակ մեր յետևում, և որը, երևի միայն նրա մասին է մտածում՝ թէ երբ պէտք է, արդեօք, սրանք տուն վերադառնան։ Ի՞նչպէս անենք, որ ազատուենք սրանից։— Նա շտապով հանեց դրպանից ծոցատետրը,—նամակ չուղարկե՞նք սրա միջոցով քաղաք. ո՛չ... անյարմար է։ Հա, այ թէ ինչպէս անենք։ Այն ի՞նչ է երևում մեր առաջ։ Պանդո՞կ չէ։

Սանինը նայեց դէպի այն կողմը, ուր մատնացոյց էր անում նա։

—Այո՛, պանդոկ է, կարծես։

—Է, ուրեմն, շատ բարի։ Ես կը հրամայեմ նրան միասլ այդ պանդոկում և գարեջուր խմել մինչև որ մենք կը վերադառնանք։

-Իսկ ի՞նչ կը մտածէ նա։

—Մի՛ր ինչ գործն է. ինչ ուզում է թող մտածի։ Աւելնք, ոչինչ էլ չի մտածի. միայն գարեջուր կը խմի և ուրիշ ոչինչ։ Դէ՛հ, Սանին (նա առաջին անգամն էր կանչում նրան ազգանունը տալով) առաջ գնա՝ վազեցնելով։

Հաւասարուելով պանդոկին, Մարիա Նիկօլայէվնան մօտ կանչեց ձիապանին և յայտնեց նրան այն՝ ինչ որ ինքը պահանջում էր։ Ձիապանը, որ անգլիական ծագումով և անգլիական բնաւորութեամբ մարդ էր, լուռ մօտեցրեց ձեռքը իր գլխարկին ի նշան հնազանդութեան, վայր իջաւ ձիուց և բռնեց նրա ձիասանձը։

Դէ, այժմ մենք ազատ թռչուններ ենք,— բացականչեց Մարիա Նիկօլայէվնան։ — Ո՛ւր գնանք. դէպի հիւսիս, դէպի հարաւ, արևելք թէ արևմուտք։ Նայեցէք ինձ. ես այնպէս եմ՝ ինչպէս ունգարական թագաւորը թագադրութեան ժամանակ (նա ցոյց տուեց իր մարակի ծայրով աշխարհիս չորս կողմերը)։ Այս ամենը մերն է. ո՛չ, գիտէք ինչ, տեսնո՞ւմ էք ինչ սիրուն սարեր կան այնտեղ, և ինչպիսի անտառ։ Գնանք այնտեղ՝ սարերը, սարերը։

In die Berge, wo die Freiheit thront!

Նա շեղեց իր ձին խճուղուց և քշեց նեղ, անհարթ շաւղով, որը, թրդարև, կարծես, տանում էր դէպի սարերը։ Սանինը քշեց իր ձին նրա յետևից։

XLII

Այդ շաւիղը քիչ յետոյ դարձաւ կածան և, վերջապէս, հանդիպելով առուի՝ բոլորովին չքացաւ։ Սանինը խորհուրդ տուեց յետ դառնալ, բայց Մարիա Նիկօլայէվնան ասաց. «Ո՛չ, ես

ուզում եմ սարերը գնալ։ Գնանք ուղիղ, ինչպէս որ թռչում են թռչունները», և հարկադրեց իր ձիանը ցատկել առուի վրայից։ Սանչինն էլ հետևեց նրա օրինակին։ Առուի այն կողմ սկըսվում էր մարգագետինը, նախ՝ չոր, ապա՝ խոնաւ, իսկ նրանից յետոյ արդէն՝ բոլորովին ճահճային. ջուրը դուրս էր բղխում ամեն կողմից և կանգնում լճի նման։ Մարիա Նիկոլայէվնան զգուշութեամբ քշում էր իր ձին այդ ճահճային տեղերով ու քրքջալով ասում. «Եկէք աշակերտական չարութիւն անենք»։

—Դուք գիտէք, հարցրեց նա Սանչինին, ինչ կը նշանակէ որս անել ճահճոտ տեղերում։

—Գիտեմ, պատասխանեց Սանչինը։

— Իմ հօրեղբայրը շներով որս անող էր, —շարունակեց Մարիա Նիկոլայէվնան։ Ես ձիով մանէի գալիս նրա հետ գարնանը։ Հիանալի բան է։ Ահա այժմ էլ ձեզ հետ միասին ենք գնում ճահճոտ տեղերով։ Միայն թէ՝ ես տեսնում եմ, որ դուք ռուս մարդ էք, բայց ուզում էք ժուռանանալ իտալուհու հետ։ Դէ, հա. դա արդէն ձեր վիշտն է։ Սա ինչ է։ Դարձեալ առու։ Հօպ։

Ձին թռաւ առուի վրայից. Մարիա Նիկոլայէվնայի գլխարկը վայր ընկաւ և նրա խոպոպիկների հիւսերը արձակուելով՝ ցրիւ տան թափուեցին ուսերի վրայ։ Սանչինը ուզում էր իջնել ձիուց գլխարկը վերցնելու համար, բայց նա

կանչեց նրան. «Ձեռ մի՛ տալ. ես ինքս կվերցնեմ»,—կռացաւ թամքից ցած, մարակի կոթը ձգեց շղարշից և, իսկապէս որ, վերցրեց գլխարկը ու դրեց գլխին, սակայն՝ մազերը չը հաւաքեց, այլ նորից քշեց ձին, նոյն իսկ աղաղակելով։ Սանչինը քշում էր նրա հետ միատեղ. նրա հետ կողք կողքի թռչում էր փոսերի, պատնէշների և առուակների վրայից, ներքև էր ընկնում և նորից չանգռտելով դուրս պրծնում, քշում դէպի ստորոտը, վազում դէպի սարը ու բոլոր ժամանակ նայում նրա դէմքին։ Ես ինչպիսի դէմք։ Ամբողջովին նա, կարծես, բացուած լինի. բացուել են աչքերը՝ առիթոտ, փայլուն, վայրագ. շրթունքները, ռունգներն էլ ու շնչում է ագահաբար, նայում է շեշտակի, անշեղ ուղիղ դէպի առաջ, և թւում է, որ բոլորին, ինչ որ նա տեսնում է—երկրին, երկնքին, արեգակին ու իրան օդին, ուզում է գրկել, ուզում է տիրանալ այդ օդին, և մի բանի մասին միայն նա ափսոսում է. որ վտանգները քիչ են, քանի որ նրանց բոլորին էլ կարող էր յաղթել։

«Սանչին—բղաւում է Մարիա Նիկոլայէվնան, —աւր սա ճիշտ այնպէս է, ինչպէս որ բիւրգերեան Լէնօրայում։ Միայն թէ՝ դուք մեռեալ չէք, հը՞։ Մեռեա՞լ չէք.... Ես որ կենդանի եմ»։ Սկսեցին արտայայտուել անվեհեր ոյժերը։ Դա արդէն այն ամազօնական չէ, որ քշում է իր ձին քառարշաւ վազքով. դա արշաւում է երիտասարդ

կին կենտավրը՝ կիսագազան ու կիս-աստուած, և ապշում է հոս ու բարեկիրթ երկիրը, որ ինքը ոտնահար է լինում նրա կատաղի զուարճութիւններից։

Մարիա Նիկոլայէվնան վերջապէս կանգնեցրեց իր փրփրած, քափ ու քրտինքոտ կորած ձիանը. վերջինս օրօրվում էր նրա տակ, իսկ Սանինի ուժեղ, բայց ծանրամարմին, ձին շընչասպառ էր լինում։

Չը՞, հաճե՞լի է,—հարցրեց Մարիա Նիկոլայէվնան ինչ որ սքանչելի շընչիւնով։

—Հաճելի է,—հիացմունքով արձագանք տուեց Սանինը, և արիւնը բորբոքուեց նրա մէջ։

—Սպասեցէք. դեռ ուր է,— նա մեկնեց ձեռքը, որի հագի ձեռնոցը պատռտուած էր արդէն։

—Ես ասացի, որ ձեզ կը բերեմ անտառը, դէպի սարերը.... Անհաւասիկ նրանք՝ այդ սարերը։— Իսկապէս որ բարձրակատար անտառով ծածկուած սկսվում էին սարերը, մի երկու հարիւր քայլ հեռու այն տեղից, ուր դուրս եկան ձիաւորները։—Տեսէք. ահա և ճանապարհը։ Գրնանք դարձեալ դէպի առաջ։ Միայն թէ քայլերով։ Չէ որ հարկաւոր է մի քիչ էլ ձիաններին հնարաւորութիւն տալ շունչ քաշելու, հանգըստանալու։

Նրանք սկսեցին գնալ քայլերով։ Ձեռքի մի ուժեղ շարժումով Մարիա Նիկոլայէվնան յետ

ձգեց իր մազերը։ Ապա՝ նայեց իր ձեռնոցներին ու հանեց նրանց։— Ձեռքերիցս կաշուէհոտ է գալիս, ասաց նա, այդ խօմ ձեզ համար ոչինչ։ Չը՞... Մարիա Նիկոլայէվնան ժպտում էր։ Ժըպտում էր Սանինը նոյնպէս։ Այդ կատաղի ձիարշաւը նրանց, կարծես, վերջնականապէս մօտեցրեց իրար ու մտերմացրեց։

—Քա՜նի տարեկան էք,—հարցրեց յանկարծ Մարիա Նիկոլայէվնան

—Քսաներկու։

—Անկարելի է։ Ես էլ եմ քսաներկու տարեկան։ Հապ տարիներ են։ Եթէ երկուսիս տարիքն էլ միասին գումարելու լինենք, դարձեալ ծերութիւնից հեռու է։ Այնուամենայնիւ շոգ է։ Ի՞նչ է, ես կարմրատաճկել եմ։

—Ինչպէս մէկօնիօնի գոյնը։

Մարիա Նիկոլայէվնան երեսը սրբեց թաշկինակով։

—Մի կերպ հասնենք անտառը, իսկ այնտեղ արդէն հով կը լինի։ Այս տեսակ էլ հինաւուրց անտառ. կարծես, վաղեմի բարեկամ լինի։ Դուք ունէ՞ք բարեկամներ։

Սանինը մի փոքր մտածեց։

—Կան... միայն թէ՝ քիչ են։ Իսկական բարեկամներ չունեմ։

—Իսկ ես ունեմ, այն էլ իսկականները. միայն թէ՝ ոչ հները։ Ահա, նոյնպէս բարեկամ է այս ձին։ Ինչպէս տանում է նա խնամքով

Ա՜խ, այո՛, այո՛. այստեղ սքանչելի լաւ է։ Մ՛թթէ ես, իսկապէս, վաղը չէ միւս օրը Փարիզ եմ գնալու։

Այո՛... մ՛թթէ.—կրկնեց նրա հարցը Սանինը։

—Իսկ դուք՝ Ֆրա՞նկֆուրտ։

—Ես՝ անպատճառ Ֆրանկֆուրտ։

—Է՛, ինչ կայ որ, Աստուած ձեզ հետ։ Դրա փոխարէն, գոնէ, այսօրուայ օրը մերն է... մերը... մերը։

Զիանները անտառի ծայրը հասան ու ներս մտան։ Աստուերախիտ անտառը քօղարկեց նրանց ամեն կողմից։

—Ո՛հ, այստեղ, խօժ, կատարեալ դրախտ է եղել։

Բացականչեց Մարիա Նիկօլայէվնան։ —Մըտնենք աւելի խորը, աւելի հեռուն այն ստուերների մէջ, Սանին։

Զիանները հանդարտ քայլերով գնում էին դէպի «ստուերի խորքը», թեթև օրօրուելով ու փռռացնելով։ Այն փոքրիկ շաւիղը, որտեղից անցնում էին նրանք, յանկարծ թեքուեց մի կողմ ու մտաւ բաւականին նեղ մի կիրճ։ Խաշանճի, փելիկի, եղևնիների անցեալ տարուանից թափուած, նեխուած տերևների թանձր թմրեցուցիչ հոտը ճնշուել, ծնացել, էր այնտեղ։ Շիկադոյն, խոշոր քարերի ճեղքուածքներից բարձրանում էին կոլոր հողաբլուրները մամռապատ կանաչով։

—Կանգնեցէք,—բացականչեց Մարիա Նիկօլայէվնան,—ես ուզում եմ ցած իջնել նստելու և հանգստանալու այս թաւշի վրայ։ Օգնեցէք ինձ իջնելու։

Սանինը իջաւ ձիուց և վազեց նրա մօտ։ Նա յենուեց նրա ուսերին, մի ակնթարթում ցատկեց գետին ու նստեց այդ մամռապատ բլուրները մէկի վրայ։ Սանինը կանգնեց նրա առաջ՝ երկու ձիանների սանձերը բռնած։

Նա աչքերը ուղղեց նրա վրայ...

—Սանին, դուք կարողանո՞ւմ էք մոռանալ, ներել։

Սանինը մտաբերեց երեկուայ... կառքում։

—Ի՞նչ է այդ. հարց... թէ՞ կշտամբանք։

—Կեանքումս ես ոչ ոքի և ոչ մի բանում չեմ կշտամբել։

—Իսկ կախարդութեանը հաւատո՞ւմ էք դուք։

—Ի՞նչպէս։

—Գիտէք ինչ բան է կախարդութիւնը, որի մասին երգում են մեր երգերում՝ ռուսաց ռամկական երգերում։

—Հա՛. ահա թէ ինչի մասին է ձեր խօսքը...,—երկարացնելով ասաց Սանինը։

—Այո՛, դրա մասին։ Ես հաւատում եմ... և դուք էլ կը հաւատաք։

—Կախարդութիւն... կախարդութիւն... կըր-

կընեց Սանինը։ Ամեն ինչ հնարաւոր է աշխարհումս։ Առաջ ես չէի հաւատում, իսկ այժմ հաւատում եմ։ Ես ինքս էլ ինձ այլևս չեմ ճանաչում։

Մարիա Նիկօլայէվնան մի քիչ մտածեց ու ապա նայեց շուրջը։

—Իսկ ինձ այնպէս է թւում թէ այս տեղը ծանօթ տեղ է։ Հաբա, Սանին, մի նայեցէք այն հաստաքուն կաղնու յետևը. կմի, արդեօք, այնտեղ փայտե կարմիր խաչ, թէ չը կայ։

Սանինը մի քայլ արեց դէպի այն կողմ։—Կայ։

Մարիա Նիկօլայէվնան ժպտաց ինքնագոհ կերպով։

—Շատ լաւ, ուրեմն։ Ես այժմ գիտեմ՝ թէ մենք որտեղ ենք։ Դեռ ևս չենք մոլորուել։ Այն ինչ թիկունք է։ Փայտահատը։

Սանինը նայեց դէպի թաւուտը։

—Այո՛... Այնտեղ մի ինչ որ մարդ չոր ճղներ է կոտրում։

—Հարկաւոր է մազերս կարզի բերել,—ցած ձայնով խօսեց Մարիա Նիկօլայէվնան։—Ապա թէ ոչ կը տեսնի ու կը վատաբանի,—նա վերցրեց գլխարկը և սկսեց հիւսել իր երկար ծամերը լուռ ու լրջօրէն։ Սանինը կանգնել էր նրա առջև... նրա վայելչակազմ անդամները պարզութեամբ գծագրվում էին մահուդի մութ ծալքերի

ներքոյ, որի վրայ տեղ-տեղ կպել էին մամուռի թելերը։

Զինուորներից մէկը յանկարծ ցնցուեց Սանինի յետևում. նա ինքն էլ նոյն իսկ ակամայ դողաց ոտքից մինև գլուխ։ Ամեն ինչ շփոթուել էր նրա մտքում, իրար խառնուել լարերի նման։ Ջուր չէր ասում նա՝ թէ ինքն էլ իրան չէ ճանաչում...

Նրան, արդարև, կախարդել էին։ Նրա ամբողջ էութիւնը լի էր մեծ մի... մի դիտաւորութեամբ, մի ցանկութեամբ։ Մարիա Նիկօլայէվնան խորտակնեին հայեացք ձգեց նրա վրայ։

—Է՛, այժմ ահա ամեն բան կարգին է, խօսեց նա գլխարկը հագնելով։ Ջէք նստում։ Մ՛ոյ, այստեղ։ Ո՛չ, սպասեցէք... մ՛իք նստիլ։ Այս ի՞նչ բան էր։

Ծառերի կատարների վրայից, անտառային օդը ճեղքելով, դղրդալով անցաւ մի խուլ ցնցում։

—Մ՛իթէ ամպերի որոտմունք էր։

—Կարծես, ուղիղ որ որոտմունք էր,—պատասխանեց Սանինը։

—Ա՛խ, կատարեալ հանդէս է սա. ուղղակի հանդէս։

Մի այն դա էր պակասում։—Երկրորդ անգամ լսուեց խուլ որոտը. բարձրացաւ, ձայնեց և ապա վայր ընկաւ թաւալուելով։—Կեցցէ. Bis։ Յիշում էք. ես երբեք պատմում էի ձեզ Էնեէիդայի մասին։ Ախր, նրանց էլ անտառի մէջ վրայ հասաւ որոտը։ Յամենայն դէպս՝ հարկաւոր է

գնալ։—Նա շտապով վերկացաւ տեղից։—Մօտ բերէք իմ ձին... նեցուկ արէք ձեր ձեռքը։ Ա՛յ, այդպէս։ Ես ծանր չեմ։

Նա թռչունի նման թռաւ թամքի վրայ։ Սանինն էլ նստեց իր ձին։

—Դէպի տո՞ւն,—հարցրեց Սանինը անվրճռական ձայնով։

—Տո՞ւն,—պատասխանեց նա խորհրդաւոր շեշտով, ձգձգելով իր ձայնը, ու իրան քաշեց ձիու սանձը։—Հետևեցէք ինձ,—հրամայեց նա, համարեա, կոպտաբար։

Նա դուրս եկաւ ճանապարհը և, կարմիր խաչին դեռ չը հասած՝ իջաւ խոր ձորակը, հասաւ ճանապարհների հանդիպակաց տեղին, թեքուեց դէպի աջ, ապա դարձեալ դէպի սարը... Նա, ինչպէս երևում էր, շատ լաւ գիտէր թէ ուր էր գնում այդ ճանապարհով, և այդ ճանապարհը շարունակ տանում էր դէպի անտառի խորքը ու խորքը։ Նա ոչինչ չէր խօսում, դէս ու դէն չէր նայում, այլ հրամայող սրբար շարժվում էր առաջ, և Սանինն էլ հլու հնազանդութեամբ հետևում էր նրան՝ առանց կամքի կայծն անգամ պահելու իր թալկացած սրտի մէջ։ Անձրևը սկսում էր կաթկթել. Մարիա Նիկօլայէվնան շտապեցրեց ձիու քայլերը, իսկ Սանինը յետ չէր մնում նրանից։ Վերջապէս եղևնաթփերի խիտ կանաչների միջից, թուխ ապառաժի ծածկի տակ պատսպարուած՝ նայեց նրանց վրայ պա-

հապանի անշուք տնակը՝ ոստերից հիւսուած պատի վրայ ամրացրած ցածր դռնակով։ Մարիա Նիկօլայէվնան ստիպեց ձիանը ճեղքելով անցնել թփերի միջից, ցած թռաւ նրա վրայից ու կանգ առնելով յանկարծ տնակի մուտքի առջև, շուռ եկաւ դէպի Սանինը ու շշնջաց. Էնէյ։

Զորս ժամից յետոյ, Մարիա Նիկօլայէվնան ու Սանինը, իր ձիան թամքի վրայ ննջող ձիապանի ուղեկցութեամբ, վերադարձան Վիսբադէն հիւրանոցը։ Պ-ն Պօլօգովը դիմաւորեց իր կնոջը կառավարչին գրած նամակը ձեռքում։ Բաւականին երկար, ուշի-ուշով նայելով կնոջ դէմքին, նա որոշ անբաւականութիւն ցոյց տուեց իր դէմքի վրայ, և նոյն իսկ դեռ վնթվնթաց էլ։

—Մթթէ տանուլ տուեցի գրազը։

Մարիա Նիկօլայէվնան ուսերը միայն վեր քաշեց։

Իսկ այդ միևնոյն օրը, գրանից երկու ժամ յետոյ, Սանինը իր սենեակում կանգնել էր նրա առջև՝ գլուխը կորցրած, իբրև կորուստի մատնուած, խորտակուած մի մարդ...

—Դէ ասա. այժմ ո՞ւր ես գնում դու—հարցնում էր Մարիա Նիկօլայէվնան Սանինին,—Փա՞րիզ, թէ Ֆրանկֆուրտ։

—Ես գնում եմ այնտեղ, որտեղ դու կը

լինես, և կը լինեմ միշտ քեզ հետ՝ մինչև որ դու կը վռնդես քո մօտից,—պատասխանեց նա յուսահատաբար, ու ծնկաչօք ընկած՝ հպուեց իր սիրուհու ձեռքերին։ Վերջինս դուրս կորզեց նրանց, դրեց նրա գլխի վրայ և բոլոր տասը մատներով մխաւին բռնեց նրա մազերը։ Նա դանդաղօրէն դէս ու դէն էր շուռ տալիս նրանց, ջոկոտում ու ոլորում այդ անպատասխանատու մազերը. ինքը ամբողջ մարմնով ուղղուել էր ձգուել, շրթունքների վրայ օձանման սողում էր յաղթանակը, իսկ աչքերը՝ լայն ու ապիտակափայլ աչքերը՝ արտայայտում էին միևյն ու միևյն նրա անողորմ բթամտութիւնը և յաղթութեան յագուրդը։ Այդ տեսակ աչքեր ունենում է միայն այն բազէն, որը իր յափշտակած թռչունին յօշոտում ու քրքրում է մագիլներով։

XLIII

Ահա թէ ինչ մտաբերեց Դմիտրի Սանինը, երբ իր առանձնասենեակի լռութեան մէջ, քըրքրելով հին թղթերը, գտաւ նրանցում նռնաքարի խաչը։ Մեր պատմած անցքերը, պարզ ու յաջորդական կերպով, անդրադառնում էին նրա մտքի տեսողութեան առաջ.... Սակայն հառնելով մինչև այն րոպէին, երբ նա այնպիսի ստոբացուցիչ աղերսանքով դիմեց տ. Պօլօզովային,

նրա ոտքերն ընկաւ, երբ սկսուեց նրա ստրկութիւնը, նա շուռ եկաւ իր վերակոչած պատկերներից. այլևս չը կամեցաւ յիշել։ Եւ դա ոչ թէ այն պատճառով, որ յիշողութիւնը դաւաճանում էր նրան, ո՛հ, ո՛չ. այլ որովհետև նա գիտէր, նա շատ լաւ գիտէր՝ թէ ինչ բան պատահեց այդ ստորացուցիչ րոպէից յետոյ։ Ամօթը սակայն խեղդում էր նրան, մինչև անգամ այժմ էլ, այնքան տարիներ անցնելուց յետոյ։ Նա ուզդակի սարսափում էր դէպի ինքը տածած անբնկճելի արհամարհանքի այն զգացմունքից, որը, չէր կասկածում բնաւ, որ անպատճառ դուրս կը ժայթքէ ու ալիքների նման կը խեղդէ իր ճնացեալ բոլոր զգացմունքները, եթէ միայն չը հրամայէ իր յիշողութեանը լռել։ Այնուամենայնիւ, որքան էլ, որ նա երես էր դարձնում վերակենդանացած յիշողութիւններից, բոլորովին խեղդել ու խլացնել նրանց նրան չէր յաջողւում։ Նա յիշեց իր այն գարշելի, լալկան, կեղծ, ողորմելի նամակը, որը նա ուղարկեց Ջեմմային. այն նամակը, որ ճնաց անպատասխան... Գնալ նրա մօտ, վերադառնալ նրա մօտ, մի այդպիսի խաբէութիւնից, այդ տեսակ դաւաճանութիւնից յետոյ։ Ո՛չ, ո՛չ. դա անհնարին է, դեռ ևս խիղճ ու ամօթ էր ճնացել նրանում։ Մանաւանդ, որ որևէ վատահութիւն կամ յարգանք դէպի իրան՝ նա այլ ևս չունէր. *կորցրել էր արդէն*։ Սանինը մտաբերեց նոյնպէս՝ թէ ինչպէս նա յետոյ,—ո՛հ

խայտառակութիւն,—ուղարկեց Պօլոզովի սպասաւորին Ֆրանկֆուրտ իր իրերը բերելու համար. ինչպէս վախենում էր նա ու մտածում միայն մի բանի մասին՝ որքան կարելի է, շուտ գնալ Փարիզ. թէ ինչպէս նա, Մարիա Նիկոլայէվնայի հրամանով, յարմարւում էր ու նմանւում Իպոլիտ Սիդօրիչին, սիրալիր կերպով խօսում բարօն-ֆօն-Դեօնհօֆի հետ, որի մասին նա նկատեց իսկ և իսկ այնպիսի երկաթէ մատանի, ինչպիսին տուել էր իրան Մարիա Նիկոլայէվնան... Այնուհետև վերանորոգուեցին յիշողութիւնները աւելի ևս վատթար, էլ աւելի խայտառակ... Կելներըը տալիս է նրան մի այցետոմս՝ վերան գրուած. Պանտալէօնո Զիպպատօլայ —պալատական երգիչ Նորին Արքայական Մեծութեան կոմս Մօդենակու: Նա թագնւում է ծերունուց, բայց և այնպէս չէ կարողանում խուսափել և հանդիպում են նախասրահում, ու կանգնում է նրա առջև ծերունի երգչի զրգռուած դէմքը, դէպի վեր ցցուած պառամեալ մազերով, ծերացած աչքերը առկայծւում են ածուխի նման և լսւում են նրա ահեղ բացականչութիւնները ու անէծքները. Maledizione: Նոյն իսկ լսւում են սարսափելի խօսքեր. Codardo! infame traditore! Սանինը կկոցում է, ճպճպացնում աչքերը, գլուխը թափ տալիս, երեսը շուռ տալիս կրկին ու կըրկին անգամ, և այնուամենայնիւ տեսնում իրան ճանապարհորդական կառքի առաջին մասի նեղ

տեղում... Իսկ յետևի՝ աւելի հանգիստ ու փափուկ տեղում նստած են Մարիա Նիկոլայէվնան ու Իպոլիտ Սիդօրիչը. չորս ձիաներ վախչում են համաչափ վազքով՝ Վիսբադէնեան մայթի վրայով դէպի Փարիզ, դէպի Փարիզ: Իպոլիտ Սիդօրիչը ուսումն է այն տանձը, որը նա՝ Սանինը, կլպել-մաքրել էր նրա համար, իսկ Մարիա Նիկոլայէվնան նայում է նրա վրայ ու ծիծաղում, ծիծաղում այդ ճորտացած մարդու վրայ, մխիթարւում, վաղուց արդէն յայտնի, սեփականատէր իշխողի ծաղրալի ծիծաղով...

Բայց, Աստուած իմ, ահա այնտեղ, փողոցի անկիւնում, քաղաքի մուտքից ոչ շատ հեռու, Պանտալէօնը չէ, արդեօք, նորից կանգնել, և ոմն է նրա հետ: Մի՞թէ Էմիլիօն: Այո, այդ նա է, այն շուտ ոգևորուող, հրապուրուող, անձնուէր պատանին: Շատ ժամանակ է անցել, արդեօք, այն օրից, երբ նրա մատաղ սիրտը ակնածում էր իր հերոսի, իր իդէալի առաջ, մինչդեռ այժմ՝ նրա գունատ, գեղեցիկ,—այն աստիճանին գեղեցիկ՝ որ Մարիա Նիկոլայէվնան էլ նրան նկատեց ու գլուխը դարձրեց հանեց կառքի լուսամուտից նայելու. նրա աղնիւ դէմքը բորբոքուած է զայրոյթից ու արհամարհանքից,—աչքերը, որ այնքան նման են այն աչքերին, սևեռւում են Սանինի վրայ և շրթունքները սեղմւում... ու բացւում յանկարծ՝ վիրաւորանքի համար....

Իսկ Պանտալէօնը մեկնում է իր ձեռքը և

ցոյց տալիս Սանինին, և ումն է ցոյց տալիս— իր կողքին կանգնած Տարտալիային, ու Տարտալեան հաչում է Սանինի վրայ, ու ամենիւ շան այդ հաչոցը, նոյնպէս, հնչում է անտանելի վիրաւորանքով... խայտառակութեամբ...

Իսկ այնտեղ՝ Փարիզում ապրելն ու՝ բոլոր ստորացուցիչները, բոլոր զազիր տանջանքները մի սարկի, որին չէ թոյլատրվում ոչ խանդոտել, ոչ տրանջալ, և որին դէն են ձգում, վերջապէս, իբրև մի մաշուած հագուստ...

Այնուհետև արդէն՝ հայրենիք վերադառնալը, թունաւորուած, խորտակուած մի կեանք, մանր գործեր, մանր հոգածութիւններ, դառն ու ապարդիւն զղջումն, և նոյնքան էլ ապարդիւն ու դառն մոռացութիւն. դրանք անտեսանելի պատիժներ են, ճիշտ է, բայց ամեն մի րոպէ կրկնուող ու մշտատև, ինչպէս աննշան, բայց անբուժելի մի ցաւ. ինչպէս կոպէկ-կոպէկ հատուցուն մի այնպիսի պարտքի, որը հաշուել էլ չի կարելի...

Գաւաթը լցուեց արդէն, բաւական է:

Իսկապէս, ինչպէս էր պատահել, որ մնացել էր այն փոքրիկ խաչը, որը Ջեմման տուել էր Սանինին: Ինչո՞ւ նա չը վերադարձրեց նրան: Ինչպէ՞ս էր եղել, որ մինչև այդ օրը նա և ոչ մի անգամ էլ չէր նկատել նրան: Երկար, շատ երկար նստած նա մտածում էր. այնքան տարիներից յետոյ՝ փորձերից արդէն խրատուած՝ բայց

և այնպէս դարձեալ դժուարանում էր հասկանալ՝ թէ ինչպէս կարող էր նա լքել այնչափ քնքշօրէն ու բուռն զգացմունքով իր սիրած Ջեմմային մի կնոջ համար, որին նա ամենևին չէր էլ սիրում... Յաջորդ օրը նա զարմացրեց իր բոլոր բարեկամներին ու ծանօթներին. յայտնելով նրանց որ գնում է արտասահման:

Տարակուսանքը տարածուեց հասարակութեան մէջ նոյնպէս: Սանինը թողնում էր Պետերբուրգը և հեռանում ձիւն ձմեռուայ կխսին, երբ իր համար մի հիանալի բնակարան ու նոյն իսկ մշտական տեղ էր վարձել իտալական այն օպերայի ներկայացուցիչներին յաճախելու համար, որոնց մասնակցում էր անձամբ տ. Պատտին. ինքը, ինքը, ինքը տ. Պատտին: Տարակուսանքով խօսում էին բարեկամներն ու ծանօթները էլ. սակայն, մարդկանց սովորութեան հակառակ է երկար զբաղուել ուրիշի գործերով և, երբ Սանինը ուղևորվում էր արտասահման, երկաթուղու կայարան էր եկել ճանապարհ դնելու միայն ֆրանսիացի մի դերձակ, այն էլ չը վճարուած հաշիւը ստանալու յուսով. «Pour un saufe-enbarque en velours noir, tout à fait chic»:

XLIV

Սանինը ասաց իր բարեկամներին, որ գընում է արտասահման, իսկ թէ ուր՝ այդ չա-

ապց. ընթերցողները հեշտութեամբ գլխի կընկնեն, որ նա ուղղակի ուղևորուեց Ֆրանկֆուրտ։ Ամենուրեք տարածուած երկաթուղիների շնորհիւ, նա Պետերբուրգից ճանապարհուելու վրայ չորրորդ օրը արդէն այնտեղ էր։ 1840 թուականից յետոյ, նա չէր այցելել այդ քաղաքը։ «Սպիտակ կարապի» հիւրանոցը դարձեալ իր առաջուայ տեղումն էր և բաւականին ծաղկած դրութեան մէջ, թէև այլ ևս առաջնակարգ չէր համարվում։ Ցէյլը՝ Ֆրանկֆուրտի ամենագլխաւոր փողոցը, շատ քիչ էր փոխուել, բայց ս. Ռօզելլիի անից սկսած. սկսած այն փողոցից, որի վրայ գտնվում էր նրա կօնդիտերանոցը, հետքն անգամ չէր մնացել։ Սանինը գժուածի նման թափառում էր մի ժամանակ իրան այնքան լաւ ծանօթ տեղերում ու ոչինչ, ոչինչ չէր ճանաչում. նախկին շինութիւնները անհետացել էին, նրանց փոխարինել էին նոր փողոցները, երկու կողմից պարփակուած ահագին, անընդհատ շարք տներով, գեղեցիկ վիլլաներով։ Նոյն իսկ այն հասարակական այգին, ուր տեղի ունեցաւ նրա վերջին բացատրութիւնը Ջեմմայի հետ, աճել էր ու այնպէս փոխուել, որ Սանինը ստիպուած էր ինքն իրան հարց տալ. ա՞րդեօք, սա այն այգին է։ Է՛, ինչ պէտք է անէր նա։ Ի՞նչպէս և ո՞րտեղից տեղեկութիւններ ստանար։ Եւ սա տարի անցել էր այն օրից.... Չե՞շտ բան էր, մի՞թէ։ Ումն էլ որ նա դիմում էր՝ պատահական էր, որ Ռօզելլի անունը նոյն իսկ չէ լսել երբեք։ Հիւրանոցատէրը խորհուրդ էր տալիս տեղեկանալ այդ մասին հասարակական գրադարանում, որտեղ, թերևս, կարողանար գտնել բոլոր հին լրագիրները։ Իսկ թէ այդ բոլորից նա ինչ շահ կարող էր ստանալ, հիւրանոցատէրը ինքն էլ չէր կարողանում բացատրել։ Սանինը, յուսահատութիւնից դրդուած՝ հարցուփորձ արեց պ-ն Կլիւբերի մասին։ Այդ անունը լաւ յայտնի էր հիւրանոցատիրոջը, բայց այդտեղ էլ անյաջող դուրս եկաւ. վայելչակազմ կօմմին հռչակ ստանալով ու հասնելով կապիտալիստի կոչմանը, ձեռս կրեց առևտուրի մէջ, անանկացաւ ու մեռաւ բանտում.... Այդ լուրը, ասենք, Սանինին ամենափոքր անգամ ցաւ չըպատճառեց։ Նա արդէն սկսում էր մոռանալ, որ իր ճանապարհորդութիւնը մի փոքր անմոռանալի բան դուրս եկաւ.... բայց, ահա, մի անգամ, թերթելով Ֆրանկֆուրտի հասցէ-օրացոյցը, նա հանդիպեց պաշտօնաթող—մայօր (Major a. D) ֆօն-Դեօնհօֆի անունը. անմիջապէս կառք նստեց ու գնաց նրա մօտ, թէև, չեմ հասկանում, ինչո՞ւ ախր այդ Դեօնհօֆը պէտք է անպատճառ այն Դեօնհօֆը լինէր, և ինչո՞ւ նոյն իսկ այն Դեօնհօֆը, եթէ հէնց նա էլ լինէր, պէտք է կարողանար որև է տեղեկութիւն հաղորդել նրան Ռօզելլի ընտանիքի մասին։ Բայց մի՞ւնոյնն է՝ խեղդուողը շիւղիցն էլ է բռնում»։

Սանինը պաշտօնաթող մայոր Դեօնհօֆին գտաւ իր տանը. իրան ընդունող զառամեալ անձնաւորութեան մէջ նա իսկոյնեւթ ճանաչեց իր նախկին հակառակորդին: Վերջինս էլ ճանաչեց նրան, և նոյն իսկ ուրախացաւ նրա գալուն համար. որովհետև նա յիշեցնում էր նրան իր երիտասարդութեան հասակը և երիտասարդական արարքներն ու խելառութիւնները: Սանինը իմացաւ նրանից, որ Ռօզելլի ընտանիքը շատ վաղուց է ինչ գաղթել է Ամերիկա և բնակվում է Նիւ-Եօրքում. որ Զեմման ամուսնացել է վաճառականի հետ, և որ ինքը՝ Դեօնհօֆը, մի ծանօթ ունի, նոյնպէս վաճառական, որին անշուշտ յայտնի կը լինի նրա ամուսնու հասցէն. որովհետև Ամերիկայի հետ նա շատ գործեր ունի: Սանինը խնդրեց Դեօնհօֆին գնալ այդ ծանօթի մօտ, և ահա, ինչ ուրախութիւն. Դեօնհօֆը բերաւ ու յանձնեց նրան Զեմմայի ամուսնու՝ պ-ն Երեմիա Սլօկոմայի հասցէն. M-r I. Slocum, New-Vork, Broadway № 501: Միայն թէ այդ հասցէն 1863 թուականի հասցէն էր:

—Յուսանք,—բացականչեց ֆօն-Դեօնհօֆը,—որ մեր նախկին ֆրանկֆուրտեան գեղեցկուհին դեռ ևս ողջ է ու չէ հեռացել Նիւ-Եօրքից: Ի միջ այլոց, աւելացրեց նա ցածրացնելով ձայնը, իսկ ինչ եղաւ այն ռուս տիկինը, որ, եթէ յիշում էք, այն ժամանակ հիւր էր եկել

վիսբադէն—տ. ֆօն-Բօ.... ֆօն-Բօլօգօվ: Կենդանի՞ է դեռ:

—Ո՛չ,—պատասխանեց Սանինը,—նա վաղուց մեռել է:

Դեօնհօֆը վեր բարձրացրեց աչքերը, բայց նկատելով՝ որ Սանինը շուռ եկաւ և կնճռոտուեց, այլևս ոչ մի խօսք չասելացրեց ու հեռացաւ գնաց:

Նոյն օրն էլ Սանինը նամակ ուղարկեց տ. Զեմմա Սլօկոմին Նիւ-Եօրք: Այդ նամակում նա յայտնում էր նրան, որ նամակը գրում է Ֆրանկֆուրտից, ուր եկել է միայն մի նպատակով, որպէսզի որոնէ նրա հետքերը. որ շատ լաւ հասկանում է՝ թէ ինչ աստիճանի զրկուած է ինքը նրա պատասխանին արժանանալու ամենափոքր անգամ իրաւունքից, որ ինքը ոչնչով արժանի չէ նրա ներումին և միայն իր յոյսը դնում է այն բանի վրայ, որ նա՝ Զեմման, գտնուելով բաղդաւոր պայմաններում, վաղուց արդէն մոռացութեան է տուել իր դոյութիւնը անգամ: Սանինը աւելացնում էր. որ վճռեց յիշեցնել նրան իր մասին միայն պատահական մի հանգամանքի շնորհիւ, որը չափազանց վառ կերպով վերակենդանացրեց իր յիշողութեան մէջ անցեալի պատկերները: Պատմեց նրան իր կեանքը՝ մենաւոր, անընտանիք, ուրախութիւնից զրկուած, երդուելով կոչ էր անում նրան հասկանալ այն շարժառիթները, որոնք դրդել էին դիմելու նը-

բան, որպէսզի նա թոյլ չը տայ իրան՝ Սանի-
նին, գերեզման տանելու իր հետ տխուր գի-
տակցութիւնը այն գործած յանցանքի, որը քա-
ւել է վաղուց, բայց որի համար դեռ ևս նե-
րումն չէ ստացել, և ուրախացնել իրան, թէկուզ
ամենահամառօտ լուր տալով՝ թէ ինչպէս է նա
ապրում նոր աշխարհում։ «Գրելով ինձ թէկուզ
մի հատիկ խօսք,— այդպէս էր վերջացնում Սա-
նինը իր նամակը,— դուք սրած կը լինէք ձեր
գեղեցիկ հոգուն արժանի մի շատ բարի գործ,
—և ես շնորհակալ կը լինեմ ձեզնից մինչև մա-
հուանս վերջին շունչը։ Ես իջևանել եմ այստեղ
«Սպիտակ կարապի» հիւրանոցում (հիւրանոցի
անունը նա ընդգծեց) և կը սպասեմ մինչև գա-
րուն ձեր պատասխանին»։

Նա ուղարկեց նամակը ու սկսեց սպասել։
Ամբողջ վեց շաբաթ նա ապրեց այդ հիւրանո-
ցում, համարեա, առանց սենեակից դուրս գա-
լու և առանց որև է մէկին տեսնելու։ Նրան ոչ
ոք չէր կարող նամակ գրել ոչ Ռուսաստանից
և ոչ մի որև է ուրիշ տեղից, և այդ հանգա-
մանքը բոլորովին նրա սրտովն էր. որովհետև՝ ե-
թէ նրա անունով նամակ ստացուէը, նա իսկոյն-
ևեթ կիմանար, որ դա այն նամակն է, որին
սպասում է ինքը։ Առաւօտից մինչև երեկոյ նա
կարդում էր և այն էլ ոչ թէ թերթեր, այլ
լուրջ գրքեր, պատմական հետազոտութիւններ։
Այդ երկարատև ընթերցանութիւնները, այդ լուռ,

մենակեաց ժամանցը, այդ խիստ ինքնային գաղա-
նի կեանքը, բոլորը, ուղիղ որ համապատասխանում
էին նրա հոգեկան դրութեանը։ Հէնց միայն այդ
մի հատիկ բանի համար էլ է շնորհակալութիւն
Ջեմմային։ Բայց, կենդանի է արդեօք նա։ Կը
պատասխանի՞ իր նամակին։

Վերջապէս, ամերիկական պօստային մար-
կայով՝ Նիւ-Եօրքից ստացուեց նամակ նրա անու-
նով։ Ծրարի վրայի ձեռագիրը անգլիերէն էր...
և անծանօթ. ճմլուեց նրա սիրտը։ Միանգամից
դժուարանում էր բանալ ծրարը, բայց երբ արդէն
պատրաստ էր՝ նա նայեց նամակի ստորագրու-
թեանը՝ գրուած էր. Ջեմմա։ Արցունքները յան-
կարծ ցայտեցին նրա աչքերից. միայն այն, որ
ստորագրել էր նա իր անունով, առանց ազգա-
նունի, ծառայում էր իբրև գրաւական հաշտուե-
թեան, ներումի։ Նա շուռ տուեց պօստային
կապոյտ թղթի նուրբ թերթը. նրա միջից սա-
հելով ցած ընկաւ մի լուսանկար։ Շտապով վերց-
րեց նա ու մնաց իր կանգնած տեղում թալկա-
ցած — Ջեմման էր. կենդանի Ջեմման, այնպէս
երիտասարդ, ինչպէս որ նա նրան ճանաչում էր
երեսուն տարի առաջ — միևնոյն աչքերը, միևնոյն
շրթունքները, ամբողջ դէմքի նոյն տիպը։ Լու-
սանկարի միւս երեսին մակագրված էր. «իմ աղ-
ջիկը՝ Մարիաննան»։ Ամբողջ նամակը գրուած
էր շատ սիրալիր ու անպաճոյճ ոճով։ Ջեմման
շնորհակալութիւն էր յայտնում Սանինին, որ նա

չը կասկածեց դիմելու իրան, վստահութիւն տա-
ծեց դէպի իրան. չէր թագցնում նրանից այն
ևս, որ ինքը, իսկապէս, նրա փախուստից յե-
տոյ, բաւականին ծանր րոպէներ կրեց, բայց
հէնց իսկոյն էլ աւելացնում էր, որ այ-
նուամենայնիւ՝ իր հանդիպումը նրա հետ հա-
մարում է և միշտ էլ համարել է բաղդաւորու-
թիւն. որովհետև այդ հանդիպումը միայն ար-
գելք եղաւ իրան պ-ն Կլիւբերի կինը դառնալու,
և այդպիսով, թէև անուղղակի, պատճառ եղաւ
իր ամուսնութեանը այժմուայ ամուսնու հետ,
որի հետ նա ահա ապրում է քսանևութերորդ
տարին բոլորովին բաղդաւոր, գոհ և առաքո-
թեան մէջ. նրանց տունը յայտնի է ամբողջ Նիւ-
Եօրքին: Զեմման տեղեկացնում էր նոյնպէս, որ
ինքը հինգ զաւակ ունի. չորսը՝ տղայ և մէկը՝
աղջիկ՝ —տասնութ տարեկան, հարսնացու, որի
լուսանկարը ուղարկում է իրան. որովհետև
նա, ընդհանուրի ասելով՝ չափազանց նման է իր
մօրը: Տխուր լուրերը Զեմման պահել էր նա-
մակի վերջում: Ֆրաու-Լէնօրան վախճանուել էր
Նիւ-Եօրքում, ուր նա գնացել էր իր աղջկայ ու
փեսայի հետ միասին, այնտեղ նա հնարաւորու-
թիւն ունեցաւ ուրախանալու իր զաւակների
բաղդաւորութեամբ և օրհնելու իր թոռներին:
Պանտալէօնն էլ էր պատրաստվում Ամերիկա
գնալ նրանց հետ, բայց մեռել էր Ֆրանկֆուր-
ից դուրս գնալու հէնց նախորդ օրը: «Իսկ Է-

միլիօն, մեր սիրելի, աննման Էմիլիօն, փառա-
ւոր մահով մեռաւ հայրենիքի ազատութեան հա-
մար Սիցիլիայում, ուր նա գնացել էր այն «հա-
զարների» թւում, որոնց առաջնորդում էր Մեծն
Գարիբալդին: Մենք բոլորս ջերմ արցունք-
ներով ազացինք մեր թանգագին եղբօր մահը,
բայց հէնց այդ արցունքները թափելու միջոցին
էլ մենք պարծենում էինք նրանով ու յաւի-
տեան էլ պէտք է պարծենանք և սուրբ պահենք
նրա յիշատակը. նրա վեհ, անշահասէր հոգին
արժանի էր նահատակի պսակին»: Յետոյ Զեմ-
ման իր ափսոսանքն էր յայտնում, որ Սանինի
կեանքը, ըստ երևոյթին, այդպէս վատ էր դա-
տաւորուել, ցանկանում էր նրան, նախ և առաջ,
հանգստութիւն ու հոգեկան անդորրութիւն, ապա
ասում էր, որ ուրախ կը լինէր տեսնուել նրա
հետ, թէև խոստովանում էլ է՝ թէ որքան քիչ
է հաւանական այդպիսի տեսակցութիւնը...

Չենք նկարագրում՝ թէ ինչպիսի զգացմունք-
ներ կրեց Սանինը այդ նամակը կարդալիս: Այդ
տեսակ զգացմունքները հեշտութեամբ չեն ար-
տայայտվում խօսքերով. նրանք շատ խորունկ
են և ուժեղ, ու աւելի անորոշ՝ քան ամեն մի
խօսք առհասարակ: Երաժշտութիւնը միայն կա-
րող էր հաղորդել ու ըմբռնել տալ նրանց:

Սանինը անմիջապէս պատասխանեց Զեմ-
մային, և իրրև նուէր ուղարկեց հարսնացու
«Մարիաննա Սլօկոմին՝ անծանօթ բարեկամից»

իր մօտ գտնուած նուագարէ—խաչը հոյակապ մարգարտաշար մանեակի մէջ հագցրած։ Այդ նուէրը, թէև շատ թանգագին, բայց և այնպէս չը անանկացրեց նրան. երեսուն տարուայ ընթացքում՝ Ֆրանկֆուրտում առաջին անգամ լինելուց յետոյ, Սանինը կարողացել էր բաւականաչափ կարողութիւն վաստակել։ Մայիսի սկզբներին նա վերադարձաւ Պետերբուրգ, բայց հազիւ թէ երկար ժամանակով։

Հուր կայ, որ նա վաճառում է իր բոլոր ստացուածը և պատրաստվում է Ամերիկայ գնալու։

Վ Ե Ր Ջ

4428

2013